

Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material


3850

GE L. -FONSEGRIVE

---

# ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Թրգմ. Թ. Ե. Գ.



ԵՐՈՒՍԱԳԷՄ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՑ ՅԱԿՈԲԵԱՆՑ

1932

15

Տ - 78



14 JUL 2009

GEORGE L. -FONSEGRIVE

15

Գ-78

ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Թրգմ. Թ. Ե. Գ.



ԵՐՈՒՍԱԳԷՄ

ՏՊԱՐԱՆ ՍՐԲՈՅ ՅԱԿՈԲԵԱՆՅ

1932

3830

06 SEP 2013

GEORGE L. FONSEGRIVE



68-94 +

Ի ԹԻՇԱՏԱԿ

ՅԱԿՈՒԱՅ ԱՇԵԳԵԱՆ ԿԵՍԱՐԱՑԻՈՅ

(1819 — 1887)

Այս դասագիրքին բնագիրը շուրջ կես դար առաջ հրատարակուած ձեռնարկ մըն է. այսու հանդերձ անոր հրատարակութիւնը օգտակար բուեցաւ մեզի, վասնզի շատ պայծառ դասաւորութեանք եւ մեքոսի շաւազոյն կիրարկութեանք կը ներկայացնէ հոգեբանական գիտութեան ամբողջական ուսումը:

Այս կարծիքին յանգեցանք ի փորձոյ, այսինքն ոչ միայն տեսնելէ վերջ բազմաթիւ նորագոյններ, որոնք իրենց չափազանց սեղմ կամ առաւելագոյնով ընդարձակ պարունակութեանքը նուազ յարմար էին իբրեւ դասագիրք գործածուելու մեր բարձրագոյն նախակրթարաններուն եւ նոյն իսկ երկրորդական վարժարաններուն մէջ, այլ նաեւ որովհետեւ անձանք իւրաւունք տղած հինք անոր օգտակարութեանը Արմաշու Դպրեվանքին մէջ, ուր առաջին անգամ դասաւանդուեցաւ ան 1892-94 ին, Պ. Երուսնդ Տ. Անդրեասեանի միջոցաւ կատարուած քարգնանութեան մը վրայէն:

Այդ ձեռագիր քարգնանութենէն ոչ մէկ օրինակ կատրուցած շրջադով ունենալ յետոյ Դպրեվանքի մէջ, քանի մը տարիներ ետքը, երբ մեզի յանձնուեցաւ այդ դասին աւանդումը, հարկադրուած էինք բոլորովին ի նորոյ կատարել քարգնանութիւն մը, որ է ներկայ հրատարակութիւնը, վերջին անգամ կարգ մը շեզուական յարդարումներու եկարկուած եւ բառացանկով մը ձոխացած:

Թ. Ե. Գ.





# ՅԱՆԿ ՆԻՒԹԵՐՈՒ



## ՅԱՌԱՋԱԲԱՆ

Ե

### Ն Ե Ր Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — ԳԻՏՈՒԹԻՒՆԸ. — ՓԻԼԻՍՈՓԱՑՈՒԹԻՒՆԸ

Ա. Ջարմանք եւ հետաքրքրութիւն. — Բ. Ի՞նչպէս կը զոհանայ հետաքրքրութիւնը. — Գ. Ծանօթութիւն. — Դ. Գիտութիւն. — Ե. Գիտութիւններ. — Զ. Փիլիսոփայութիւն. — Է. Փիլիսոփայական միտք եւ Գիտական միտք. — Ը. Փիլիսոփայութիւնը՝ փիլիսոփայական միտքի վերածուած. — Թ. Փիլիսոփայութիւնը՝ համակարգութիւն զիտութեանց. — Ժ. Փիլիսոփայութիւնը՝ միտքի զիտութիւն. — ԺԱ. Բնագանցական զիտութեան մը հնարաւորութիւնը. — ԺԲ. Փիլիսոփայութեան դասընթացքին բաժանումը: 1

### Հ Ո Գ Ե Բ Ա Ն Ո Ւ Թ Ի Ւ Ն

#### Դաս Ա.

ՍԱՀՄԱՆ ԵՒ ԱՌԱՐԿԱՅ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԵԱՆ

Ա. Սահման եւ առարկայ հոգեբանութեան. — Բ. Գիտակցութեան երեւոյթը չի սահմանուիր. — Գ. Գիտակցութեան երեւոյթը եւ հոգեբանական երեւոյթ. — Դ. Գիտակցութեան աստիճանները. — Ե. Դիտողութիւն: 15

#### Դաս Բ.

ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ՄԵԹՈՏԸ

Ա. Մեթոտին հանգրուանները. — Բ. Հոգեբանութեան պատմական զարգացումը. — Գ. Ջննութիւն, Զգացողութիւն. — Դ. Անձկութիւն ներհայեցողութեան. — Ե. Արտաքին զննութիւնը. — Զ. Օրէնքներու բանաձեւ. — Է. Փորձարկութիւն: 24



**Դաս Գ.**

**ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ**

Ա. Գիտակցութիւնը եւ հոգեբանական երեւոյթները. — Բ. Կա՞ն  
անգիտակից երեւոյթներ. — Գ. Ընդհանուր դասաւորում գի-  
տակցական երեւոյթներու. Կարողութիւնները. — Դ. Երեք կարող-  
ութիւնները. Զգացողութիւն, Իմացականութիւն, Կամք. — Ե.  
Այս դասաւորութիւնը հարկաւոր է. — Զ. Այս դասաւորութիւնը  
բաւարար է:

**ԱՌԱՋԻՆ ՄԱՍ**

**ԶԳԱՅԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ**

**Դաս Դ.**

**ԳԻՏԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ**

Ա. Գիտակցութեան բնածին բարդութիւնները. — Բ. Հինգ  
զգայարաններ. — Գ. Հինգ զգայարաններէն աւելի կա՞յ. — Դ.  
Զգայութեանց ստորաբաժանումները. — Ե. Հաճոյք եւ վիշտ. —  
Զ. Հաճոյքին եւ վիշտին պայմանները. — Է. Ապացուցական նը-  
կատողութիւններ. — Ը. Արիստոտէլի եւ Եպիկուրի վարդապե-  
տութիւնները:

**Դաս Ե.**

**ԶԳԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ**

**ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄ**

Ա. Զգայութեան տկարացում. Պատկեր. — Բ. Զգայութեան  
տկարացման պատճառներ. — Գ. Կա՞ն բոլոր զգայարաններէ  
պատկերներ. — Դ. Վերերեւում պատկերներու. — Ե. Վերերիւու-  
մի պայմաններ, Պահպանումի օրէնք. — Զ. Զուգորդութեան օ-  
րէնք:

**Դաս Զ.**

**ԶՈՒԳՈՐԴՈՒԹԻՒՆ**

Ա. Զուգորդութեան պայմաններ. — Բ. Միջոցային յարակցու-  
թեան անբաւականութիւնը. — Գ. Ժամանակային առարկայական

յարակցութեան անբաւականութիւնը. — Դ. Պատճառականութեան  
անբաւականութիւնը. — Ե. Նմանութեան անբաւականութիւնը. —  
Զ. Նմանութիւնը՝ կազմիչ զուգորդութեան. — Է. Կերտիչ զու-  
գորդութիւն կամ երեւակայութիւն:

**Դաս Է.**

**ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԵՐԵՒԵՅՈՒՅԻՉ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ**

Ա. Պատկերներու բաղադրութեան օրէնք. — Բ. Մասնաւոր  
պատճառականութիւններու պատկերը. — Գ. Տիեզերական պատ-  
ճառականութեան պատկերը. — Դ. Երեւակայական շարայարու-  
թիւնը. — Ե. Գիտողութիւն:

**Դաս Ը.**

**ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՆ ՇԱՐԺԻՉ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ**

Ա. Ամէն զգայութիւն շարժումներու է կապուած. — Բ. Ամէն  
պատկեր այսպէս լծորդուած է շարժիչ պատկերներու. — Գ. Փոր-  
ձառական ապացոյցներ. — Դ. Պատկերներու ուժական օրէնք. —  
Ե. Անդրադարձ գործելութիւն. — Զ. Շարժիչ պատկեր. — Է.  
Պատկերներու իրազորութեան օրէնք. Պարագայ՝ ուր պատկերը  
միակ է. — Ը. Պարագայ՝ ուր պատկերը մէկէ աւելի է. Առաջին  
պարագայ. — Թ. Երկրորդ պարագայ. — Ժ. Հաճոյքին եւ ցաւին  
շարժիչ դերը:

**Դաս Թ.**

**ԱՌՈՐԺԱԿՆԵՐԸ ԵՒ ԿԱՐԵԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

Ա. Հաճոյքի բնութիւնն ու տեսակները. — Բ. Ախորժակնե-  
րը. — Գ. Զգացումները. — Դ. Հաճոյքին եւ վիշտին օրէնքները  
զգացումներուն մէջ. — Ե. Այս օրէնքներուն բացատրութիւնը. —  
Զ. Համակրութիւնը. — Է. Միտումները. — Ը. Պահպանումի եւ  
փոփոխումի միտումներ. — Թ. Ընտանեկան միտումներ. — Ժ.  
Ընկերային միտումներ. — ԺԱ. Արդիւնաւորում ախորժակներու  
եւ միտումներու:



Դաս Ժ.

ԲՆԱԶԳ

Ա. Բնագրին սահմանը.— Բ. Բնագրին յատկանիշերը.— Գ. Անզէտ է իր նպատակին.— Դ. Անզբէպ է.— Ե. Անընդունակ է յառաջդիմութեան.— Զ. Անհրաժեշտ է.— Է. Անփոփոխ եւ նոյն է միեւնոյն տեսակին մէջ.— Ը. Տեսակէ տեսակ կը փոխուի.— Թ. Գործարանաւորութենէն կախում ունի.— Ժ. Բնագրին բնոյթը.— ԺԱ. Բնագրին արդիւնականացումը: 99

Դաս ԺԱ.

ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ

Ա. Ունակութեան սահմանը եւ առաջին արդիւնքները.— Բ. Ունակութիւնը զիտակից էակներուն մէջ.— Գ. Ֆիզիզական ունակութիւններ.— Դ. Մտային ունակութիւններ.— Ե. Բարոյական ունակութիւններ.— Զ. Ունակութեան արդիւնքները զգացողութեան եւ գործունէութեան վրայ.— Է. Ունակութեան վերջնական անզիտակցութիւնը.— Ը. Ժառանգական ունակութիւններ.— Թ. Անցք դէպի երկրորդ մասը: 107

ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ

ԽՈՐՀՐԴԱԾԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

Դաս ԺԲ.

ԽՈՐՀՐԴԱԾԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ ԵՒ ՈՒՇԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա. Զգացական եւ խորհրդածական վիճակներուն տարրոշումը.— Բ. Ուշադրութեան սահմանումը.— Գ. Ուշադրութեան տեսակները.— Դ. Ուշադրութեան էութիւնը.— Ե. Ուշադրութիւնը եւ մկանային վիճակները: 117

Դաս ԺԳ.

ԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

Ա. Վերացում.— Բ. Բաղդատութիւն.— Գ. Ընդհանրացում.— Դ. Ընդհանուր գաղափար.— Ե. Ընդհանուր գաղափարին

բնութիւնը.— Զ. Ընդհանուր գաղափարին եւ բաղադրական պատկերին տարրոշումը.— Է. Ընդհանուր գաղափարներուն տարական մտապատկերացումը.— Ը. Ընդհանուր գաղափարներուն արժէքը: 124

Դաս ԺԴ.

ԴԱՏՈՒՄ ԵՒ ՏՐՍՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ

Ա. Դատումին սահմանը.— Բ. Դատումներուն դասաւորութիւնը. Յայնատեսական եւ Բաղդատական դատումներ.— Գ. Դատումներու ուրիշ տեսակներ.— Դ. Տրամախոհութիւնը եւ իր զանազան տեսակները.— Ե. Մակածութեան վերլուծումը.— Զ. Տրամախոհութեան բոլոր ձեւերուն հասարակաց էութիւնը: 138

Դաս ԺԵ.

ԻՄԱՅՈՂՈՒԹԵԱՆ ԷԱԿԱՆ ԻՄԱՅՔՆԵՐԸ

Ա. Թուում իմացողութեան հինգ էական իմացքներուն.— Բ. Հոգեբանական տեսակէտ եւ քննական տեսակէտ.— Գ. Միջոցը.— Դ. Ժամանակը.— Ե. Թիւր: 149

Դաս ԺԶ.

ԻՄԱՅՈՂՈՒԹԵԱՆ ԷԱԿԱՆ ԻՄԱՅՔՆԵՐԸ

(Շարունակութիւն)

Ա. Պատճառին առժամայ սահմանը.— Բ. Պատճառին գաղափարը արտարին փորձառութենէն չէ որ կուգայ.— Գ. Վերլուծումէն ալ չի գար ան.— Դ. Ներքին փորձառութենէն կուգայ.— Ե. Պատճառին բնութիւնը.— Զ. Գոյացութեան ծանօթոյքը.— Է. Գոյացութեան եւ պատճառին նոյնացումը օրէնքին ծանօթոյքին մէջ: 157

Դաս ԺԷ.

ԱՌԱՋԻՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ

Ա. Սկզբունքներուն սահմանը.— Բ. Սկզբունք նոյնութեան.— Գ. Սկզբունք բանի.— Դ. Վերլուծում բանի սկզբունքին. Սկզբունքը վախճանականութեան.— Ե. Սկզբունք պատճառականութեան.— Զ. Սկզբունք գոյացութեան.— Է. Սկզբունքները



**Դաս Ժ.**

**ԲՆԱԶԴ**

Ա. Բնազդին սահմանը.— Բ. Բնազդին յատկանիշերը.— Գ. Անզէտ է իր նպատակին.— Դ. Անվրէպ է.— Ե. Անընդունակ է յառաջդիմութեան.— Զ. Անհրաժեշտ է.— Է. Անփոփոխ եւ նոյն է միեւնոյն տեսակին մէջ.— Ը. Տեսակէ՛ տեսակ կը փոխուի.— Թ. Գործարանաւորութենէն կախում ունի.— Ժ. Բնազդին բնոյթը.— ԺԱ. Բնազդին արդիւնականացումը: 99

**Դաս ԺԱ.**

**ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ**

Ա. Ունակութեան սահմանը եւ առաջին արդիւնքները.— Բ. Ունակութիւնը զիտակից էակներուն մէջ.— Գ. Ֆիզիզական ունակութիւններ.— Դ. Մտային ունակութիւններ.— Ե. Բարոյական ունակութիւններ.— Զ. Ունակութեան արդիւնքները զգացողութեան եւ գործունէութեան վրայ.— Է. Ունակութեան վերջնական անզիտակցութիւնը.— Ը. Ժառանգական ունակութիւններ.— Թ. Անցք ղէպի երկրորդ մասը: 107

**ԵՐԿՐՈՐԳ ՄԱՍ**

**ԽՈՐՀՐԴԱԾԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ**

**Դաս ԺԲ.**

**ԽՈՐՀՐԴԱԾԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ ԵՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ**

Ա. Զգացական եւ խորհրդածական վիճակներուն տարրուշումը.— Բ. Ուշադրութեան սահմանումը.— Գ. Ուշադրութեան տեսակները.— Դ. Ուշադրութեան էութիւնը.— Ե. Ուշադրութիւնը եւ մկանային վիճակները: 117

**Դաս ԺԳ.**

**ԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ, ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ**

Ա. Վերացում.— Բ. Բաղդատութիւն.— Գ. Ընդհանրացում.— Դ. Ընդհանուր գաղափար.— Ե. Ընդհանուր գաղափարին

բնութիւնը.— Զ. Ընդհանուր գաղափարին եւ բաղադրական պատկերին տարրուշումը.— Է. Ընդհանուր գաղափարներուն տարրական մտապատկերացումը.— Ը. Ընդհանուր գաղափարներուն արժէքը: 124

**Դաս ԺԴ.**

**ԴԱՏՈՒՄ ԵՒ ՏՐԱՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ**

Ա. Դատումին սահմանը.— Բ. Դատումներուն դասաւորութիւնը. Յայտնատեսական եւ Բաղդատական դատումներ.— Գ. Դատումներու ուրիշ տեսակներ.— Դ. Տրամախոհութիւնը եւ իր գանազան տեսակները.— Ե. Մակաժութեան վերլուծումը.— Զ. Տրամախոհութեան բոլոր ձեւերուն հասարակաց էութիւնը: 138

**Դաս ԺԵ.**

**ԻՄԱՅՈՂՈՒԹԵԱՆ ԷԱԿԱՆ ԻՄԱՅԲՆԵՐԸ**

Ա. Թուում իմացողութեան հինգ էական իմացքներուն.— Բ. Հոգեբանական տեսակէտ եւ քննական տեսակէտ.— Գ. Միջոցը.— Դ. Ժամանակը.— Ե. Թիւը: 149

**Դաս ԺԶ.**

**ԻՄԱՅՈՂՈՒԹԵԱՆ ԷԱԿԱՆ ԻՄԱՅԲՆԵՐԸ**

(Շարունակութիւն)

Ա. Պատճառին առժամեայ սահմանը.— Բ. Պատճառին գաղափարը արտարին փորձառութենէն չէ որ կուգայ.— Գ. Վերլուծումէ՛ն ալ չի գար ան.— Դ. Ներքին փորձառութենէն կուգայ.— Ե. Պատճառին բնութիւնը.— Զ. Գոյացութեան ծանօթոյթը.— Է. Գոյացութեան եւ պատճառին նոյնացումը օրէնքին ծանօթոյթին մէջ: 157

**Դաս ԺԷ.**

**ԱՌԱՋԻՆ ՍԿՁԲՈՒՆՔՆԵՐԸ**

Ա. Սկզբունքներուն սահմանը.— Բ. Սկզբունք նոյնութեան.— Գ. Սկզբունք բանի.— Դ. Վերլուծում բանի սկզբունքին. Սկզբունք վախճանականութեան.— Ե. Սկզբունք պատճառականութեան.— Զ. Սկզբունք գոյացութեան.— Է. Սկզբունքները



ի յայտ կ'ածուին մտային վերլուծութեամբ.— Ը. Սկզբունքներու ծագումի խնդիր.— Թ. Նոյնութեան փորձառական վարդապետութիւնը եւ հերքումը.— Ժ. Պատճառական սկզբունքի ծնունդին փորձառական վարդապետութիւնը.— ԺԱ. Քննադատում.— ԺԲ. Սկզբունքներուն ծագումը, ըստ եղաշրջական վարդապետութեան.— ԺԳ. Քննադատում:

**Պատ ԺԸ.**

**ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ**

Ա. Սկզբունքներուն հետեւանքները.— Բ. Յուշքին պայմանները.— Գ. Վերլիշումը եւ յուշքը.— Դ. Անցեալի դատումին շարժառիթները.— Ե. Տեղականացումը անցեալին մէջ.— Զ. Լաւ յիշողութեան մը պայմանները.— Է. Յուշարուեստ.— Ը. Յիշողութեան հիւանդութիւններ:

**Պատ ԺԹ.**

**ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐՄԵՈՅԸ ԸՄԲՈՆՈՒՄԸ**

Ա. Ի՞նչպէս պէտք է դնել հարցը.— Բ. Զգայութիւններուն տեղականացումը.— Գ. Ռէյ Ռէժիսի նկատողութիւնը.— Դ. Մարմինին գիտակցական կառուցումը.— Ե. Աղլասին կազմութիւնը.— Զ. Ժուֆրոյի տեսութիւնը եւ պատասխաններ:

**Պատ Ի.**

**ՆԵՐՔԻՆ ԸՄԲՈՆՈՒՄ**

Ա. Եսին գաղափարը.— Բ. Եսի գաղափարին տարրերը.— Գ. Ներքին ըմբռնում.— Դ. Եսին գործունէութիւնը.— Ե. Յիշողութեան դերը.— Զ. Եսը իր վիճակներուն արդիւնքն է.— Է. Այս տեսութեան մասին բննութիւն.— Ը. Ներքին ըմբռնումին սահմանները:

**Պատ ԻԱ.**

**ԱՐՏԱՔԻՆ ԸՄԲՈՆՈՒՄ**

Ա. Արտաքին ըմբռնումի խնդիրը.— Բ. Սկզբունքական լուծում.— Գ. Պատրանքի վարդապետութիւնը.— Դ. Քննադատում.— Ե. Տեսութիւն մակաբերութեան.— Զ. Առարկութիւն.— Է. Պատասխան:

**Պատ ԻԲ.**

**ԲԱՆԴԱԳՈՒՇԱՆՔ ԵՒ ԵՐԱԶ**

Ա. Բանդագուշանքին սահմանումը.— Բ. Ի՞նչպէս կարելի է ուղղել բանդագուշանքը.— Գ. Հաւարական բանդագուշանքներ.— Դ. Երազ.— Ե. Բանդագուշանք եւ երազ.— Զ. Երազի զանազան տեսակներ.— Է. Պատասխանատուութիւնը երազին մէջ:

**Պատ ԻԳ.**

**ԲԱՆԿԱՆ ԸՌՐՈՆՈՒՄՆԵՐԸ ՈՒ ՍՏԱՅԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ**

Ա. Բնական ըմբռնումներ եւ ստացական ըմբռնումներ.— Բ. Խնդիր.— Գ. Հետեւուելիք մեթոտը.— Դ. Հոտառութեան, ճաշակելիքի, լսողութեան, շօշափելիքի բնական ըմբռնումներ.— Ե. Տեսողութեան բնական ըմբռնումներուն խնդիրը.— Զ. Փորձառականներու կարծիքը.— Է. Այս փաստերուն քննադատութիւնը բնայնականներու կարծիքով.— Ը. Ի ծնէ կոյրերու վրայ փորձառութիւններ.— Թ. Հակառակ փորձառութիւններ.— Ժ. Վերջին փաստեր.— ԺԱ. Զգայարանքի վրիպանքներ:

**Պատ ԻԴ.**

**ԲԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅԸ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ**

Ա. Բարձրագոյն ծանօթոյրներ.— Բ. Անհունին գաղափարը արառո՞ց է.— Գ. Կատարեալին գաղափարը.— Դ. Բացարձակին գաղափարը.— Ե. Բացարձակ էակը.— Զ. Կատարեալը, Աստուած:

**Պատ ԻԵ.**

**ԲԱՆԿԱՆՈՒԹԻՒՆ**

Ա. Բանականութիւն Բառին զանազան առումները.— Բ. Երկրաչափական միտք եւ շրջանկատ միտք.— Գ. Ողջմտութիւն.— Դ. Հասարակաց զգացում.— Ե. Ինքնատպութիւն.— Զ. Բանականութեան ներհակ վիճակներ.— Է. Բանականութեան էութիւնը:



Դաս ԻԶ.

ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ

Ա. Զեւանական երեւակայութիւն.— Բ. Կրաւորական երեւակայութիւն.— Գ. Ներգործական երեւակայութիւն.— Դ. Բազմազանութիւն երեւակայութեան.— Ե. Երեւակայութեան կարեւորութիւնը.— Զ. Կարգաւորութիւն երեւակայութեան: 252

Դաս ԻԷ.

ԳԵՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԾԱՆՕԹՈՅՔԸ. ԳԵՂԵՅԻԿԸ

Ա. Գեղեցիկին զգացումին վերլուծումը.— Բ. Գեղեցիկին դատումին մէջ գործ ունեցող կարողութիւնները.— Գ. Գեղեցիկին առարկային յատկանիշները.— Դ. Գեղեցիկ գործունէութիւնը.— Ե. Գեղեցիկին տեսակները.— Զ. Տգեղը եւ ծաղրելին.— Է. Վսեմը.— Ը. Վսեմին տեսակները.— Թ. Գեղագիտութիւնը կամ ձաշակի գիտութիւնը: 259

Դաս ԻԸ.

ԱՐՈՒԵՍՏԸ

Ա. ձարտարական եւ ազատական արուեստներ.— Բ. Արուեստին բնութիւնը.— Գ. Արուեստին անկախութիւնը.— Դ. Գաղափարապաշտութիւն եւ իրապաշտութիւն.— Ե. Ճշմարիտը եւ իրականը.— Զ. Արուեստներուն բաժանումը: 266

Դաս ԻԹ.

ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՒ ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄ. ԼԵԶՈՒ

Ա. Նշանը.— Բ. Բնական նշաններ եւ արուեստական նշաններ.— Գ. Լեզու.— Դ. Ծագումն լեզուի.— Ե. Կազմութիւն լեզուի մանուկին մէջ.— Զ. Կազմութիւն լեզուի մարդկութեան մէջ.— Է. Նախագիծ փիլիսոփայական քերականութեան.— Ը. Վերլուծական եւ համադրական լեզուներ.— Թ. Ընդհանուր գաղափարին դերը.— Ժ. Լեզուին յարաբերութիւնները խորհուրդին հետ.— ԺԱ. Գրչութիւն: 276

Դաս Լ.

ԿԱՄՔԸ

Ա. Սահման կամաւոր գործի.— Բ. Անձնիշխանութիւն.— Գ. Վերլուծում ազատ գործի.— Դ. Վայրկեաններ, որոնք ազատ չեն.— Ե. Ո՞ր կը գտնուի ազատութիւնը.— Զ. Ամբողջական ապացուցումը բնականացական է: 288

Դաս ԼԱ.

ՍԱՀՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Ա. ձակատագրականութիւն եւ Սահմանականութիւն.— Բ. Հոգեբանական փաստեր. փափաք եւ Կամք.— Գ. Շարժառիթներու ազդուութիւնը.— Դ. Գիտակցութեան անբաւականութիւնը.— Ե. Գիտական փաստեր. Վիճակագրութիւնները.— Զ. Ոյժին պահպանումը.— Է. Բնականացական փաստեր. Աստուածային նախագիտութիւն.— Ը. Բաւարար պատճառ: 297

Դաս ԼԲ.

ԽՈՐՀՐԴԱԾԵԱԼ ԶԳԱՅՈՂՈՒԹԻՒՆ

Ա. Սահման խորհրդածեալ զգացողութեան.— Բ. Այս զգացողութեան արդիւնքը.— Գ. Ախորժակներուն կրած ձեւափոխութիւնները.— Դ. Հակումներուն կրած ձեւափոխութիւնները.— Ե. Խորհրդածութեան ձեւը նոր հակումներ.— Զ. Յուզումի հակումներ.— Է. Հետաքրքրութեան հակումներ.— Ը. Գործելութեան հակումներ.— Թ. Մարդասիրական հակումներ.— Ժ. Կրօնական հակումներ: 305

Դաս ԼԳ.

ԿԻՐՔԵՐԸ

Ա. Կիրքերուն բնութիւնը.— Բ. Կիրքերուն դասաւորումը.— Գ. Սկոլաստիկ դասաւորում.— Դ. Դասաւորում՝ առարկաներու համեմատ.— Ե. Կիրքերուն արդիւնքները.— Զ. Տիեզերական սէր: 315



դաս 14.

ԲԱՐԻՆ

Ա. Փափաքը.— Բ. Բարիրն եւ փափարին յարաբերութիւնը.— Գ. Փափաքելին եւ նախընտրելին.— Դ. Բացարձակ նախընտրելին.— Ե. Պարտաւորութիւնը, 322

դաս 15.

ՆԿԱՐԱԳԻՐ. ԱՆՁԸ

Ա. Սահման նկարագրի.— Բ. Չորս խառնուածքներ.— Գ. Կազմութիւն նկարագրի.— Դ. Անձը.— Ե. Բնութեան եւ կամբին բաժինը մարդուն կազմութեան մէջ, 329

դաս 16.

ՄԱՐԴՆ ՈՒ ԱՆԱՍՈՒՆԸ

Ա. Սահման բաղդատական հոգեբանութեան.— Բ. Մարդուն եւ անասունին տարրորոշութիւնը.— Գ. Չանազան կարծիքներ.— Դ. Տէքարդի փաստերը ի նպաստ անասուններու ինքնաշարժութեան.— Ե. Այս փաստերուն բննադատումը.— Զ. Մոնղաների բննադատումը.— Է. Վճռական փորձառութիւն.— Ը. Անասնական իմացականութիւն.— Թ. Մարդկային իմացականութիւն, 335

դաս 17.

ՀՈԳԻՆ ԵՒ ՄԱՐՄԻՆԸ

ՅԻՉԻԳԱԿԱՆԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆԻՆ ԱՂԵՐՄՆԵՐԸ

Ա. Միտքն ու մարմինը.— Բ. Ֆիզիկականին եւ բարոյականին յարաբերութիւնները.— Գ. Անկէջ ծագող խնդիր մը.— Դ. Նիւթապաշտ տեսութիւն եւ պատասխան.— Ե. Երեւութապաշտ տեսութիւն.— Զ. Բննադատութիւն, 345

ՀՈԳԵԲԱՆԿԱՆ ԲԱՌԱՅԱՆԿ

ՅԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ

355

379



... արեւմտեան ժողովուրդներու մտայնութիւնը ...

ՏԱՐԵՐՔ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԵԱՆ

Ն Ե Ր Ա Ծ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ. — ԳԻՏՈՒԹԻՒՆԸ. —

ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆԸ

ԲՈՎԱՆԳՈՒԿՈՒԹԻՒՆ. — Ա. Չարմանք եւ հետաքրքրութիւն.— Բ. Ինչպէս կը գոհանայ հետաքրքրութիւնը.— Գ. Ծանօթութիւն.— Դ. Գիտութիւն.— Ե. Գիտութիւններ.— Զ. Փիլիսոփայութիւն.— Է. Փիլիսոփայական միսք եւ Գիտական միսք.— Ը. Փիլիսոփայութիւն՝ փիլիսոփայական միսքի վերածուած.— Թ. Փիլիսոփայութիւն՝ համակարգութիւն գիտութեանց.— Ժ. Փիլիսոփայութիւնը՝ միսքի գիտութիւն.— ԺԱ. Բնագանցական գիտութեան մը հնարաւորութիւնը.— ԺԲ. Փիլիսոփայութեան դասընթացքին բաժանումը:

Ա. Չարմանք եւ հետաքրքրութիւն. — Նորորինակ իրերու հանդէպ մարդս կանգ կ'առնու և կը զարմանայ: Չարմանքը խորհուրդի շարժումին մէջ կանգառում մըն է: Կը ջանանք մեզի ծանօթ եղած իրերու շրջանակին մէջ մտցնել նոր իրը, ու չենք յաջողոր անմիջական կերպով: Այս անհանդիստ գործունէութիւնը, որով միտքը կ'աշխատի ծանօթին շրջանակին մէջ մտցնել անծանօթը՝ կը կոչուի հետաքրքրութիւն:



Այսպէս մանուկը հարցումներ կ'ընէ ամէն բանի վերաբերմամբ: Այդ հարցումներուն պատասխանները կը կոչուին բացատրութիւն:

Բ. Խճապէս կը գոհանայ հետաքրքրութիւնը: — Բոլոր այն հարցումները, զորս կարելի է ընել, կը վերածուին չորսի: Ըստ այսմ կը հարցնենք թէ ի՞նչ բանի շինուած է բացատրելի իրը. ո՞վ շինած է զայն, ի՞նչ պիտի կամ ի՞նչ կարգով և կամ ի՞նչ բանի հաւատ շինուած է ան: Երբ այս չորս հարցումներուն պատասխանուի, բացատրութիւնը կատարեալ կ'ըլլայ, ու հետաքրքրութիւնն ալ կը գոհանայ: Զոր օրինակ, եթէ զարմանքին և հետաքրքրութեան առարկան հացն է, կրնանք զարմանքը դադրեցնել և հետաքրքրութիւնը գոհացընել, թուելով հացին յօրինումին մէջ մտնող գոյացութիւնները. ցորենի աղւորը, ջուրը և աղը. ըսելով թէ հացարարը շինած է զայն, և նկարագրելով հացարարութեան եղանակները, և վերջապէս ըսելով թէ հացը շինուած է մարդոց սնունդին համար: Այս պատասխանները տրուելէն վերջ՝ հացին բացատրութիւնը կատարեալ կ'ըլլայ և ա'լ խնդրական կէտ մը չի մնար:

Ուրեմն հետաքրքրութիւնը չորս հարցումներ կ'ընէ, 1. Ի՞նչ է այս նիւթը, որով շինուած է իրը. 2. Ի՞նչ է այս ձեւը, զոր զգեցած է այս նիւթը՝ այդ իրը ըլլալու համար. 3. Ի՞նչ է անոր արդիւնատր հետեւնալը, պատճառը. 4. Ի՞նչ է անոր վիսնակապիտան պատճառը, նպատակը:

Հետաքրքրութիւնը գոհացնելու համար, այս չորս հարցումներէն իւրաքանչիւրին պատասխան մը պէտք է տալ. եթէ մէկը անպատասխան մնայ, հետաքրքրութիւնը ամբողջովին գոհացած չ'ըլլար:

Գ. Ծանօթութիւն. — Հետաքրքրութեան ըրած հարցումներուն մէն մի պատասխանը դատում մը կը կազմէ: Եթէ պատասխանը համաձայն է իրականութեան, դատումը արժանի է ծանօթութիւն անուան. այսպէս ամէն ծանօթութիւն նախ դատում մըն է, այսինքն ստորագրելի մը միացումը ենթակայի մը. բայց ամէն դատում ծանօթութիւն մը չէ: Երբ Ծնիկ աստղին մէջ բնակիչներ կան կ'ըսեմ, կը դատեմ բայց չեմ գիտեր: Որպէսզի այդ դատումը ծանօթութիւն մ'ըլլայ, պէտք է որ Ծնիկի մէջ իրապէս բաներ մը բնակած ըլլան: Այս ալ չի բաւեր, պէտք է ու եւ միջոցով ապահովեցնեմ ինքզինքս թէ դատումս համաձայն է իրականութեան: Ուրեմն ծանօթութիւնը դատում մըն է, որուն՝ իրականութեան հետ համաձայնութիւնը կրնանք հաստատել, ճշմարտութիւն մը ստոյգ դատում մըն է այն:

Գ. Գիտութիւնը. — Իրաց պատճառներու խուզարկութեան դատում մը կրնայ ըլլալ ճշմարիտ ծանօթութիւն մը, առանց ըլլալու գիտական դատում մը: Ամէն գիտութիւն ծանօթութիւն մըն է, բայց ամէն ծանօթութիւն գիտութիւն չէ: Զոր օրինակ, կահազործները գիտեն թէ ուղղանկիւն եռանկիւնի հակուղիղին վրայ կազմուած քառակուսին հաւասար է միւս երկու կողմերու վրայ կազմուած քառակուսիներու գումարին: Բայց անոնցմէ շատերը ուղղանկիւն եռանկիւնի այդ յատկութեան ծանօթութիւնը միայն ունին և ոչ թէ գիտութիւնը: Ի՞նչպէս կ'ըլլայ ասիկա — վասնզի անոնցմէ շատերը, անզէտ ըլլալով երկրաչափութեան, թէև գիտեն թէ այդպէս է, բայց չեն կրնար ըսել թէ ինչո՞ւ և ի՞նչպէս այդպէս է: Այս-



պէս երբ գիտենք թէ իր մը կայ, ծանօթութիւն մ'ու-  
նինք, այդ ծանօթութիւնը այն ատեն միայն գիտա-  
կան կ'ըլլայ, երբ կրնանք բացատրել զայն, այսինքն  
յօդել ուրիշ յառաջագոյն ծանօթութիւններու գումա-  
րութեան մը հետ, և ապացուցանել անոր ճշմարտու-  
թիւնը, այսինքն ցոյց տալ թէ բանականութիւնը կամ  
փորձառութիւնը կը պահանջեն անոր համապատաս-  
խանող իրականութեան մը գոյութիւնը:

Կըզիւցեալ ծանօթութիւն մը գիտութիւն մը չէ,  
իրարու հետ անկապակից ծանօթութեանց կուտակումն  
ալ աւելի ևս չի կրնար կազմել գիտութիւն մը: Գիտու-  
թիւնը շինողը այն կապն է, որ իրարու հետ կը միացնէ կարգ  
վր ծանօթութիւններ: Ծանօթութիւն մը այն ատեն միայն  
գիտական է, երբ մաս կը կազմէ գիտական ծանօթու-  
թեանց հոյլի մը: Տրամաբանութիւնը մեզի պիտի սով-  
րեցնէ թէ ի՞նչ պայմաններով կրնայ կազմուիլ գիտու-  
թիւնը: Ուրեմն գիտութիւնը դրութիւն մըն է ծանօ-  
թութիւններու, որոնք իրարու հետ շղթայաբար կը  
յարակցին:

Ե. Գիտութիւնները. — Ամէն մասնաւոր գիտու-  
թիւն դրութիւն մըն է ծանօթութեանց՝ վերաբերու-  
թեամբ մասնաւոր առարկայի մը: Երկրաչափութիւնը  
դրութիւն մըն է ծանօթութեանց՝ տարածութեան վրայ:  
Թուաբանութիւնը դրութիւն մըն է ծանօթութեանց՝  
թիւի վրայ: Բնալուծութիւնը դրութիւն մըն է ծանօ-  
թութեանց՝ մարմիններու տարրերուն վրայ, եւ այլն:  
Տրամաբանութեան մէջ պիտի տեսնենք թէ գիտութիւն-  
ներն ի՞նչպէս կը դասաւորուին և կը դասակարգուին:  
Ուրեմն գիտութիւնները կը ծագին հետաքրքրու-  
թենէն և բացատրութեան պէտքէն: Անոնց գործն է,

ընդհանրապէս, պատասխանել երկու հարցումներու,  
զորս հետաքրքրութիւնը բնականօրէն կ'ընէ: Գիտու-  
թիւնները կ'ըսեն թէ իր մը ի՞նչպիսի շինուած է, կը  
բացայայտեն անոր ձեւերը և օրէնքները. կ'ըսեն նաև  
թէ ինչ քանի շինուած է այդ իրը, կը ճշդորոշեն ա-  
նոր տարրերը, բայց ընդհանրապէս չեն ըսեր այդ իրին  
ո՞չ որակի՞ և ոչ ինչո՞ւ շինուած ըլլալը: Երկրաչափու-  
թեան, բնագիտութեան եւ բնալուծութեան մէջ՝ այս  
հարցումները երբեք չեն ըլլար: Բնախօսութեան մէջ  
կը հարցուի թէ ի՞նչ է գործարաններուն նպատակը  
կամ պաշտօնը, բայց երբեք չի հարցուիր անոնց ո՞վ  
շինած ըլլալը: Ու բոլոր գիտութեանց մէջ իրակա-  
նութիւնը միշտ գոյ կը համարուի, առանց խնդիր ընե-  
լու սակայն թէ ո՞վ գոյացուցած է զայն կամ ի՞նչ  
վախճանի համար գոյացուցած:

Զ. Փիլիսոփայութիւնը. — Այս վերջին հարցում-  
ներուն պատասխանն է ահա որ իսկապէս կը յօրինէ  
փիլիսոփայութիւնը: Ուրեմն փիլիսոփայութիւնը գի-  
տութիւնն է արդիւնաբար պատճառներու և վախճա-  
նական պատճառներու, անիկա կը հետազօտէ առաջին  
սկիզբը եւ վերջին վախճանը: — Կը հարցնէ. ուսկի՞ց  
կուգայ և ո՞ւր կերթայ աշխարհը: — Ոչ ոք չի կրնար  
ուրանալ թէ այդ հարցումներուն առաջարկումը բընա-  
կան է մտքին: Ոչ ոք չի կրնար ուրանալ որ գիտնալը,  
եթէ այդ հարցումները պատասխան ստանալու ընդու-  
նակ են, չգիտնալէն գերիվեր է: Հետևաբար փիլի-  
սոփայութիւնը և բնագանցականը էապէս նոյն բանն են:

Այս հարցումներն ա՛յնքան բնական են մարդկային  
մտքին, որ անոնք աշխարհի հանդէպ կատարուած ա-  
ռաջին հարցումները եղան: Ի սկզբան փիլիսոփայու-



թիւնը բովանդակ գիտելութիւնը (savoir) եղաւ. ան իր մէջ կը բովանդակէր բոլոր գիտութիւնները: Բայց որչափ կը կազմուէին ծանօթութիւններ, որոնք կըրնային խմբաւորուիլ եւ կազմել հաստատուն հոյւեր, աս' յնչափ այդ ծանօթութիւնները տեղի կուտային մասնաւոր գիտութիւններու: Ուրեմն գիտութիւնները փիլիսոփայութեանէն յառաջ եկան հետզհետէ, և, իրենց գործարանաւորութեան ամրապնդումին համեմատութեամբ, տակաւ առ տակաւ ձեռք բերին իրենց անկախութիւնը: Այսպէս շատ կանուխէն կազմուեցան թուական գիտութիւնները, յետոյ բնագիտութիւնը՝ Ժ.Ձ. դարուն, Փալլիէոսի հետ, ապա բնալուծութիւնը՝ Լափուազիէի հետ, ու բնախօսութիւնը և կենսաբանութիւնը և այլն՝ մեր ժամանակին մէջ:

Այս պատճառաւ ոմանց այնպէս թուեցաւ թէ փիլիսոփայութիւնը ուրիշ բան չէ՝ եթէ ոչ խառնակոյտ մը անկազմ ծանօթութիւններու. թէ քանի որ ամէն անգամ որ գիտութիւն մը իր կազմակերպութիւնը գտնէ, դուրս կ'ելլէ փիլիսոփայութեանէն եւ անկախ կ'ըլլայ անկէ, ըսել է թէ փիլիսոփայութիւնը հակառակ է գիտութեան, եւ հետզհետէ իր յառաջացմանը մէջ պիտի ջնջէ ինքզինքը: — Բայց մեր ըսածէն կը հետեւի թէ անճիշդ և թերի է այս տեսութիւնը: Եթէ նոյն իսկ՝ բոլոր գիտութիւնները իրենց կատարեալ կազմը գտնեն, փիլիսոփայութիւնը դարձեալ իրեն առարկայ պիտի ունենայ պատասխանել արդիւնարար պատճառի եւ վախճանական պատճառի վերջին հարցումներուն:

է. Փիլիսոփայական միսf եւ գիսական միսf. — Փիլիսոփայութիւնը, ինչպէս գիտութիւնը, ծնած է բա-

ցատրութեան պէտքէն, ու փիլիսոփայութիւնն է որ ծնունդ տուած է գիտութիւններուն: Փիլիսոփայական միտքը, գիտական միտքին պէս, քննախուզական միտք մըն է, հետաքրքրութեանէն ներշնչուած: Բայց գիտական միտքին պէս՝ անիկա ևս չի գոհանար կատարուած հարցումներուն մի միայն պատասխաններովը: Գոհանալու համար, ան կը պահանջէ որ այդ պատասխանները իրենց հետ բերեն իրենց ապացոյցները: Փիլիսոփայական միտքը քննական հետաքրքրութեան միտք մըն է, այնպիսի հետաքրքրութեան՝ որ ապացոյցներ կը վնտուէ: Արդ, գիտական միտքն ալ պէտք է ճիշդ միեւնոյն կերպով սահմանուի, եթէ գիտութիւնը, ինչպէս ցոյց տուինք, ապացոյցներու վրայ հիմնուած բացատրութիւններու գումարութիւն մըն է:

Փիլիսոփայական միտքը իր առարկայովը միայն կը զատորոշուի գիտական միտքէն: Մինչդեռ գիտական միտքը՝ յատկապէս գաղափարներու մասնաւոր դասակարգի մը, կամ նոյն իսկ դասակարգի մը մէջ ամփոփուած խնդիրներու մասնաւոր թիւի մը վրայ կ'ամփոփէ իր հետաքրքրութիւնը, փիլիսոփայական միտքը կը հետաքրքրուի բոլոր առարկաներով և բոլոր բացատրութիւններով: Հսկումս չէ ան, մինչդեռ գիտական միտքը մասնաւոր է: Աւելի լայն է ան, աւելի ընդարձակ, բայց նաեւ աւելի ընդունակ՝ տարտամ և անստոյգ ըլլալու և նուազ ապահով արդիւնքներու հասնելու: Գիտութիւնը որչափ աւելի յառաջանայ, այնչափ աւելի կը մասնաւորի, աւելի մասնական կը դառնայ, ընդհակառակն փիլիսոփայութիւնը միշտ աս' յնքան ընդարձակ եւ այնքան ընդհանուր առարկայ մը ունի, որքան ունէր Դեմոկրիտի, Պլատոնի կամ Արիստոտէլի ժամանակ:



Ուստի եւ փիլիսոփայական կը կոչենք այն ամէն ուսուցմանը եւ հետազոտութիւնները, որոնք, մասնակի գիտութեան մը որոշադրեալ սահմաններէն դուրս ելլելով, կը ջանան ցուցնել գիտութեան մը ուրիշ գիտութիւններու հետ կամ գիտութեան մը զանազան մասերուն իրարու հետ ունեցած յարաբերութիւնները: Այս վերջին իմաստով է որ կ'ըսենք Փիլիսոփայութիւն իրաւունքի, Փիլիսոփայութիւն պատմութեան. իսկ առաջին իմաստով կ'ըսենք Փիլիսոփայութիւն քուսակասական ուսման, Փիլիսոփայութիւն գիտութեան:

Ը. Փիլիսոփայութիւնը փիլիսոփայական միտքի վերածուած. — Մեր ժամանակակիցներէն շատեր ուզեցին փիլիսոփայութիւնը վերածել ընդհանուր հետաքրքրութեան մտքի մը միայն, որ անկարող է գիտական վարդապետութեանց գումարութիւն մը կազմելու: Անոնք կը կարծեն թէ փիլիսոփայութիւնը կրնայ կառուցանել ենթադրական դրութիւններ միայն, որոնք սակայն՝ որովհետեւ երբեք պիտի չկարենան ունենալ ճշգրտումի փորձը, այդ պատճառաւ ալ դատապարտուած պիտի մնան ընդմիջտ անսպացոյց մնալու: Արդ, ինչպէս տեսանք, ապացոյցն է գիտութիւն շինողը: Հետեւաբար Փիլիսոփայութիւնը արուեստին կամ բանաստեղծութեան պէս բան մը եղած պիտի ըլլայ, որ, աւելի խորհրդանշաններ կը ստեղծէ քան թէ բացատրութիւններ կուտայ, միտքէ միտք կը փոխուի: «Խոնարհագոյն իմացականութիւնը, ինչպէս վսեմագոյնը, աշխարհը իմանալու իր կերպն ունի, կ'ըսէ Ռընան, ամէն խորհող գիւղիս՝ իր յարմարութեան համեմատ՝ հայելին եղած է տիեզերքին. ամէն կենդանի էակ ունեցած է իր երազը, որ գինքը հրապու-

րած, սնուցած եւ սփռած է. այդ երազը, պերճ թէ փանաքի, տափակ թէ վսեմ, իր փիլիսոփայութիւնն է եղած: — Փիլիսոփայութիւնը այն համեմանքն է, առանց որուն՝ բոլոր կերակուրները անհամ պիտի ըլլային, բայց որ, ինք միայնակ, չի կրնար կազմել կերակուր մը»:

Թ. Փիլիսոփայութիւնը՝ համակարգութիւն գիտութեանց. — Բայց դիւրին է ապացուցանել թէ փիլիսոփայութիւնը փիլիսոփայական միտքէն աւելի բան մըն է. գիտութիւն մըն է ըստ խրում *sui generis* (sui generis): Օկուստ Գոնդ, արգարեւ, զայն կը սահմանէ հակակարգութիւն գիտութեանց, եւ կ'ըսէ թէ անոր առարկան է ցոյց տալ համազասութիւնը կամ ստորադասութիւնը, զոր զանազան գիտութիւններ ունին իրարու վերաբերմամբ: Այս աշխատանքը, որով չ'զբաղիր ո՛չ մէկ մասնաւոր գիտութիւն, պէտք է տեղի տայ առանձին գիտութեան մը, գիտութիւններու այդ գիտութիւնը փիլիսոփայութիւնը պիտի ըլլայ: Հէրպէրտ Սթէնսըր ըսած է գրեթէ միևնոյն իմաստով. Փիլիսոփայութիւնը կատարելապէս միաւորուած գիտելութիւնն է: Այսպէս փիլիսոփայութիւնը փիլիսոփայական միտք ըսուածէն աւելի է, առնուազն գիտութիւն մըն է, գիտութիւնը այն ընդհանուր յարաբերութիւններուն, զորս գիտութիւններն ունին իրարու հետ:

Ճ. Փիլիսոփայութիւնը՝ մտքի ֆունկցիոնալութիւնը. — Ասկէ աւելին է ան. մարդկային մտքի բնագանցական ձգտումը գոյ է գոնէ իբր իրողութիւն, եւ զանազան բնագանցութիւնները արժէք մը ունին գէթ իբր երեւոյթներ: Անտեղի չէ ուրեմն այդ երեւոյթներէն գի-



տուժիւն մը կազմել: Այս զիտուժեան գործը պիտի ըլլայ փնտուել թէ որո՞նք են այն օրէնքները, որոնց համեմատ՝ բնազանցական ձգտում կոչուած այդ իրուղուժիւնը կ'իրականանայ, ու բնազանցական կոչուած այս երևոյթները կը կազմուին: Այս զիտուժեան, որ հաւասարապէս կախում ունի հոգեբանութենէն, տրամաբանութենէն եւ պատմութենէն, զինքը հիմնողը՝ Քանդ՝ Քննադատութիւն անուանէ տուած: Ուրեմն փիլիսոփայութիւնը փիլիսոփայական միտքէն աւելի բան մըն է, և աւելի նոյնիսկ՝ քան զիտուժիւններու համակարգութիւնը, առնուազն ֆենադաքստրիւն մըն է ան է

ԺԱ. Բնագանցական փիլիսոփայութեան մը հրնաւորութիւնը. — Բայց այս քննադատութիւնը կրնայ յանգիլ կրկնակ արդիւնքի մը, կա՛մ բոլոր բնազանցութիւններուն մէջ պիտի ցուցնէ բնազանցական ձգտումի զուտ ենթակայական վիճակներ, պատրուական գոհացումներ, զորս պատճառներու եւ արդիւնքներու հետաքրքիր միտքն ինքզինքին կուտայ, ու այն ատեն Ռընանի ըրած դատումը բնազանցականին համար պիտի գնենք, այս անգամ արդարացնելով և պատճառաբանելով զայն, կա՛մ պիտի ցուցնէ թէ բնազանցական ձգտումը կրնայ օրինապէս գոհանալ, թէ՛ միտքին խորհուրդներուն մէջ ամէն ինչ ենթակայական է, և թէ, նոյն իսկ բնազանցականին մէջ, կարելի է հասնիլ ապացոյցի եւ ապացուցման: Այն ատեն փիլիսոփայութիւնը նախ պիտի բովանդակէ զիտուժիւններու համակարգութիւնը, յետոյ քննադատութիւնը և վերջապէս բնազանցականը: Գիտութիւնը պիտի ըլլայ զիտուժիւններու, մտքին պատկերացուցիչ օրէնքներուն, իրերու ծագումին և վախճանին է

Իրաւունք չունինք հոս այս երկու լուծումներէն մին միւսէն աւելի գերադասելու, բայց կրնանք ըսել թէ փիլիսոփայութիւնը թերեւ իրաւունք ունի այն սահմանին գոր Արիստոսէլ տուած է անոր, կոչելով զայն պասնաուներո գիտարիւն. թէ ամէն պարագայի մէջ՝ մտքի խորունկ քննադատութեան մը միջոցաւ միայն կարելի է այդ սահմանը տալ կամ մերժել անոր, Քանդի ըրածին պէս. և թէ բաց աստի Օկիւստ Գոնդի և Հէրպ. Սթենըրի հետ՝ պէտք է ընդունիլ թէ անոր մէջ կայ զիտուժիւններու համակարգիչ կապ մը: Այսպէս, չենք կրնար կառչած մնալ Ռընանի տեսակէտին վրայ, պէտք է աւելի անդին անցնինք և ընդունինք Օկիւստ Գոնդի և Հէրպ. Սթենըրի տեսակէտը, ու ասկէ՛ց ալ անդին անցնելով՝ ընդունիլ Քանդինը, և միեւնոյն կերպով յառաջանալ մինչև Պլատոնի, Արիստոտէլի, Թոմմա Սգուլինացիի և Լայբնիցի տեսակէտը: Ուրեմն պիտի կարենանք փիլիսոփայութիւնը սահմանել ֆենակալ հեսափրոնքեան միսփ մը, որեւ կը ծնիլ գիտարիւններու համակարգարիւնը, մտքին պակերացուցիչ օրեֆներուն գիտարիւնը եւ քերեւ նաեւ պասնաուներո գիտարիւնը:

ԺԲ. Բաժանում փիլիսոփայական դասընթացի: — Փիլիսոփայական դասընթացքը չի շատանար ուսումնասիրելով միմիայն բնազանցականը կամ բուն փիլիսոփայութիւնը, այլ կ'ուսումնասիրէ նաեւ երեք զիտուժիւններ, որոնք յոյժ անձուկ կապակցութիւն մը ունին բնազանցականին հետ: Ասոնք են. 1. Հոգեբանութիւնը. որուն մէկ մասը, ծանօթութեան տեսաբանութիւնը, անհրաժեշտ է մտքի քննադատութեան համար, և հարկաւոր նախաշաւիղը՝ ամէն բնազանցականի: 2. Տրամաբանութիւնը. որ, ապացոյցին օրէնքները



ուսուճմնասիրելով, կ'իշխէ բոլոր գիտութիւններուն վրայ, ինչպէս բնագանցականին եւս. յընդհանուրն չ'ընկրկիր անոր առջեւ, եւ՝ հետեւաբար՝ փիլիսոփայական առաջնակարգ գիտութիւն մըն է. 3. Բարոյականրոր մարդկային գործերու ծայրագոյն վախճանները կը հետազօտէ, և՝ հետեւաբար՝ անձուկ յարաբերութեան մէջ կը գտնուի բնագանցականին հետ, որ վախճաններու գիտութիւնն է:

Ուրեմն այս դասագիրքը պիտի սկսի նախ Հոգեբանութեամբ մը, որմէ վերջ պիտի դնենք Տրամաբանութեան տարերք մը, յետոյ Բնագանցականի եւ ի վերջոյ Բարոյականի տարերքը: Հիմնուելով մարդուն ծանօթութեան վրայ, զոր մեզի պիտի հայթայթէ Հոգեբանութիւնը, պիտի կարենանք գտնել Տրամաբանութեան օրէնքները. այս օրէնքներուն օգնութեամբ մտքին քննադատութիւնը ընել, ապացուցական Բնագանցականի մը հիմունքը դնել, և, վերջապէս, բնագանցական սկզբունքներու ծանօթութենէն հանել վեհագոյն օրէնքները այն գործունէութեան, զոր Բարոյականը կ'առաջարկէ մարդուն հնագանդութեան:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա. — Նորութեան հանդէպ զգացուած զարմանքը հետաքրքրութիւն կը շարժէ:

Բ. — Հետաքրքրութիւնը կը գոհանայ պատասխանովը այն չորս հարցումներուն որոնք կը կատարուին նիւթին, ձեւին, արդիւնարար պատճառին եւ վախճանին վերաբերմամբ:

Գ. — Այս հարցումներուն պատասխանները, երբ ճշմարիտ և հիմնաւոր են, կը կազմեն ծանօթութիւններ:

Դ. — Գիտութիւնը կը կազմուի իրարու կցորդուած ծանօթութիւններու զուժարութենէ մը:

Ե. — Գիտութիւնները մասնաւոր առարկայի մը մասին ծանօթութեանց զրութիւններ են: Անոնք ընդհանրապէս նիւթի եւ ձեւի վերաբերեալ հարցումներուն միայն կը պատասխանեն:

Զ. — Փիլիսոփայութիւնը պատճառի և վախճանի հարցումներուն կը պատասխանէ:

Է. — Փիլիսոփայական միտքը, ինչպէս գիտական միտքը, քննական հետաքրքրութեան միտք մըն է: Երկուքը անո՛վ կը տարբերին իրարմէ որ գիտական միտքը մասնաւոր է, իսկ փիլիսոփայականը ընդհանուր:

Ը. — Ոմանք ուզեցին լոկ փիլիսոփայական միտքի մը վերածել փիլիսոփայութիւնը: Այն ատեն համեմանք մը միայն պիտի ըլլար ան, անկարող՝ կերակուր մը կազմելու:

Թ. — Բայց Օկիլեստ Գոնդ և Հէրպէրտ Սթենսըր ցոյց տուին թէ փիլիսոփայութիւնը դրական դեր մը ունի զոր պէտք է կատարէ, կատարելով գիտութեանց համակարգութիւնը և ամբողջովին միաւորելով գիտելութիւնը:

Ժ. — Բաց աստի, բնագանցական ձգտումը պէտք ունի բացատրութեան: Այս բացատրութիւնը միտքին քննադատութեամբը միայն կրնայ տրուիլ. ուրեմն փիլիսոփայութիւնը պէտք է ըլլայ նաև ֆևնադատութիւն մը:

ԺԱ. — Եթէ քննադատութեան արդիւնքները նըպաստաւոր են մտքին, փիլիսոփայութիւնը պիտի կարենայ իրաւունք զգալ կազմելու գիտական բնագանցական մը:

ԺԲ. — Փիլիսոփայութեան դասընթացքը կը բաղկանայ Հոգեբանութենէ, Տրամաբանութենէ, Բնագանցականէ և Բարոյականէ:



# ՀՈԳԵՖԱՆՈՒԹԻՒՆ

Գ Ա Ս Ա.

## ՍԱՀՄԱՆ ԵՒ ԱՌԱՐԿԱՅ ՀՈԳԵՖԱՆՈՒԹԵԱՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Սահման եւ առարկայ հոգեբա-  
նութեան. — Բ. Գիտակցութեան երեւոյթը չի սահմանուիր. — Գ.  
Գիտակցութեան երեւոյթը եւ հոգեբանական երեւոյթ. — Դ. Գիտակ-  
ցութեան ասիմանները. — Ե. Գիտողութիւն:

Ա. Սահման եւ առարկայ հոգեբանութեան. —  
Հոգեբանութիւնը բառը կազմուած է հոգի եւ բան բա-  
ռերէն, որոնք կը նշանակեն խօսք հոգիի մասին: Ուրեմն  
հոգեբանութիւնը հոգիին գիտութիւնն է: Բայց մենք  
ուզողակի եւ ըստ ինքեան չենք ձանձնար հոգին, այլ  
կը նշմարենք միայն զայն, մասնաւոր բնութիւն մը  
ունեցող տեսակ մը երեւոյթներու մէջէն, զորս կը կո-  
չենք գիտակցութեան երեւոյթներ: Այս երեւոյթները,  
ինչպէս տիեզերքի բոլոր երեւոյթները, օրէնքներ ու-  
նին: Հոգեբանութեան բուն առարկան է ի յայտ բե-  
րել գիտակցական երեւոյթներու օրէնքները: Ուրեմն  
անիկա պէտք է սահմանուի գիտութիւն գիտակցական  
երեւոյթներու եւ անոնց օրէնքներու: Այս առաջին սահ-  
մանը լրիւ կատարելէն վերջ միայն հոգեբանութիւնը  
պիտի կարենայ հետազօտել անկախական պայմանները  
գիտակցական երեւոյթներուն եւ անոնց օրէնքներուն եւ  
այսպէս ըլլալ հոգիին գիտութիւնը: —



Այսպէս կատարեալ Հոգեբանութիւնը երկու մաս կը պարունակէ, մին Փորձառական հոգեբանութիւնն, որ գիտակցական երեւոյթներով եւ անոնց օրէնքներով միայն կը զբաղի. միւսը Բանական կամ բնագիտական Հոգեբանութիւնն, որ այդ երեւոյթներուն և այդ օրէնքներուն պայմաններն ալ կը հետազօտէ:

Բ. Գիտակցութեան երեւոյթը չի սահմանուիր. — Հոգեբանութիւնը գիտակցութեան երեւոյթներուն գիտութիւնն է. բայց ի՞նչ են գիտակցական երեւոյթները և ինչո՞վ կը զանազանուին տիեզերքի միւս երեւոյթներէն: Գիտակցական երեւոյթը չի կրնար սահմանուել, ամէն սահմանումէ աւելի պարզ ու ամէն ըսուելիքէ աւելի յտակ է ան: Ամէն մարդ գիտէ թէ ի՞նչ կ'ուզէ արտայայտել՝ ըսելով թէ կը տեսնէ, կը լսէ, կը վայելէ, կը տառապի եւ այլն. տեսնելը, լսելը, վայելելը, տառապիլը և այլն գիտակցական երեւոյթներ են:

Գ. Գիտակցական երեւոյթը եւ բնախօսական երեւոյթը. — Բայց տեսնելը, լսելը, վայելելը, տառապիլը և այլն, այս ամէնը՝ չեն կատարուիր առանց կարգ մը ջղային շարժումներու կամ մեր մարմնի կարգ մը եղանակաւորումներուն: Այս երեւոյթները հոգեբանական և բնախօսական են միանգամայն: Բնախօսական՝ զի կը վերաբերին մեր մարմնական գործարանաւորութեան այս կամ այն մասին: Հոգեբանական՝ զի կը զգանք զանոնք մեր մէջ, առանց հարկաւորաբար գործարանի մը ընծայելու զանոնք:

Հոգեբանական երեւոյթները բնախօսական երեւոյթներէն կը զանազանուին երեք գլխաւոր տարբերութիւններով ևս:

ա. Հոգեբանական երեւոյթները դիրք մը միայն ունին ժամանակին մէջ, միջոցին մէջ տարածութիւն չունին, անծաւալ են:

Բնախօսական երեւոյթները թէ՛ դիրք մը ունին ժամանակին մէջ և թէ՛ տարածութիւններ միջոցին մէջ:

Զոր օրինակ, մատի մը կտրուածքը ունի երկայնութիւն, լայնութիւն և խորութիւն, թէև հազարբորդամէթրերով միայն բացատրելի, բայց անկէջ յառաջ եկած ցաւը չի կրնար այս կերպով բացատրուել կամ արտայայտուել: Ծաղրելի պիտի ըլլար ըսել թէ այս ցաւը այսքան մէթր կամ հազարբորդամէթր խորութիւն ունի, և այլն: Եթէ երբեմն տեսութիւնները բարձր, զաղափարները լայն, ցաւերը խորունկ կ'անուանենք, փոխաբերութիւն է այն:

Եւ սակայն գիտակցական երեւոյթները անչափելի չեն: Անոնք իրարմէ կը տարբերին 1. ուժգնութեամբ, 2. տեղութեամբ: Ի մի բան ներոյժ են անոնք և միանգամայն անծաւալ:

Այս առաջին տարբերութենէն կը ծագին երկու ուրիշ տարբերութիւններ:

Բ. Հոգեբանական երեւոյթները ներքին զգացողութեան միայն ըմբռնելի են:

Բնախօսական երեւոյթները արտաքին զգացողութեան միայն ըմբռնելի են:

Գիտակցութիւնը միայն կ'իմացնէ մեզի ցաւ. տեսանելիքը՝ շօշափելիքի հատումէն պատճառուած հիւսուածքի վրասը միայն կ'իմացնեն: Ականջը, այսպէս, տեղեկութիւն կուտայ բժշկին՝ հիւանդին վիճակին վրայ, բայց գիտակցութիւնը միայն կը ծանուցանէ հիւանդին՝ իր անհանդարտութիւնը:

ՏԱՐԵՐ ՓԻԼԽՍ

68-94





գ. Հողբեանական երևոյթները կրնան նշմարուել ամիս ենթակայէն միայն, որուն մէջ կը գտնուին:

Բնախօսական երևոյթները կրնան նշմարուել իրենց յանդիման գտնուող ո՛ր և է անձէ:

Հիւանդը միայն կրնայ զգալ իր վիճակը, ամէն ոք կրնայ ականջել զայն, շօշափել անոր բազկերակը, տեսնել լեզուն, անոր չափ և աւելի աղէկ:

Ուրեմն հոգեբանական երևոյթները յստակ կերպով կ'որոշուին բնախօսական երևոյթներէն: Աւելի շահեկան են անոնք այս վերջիններէն, վասնզի իրենք միայն մեզի կուտան հաճոյք և վիշտ. այդ հաճոյքը և վիշտն են միայն որ կը կազմեն պատահարներու շահեկանութիւնը: Նոյնպէս, շա՛տ աւելի կարևոր են անոնք, վասնզի, առանց գիտակցութեան, առանց հոգեբանական երևոյթներու, բնախօսական երևոյթները անձանօթ պիտի մնային, այսինքն մեզի համար այնպէս պիտի ըլլային, իբրև թէ չըլլային: Ուղեղը՝ առանց զայն տեսնող՝ անոր դպչող և զայն ճանչցող գիտունին գիտակցութեան, ո՛չ պիտի տեսնուէր, ո՛չ պիտի շօշափուէր և ո՛չ ալ ճանչցուէր: Ուրեմն, եթէ կերպով մը ճշմարիտ է ըսել թէ ուղեղը պայման է մեր գիտակցութեան և մեր խորհուրդին գոյութեանը, ոչ նուազ ճշմարիտ է ըսել նաև թէ գիտակցութիւնը և խորհուրդը պայման են ուղեղին ծանօթացմանը:

Գ. Գիտակցութեան աստիճանները. — Բոլոր հոգեբանական երևոյթները, թէև գիտակցական են ամէնքըն ալ, բայց ամէնքն ալ հաւասար աստիճանով չեն այնպէս: Լայնիցի հետ կրնանք զանազանել յսակ և որոշ, յսակ և շիտք, խուշ և աւելի քան խուշ գիտակցական վիճակներ:

1. Յսակ և որոշ վիճակներն անոնք են, զորս ոչ միայն կրնանք իրարմէ գատորոշել, այլ որոնց համար կրնանք նաև ըսել թէ ի՞նչ բանի մէջ և ի՞նչ բանով իրարմէ կը գատորոշուին: Զոր օրինակ. շրջանակի մը գաղափարը յստակ և որոշ է, վասնզի ոչ միայն այդ գաղափարը բոլոր միւս հարթ ձևերու գաղափարէն կը գատորոշենք, այլ նաև յստակօրէն կը տեսնենք թէ ինչպէս կը գատորոշուի անկէ: Այս վիճակները ամէնքն ալ գաղափարներ են:

2. Գիտակցական յսակ և շիտք վիճակները անոնք են, զորս կրնանք իրարմէ գատորոշել, բայց առանց կարենալու ըսել թէ ի՞նչ բանի մէջ և ինչո՞վ: Ըստ այսմ, անգէտի մը համար, կարելի գիտակցական վիճակը կը գատորոշուի կաևայ գիտակցական վիճակէն, որ է ըսել թէ յստակ վիճակներ են անոնք, և սակայն միեւնոյն ատեն շփոթ, վասնզի չի գիտեր թէ կարմիրը ի՞նչ բանի մէջ եւ ինչո՞վ որոշ է կանաչէն: Գիտունը միայն կրնայ գիտնալ զայն բնագիտութեան միջոցաւ: Գիտութեան իսկական նպատակն է մեր մտապատկերները շփոթ վիճակէ որոշ վիճակի փոխանցել, զայն բազկացնող տարրերուն վերլուծումով: Այսպէս, գիտութիւնը զգայութիւնները կը փոխակերպէ գաղափարներու:

3. Գիտակցական խուշ վիճակները գիտակցութեան այն տարրական վիճակներն են, որոնք շփոթ վիճակներու բազկացութեան մէջ կը մտնեն: Այսպէս, խուժանի մը յարուցած ժխորը բազկացնող մէն մի խօսքը կամ շշուկը կը հասնի գիտակցութեան, բայց խուլ վիճակով: Թէև չենք կրնար որոշակի ըմբռնել, բայց կը լսենք զայն, վասնզի եթէ այդ խօսքերէն կամ շշուկներէն և ոչ մին չլսէինք, բնաւ բան մը պիտի չլսէինք:



զագաթին վրայ, բայց մեր մտքին մթին խորութիւնները բնակախիտ են միշտ զեղուն բազմութեամբ մը երեւոյթներու, որ մեր բոլոր զգայարաններուն կը վերաբերին, որ կը թուին չունենալ ոչինչ կարեւորութիւն, որոնք սակայն՝ շատ մեծ և թերեւս ամենամեծ կարեւորութիւն մը ունին գործնական տեսակէտով, վասնզի իրենք են որ ուղղակի կ'ազդեն մեր մկուռնքներուն վրայ:

Ուստի փորձառական հոգեբանութեան մէջ մենք պիտի ունենանք երկու մասեր. մին համապատասխանող՝ խուլ և զգացական երեւոյթներուն, որոնք եսին չեն վերագրուիր (= զգացալսակ հոգեբանութիւն) իսկ միւսը՝ յստակ և անդրադարձ վիճակներուն, որոնք եսին կը վերագրուին (անդրադարձ հոգեբանութիւն):

Եւ սակայն գիտակցական երեւոյթները թուով շատ աւելի նուազ են քան բնախօսականները: Մարմինի վիճակներ կան, որոնց չի համապատասխաներ ոչ մէկ գիտակցական վիճակ: Զգայարանները, զոր օրինակ, պէտք է շատ զօրաւոր գրգռումի մը ենթարկուին, գիտակցութեան՝ իրենց վիճակը արձանագրել կարենալէն առաջ: Այսպէս մէկ երկվայրկեանի մէջ դեռ տասներկու թրթռում չընդունած՝ թէև լսողական ջլղը եղանակաւորում կ'ունենայ, բայց տակաւին գիտակցական վիճակ չի կազմեր, այսինքն ձայնի ո՛ր և է գիտակցութիւն չկայ: Ուրեմն կայ սահման մը, որմէ վար գիտակցութիւնը գոյութիւն չունի: Այդ սահմանը, կը փոփոխի մէն մի զգայարանի հետ: Կայ նոյն իսկ սահման մըն ալ, որմէ վեր գիտակցութիւնը չունի գոյութիւն: Գերման հոգեբանները գիտակցութեան սեմ կամ գրգռումի սեմ կը կոչեն հոգեբնախօսական գրգռումի խոնարհագոյն աստիճանը, զոր գիտակցութիւնը կ'արձանագրէ:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Հոգեբանութիւնն այսպէս կը սահմանուի. գիտութիւն գիտակցական երեւոյթներուն եւ անոնց անմիջական պայմաններուն: Այդ սահմանին առաջին մասը կը վերաբերի փորձառական հոգեբանութեան, երկրորդը՝ բանական հոգեբանութեան:

Բ. — Փորձառական հոգեբանութեան սեփական առարկան է գիտակցական երեւոյթը, որ չի կրնար սահմանուիլ:

Գ. — Այս երեւոյթը երեք հանգամանքներով կը զանազանուի բնախօսական երեւոյթէն. 1. Անձաւալ է. մինչ բնախօսական երեւոյթը ծաւալուն է. 2. Ներքին զգացողութեան առարկայ է, մինչ բնախօսական երեւոյթը առարկայ է արտաքին զգացողութեան. 3. Ենթակային միայն նշմարելի է, մինչդեռ բնախօսական երեւոյթը ենթակայէն զատ էակներու ալ կրնայ նըշմարելի ըլլալ:

Դ. — Գիտակցութիւնը զանազան աստիճաններ ունի: Լայնից որոշած է յստակ եւ որոշ վիճակներ, յստակ և շփոթ վիճակներ, խուլ և աւելի քան խուլ վիճակներ:

Ե. — Յստակ վիճակներն անոնք են որ իրեն կը վերագրուին, և առարկայ են անդրադարձիկ հոգեբանութեան. խուլ վիճակները բացայայտ կերպով չեն կրնար վերագրուիլ իրեն, և անոնք են որ կը կազմեն կարեկան հոգեբանութեան առարկան:



## ՊԱՍԹ.

## ՀՈԳԵՐԱՆՈՒԹԵԱՆ ՄԵԹՈՏԸ

ԲՈՎԱՆԳՈՒԹԻԻՆ. — Ա. Մեթոսին հանգրուանները. — Բ. Հոգեբանութեան պատմական զարգացումը. — Գ. Ձևնութիւն. Չգացողութիւն. — Դ. Անձկութիւն ներհայեցողութեան. — Ե. Արտաքին զրկումութիւնը. — Զ. Օրէններու բանաձեւ. — Է. Փորձարկութիւն:

Ա. Մեթոսին հանգրուանները. — Հոգեբանութիւնը, փորձառական գիտութիւն մ'ըլլալով՝ այսինքն իրողութիւններու գիտութիւն մը, նպատակ ունի նախ ուսումնասիրել այդ իրողութիւնները, յետոյ ի յայտ բերել անոնց օրէնքները. ինչպէս բնագիտութիւնը նըպատակ ունի ուսումնասիրել ծանրութեան, ջերմութեան, լոյսի, էլեքտրականութեան և այլն իրողութիւնները և ի յայտ բերել անոնց օրէնքները: Հետեւաբար հոգեբանութիւնը պէտք է 1. զննէ գիտակցական իրողութիւնները. 2. բանաձեւ անոնց երևումին օրէնքները. 3. փորձառապէս ստուգէ այդ օրէնքները:

Բ. Հոգեբանութեան պատմական զարգացումը. — Մեթոսին այս հանգրուաններէն իւրաքանչիւրին պատմականապէս կը համապատասխանէ հոգեբանական գիտութեան զարգացումի գիմայեղում (phase) մը:

Երկար ժամանակ Հոգեբանութիւնը ծառայութեան միջոց մը միայն եղաւ բնագիտութեան, տրամաբանութեան և բարոյականին: Կը շատանային, զննելով միայն անհրաժեշտ իրողութիւնները, հաստատելու համար այդ երեք գիտութիւններուն օրէնքները. հին փիլիսոփաներուն հոգեբանութիւնը ճանչնալ ուզողը,

անոնց զործերուն զանազան տեղերուն մէջ պէտք է փնտռէ զայն:

Լոքէն սազի'ն է որ աշխատեցան հոգեբանութիւնը անկախ և անջատ գիտութիւն մ'ընել, ինչ որ իրականացաւ սկիզբացի փիլիսոփաներուն գրուած քննարկում մէջ միայն:

Յրանսացիներէն ասոնց հետևողները եղան. Ժ.Թ. դարու Ա. կիսուն մէջ, Garnier և Jouffroy, Ընտրողական դպրոցէն: Իր կազմութեան այս առաջին հանգրուանին մէջ, հոգեբանութիւնը ո'չ այլ ինչ է եթէ ոչ գիտակցական երևոյթներու նկարագրութիւն մը եւ դասակարգութիւն միայն: Այս պարագային, հոգեբանութիւնը նկատուած կ'ըլլայ իբր Բնական Պատմութիւն մը, որ կը յանգի ի վերջոյ՝ դասակարգութեան: Garnier'ի «Ճառ հոգոյ կարողութեանց մասին»ը այս շրջանի ուսումնասիրութեանց ամփոփումն է:

Քիչ վերջը ա'լ չուզեցին գոհանալ երևոյթներուն նկարագրութեամբը, ուզեցին բացատրել անոնց արդիւնքները: Հոգեբանութիւնը այն ատեն ձգտեցաւ բնագիտութիւն մ'ըլլալ: Աշխատեցան զուգորդութեան շնորհիւ գտնել երևոյթներու յաջորդութեան օրէնքները, հետևողները նախորդներու միջոցաւ բացատրելու համար: Ամենէն աւելի սկիզբական զուգորդական դպրոցը (որ այսպէս կոչուած է, վասնզի զուգորդութեամբ կ'ուզէ բացատրել բոլոր հոգեբանական երևոյթները) եղաւ հոգեբանութիւնը այդ ճամբուն մէջ դնողը:

Վերջապէս, աշխատեցան չափել հոգեբանական երևոյթներու ներոյժութեան յարաբերութիւնները, հոգեբանութիւնը ուզեց այն ատեն թուագիտական բնագիտութեան ձևը հազնիլ: Ու եղաւ Հոգն-բնագիտութիւն:



Այս կերպը աւելի գերմանիոյ մէջ յարգի է այժմ: Գերմանիոյ մէջ նախ զարկ տրուեցաւ անոր. Հոգեբանութեան աշխատանոց մը կազմուեցաւ նաև ի Բարիզ, Բարձրագոյն ուսմանց դպրոցը:

Գ. Զննութիւն. Ներքին զննութիւն. — Երկու տեսակ զննութիւն կայ, զորս կը գործածէ Հոգեբանութիւնը. ներքին զննութիւն և արտաքին զննութիւն: — Պէտք է առաջինին վրայ խօսիլ նախ:

Առանց ներքին զննութեան, գիտակցական երեւոյթներուն գոյութիւնը մեր միտքէն անգամ պիտի չանցնէր: Ի՞նչպէս պիտի գիտնայինք թէ ի՞նչ է խորհիլը, վայելիքը, ստուսիլը, եթէ չզգայինք մե՛ր իսկ ստուսիլը՝ վայելիքը՝ խորհիլը: Զննութեան առաջին և հոգեբանութեան տրամագրելի միջոցն է ուրեմն ներքին զննութիւնը կամ ներհայեցողութիւնը: Անմիջական գիտակցութեան կամ յիշողութեան շնորհիւ արդարև գիտենք մենք թէ ինչ կը պատահի մեր ներսը: Ինքըզինքնիս ուսումնասիրելով, պիտի տեսնենք թէ ի՞նչպէս յառաջ կուգան, կը զարգանան և կ'անյայտանան գիտութեան զանազան երևոյթները: Այսպէս, ճանչնալու համար բարկութիւնը, իր պատճառներն ու արգիւնքները, կրնամ յիշել այն բաները որոնք զիս բարկացուցին, և այն բաները՝ զորս ըրի բարկացած միջոցին, և ինչ որ յետոյ պատահեցաւ:

Այն առարկութեան՝ թէ ներքին զննութիւնն անկարելի է, վասնզի անկարելի է որ մարդ ինքզինքը զննէ՝ առանց դադրեցնելու իր զննել ուզած գիտակցական վիճակը (այսպէս, իր զայրոյթը զննել ուզելը՝ յայտնապէս դադրեցնել պիտի ըլլար այդ զայրոյթը), կրնանք սապէս պատասխանել. 1. Մարդս գործած

վայրկեանին չէ որ կը զննէ ինքզինքը, նախ կը գործէ և յետոյ, յիշողութեան շնորհիւ, կը զննէ գործելէ վերջը. 2. Երբեմն կը պատահի որ ծայրայեղ գործունէութիւնը կը ջնջէ գիտակցութիւնը եւ ներոյթ անդրագարձումը կը ջնջէ գործունէութիւնը, բայց այս պարագաները սակաւադէպ են: Շատ քիչ անգամ կը պատահի որ մարդ ա՛յնքան բարկանայ որ չգիտնայ իր ըրածը. քիչ անգամ կը պատահի կարի՛ մտասոյզ ըլլալ, քալելը՝ շնչելը՝ գործելը և այլն չզգալու աստիճան: Միջին վիճակին մէջ ուր կը գտնուինք գրեթէ միշտ, թէ՛ գործունէութիւն կայ եւ թէ՛ գործունէութեան գիտակցութիւն:

Գ. Անձկութիւն ներհայեցողութեան. — Ճիշդը խօսելով, միայն ներքին զննութիւնը պիտի կարենար բաւական ըլլալ: Արդարեւ, ինչպէս որ, բնագիտութեան մէջ, ինկող միակ մարմինի մը զննութիւնը կը բաւէ ճշտորոշելու ծանրութեան օրէնքները, նոյնպէս միակ գիտակցութեան մը զննութիւնը կրնար բաւել ի յայտ բերելու համար գիտակցութեան օրէնքներն ընդհանրապէս: Ուրեմն հոգեբանութիւնը կրնար բաւարար խարխիս մը ունենալ ներքին զննութեան մէջ, բայց պէտք է ընդունիլ թէ այդ խարխիսը անձուկ պիտի ըլլար:

Գիտակցութեան ընդհանուր օրէնքները կը գրտնուին մեր՝ ինչպէս բոլոր միւս անհատական գիտակցութիւններուն մէջ, բայց մասնաւոր երևոյթները, որոնց մէջ կը յայտնուին այս օրէնքները, կը զանազանուին անհատէ անհատ: Այսպէս միւսնոյն սկզբնական օրէնքներուն համեմատ է որ կը կազմուին եսայաչափ նկարագիրն ու վեհանձն նկարագիրը. և սակայն



եսապաշտին համար դժուարին եւ թերեւս նոյն իսկ անկարելի պիտի ըլլայ յաջողիլ, միմիայն իր զննութեամբը՝ հաստատելու թէ աշխարհի մէջ վեհանձն նկարագիրներ կան: Ներքին զննութեան միջոցաւ հոգեբանութեան հայթայթած խարխիւսը կը լայնցնէ մարդ՝ դիմելով զննութեան երկրորդ տեսակին, որ է արտաքին զննութիւնը:

Ե. Արտաքին զննութիւնը.— Կարելի է մտնել ուրիշին գիտակցութենէն ներս. պէտք է ուրեմն շատանալ հանգիստութիւններով, որոնք մեզի թոյլ կուտան մեր զգացածէն անցնիլ մեր չզգացածին: Քանի որ ուրիշ էակներուն կատարած արտաքին շարժումները միայն կրնանք նշմարել, անոնց գիտակցութեան մէջ տեղի ունեցածը պիտի կարենանք ճանչնալ՝ հանդիսութեան տրամախոհութեամբ մը միայն, որուն խարխիւսը պիտի ըլլայ նորէն ներքին զննութիւնը: Այսպէս, տեսնելով որ անասուն մը կամ մարդ մը կը կատարեն այնպիսի շարժումներ, որոնց նմանները մենք ալ կատարած ենք գիտակցական նոյնանման վիճակներով, պիտի ըսենք թէ այդ անասունը կամ մարդը գիտակցական նոյն այն վիճակներն ունին, զորս մենք ունեցած ենք: Տեսնելով, զոր օրինակ, թէ ձի մը ականջները կը տնկէ և կ'ընկրկի, կամ շուն մը կը ցատկէ՝ պսշը շարժելով, պիտի ըսենք թէ առաջինը կը վախնայ, իսկ երկրորդը ուրախ է:

Այսպէս, ուրիշներուն գիտակցութեանց մէջ անցածները կրնանք գիտնալ, շնորհիւ այն արտաքին հետեանքներուն, զորս կը պատճառեն ներքին նախընթացները: Այս արտաքին հետեանքները երեք տեսակ են:

1. Առանձին գործողութիւններ, ձիուն ընկրկելը, շունին ցատկելը:

2. Յօրինուածեալ (systématisé) գործողութիւններ, բարքեր, պատմութիւն: Անասուններուն և մարդերուն բարքերը անոնց մտքի վիճակը կը յայտնեն մեզի:

3. Յօրինուածեալ գործողութիւններ, որոնք նըպատակ ունին գիտակցական վիճակներու արտայայտումը, լեզուն: Լեզուն, բոլորովին մասնաւոր կերպով մը, թափանցել կուտայ մեզի՝ զայն գործածողներուն գիտակցութեանը մէջ: Լեզուն հիմնական օրէնքները, մտածումին արտայայտութիւնը, մտածումին օրէնքները նոյն իսկ կրնան ըլլալ:

Զ. Օրէնքներու բանաձեւ.— Երկու զննութիւններու միջոցաւ, բաւական մեծ թիւով իրողութիւններ հաւաքելէ վերջ՝ պիտի նկատենք թէ ինչ ինչ իրողութիւններ անփոփոխ կերպով առաջ կամ ետքը կ'ըլլան կարգ մը ուրիշ իրողութիւններէ: Անոնք որ միշտ առաջ կ'ըլլան՝ կը կոչուին նախընթացներ, իսկ յետոյ եղածները՝ Հետորոյններ: Այն ատեն կ'ըսենք թէ օրէնք կայ: Ուրեմն օրէնքը երկու իրողութիւններու միջև հաստատուն յարաբերութիւնն է: Երբ մին իրականանայ՝ միւսն ալ կ'իրականանայ. երբ մին անհետի՝ միւսն ալ կ'անհետի: Զոր օրինակ, հոգեբանը, հաստատելէ վերջ թէ գործ մը խորհուելէ եւ մտապատկերուելէ վերջ միայն կ'իրականանայ, եւ թէ մտապատկերը ո՞րքան կենդանի ըլլայ, գործն ալ ա՛յնքան դիւրութեամբ կը կատարուի, սա օրէնքը կը բանաձեւէ. ամէն գաղափար ոյժ մըն է, ամէն մտապատկեր շարժիչ ազդեցութիւն մ'ունի:



է. Փարձարկուքիւն.— Բայց մարդ կրնայ սխալիլ օրէնքներու բանաձևումին մէջ. բանաձևուած օրէնքը ենթադրական կը մնայ՝ մինչև որ կարենանք հայթայթել անոր ապացոյցը, այսինքն մինչև որ կարենանք յստակօրէն ցոյց տալ թէ իրերը իրականութեան մէջ ալ պիտի կատարուին բանաձևին համեմատ: Փորձառական գիտութեանց մէջ ապացոյցը փորձարկութեամբ ձեռք կը բերուի: Ուրեմն որպէսզի հոգեբանութիւնը ճշմարիտ փորձառական գիտութիւն մ'ըլլայ, պէտք է որ գիտակցական երևոյթը կարենայ ենթարկուիլ փորձարկութեամբ ճշգրտումի:

Փորձարկելը ո՛չ այլ ինչ է եթէ ոչ կամովին արտադրել երևոյթ մը, վստահ ըլլալու համար թէ հետևորդ երևոյթը, որ օրէնքին համեմատ յառաջ պիտի գար, արդարեւ յառաջ կուգա՞յ: Դիցուք թէ բանաձևած ըլլանք սա օրէնքը. Ա. մշտապէս կապուած է Բ. ի. զայս փորձարկելու համար, պիտի մէջտեղ բերենք Ա. ը՛ տեսնելու համար թէ Բ. ը յառաջ պիտի գա՞յ, կամ Բ. ը՛ տեսնելու համար թէ առանց Ա. ին պիտի կարենա՞յ գոյանալ: Եթէ Ա. ին գոյանալէն վերջ Բ. ը յառաջ չի գար, կամ եթէ Բ. կրնայ գոյանալ առանց Ա. ին, ըսել է թէ անոնք անփոփոխապէս իրարու կապուած չեն և հետևաբար բանաձևուած օրէնքը սխալ է, և պէտք է մերժուի:

Հոգեբանութեան մէջ երկու կերպով կարելի է փորձարկել. 1. ներկայիս, երևակայութեամբ: Երևակայութեամբ մարդս ինքզինք կը դնէ տուեալ դիրքի մը մէջ, տեսնելու համար թէ գիտակցական այս ինչ յիշակը յառաջ պիտի գա՞յ բնական կերպով: Զօր օրինակ, եթէ կ'ուզենք գիտնալ թէ իրա՞ւ է որ Հարբակոն՝ Յլէշի ձեռքերն անգամ մը տեսած ըլլալէ

վերջ (Ա.Գ.Ա.ՀԸ, ար. Ա. տես. 3), առաջարկած ըլլայ անոր՝ միջուկն ալ ցուցնել, պէտք է երևակայութեան միջոցաւ Հարբակոնի դիրքին մէջ դնենք ինքզինքնիս: Գրական քննադատութիւնը նմանօրինակ պարագաներու մէջ միշտ այս կերպը գործածած է: Չ. արսպնապիս. կարելի է փորձարկել վարձքի կամ պատիժի գրութեան մը և կամ ուսուցման կերպի մը արդիւնքը: Կարելի է նաև փորձարկել ֆնսմալիան քերադրութեան միջոցաւ: Ամէն ոք գիտէ արդարեւ թէ ինչ ինչ արուեստական գործողութիւններով, զոր օրինակ աչքին առջև փայլուն առարկայ մը բռնելով կամ խաղցընելով, քնացուած ենթական, քունի միջոցին ալ կը պահէ իր հաղորդակցութիւնը զինքը քնացնող անձին հետ: Սա կրնայ խօսիլ անոր, մտածութիւններ կամ գործեր քերայրել: Այս է ահա քերայրութիւն կոչուածը: Քնացող ենթակային կը թելադրեն նախընթացը, տեսնելու համար թէ հետևորդը պիտի յառաջ գա՞յ, կը թելադրեն հետևորդը, տեսնելու համար թէ կրնա՞յ գոյանալ առանց նախընթացին: Յոյց տալու համար, զօր օրինակ, թէ փափաքը զգացողութեան կապուած է, բաւական է շաքարեղէն շա՛տ սիրող ենթակայի մը քնածական քունի միջոցին՝ թելադրել թէ երբ արթըննայ՝ շաքարեղէնները նողկանք պիտի պատճառեն իրեն: Արդարեւ, երբ արթննայ, պիտի տեսնէք որ զգուելով պիտի մերժէ իրեն ներկայացուած ամէն անուշեղէն. որովհետև զգացողական ազդեցութիւնները այլայլուեցան թելադրութեան միջոցաւ, փափազին ուղղութիւնն ալ կ'այլայլի: Փորձառութեան այս կերպը մեծ խոհեմութեամբ պէտք է կատարել. վասնզի քնածութեան կրնան ծագիլ շատ լուրջ վտանգներ:



Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա.— Հոգեբանութիւնը, իբրև փորձառական գիտութիւն պարտի 1. Զննել. 2. Ենթադրութիւնները քննել. առժամեայ օրէնքներ բանաձևել. 3. Փորձարկութեամբ ճշմարտել այս ենթադրութիւնները:

Բ.— Հոգեբանութիւնը, իր պատմութեան ընթացքին մէջ, իր մեթոտին գիմայեղումներն ունեցած է: Բնազանցութեան, տրամաբանութեան և բարոյականին լոկ սպասարկու մ'ըլլալէ վերջ, ինքն իրեն համար սեփական վախճան մը կազմելով զննութիւնը իրեն հիմ ըրաւ և եղաւ բնական պատկերիս մը, յետոյ, ենթադրութիւնը և փորձարկութիւնը ծառայեցնելով իրեն՝ եղաւ բնագիտութիւն, և այժմ կը ձգտի ըլլալ բնագիտական բնագիտութիւն մը:

Գ.— Զննութիւնը նախ ներքին կերպով կը կատարուի, գիտակցութեան ձեռամբ, և նոյն ատեն կը կոչուի ներհայեցողութիւն. ներհայեցողութիւնը ո՛չ միայն կարելի է, այլև, ճիշդը խօսելով, կրնայ ինք միայն բաւական ըլլալ:

Դ.— Եւ սակայն, իր ներկայացուցած դաշտը ամէն պարագայի մէջ շատ անձուկ է:

Ե.— Օգտակար է անոր անմիջապէս կցել արտաքին զննութիւնը:

Զ.— Զննութիւններէն կը հանուին ենթադրութիւններ կամ առժամեայ օրէնքներ:

Է.— Փորձարկութիւնը կ'ապացուցանէ ենթադրութիւններուն ճշմարտ կամ սխալ ըլլալը, և այսպէս, եթէ ճշմարտ են, օրէնքի կը փոխէ զանոնք: Հոգեբանութեան մէջ, փորձարկութիւնը երկու կերպ կրնայ ըլլալ. ներքին և արտաքին:

Պ Ա Ս Պ

ԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Գիտակցութիւնը եւ հոգեբանական երեւոյթներ. — Բ. Կա՞ն անգիտակից երեւոյթներ. — Գ. Ընդհանուր դասաւորում գիտակցական երեւոյթներու. Կարողութիւններ. — Դ. Երե՞ կարողութիւններ. Զգացողութիւն. Իմացականութիւն. Կամք. — Ե. Այս դասաւորութիւնը հարկաւոր է. — Զ. Այս դասաւորութիւնը բաւարար է:

Ա. Գիտակցութիւնը եւ հոգեբանական երեւոյթները. — Գիտակցութիւնը, ինչպէս տեսանք, որոշիչ նկարագիրն է այն երեւոյթներուն զորս կ'ուսումնասիրէ հոգեբանութիւնը: Ընդհանրապէս, հոգեբանները այս նկարագիրը հոգեբանական երեւոյթներուն յարակից վիճակ մը կը նկատեն, այսինքն իբրև բնախօսական երեւոյթներէն զանոնք զանազանող հանգամանք մը միայն: Գիտակցութիւնը՝ անոնց կարծիքով՝ չէ տեսակ մը տեսողութիւն որ երեւոյթները կը նշմարէ իրմէ անջատաբար, որոնք, առանց այդ տեսողութեան, անգիտակից պիտի մնային, ինչպէս աչքը անջատ է իր տեսած առարկաներէն, որոնք՝ եթէ աչքին վրայ այդ տպաւորութիւնը չընէին՝ պիտի չտեսնուէին: Ուրեմն անոնք գիտակցութիւնը կը համարին ոչ թէ առանձին և անջատ կարողութիւն մը այլ աւելի՛ բոլոր կարողութեանց ընդհանուր ձեւ մը:

Բ. Անգիտակից երեւոյթներ կա՞ն. — Այս կարծիքէն չեղող հոգեբանները, կը պնդեն ընդհակառակն թէ հոգեբանական երեւոյթները բնականօրէն անգիտակից են, եւ թէ անոնցմէ անոնք միայն կ'երեւին գի-



տակցութեան, որոնք կը լրացնեն ներդրութեան եւ տեւողութեան ինչ ինչ պայմանները. ըստ այսմ գլխաւոր տակցութիւնը նոր յատկութիւն մըն է, որ կը յաւելաւորուի ուրիշ յատկութիւններով արդէն կազմուած երևոյթներուն վրայ. անիկա ուրեմն յարեւոյթ (épiphénomene) մ'է լոկ: Գիտակից երևոյթը՝ անոնց համար՝ հոգեբանական երևոյթ մըն է, իր վրայ աւելի ունենալով գիտակցութիւնը:

Կ'աշխատուի այս հաստատումը սպացուցել հետագայ կամ անոր նման փորձառութեամբ մը: Որպէս զի ձայն մը կարենայ գիտակցութեան հասնիլ, պէտք կայ մէկ երկվայրկեանի մէջ տասներկու թրթռումներու. բայց եթէ պարզ թրթռում մը հոգեբանական ոչինչ երևոյթ մը կ'արտադրէ, զբօյի հաւասար, տասներկու նման երևոյթները պիտի չկարենային արտադրել ըմբռնելի երևոյթ մը, վասնզի  $12 \times 0 = 0$ , պէտք է ուրեմն որ մէն մի թրթռում համապատասխանէ գիտակցական երևոյթի հոգեբանական երկոտասաներորդի մը: Այս երկոտասաներորդը հոգեբանական և նոյն ատեն անգիտակցական է:

Այս փաստարկութիւնը կարենալ քննադատելու համար պէտք է որ ամբողջութեանը մէջ վերահաստատենք զայն: Անոր մեկնակէտն է սա լռելեայն սկզբունքը. պատճառի ամէն մաս կ'արտադրէ արդիւնքի մաս մը: Արդ, քանի որ թրթռում մը պատճառի մաս մըն է, ուրեմն պէտք է արտադրէ արդիւնքի մաս մը, այսինքն կարենայ ըլլալ հոգեբանական երկոտասաներորդ մը:

Բացայայտ է սակայն թէ սկզբունքը՝ որուն վրայ կը յենուն և զոր ա'յնքան անվիճելի կը համարին որ նոյն իսկ աւելորդ կը նկատեն զայն յիշատակելը, ոչ

միայն վիճելի է, այլ և բոլորովին սխալ: Արդարեւ, ջերմութեան տասն աստիճանները մէկ մասն են եռացումի պատճառին, և սակայն, անոնք եռացումի ամենափոքրիկ սկզբնաւորութիւն մը անգամ յառաջ չեն բերեր: Արդիւնք մը այն ատեն կը գոյանայ, երբ իր բաւարար պայմաններուն գումարութիւնը կ'իրականանայ. եթէ այդ պայմաններէն միայն մէկ հատը պակսի, արդիւնքը սկսելէ անգամ կը դադրի:

Այսպէս, ձայնին հոգեբանական երևոյթը պիտի սպասէ որ իր բոլոր պայմանները արդիւնանան, և ինք անկէ վերջը պիտի իրականանայ, այսինքն ա'յն ատեն միայն պիտի իրականանայ, երբ մէկ երկվայրկեանի մէջ գոնէ տասներկու պարզ թրթռումներ ունենանք:

Բաց աստի, ի՞նչ պիտի ըլլար ամբողջովին անգիտակից երևոյթ մը: Այս բանն է որ կարելի չէ երեւակայել: Ճիշդը խօսելով, այս երկու բառերը ( $=$  հոգեբանական և գիտակցական) հոմանիշ են: Գիտակցութեան և հոգեբանութեան կալուածը միեւնոյն է: Ինչպէս առաջին դասին մէջ ըսինք, կան գիտակցական խուլ կամ ստորին վիճակներ, որոնք դարձեալ նոյն չափով գիտակցական կ'ըլլան, բայց չի կրնար ըլլալ բացարձակապէս անգիտակից հոգեբանական երևոյթ: Մեր մէջ ինչ որ անգիտակից է՝ բնախօսութեան կը վերաբերի, և ոչ թէ հոգեբանութեան:

Գ. Ընդհանուր դասաւորութիւն գիտակից երևոյթներու. Կարողութիւնները. — Հոգեբանութիւնը աւելի բնական պատմութիւն մը նկատելէ վերջ, պէտք է ջանալ դասաւորելու գիտակցական երևոյթները:

Լեզուն և հոգեբանութիւնը, այսինքն հասարակաց զգացումը և փիլիսոփաները համաձայն են բազմա-



թիւ դասակարգերու բաժնելու համար գիտակից երեւոյթները: Այս դասակարգերէն իւրաքանչիւրին տըրուած է կարողութիւն անունը: Եթէ, արդարեւ, մեր մէջ կը գտնուին զգացողական երեւոյթներ, պատճառն այն է որ մենք զգացող ենք, զգալու կարողութիւն ունինք:

Բայց պէտք է զգուշանալ այս կարողութիւն բառը բացատրութիւն մը համարելէ: Մենք կարողութիւնները զիրենք ցուցակող երեւոյթներէն միայն կը ճանչնանք: Հետեւաբար երեւոյթները մեզի աւելի ծանօթ են քան կարողութիւնները, և ոչինչ աւելի հակառակ է լաւ մեթոտի մը՝ քան ոչ-յստակը ոչ-յստակագոյնով կամ խորիկը խորկագոյնով բացատրելու կերպը: Կարողութիւն բառը զիւր բառ մըն է՝ որ նաեւ կը համապատասխանէ բնագանցական ճշմարտութեան մը, զոր, սակայն, հոգեբանութեան մէջ պէտք է գործածել իբրեւ պիտակ անուն մը լոկ՝ երեւոյթներու հոյլ մը նշանակելու սահմանուած: Ուրեմն ա՛յնքան կարողութիւններ պէտք է կենան, որքան կան գիտակից երեւոյթներու դասախումբեր:

Գ. Երեւ կարողութիւնները. — Արդ, այս երեւոյթները կը բաժնուին երեք դասախումբի. զգացողական երեւոյթներ, իմացողական երեւոյթներ, կամեցողական երեւոյթներ, որով եւ պէտք կ'ըլլայ զատորոշել երեք կարողութիւններ, Զգացողութիւն, իմացականութիւն և կամք:

Զգացողութիւն. — Զգացողական երեւոյթները կը բաժնուին ճակատագրական են, և ունակութեամբ կը նուազին: Այսպէս, այս թուղթին տեսքը հարկա-

դրուած կ'ըլլայ ինծի երբ աչքերս իր վրայ բանամ. կ'ընդունիմ այս տպաւորութիւնը, կը կրեմ զայն, կը տոկամ անոր, ուրեմն կրաւորական է ան. ցորչափ նշանակուած պայմանները կը տեւեն, չեմ կրնար ջնջել այդ տեսքը, ուրեմն ճակատագրական է ան. հետըզհետէ սակայն, եթէ աչքերս միշտ թուղթին վրան սեւեռեմ, տեսքը պիտի տկարանայ: Այս բոլոր յատկանիշները կրնան գիտուել հոտի մը, համի մը վրայ, եւայլն:

Իմացականութիւն. — Իմացողական երեւոյթները ճակատագրական և ներգործական են: Ունակութիւնը անոնց վրայ այլ եւս չունի ոչ մէկ ազդեցութիւն: Երբ թուաբանական յաւելում մը կը կատարեմ կամ երկրաչափական հայեցողութիւն մը կ'ապացուցանեմ, կը զգամ թէ կը գործեմ. ուրեմն երեւոյթը ներգործական է. բայց երեւոյթին վերջնական եղափոխումը ինձմէ կախում չունի. գործողութեան արդիւնքը կամ հայեցողութեան ապացոյցը անհրաժեշտաբար կը հարկագրուին. ուրեմն երեւոյթը ճակատագրական է: Որչափ ալ վերակրկնեմ յաւելման գործողութիւնը կամ հայեցողութեան ապացուցումը, աւելի յստակ պիտի չտեսնեմ ճշմարտութիւնը, բայց ոչ ալ պիտի նուազի անոր յստակութիւնը: Դիւրին է ճշմարտել այս օրէնքները՝ իմացական ուրիշ երեւոյթներու վրայ ալ:

Կամք. — Կամեցողական երեւոյթները ներգործական և ազատ են: Եթէ ուզեմ որսի երթալ կամ աշխատութեամբ պարապիլ, քաջ կը զգամ՝ թէ որոշելով կը գործեմ. կը զգամ նաեւ, երբ վրան անդրադառ-



նամ, թէ կրնայի ուզածէս տարբեր բան մը ուզել. ուրեմն երևոյթը ինծի ազատ կ'երևի անդրադարձու- թեան մէջ, ինչպէս ներգործական կ'երևի արդէն զայն կատարած վայրկեանէս նոյն իսկ. դիւրին է միեւնոյն յատկանիշերը հաստատել կամ քի ուրիշ ամէն գործի մէջ:

Ե. Այս դասաւորումը հարկաւոր է. — Անկարելի է ուրանալ որ այս դասախմբումը իրական և անզեղ- չելի զատորոշումներու կը համապատասխանէ: Ան- կարելի է միեւնոյն դասախումբին մէջ շարել այնպիսի երևոյթներ որոնք հակասական ստորոգելիներ ունին. անկարելի է միասին դնել ներգործական երևոյթներ եւ կրաւորական երևոյթներ. աւելի եւս անկարելի է իրարու հետ շփոթել ճակատագրական և ազատ երե- ւոյթները: Հարկ է ընդունել երևոյթներու գոնէ երեք դասախումբ և հետեւաբար երեք կարողութիւններ, զորս վերեւ ցոյց տուինք:

Զ. Այս դասաւորումը բաւարար է. — Բայց ա՛լ ու- ըրիչներ ևս ընդունելու հարկ չկայ: Ժուժրուա կ'ըն- դունէր, զոր օրինակ, վերոյիշեալ երեք կարողու- թիւններէն զատ, նախնական հակումները, տեղաշար- ժիչ կարողութիւն մը և արտայայտիչ կարողութիւն մը: Բայց հակումները հաճոյքին ու վիշտին կը վե- րաբերին. հետեւաբար՝ զգացողութեան. եթէ ես, զոր օրինակ, ընթերցումի հակում ունիմ, եթէ կը սիրեմ կարգալ, ա՛յն է պատճառը որ կարգալէն հաճոյք կը զգամ. տեղաշարժութիւնը՝ բնախօսական գործ՝ հոգեբանութեան չի վերաբերիր. արդարեւ սրունքի կամ ոտքի ջիղերուն և մկաններուն գործունէութիւնը

բնախօսական է միայն. իբրև հոգեխօսական գործու- ղութիւն՝ կամեցողութենէն կախեալ է ան. վասնզի եթէ ջիղերը և մկանները կը սկսին շարժիլ, պատճա- ուր ա՛յն է որ կ'ուզեմ քալել. լեզուն կախեալ է յու- ղումէն, և անոր միջոցաւ՝ զգացողութենէն, իմացու- ղութենէն և կամքէն: Պէտք է ներքին առաջարկուած այս դասաւորումէն աւելին ուզել:

Կարևոր է ի վերջոյ գիտել տալ նաև որ, եթէ վե- րացումով կրնանք զատորոշել այս երեք տեսակ երե- ւոյթները, անոնք՝ սակայն՝ իրականութեան մէջ այն- քան անձուկ կերպով կապուած են իրարու, որ մեր գիտակցական կեանքին ամէն մէկ վայրկեանին անոնք միշտ ալ կը համադրուին իրարու:

Միայն զգացողութիւնն է թերևս որ կրնայ գոյ ըլլալ առանց իմացականութեան և առանց կամքի: Խորհրդա- ծութենէն անջատաբար, կրնանք ընդունել զգայու- թիւններ, զգալ հաճոյքներ կամ վիշտեր, թէև զանոնք զգանք տարտամօրէն, այսինքն առանց բանի մը կամ մէկու մը ընծայելու զանոնք, կամ առանց անոնց միացնելու ո՛ր և է կամեցողական շարժում: Աւելի կամ նուազ խուլ այս երևոյթներն են զորս յետոյ պիտի ուսումնասիրենք զգացական երևոյթներ անունին տակ: Բայց չկայ իմացական երևոյթ՝ որ սերտիւ միա- ցած չըլլայ զգացական երևոյթներու հետ, եւ ու- ըրեն մէջ որ եւ է արձագանգ զունենայ կամքը: Խոր- հելու՝ պատճառաբանելու համար, պէտք ունիմ զգա- յութիւններու, զգալի պատկերներու, պէտք է նաև որ ուշադրութիւն ընեմ, և ասոր համար միտքս ամ- փոփեմ, ջանք կատարեմ, և հետեւաբար կամենամ. չկայ կամեցողական երևոյթ որ խառնուած չըլլայ զգալի երևոյթներու և իմացական մտապատկերներու



հետ: Որսի երթալ կամ զիրք մը կարգալ ուղելու համար, պէտք է որ նախ այդ գործը մտապատկերեմ իբր լաւ գործ մը՝ որուն կը փախաքիմ. ահա՛ զգացողութեան պատկանող մասը. յետոյ պէտք է զիտնամ թէ ի՛նչպէս հարկ է ձեռնարկել անոր, պէտք է գազափարները համակարգեմ. ահա՛ իմացականութեան բաժինը: Ամէն անգամ որ կը գործենք՝ կը գործենք ամբողջաբար, այսինքն միշտ մեր բոլոր կարողութիւնները մէկ խուրձի մը մէջ միացուցած իրարու հետ, և ա՛յն ատեն միայն լաւագոյնս կը զգանք մեր էութեան միութիւնը, երբ իւրաքանչիւրին բաժինը կը զատորոշենք հասարակաց գործին միութեանը մէջ: Այս միութիւնը ոչ թէ թուազիտական և վերացեալ միութիւն մըն է, այլ համագրութեան և ներգաշնակութեան թանձրացեալ միութիւն մը:

### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Ոմանք չեն ուզեր ընդունիլ թէ բոլոր հոգեբանական երեւոյթներուն էական հանգամանքն է գիտակցութիւնը:

Բ. — Եթէ այդպէս ըլլար, այն ատեն անգիտակցական երեւոյթներ պիտի ըլլային: Բայց 1. Այն պատճառաբանութիւնը, որուն միջոցաւ կը փորձեն ապացուցել զայն՝ հակասրամաբանական է: 2. Հոգեբանական անգիտակց երեւոյթը հակասութիւն մըն է:

Գ. — Գիտակցութեան երեւոյթները կարողութիւններու կը դասախմբուին: Կարողութիւն բառը պիտականուն մըն է, և բացատրութիւն մը չէ բնաւ:

Դ. — Գիտակցական երեւոյթներու երեք դասա-

խումբ կայ. 1. Զգացողական երեւոյթները, որոնք ճակատագրական և կրաւորական են: 2. Իմացական երեւոյթները, որոնք ներգործական և ճակատագրական են: 3. Կամեցողական երեւոյթները, որոնք ներգործական և ազատ են: Ուրեմն երեք կարողութիւններ կան: Զգացողութիւն, Իմացողութիւն, Կամեցողութիւն:

Ե. — Կարելի չէ նուազեցնել այս դասախումբերուն թիւը, ապա թէ ոչ միւսնոյն դասախումբին մէջ հակասական ստորոգելիներ ունեցող երեւոյթներ մտացուցած կ'ըլլանք:

Զ. — Հարկ չկայ աւելցնել նոյնպէս այս թիւը. առաջարկուած բոլոր միւս դասախումբերը կրնան վերածուել այն երեքին՝ զորս վերեւ ցոյց տուինք:



## ԱՌԱՋԻՆ ՄԱՍ

### ՉԳՍՑԱԿԱՆ ՀՈԳԵՖԱՆՈՒԹԻՒՆ

Պ Ա Ս Պ

#### ԳԻՏԱԿՅՈՒԹԵԱՆ ԱՌԱՋԻՆ ՏՈՒԵԱԼՆԵՐԸ

ԲՈՎԱՆԳՐԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Գիտակցութեան բնածին բարդութիւնները. — Բ. Հինգ զգայարաններ. — Գ. Հինգ զգայարաններէն աւելի կա՞յ. — Դ. Չգայութեանց ստորաբաժանումները. — Ե. Հանոյք եւ վիճ. — Չ. Հանոյքին եւ վիճին պայմանները. — Ժ. Ապացուցական նկատողութիւններ. — Ը. Արիստոսէլի եւ Եպիկուրի վարդապետութիւնները:

Ա. Գիտակցութեան բնածին բարդութիւնը. — Գիտակցութեան մէջ մի վիճակ, գիտակից կեանքի մէջ մի վայրկեան, խճող երևոյթներու համախոնուած մ'է: Կարգացած և զրած ատեննիս, միանգամայն կը լսենք, կը զգանք, կը շօշափենք. իսկ այս վիճակներէն իւրաքանչիւրն ալ կը բաղկանայ բազմաթիւ զգայութիւններէ: Այնպէս որ, գիտակցութիւնը, առաջին հայեցուածով, ոչ այլ ինչ կը թուի ըլլալ, բայց եթէ անել թոհ ու բոհ մը, քառս մը:

Բ. Հինգ զգայարանները. — Բայց և այնպէս այդ քառսը կրնայ լուսաւորուիլ, համախոնուած այդ երևոյթները կրնան իրարմէ բաժնուիլ, ու շատ զիւրաւ: Գիտակցութեան երևոյթները ինքնաբերաբար կը ջո-



կուին՝ առ նուազն հինգ խումբերու: Ուրեմն այնչափ պաշտօններ կան գիտակցութեան մէջ, որչափ կան երեւոյթներու խումբեր: Այդ պաշտօնները կը կատարուին բնախօսական որոշ գործարաններու միջոցաւ:

Ըստ այսմ մենք ունինք.

1. Տեսողութեան երեւոյթներ, տեսութեան զգայարան մը՝ որ կը գործէ աչքին և տեսողական ջիզլին միջոցաւ:

2. Լսողական երեւոյթներ, լսողական զգայարան մը՝ որ կը գործէ ականջին և լսողութեան ջիզլին միջոցաւ:

3. Հոտառութեան երեւոյթներ, հոտառական ըզգայարան մը՝ որ կը գործէ քիթին և հոտառութեան ջիզլին միջոցաւ:

4. Համառութեան երեւոյթներ, համառական ըզգայարան մը որ կը գործէ բերանին, լեզուին, և այլն, միջոցաւ:

5. Շօշափողութեան երեւոյթներ, շօշափելեաց ըզգայարան մը՝ որ կը գործէ ենթամորթային համասփիւռ ջիզերուն միջոցաւ, որոնց շօշափողական ընդունակութիւնը շատ նուրբ է լորձնաթաղանթներուն տակ և մատներուն ծայրը:

Գ. Հինգեւն աւելի զգայարաններ կա՞ն.— Այս հինգ զգայարաններուն վրայ զանազան հոգեբաններ ուզեցին աւելցնել նաև միանային զգայարան մը, որմէ՛ իբր թէ կ'ընդունինք մկանային ձգտումի, ճիզի զգայութիւնները, եւ կենսական զգայարան մը, որմէ իբր թէ կ'ընդունինք մեր ներքին գործարաններու լաւ կամ յոռի վիճակներուն (ինչպէս անգար, խիթ, սրտխառնուք) համապատասխանող զգայութիւնները:

Բայց այս երկու նոր զգայարաններուն յաւելումը բանաւոր չի թուիր: Արդարև կը տեսնենք թէ զգայութիւնները, որոնք այնչափ յստակ կերպով անջատ են իրարմէ, ինչպէս տեսողութիւնը եւ լսողութիւնը, կը կատարուին զգայարանական անջատ կազմուածներուն ինչպէս նաև ջիզերու միջոցաւ: Այդ ջիզերէն իւրաքանչիւրը, ինչպէս փորձով հաստատած է Mueller բնախօսը, իր տեսակարար ազդուութիւնն ունի: Այսպէս, ցնցուած տեսողական ջիզը ա՛լ գոյներ միայն կը հաղորդէ. գլխուն իջուցուած հարուած մը, ինչպէս կ'ըսեն, երեսուն եւ վեց ճրագներ կը ցուցնէ. երբ կտրեն տեսողութեան ջիզը, լոյսի փողփողումներ միայն կ'երևին աչքին: Նոյնպէս եթէ կտրեն լսողութեան ջիզը, ենթական ուռմբի թնդիւնի պէս ուժգին հնչիւն մը կ'իմանայ, ու լսողական ջիզը՝ ա՛լ անկէ վերջը՝ ձայնի խուլ բզզիւններ լոկ կը լսէ: Այսպէս նաև՝ միւս ջիզերուն եւ զգայարաններուն համար: Հետեւաբար պարտաւորուած ենք ըսելու թէ ո՛ւր որ կայ յատուկ ջիզ, հոն կայ զգայութիւններու մասնաւոր դասախումբ մը, եւ ո՛ւր որ չկայ այդպիսի ջիզ, հոն պէտք չկայ զատորոշելու զգայութիւններու նոր դասախումբ մը:

Եւ որովհետև չեն գտնուած այնպիսի ջիզեր, որոնց գործունէութիւնն յատկացուած ըլլայ մկանային և կենսական զգայութիւններու միայն, իրաւունք ունինք ուրեմն ըսելու թէ այս տեսակ զգայութիւնները չեն կրնար կազմել շօշափողական զգայութեանց ուրիշ դասախումբ մը:

Ուզած են ենթադրել նոյնպէս ցերեւական զգայարան մը, ջերմութեան զգայարան մը՝ շօշափողութեան զգայարանէն անջատօրէն: Հաստատելու համար այս



մասնաւորումը, հոգեբանները պէտք է գտնեն ջղային այնպիսի թելիկներ, որոնք ջերմութեան միայն ըզգայուն ըլլան, երբեք չազդուելով շփումէն, և դարձեալ պէտք է ցոյց տան այնպիսի շօշափողական թելիկներ, որոնք բնաւ չազդուին ջերմութենէն:

Դ. Ձգայութիւններուն ստորաբաժանումները. — Մէն մի խումբի մէջ, զանազան զգայութիւնները՝ առանձնաբար՝ իրարմէ ալ կը տարբերին. նախ՝ քննարեալք, ինչպէս կարմիրը կը տարբերի կանաչէն, սօղ-ը շա-էն, կամ վարդին բոյրը՝ մեխակի բոյրէն, յետոյ ներոյժորեալք, ինչպէս ուժեղ ձայնը կը տարբերի տկարէն:

Նոյն խումբի պատկանող զգայութիւնները իրարմէ զանազանելու համար պէտք է լիմանալ անոնց համապատասխանող ֆիզիզական գրգռումներուն չափը: Այսպէս է որ ձայնին աստիճանները կը դասաւորուին՝ իրենց բարձրութեան, կամ ըմբռնելի տարբերութեանց համապատասխանող հնչական թրթռումներու թիւին համեմատ, և գոյները՝ իրենց լուսեղէն թրթռումներուն համեմատ: Այս դասաւորութիւնը ուրեմն աւելի բնագիտութեան կը վերաբերի քան հոգեբանութեան. հետեւաբար, մինչեւ որ զգայութեան մը համապատասխանող ֆիզիզական դասաւորութիւնը չգտնուի, նոյն կարգի զգայութեանց դասաւորութիւնը ճիշդ չ'ըլլար:

Այս պատճառաւ, ամենէն լաւ դասաւորողներն են ձայնական զգայութիւնները, յետոյ՝ գոյնի զգայութիւնները: Համի, հոտի և շօշափումի զգայութիւնները՝ ո՛չ այնչափ:

Ե. Հանոյք եւ վիճ. — Ձգայութիւնները միայն կարմիրի, կանաչի, սօղ-ի, շա-ի, հրանունկի հոտի, խնձորի կամ տանձի համի և այլն զգայութիւններ չեն. անոնք հաճոյական կամ անհաճոյ ալ են: Հանոյքն ու վիշտը, ինչպէս բոլոր նախնական վիճակները՝ ա՛յնքան պարզ և յայտնի բաներ են որ չեն կրնար սահմանուիլ. այսուհանդերձ կարելի է բացատրել զանոնք, իրենց յարաբերական պայրաններէն դատելով զիրենք:

Արդարև, հաճոյքը կամ վիշտը անհրաժեշտաբար միշտ նոյն զգայութեան չեն կապուած, այսպէս սօղ-ը կրնայ հաճոյական ըլլալ կամ անհաճոյ, նուազատողի մը մէջ ունեցած իր դիրքին համեմատ. թունդ կարմիր մը կամ մեղմ կանաչ մը կրնան հաճոյական ըլլալ կամ ոչ՝ իրենց ընկերացող գոյներու ներդաշնակութեան համեմատ: Սիրած կերակուրնուս համը, իբրև համ իր բնոյթը փոխած չըլլալով հանդերձ, երկրորդ անգամի մը՝ կրնայ դարձանք ազդել մեզի: Այս պարզ դիտողութիւնը կ'արտօնէ զմեզ ըսելու թէ հաճոյքը կամ վիշտը յատկութիւններն են ոչ թէ ըզգայութեան, այլ ամբողջական գիտակցութեանը ա՛յն էակին որուն մէջ ի յայտ կուգան: Անուշ բոյր մը շնչած կամ քաղցրահամ պտուղ մը կերած ատենս, ոչ թէ ոնգունքս կամ քիմքս են որ կը զգան հաճոյք, այլ ես, այսինքն ամբողջ էութիւնս:

Զ. Հանոյքին եւ վիճից պայմանները. — Ֆիզիզական հաճոյքին երևումին էական պայմանը այն է որ զգայութեան համապատասխանող գրգռումը նըպաստաւոր ըլլայ բարեք կացութեանը թէ ամբողջ էակին և թէ այն գործարանին, որուն միջոցաւ պիտի կատարուի զգայութիւնը: Այսպէս, կայ բարեսառ-



նութեան աստիճան մը որ մեծապէս կը դիւրացնէ մեր գործարանաւորութեան պաշտօնավարումը. այդ բարեխառնութիւնը, որ +15 աստիճաններուն շուրջը կը հանդիպի, հաճոյական է, և ո՛ր և է բարեխառնութիւն՝ որ մօտաւոր է անոր՝ հաճոյական կ'ըլլայ ինքնին, իսկ ո՛ր և է բարեխառնութիւն որ կը հեռանայ անկէ՝ կ'ըլլայ անհաճոյ:

Հակադարձաբար, Ֆիզիքական վիշտի երեւումին պայմանն այն է որ այդ զգայութեան համապատասխանող գրգռումը աննպաստ ըլլայ թէ՛ ամբողջ էակին և թէ՛ գործարանին բարւոք վիճակին:

Է. Ապացուցական Գիտություններ. — Հետեւաբար կրնայ պատահիլ որ ո՛ր և է զգայութիւն, որ արտադրուած է այնպիսի գրգռումէ մը որ՝ գործարանի մը բարւոք պաշտօնավարումին աննպաստ ըլլալով հանդերձ՝ նուազ աննպաստ է սակայն քան ուրիշ նախընթաց գրգռում մը, զգացուի իբր հաճոյք: Այսպէս 0 աստիճանէն վերջ +2 աստիճանը կը պատճառէ հաճոյք:

Ընդհակառակն, ո՛ր և է զգայութիւն, որ արտադրուած է այնպիսի գրգռումէ մը որ գործարանին բարւոք պաշտօնավարումին նուազ նպաստաւոր է քան ուրիշ ունէ նախընթաց գրգռում, կը զգացուի իբր վիշտ:

Վիշտի մը դադրիւն ալ կը զգացուի իբր հաճոյք: Զոր օրինակ, ակռայի կամ ստամոքսի ցաւի դադրումը կը զգացուի իբր հաճոյք: Նոյնպէս հաճոյքի դադարում մը կը զգացուի իբր վիշտ:

Ֆիզիքական հաճոյքի և վիշտի այս բոլոր օրէնքներուն զննութիւնը կը ցուցնէ ահաւասիկ թէ հաճոյքն ու վիշտը կախեալ են թէ՛ ամբողջ գործարան-

նաւորութեան և թէ՛ անոր մէկ մասին լաւ կամ յոռի վիճակէն: Զայս ապացուցեց նախ գաղղիացի Ֆէրէ բժիշկը, գործնականապէս հաստատելով թէ ամէն հաճոյքի կ'ընկերանայ ուժաշափին վրայ զգալապէս յայտնուող ուժի առաւելում մը, և ամէն վիշտի՝ ոյժի նուազում մը: Ուժաշափին զսպանակը ձգտող ենթակայի մը քիթին մօտեցուց մուշկի սրուակ մը, և տեսաւ որ ենթական զզուանք յայտնեց հոտէն: Ուժաշափին սլաքը՝ այն ատեն՝ ենթակային սովորաբար ստացած աստիճաններէն խոնարհագոյն թուանիշ մը կը ցուցնէր: Յետոյ երբ սրուակը քիչ մը հեռացուց, մուշկին հոտը՝ տկարանալով՝ հաճոյական եղաւ, ու սլաքը ցուցանակին վրայ միջակէն վեր աստիճան մը ներկայացուց: Ուրեմն տհաճութիւնը կապուած է ուժի նուազումին, իսկ հաճոյքը՝ ուժի աճումին:

Կրնայ պատահիլ դարձեալ որ մէկ գործարանին նպաստաւոր եղող գրգռումը աննպաստ ըլլայ ուրիշ գործարանի մը: Այսպէս գոյացութիւն մը կրնայ հաճոյական համ ունենալ, բայց մարսողութիւնը արգիլել. կամ հաճելի ըլլալ համառութեան, եւ անհաճոյ ստամոքսին: Սրդ, որովհետեւ գործարանները կամ անոնց կատարած պաշտօնները հաւասար կարեւորութիւն չունին, յայտնի է թէ հաճոյական՝ միանգամայն անհաճոյ զգայութիւն արտադրող գրգռումը այն ատեն միայն պէտք է համարուի լաւ, երբ իրմէն նըպաստաւորուած գործարանը երկուքէն կարեւորագոյնըն է. ընդհակառակն յոռի՝ երբ կարեւորագոյնն է այն գործարանը՝ որուն աննպաստ է եղած: Այսպէս, վերոյիշեալ օրինակին մէջ, համառութեան հաճոյական և ստամոքսին անհաճոյ եղող գոյացութեան ներմուծումը (ingestion) յոռի պէտք է նկատուի: Շօշափու-



դուրբեան ցաւ պատճառող բայց կեանքը փրկող վիրաբուժական գործողութիւնն ալ՝ հակադարձաբար՝ պէտք է նկատուի լաւ: Ըսել է թէ ո՛չ հաճոյքը և ո՛չ վիշտը չեն բուն իսկ բարին կամ չարը, այլ բարի սեռին եւ չար սեռին տեսակները պարզապէս: Այս գիտողութիւնը շատ կարեւոր է բարոյականին համար:

Ը. Արիստոսէի եւ Եպիկուրի վարդապետութիւնները. — Այս գիտողութիւններէն վերջ կրնանք ա՛լ հասկնալ թէ ի՛նչպէս Արիստոտէլ հաճոյքը կը համարէր հետեանք այն հանգիստին զոր կը զգայ էակ մը, յառաջգիմութիւն մը կատարելէն ետքը: «Հաճոյքը, կ'ըսէ անիկա, պսակն է գործին, ինչպէս ծաղիկը՝ երիտասարդութեան»: Ընդհակառակն Եպիկուր, որ ամէն գործի մէջ շարժում, և ամէն շարժումի մէջ ցաւազին ճիգ կը տեսնէր, կ'ըսէր թէ վիշտը դրական վիճակ մ'է, և հաճոյքը չէ այլինչ՝ բայց եթէ վիշտին ժխտումը. վասնզի ճիգին տաժանելի կողմը միայն կը նկատէր և ոչ թէ էութեան օրէնքներուն համաձայն և հետեաբար հաճոյական ըլլալը: Արդարեւ ճիգը այն ատեն միայն հաճոյք չի պատճառեր, երբ զայն կազմող գործարանին վատնումը, այսինքն գործարաններուն մաշումը աւելի կ'ըլլայ քան գործարանաւորութեան հասոյթը, կամ անոր իր սնուցումէն ընդունած նոր ոյժը, որ ատեն նաև յառաջ կուգայ խոնջէնք: Ընդհակառակն, չափաւոր մարզանքը, ուր վատնումը հաւասարակշիռ կ'ընթանայ հասոյթին, կամ նոյն իսկ անկէ աւելի նուազ կ'ըլլայ, կը պատճառէ հաճոյք: Գրասեղանին կառչած ուսանողը բուն տենչ կը զգայ մկանները շարժելու, վազելու, պոռալու: Կենդանիները, երբ դուրս կուգան ախոռէն, ուր երկար ատեն

գրեթէ անշարժ մնացեր էին, կը վազեն խօլ արշաւով: Հաճոյքը հետեանքն է էակին բնականոն օրէնքներուն կատարումին, իսկ վիշտը՝ հետեանք նոյն օրէնքներուն չկատարուելուն:

### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Գիտակցութիւնը բնականէն բարդ է գրեթէ միշտ, զգայութիւններու անհամեմատ բազմութիւն մ'ունինք մենք միեւնոյն ժամանակ:

Բ. — Բայց, զգայարանական գործարաններուն շնորհիւ, այդ զգայութիւնները ինքնին կը բաժնուին հինգ դասախումբերու. զոյն, ձայն, հոտ, համ, շփում:

Գ. — Ընդունելի չէ հինգէն աւելի զգայարաններու գոյութեան վարկածը, վասնզի հոգեբանութիւնը զգայարանական ջիղերու հինգ անջատ խումբ միայն գտած է:

Դ. — Զգայարաններու մէն մի խումբին մէջ ալ ստորաբաժանումներ տեսնելու համար, կը գործածուի զրգուռներու ֆիզիքական չափումը: Ամենէն աղէկ կը դասաւորուին ձայները, յետոյ զոյները:

Ե. — Հաճոյքը և վիշտը չեն սահմանուիր: Աւելի՛ համեմատութեան վիճակներ են անոնք:

Զ. — Հաճոյքին պայմանն է էակին բնական վիճակը, վիշտինը՝ անբնական վիճակը:

Է. — Էակին ունեցած վիճակին համեմատ, միևնոյն զգայութիւնը երբեմն կ'ըլլայ հաճոյական, երբեմն անհաճոյ:

Ը. — Այս մասին համամիտ ենք Արիստոտէլի վարդապետութեան: Եպիկուրի վարդապետութեան հիմունքը սխալ է:



ԶԳԱՅՈՒԹԵԱՆ ԱՆՄԻՋԱԿԱՆ ՀԵՏԵՒԱՆՔՆԵՐԸ  
ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ՊԱՀՊԱՆՈՒՄ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— Ա. Զգայութեան սկարացում. Պատկեր.— Բ. Զգայութեան սկարացման պատճառներ.— Գ. Կամ բոլոր զգայարաններէ պատկերներ.— Դ. Վերերեւում պատկերներու.— Ե. Վերերեւումի պայմաններ. Պատկերներու օրէնք.— Զ. Զուգորդութեան օրէնք:

Ա. Զգայութեան սկարացում. Պատկեր.— Գիտակցական վիճակները շարունակ զիրար կը փոխանակեն. գիտակցութիւնը մշտնջենական լինելութիւն (devenir) մ'է: Ուրեմն զգայութիւնները, իրարմէ վանուելով, կ'անհետանան գիտակցութեան գաշտէն: Քիչ առաջ տեսածս հիմա չեմ տեսներ, քիչ առաջ լսածս ա՛լ չեմ լսեր: Եւ սակայն, զգայութիւնները յանկարծական կերպով չեն անհետանար. իրենց յստակօրէն երեւումէն մինչեւ իրենց ամբողջական աներեւութանալը՝ աստիճանաբար եւ անզգայապէս կը կորսընցնեն իրենց ներդրութիւնը: Յստակ գիտակցութեան պայծառ լոյսին, որուն մէջ ուղղակի կ'երեւին ամբողջական զգայութեան մը բոլոր տարրերային զգայութիւնները, կը յաջորդէ գիտակցութեան խոնարհագոյն վիճակ մը, ուր ա՛լ չկան այդ տարրական զգայութիւններէն շատերը. այդ խոնարհագոյն վիճակը, որ ինքն ալ իր մէջ կը բովանդակէ աստիճաններու անհունութիւն մը, կը կոչուի պատկեր: Նոյն բնոյթն ունի ան՝ զգայութեան պէս. աստիճանով միայն կը տարբերի անկէ: Այս պատճառաւ Հէրպէրդ Սթէնսըրը ուժեղ

վիճակ կը կոչէ զգայութիւնը, իսկ պատկերը՝ սկար վիճակ: Այսպէս, երբ մարդու մը վրայ կը նայիմ, անոր կերպարանքին բոլոր գիծերը, հագուստին բոլոր մանր մասերը ակնյայտնի կերպով և յստակաբար կ'որոշեմ. յետոյ այդ մանրամասնութենէն շատերը տակաւ առ տակաւ կը ջնջուին, նշանակէտերը միայն մնալով տեսանելի: Այդ միջոցին, այն անձին պատկերն է որ ունիմ, եւ ոչ թէ զգայութիւնը: Այս բանը ա՛յն ատեն մանաւանդ զգալի կ'ըլլայ, երբ նայելնէս անմիջապէս վերջ գոցենք աչքերնիրս: Տեսողական պատկերը՝ իր բոլոր յստակութեամբն հանդերձ՝ ո՛րչափ տկար պիտի գտնենք զգայութեան քով: Այս տկարացումին պատճառը զգայութեան ամբողջութեանը մէջէն այն մանր մասերուն անհետանալն է: Իրաւունք ունէր ուրեմն թէն՝ պատկերը մնացորդ անուանելու:

Բ. Զգայութեան սկարացումին պատճառները.— Զգայութեան տկարացումին պատճառներն երկու են: Առաջինը և ամենէն սովորականը՝ ուրիշ զգայութիւններու համադրպումն է: Տեսած անձիս և աչքիս միջեւ երբ արգելիչ առարկայ մը մտնէ, այդ անձին տեսողական զգայութիւնս յանկարծաբար կը խափանուի և կ'ըլլայ պատկեր: Այդ պատկերը այնչափ քիչ կը տեւէ որ՝ կարծես թէ երբեք գոյութիւն ունեցած չըլլար: Եւ սակայն, եթէ լաւ խորհինք, պիտի համոզուինք թէ ամենակարճ կեանք մը ունեցած է ան: Երկրորդ պատճառը զգայութեան յարատեւումն է նոյն իսկ: Սա փորձը աղէկ կը հաստատէ այս կէտը. մտքով ուրիշ բանի մը վրայ խորհելով՝ աչքերնիրդ սեւեւեցէք առարկայի մը վրայ. միևնոյն ժամանակ թէ՛ խորհուրդին գիտակցութիւնը և թէ՛ տեսողութեան



գլխակցութիւնը պիտի ունենաք. բայց այս վերջինը՝ տակաւ առ տակաւ աղօտանալէ վերջ՝ հետզհետէ աւելի տարտամ պիտի դառնայ. և եթէ ձեր մտածումներուն շարունակումը ձեզի խորհրդածել տայ թէ դուք կը տեսնէք, պիտի տեսնէք որ գրեթէ անբեւեռութեամբ առարկան նորէն պիտի ձեւակերպուի, և նորէն զգայութիւն պիտի դառնայ պատկերը: Եւ սակայն, գլխակցութեան այս բոլոր փոփոխումներուն միջոցին, տեսողական տպաւորութիւնը վայրկեան մը իսկ չէ ընդհատուած. ըսել է թէ զգացողական վիճակները կը տկարանան՝ երբ յարատեւեն: Օրէնք մ'է ասիկա, որուն կ'արժէ ուշադիր ըլլալ. անոր առաջին հետեւանքին է որ կը հանգիպինք հոս:

Գ. Բոլոր զգայարաններն ալ կը կազմեն պատկեր. — Ստոյգ է թէ պատկեր բառը աւելի տեսողութեան զգայարանին կը վերաբերի, վասնզի ամենէն աւելի դիւրութեամբ կը ճանչցուին և կը մտապատկերուին ա՛յդ զգայարանին թողած մնացորդները: Եւ սակայն, միւս զգայարաններուն զգայութիւններն ալ կրնան նոյնպէս տկարանալ և կազմել պատկերներ: Այսպէս, ամէն ձայնի լուէն վերջն ալ կարծես դեռներս կը լսեմ տերեւներու խուլ սօսաւիւն մը, մեղեգիլի ելեէջները. լսողութեան պատկերներ են անոնք: Ներքին խօսքին մէջ, որ մտաւոր արտայայտումն է մեր խորհուրդին, հնչական պատկերներու գրեթէ անընդմիջեալ յաջորդութիւն մ'ունինք: Միւսնոյն կերպով կրնամ մտապատկերել ողորկի կամ քնքուշի տպաւորութիւնները. և ասոնք շօշափումի պատկերներ են: Կարելի է տակաւին մտապատկերել հոտի եւ համի տպաւորութիւնները. ասոնք ալ համի և հոտի պատ-

կերներ են: Պատկերներու այս երկու վերջին տեսակները շատ աւելի սակաւաթիւ են քան միւսները, և բազմաթիւ մարդոց մէջ կը պակսին գրեթէ բոլորովին:

Դ. Պատկերներու վերերեւում. — Զգայութեան անմիջապէս յաջորդող պատկերը երբ գլխակցութեանն անհետանայ, գլխակցութեան վիճակը կը մոռցուի: Բայց միշտ այսպէս չ'ըլլար:

Գլխոնք արգարե թէ մեր գլխակցական անցեալ վիճակներէն շատերը կրնան վերարտագրուել՝ աւելի կամ նուազ յտակութեամբ, երբեմն պատկերներու և երբեմն նոյն իսկ զգայութեանց վիճակներով, ինչպէս կը պատահի քանդակաւորներու միջոցին: Կրնամ մըտապատկերել Նոտր-Տամը կամ Յաղթական կամարը: Ուրեմն տեսողական պատկերներս ամբողջովին չեն անհետացած. ուրեմն պահուած են անոնք: Ըսել է թէ մեր գլխակցական վիճակներէն շատերը պահուած կը մնան, քանի որ շատերը կը վերագոնան՝ վերստին երեւելու համար:

Ե. Վերերեւումի պայմանները. Պահպանումի օրէնքը. — Մեր բոլոր գլխակցական վիճակներն ալ կը պահուի՞ն արդեօք: Անձնական փորձառութիւննիս չի կրնար պատասխան մը տալ այս հարցումին. վասնզի երբեք չենք կրնար գիտնալ թէ բոլոր մեր յիշածները իրենց մէջ կը բովանդակեն այն ամէնը զորս զգացած ենք երբեմն: Մենք աւելի կը կարծենք թէ ամէնքը չեն կրնար պահուած ըլլալ, վասնզի յիշատակներնուս մէջ յաճախ ընդհատներ՝ թերոյթներ (lacune) կը զգանք:

Բայց արտաքին դիտողութիւնը մեզի կ'օգնէ այս մասին: Եթէ տեսնենք որ ծայրայեղ տկարութեան մը



կամ անմտադրութեան մը գիտակցական վիճակները պահուած են ինչ ինչ պարագաներու մէջ, իրաւունք պիտի ունենանք ըսելու թէ ամէնքն ալ կը պահուին, եւ, նպաստաւոր պայմաններու մէջ, ընդունակ են վերստին երևելու:

Արդ, ճիշդ այս բանը կը հաստատէ, ի մէջ այլոց, Թէնի պատմած այն պարագան, ուր կը տեսնենք թէ զուգորդացի երէցի մը անուս եղբօր աղջիկը անսխալ կ'արտասանէ յունարէն եւ գրական եբրայեցերէն ամբողջ հատուածներ, զօրս, տարլիներ առաջ՝ լսեր էր իր հօրեղբօրմէն, երբ նա կը ճեմէր նրբանցքի մը մէջ, որ պատկից էր խոհանոցին՝ ուր կը գտնուէր աղջիկը: 'Իժուար է երեւակայել աւելի տկար զգայութիւններ, քան չհասկցուած և մեզի չուղղուած և հեռուէն միայն եւ այն ալ պատահաբար լսուած խօսքի մը հնչական զգայութիւնները: Եւ սակայն, այդ ձայները պահուել են: Աւելի՛ ևս ուրեմն, ամէն զգայութիւն ընդունակ է պահուելու, և, հետեւաբար, նա՛ և վերարտադրուելու: Ըստ այսմ կրնանք բանաձևել սա՛ օրէնքը. «Գիտակցութեան ներկայացուած ամէն երեւոյթ ընդունակ է նորէն վերերևելու՝ գիտակցութեան մէջ»։ Կամ «ո՛ր և է բան՝ որ կը տրուի գիտակցութեան, ա՛լ անկորուստ կը մնայ անոր համար:» Պահպանումի օրէնքն է ասիկա, որ կարևոր է շատ, վասնզի հիմն է յիշողութեան, և անով՝ բովանդակ հոգեկան կեանքին:

Ձ. Զուգորդութեան օրէնք. — Պատկերին վերերևուումին համար ուրիշ կարեւոր պայման մ'ալ կայ՝ «Պէտք է որ անիկա վերակոչուի»: Ա՛յս է ահա զուգորդութեան օրէնք ըսուածը, որ չէ այլ ինչ, բայց եթէ լրացուցիչը պահպանումի օրէնքին:

Նախորդ դասին սկիզբն ըսուեցաւ թէ գիտակցութեան առաջին տուեալները խմբովին կուգան: Արդ, եթէ գիտակցութեան ներկայացուած ամէն բան ընդունակ է վերստին երևելու անոր, ոչ միայն խումբին տարրերը կրնան վերստին գալ, այլ նաեւ իրենք խումբերն ալ՝ իրենց բազմախառնութեամբը: Հետեւաբար մէն մի խմբամաս, իր վերերևելուն համար նոյն խկ, պիտի ձգտի իրեն հետ բերելու ամբողջ խումբը, այսինքն խումբը կազմող բոլոր միւս մասերը: Դիցուք թէ Ա. Բ. Գ. խումբը անհետացած ըլլայ գիտակցութենէս, կամ աւելի թանձրացեալ օրինակով մը բացատրելու համար միտքս, ձիու մը անկումը (Ա.) գիւղական հանդէսի մը մէջ (Բ), երբ երգէոն մը Մարսիայը կը նուագէր (Գ), ոչ միայն մէն մի տարրը ընդունակ է մտապատկերանալու, այլ խումբը ինքնին, վասնզի խումբը ըստ ինքեան անջատ բան մըն է գլինքը կազմող տարրերէն: Այսպէս Ա. երբ վերերևելի՛ միայնակ պիտի չվերերևի, այլ իրեն հետ պիտի բերէ նաև Բ եւ Գ մասերը: Ուստի, Մարսիայի եղանակը ինծի մտածել պիտի տայ միշտ գիւղական հանդէսին եւ ձիուն անկումին վրայ, և փոխադարձաբար: Այսպէս, անջատ պատկերները առանձնաբար վերերևցած ատեննին, միասնաբար կը ձգտին նաեւ վերակազմելու այն խումբերը, որոնց մասերն էին իրենք: Ա՛յս է ահա Զուգորդութեան օրէնքը: Անո՛վ կը բացատրուին մտաւոր կեանքի երեւոյթներուն շատերը:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա. — Զգայութիւնը կը տկարանայ և իրմէ վերջ



Իբր մնացորդ կը թողու իր մէկ տկար վերարտադրութիւնը, որ կը կոչուի պատկեր:


Բ. — Զգայութեան տկարացումին պատճառներն են. 1. Ուրիշ զգայութիւններու գիտակցութիւնը. 2. Զգայութեան յարատեւումն ինքնին:

Գ. — Բոլոր զգայարաններն ալ կուտան պատկերներ: Ամենէն շատը՝ տեսողութեան և լսողութեան զգայարաններուն պատկերներն են. այս վերջիններս մէջ, ներքին խօսքը կազմողները մասնաւորաբար կարեւոր են:

Դ. — Պատկերները կ'անհետին և կը վերերևին:

Ե. — Անոնց վերերևումը երկու պայմաններու ենթարկեալ է: 1. Իրենց պահպանումին, և 2. Իրենց վերակոչումին: Պահպանումի օրէնքն այսպէս կը բանաձևուի. «Գիտակցութեան տրուած ո՛ր է բան, ա՛լ անկտրուտ կը մնայ իրեն համար»:

Զ. — Վերակոչումը զուգորդութեամբ կը կատարուի: Զուգորդութեան օրէնքը լրացուցիչն է պահպանումի օրէնքին, և այսպէս կը բանաձևուի «Հին խումբերը կը ձգտին վերակազմուելու»:



## Գ Ա Ս Զ.

### Զ Ո Ւ Գ Ո Ր Գ Ո Ւ Թ Ի Ի Ն

ԲՈՎ ԱՆԳՍ.ԿՈՒԹԻԻՆ. — Ա. Զուգորդութեան պայմաններ. — Բ. Միջոցային յարակցութեան անբաւականութիւնը. — Գ. Ժամանակային առարկայական յարակցութեան անբաւականութիւնը. — Դ. Պատճառականութեան անբաւականութիւնը. — Ե. Նմանութեան անբաւականութիւնը. — Զ. Նմանութիւնը՝ կազմիչ զուգորդութեան. — Է. Կերտիչ զուգորդութիւն կամ երեւակայութիւն:

Ա. Զուգորդութեան պայմաններ. — Որպէսզի զուգորդութիւն կատարուի, անհրաժեշտ պայման է որ գիտակցական վիճակներու խումբին մէջ տարրերը իրարու յարակից ըլլան: Վերև ըսուածներէն այս բանը կը հետևի ախերև կերպով:

Այս պայմանը անհրաժեշտ է, վասնզի եթէ տարրերը յարակից եղած չըլլալին գիտակցութեան մէջ, վիճակներու խումբը, անգամ մը կազմուած չըլլալով, պիտի չկրնար երկրորդ անգամ յերակազմուիլ ու է կերպով:

Այդ պայմանը բաւական է, վասնզի, նախ՝ որպէսզի խումբ մը կարենայ վերակազմուիլ, պէտք է որ այդ խումբը նախապէս արդէն կազմուած ըլլայ գիտակցութեան մէջ. մտքովս կիւլիվէրէն Տաճկաց Սուլթանին անցնիլ կարենալու համար, պէտք է որ կիւլիվէրն ու Սուլթանը անգամ մը միասնաբար պատկերացուած ըլլան գիտակցութեանս մէջ:

Երկրորդ՝ որովհետև յառաջ բերուած բոլոր միւս պայմանները կը վերածուին ա՛յդ պայմանին: Ատոնք են 1. Միջոցը: 2. Ժամանակը: 3. Պատճառականութիւնը: 4. Նմանութիւնը: Մի առ մի ցուցնենք այս չորսէն իւրաքանչիւրին անբաւականութիւնը:



Բ. Միջոցային յարակցութեան անբաւականութիւնը. — Երկու առարկաներ ի գուր յարակից են միջոցին մէջ, եթէ իրենց յարակցութիւնը չէ պատկերացուած գիտակցութեան մէջ. եթէ իրենց միջոցային յարակցութիւնը գիտակցական ալ չէ եղած, իրենց պատկերները երբեք պիտի չզուգորդուին: Եթէ առաջուց գիտցած՝ լսած կամ տեսած չըլլալի թէ Մայր եկեղեցին մօտ է թաղապետարանին, Մայր եկեղեցին վրայ խորհած ատենս երբեք միտքս պիտի չգար թաղապետարանը: Միջոցային յարակցութիւնը, իրաւ, երբեմն պայման կ'ըլլայ գիտակցութեան յարակցութեան, բայց այս վերջինն է միայն զուգորդութեան պայմանը:

Գ. Ժամանակային առարկայական յարակցութեան անբաւականութիւնը. — Երկու պատահարներ, որոնք թէև յարակից են ժամանակին մէջ, այլ ոչ նաև գիտակցութեան մէջ, երբեք չեն կրնար զուգորդուիլ: Անոնք որ չեն գիտեր թէ Մազարէն նախարար եղած է Լուզովիկ Ժ. Դ. ի օրով, հազար անգամներ ալ եթէ կարգան այդ երկու անունները, երբեք պիտի չկրնան մէկով միւսը մտաբերել: Հոս ալ նոյնպէս, ժամանակային յարակցութիւնը կրնայ ըլլալ պայման գիտակցական յարակցութեան, բայց զուգորդութեան պայմանը այդ վերջինը միայն կրնայ ըլլալ:

Դ. Պատճառականութեան անբաւականութիւնը. — Պատճառը արդիւնքին և արդիւնքը պատճառին վրայ մտածել կուտայ. բայց իրական պատճառականութիւնը անօգուտ պիտի ըլլայ զուգորդութեան համար, եթէ անգամ մը չէ պատկերացուած արդէն գիտակցութեան մէջ. պատճառական յարակցութիւնն է որ կերպարա-

նափոխուելով պիտի ըլլայ գիտակցական յարակցութիւն: Ո՛վ որ չի գիտեր թէ Եկտինոս է շինած Պարթենոնը, Պարթենոնի անունը լսած ատենը պիտի չկրնայ յիշել Եկտինոսը, եւ փոխադարձաբար: Պատճառական յարակցութիւնը կրնայ գիտակցական յարակցութեան պայման ըլլալ, բայց զուգորդութեան պայմանը այս վերջինն է միայն:

Ե. Նմանութեան անբաւականութիւնը. — Նմանութիւնը, միայնակ, չի կրնար ըլլալ պայման զուգորդութեամբ վերակոչումի: Հետեեալ պարագան առնենք իբր օրինակ նմանական զուգորդութեան. Նաթոյեանի պատմութիւնը կարգացած միջոցիս յանկարծ միտքս կուգայ Սոկրատէսի: Կարծես թէ առաջին անգամ է որ իրարու կը հանգիւպին այս երկու անունները մտքիս մէջ. ինծի այնպէս կը թուի թէ այդ զուգորդութիւնը սկզբնական է, այսինքն կրկնուած չէ բնաւ յառաջագոյ զուգորդութեան մը: Հետեաբար, կ'եզրակացնեմ, Նաթոյեանի անունով Սոկրատէսի անունը մտաբերելս արդիւնք չէ գիտակցական նախագոյն յարակցութեան մը:

Երևոյթին արտաքին և հարեանցի տեսքն է ասիկա: Եթէ աւելի խորը թափանցենք, պիտի տեսնենք որ Նաթոյեան անունը միայն բառ մը չէ. այլ այդ բառը կ'արթնցնէ գաղափարներու ամբողջ հոյլ մը, և այդ գաղափարներուն մէջ կը գտնուի նաև աշխարհակալ գաղափարը, որ գիտակցութեանս մէջ յարակից եղած է Նաթոյեան բառին: Դարձեալ, նոյն աշխարհակալ գաղափարը գիտակցութեանս մէջ ուրիշ անգամներ յարակից եղած ըլլալով Սոկրատէսի բառին, կարծեցեալ սկզբնական նմանական զուգորդութեան տակ



երևան կուզան գիտակցական յարակցութեամբ կազմուած երկու զուգորդութիւններ, որոնք իրարու միացած են հասարակաց տարրով մը .

Նաբոլէոն աշխատհակալ

աշխատհակալն Աղեքսանդր :

Հո՛ւ ալ, գիտակցական յարակցութիւնն է պայման պատկերներու իրերակոչ զուգորդութեան :

Հոգեբաններէ յառաջ բերուած բոլոր պայմաններն այսպէս ամէնքը կը վերածուին գիտակցական յարակցութեան : Այդ բանին բացայայտ պատճառն այն է որ միւս ամէնքն ալ արտաքոյ են գիտակցութենէն, այսինքն առարկայական են . ան միայն է ներքոյ՝ ենթակայական : Արդ, յայտնի է թէ գիտակցական պատահարներու պայմանները երբեք չեն կըրնար մնալ արտաքոյ գիտակցութենէն :

Չ. Նմանութիւնը՝ կազմիչ զուգորդութեան . — Այսու հանդերձ նմանութիւնը շատ կարևոր գեր մը կը կատարէ գիտակցութեան մէջ, բայց ոչ իբր վերարտադրիչ, այլ գոնէ իբր կազմիչ զուգորդութեանց :

Վասնզի, զուգորդութիւնները՝ գիտակցական յարակցութեան շնորհիւ զիրար վերակոչելով վերարտադրուելէ առաջ, պէտք է որ նախապէս կազմուած ըլլան, գիտակցական յարակցութիւնը հնարաւոր գործելու համար : Իսկ այս կազմութիւնը անկարելի կ'ըլլայ, եթէ գիտակցական վիճակներու հոյլը բաղադրող զանազան տարրերուն միջև չգտնուի նման և հասարակորդ տարր մը, որուն միջոցաւ անոնք կարենան իրարու յարիլ և միանալ : Ուրեմն գիտակցութեան մէջ՝ տարրերու զանազանութենէն զատ՝ կայ նաև հիմնական միութիւն մը որ այդ վիճակներէն հոյլեր կը ձևացնէ :

Քայց իսկապէս նմանութիւն կը կոչուի ա՛յն՝ որ նոյն է շատ բաներով իրարմէ տարբեր եղող առարկաներու վրայ : Կարևոր է ուրեմն որ գիտակցութեան տարրերը, իրարու հետ միանալու և հոյլեր կազմել կարենալու համար, ունենան ինչ ինչ նմանութիւններ : Փորձառական հոգեբանութեան չի վերաբերել ըսել թէ ինչպիսի բնոյթ մ'ունի այն օրէնքը որ գիտակցութեան տարրերը կը միացնէ և անոնցմէ համերաշխ հոյլեր կը ձևացնէ . բայց անկարելի էր այսչափ մըն ալ գէթ չհաստատել հոս անոր գոյութիւնը :

Է. Կերտիչ զուգորդութիւն կամ երեւակայութիւն . —

Չուգորդութեան գործը՝ առաջուց կազմուած հոյլերը իրենց նախկին վիճակներովը վերարտադրելը չէ լոկ : Ան է դարձեալ որ երբեմն երբեմն մեզի կազմել կուտայ նորանոր հոյլեր, ինչպէս այս կը պատահի եւրազներու մէջ, ուր երբեք չտեսած բաներնիս կը տեսնենք և կ'ընենք այնպիսի բաներ, զորս երբեք չէինք ըրած : Այս երևոյթները սապէս կը բացատրուին : Ուրովհետև միևնոյն տարրերն հասարակորդ են շատ մը հոյլերու, երբ ունինք առաջին զօրեղ վիճակ մը, որուն մէջ կը գտնուի ուրիշ հոյլերու հասարակորդ տարր մը, իսկոյն կը յիշենք՝ այսինքն կը վերակոչենք զայն . աս ալ յետոյ կ'արթնցնէ նորանոր ուրիշներ, և այսպէս շարունակաբար . այնպէս որ քիչ ժամանակի մէջ բաւական հեռացած կ'ըլլանք սկսուած կէտէն :

Այսպէս, ձիարշաւէն՝ մտքով կ'անցնինք արշաւախաղին, արշաւախաղէն՝ գրաւախաղին, գրաւախաղէն՝ զրամախաղին, զրամախաղէն՝ այն անձին որուն աւերում պատճառած է ան . անձին աւերումէն՝ Երուսաղիմի կամ Պոմպէյի աւերումին, Վոլնէյի Աւերակներ



երկին, ժ՛՛. դարուն վոլնէյէն՝ վոլդէրին, և այսպէս շարունակաբար:

Երբեմն կը պատահի որ գլխակցութիւնը չի կրնար նշմարել միջնորդական այն եզրերը որոնցմով կատարուած է զուգորդութիւնը, ինչպէս պատահած է անգամ մը Համիլտընի: Սկովտիացի այս փելիստիան, օր մը, Սկովտիոյ Բին Լոմոնտ կոչուած լեռը ելած ատեն, առանց յայտնի պատճառի՝ յանկարծ սկսաւ խորհիլ բրուսիական դաստիարակութեան դրութեանը վրայ: Երկար ճիւղերէ վերջ միայն կրցաւ յետոյ յիշել թէ ուրիշ անգամ մըն ալ ելած էր նոյն լեռը, ընկերակցութեամբ գերմանացիի մը, որուն հետ նոյն միջոցին խօսակցեր էր բրուսիական դաստիարակութեան այդ դրութեան վրայ: Ասկէ կը հասկցուի թէ միջնորդական թաքուն եզրերով կատարուած զուգորդութիւնները յաճախ առիթ կուտան այլանդակ և անակնկալ պարագաներու:

Այս կերպով կը մեկնուին նաև մեր երազներուն տարօրինակ կազմութիւնները: Կարգ մը հոյլերու տարրերը երբ ձուլուին ուրիշ հոյլերու տարրերուն հետ, կը ձևացնեն բոլորովին նոր, երբեմն իրականի նման և երբեմն բոլորովին անբնական հոյլեր: Այսպէս, երազի մէջ՝ շուներու հետ միասին որսի կ'երթանք, ինչ որ երբեք չենք ըրած, ամպերուն մէջ կը թռչինք կամ օդապարիկով կը ճամբորդենք, եւայլն: Զուգորդութիւնը ծնունդ կուտայ այն ատեն երեւակայութեան:

Զուգորդութեամբ է դարձեալ որ կը մեկնուին պատրանքները, տեսողութեան վրիպումները, և ուրիշ նմանօրինակ բազում երեւոյթներ: Առածի կարգ անցած պատուէր մըն է թէ պէտք չէ չուանի խօսք ընել կախուած մարդու մը տունին մէջ, վասն զի

չուանին գաղափարը կրնայ զուգորդութեամբ արթընցընել կախուածին գաղափարը, եւ կարծել տալ թէ խօսողը կ'ուզէ ակնարկել դժբախտ պատահարին, ու նորագել անով վշտահար անձերուն կսկիծը: Տեսողութեան վրիպումի օրինակ մըն է հետեւեալը. սափրիչի մը խանութին նշանատախտակին վրայ գրուած postiches (կեղծամ) բառը pistaches (պիստակ) կարդալով, կը զարմանամ թէ սափրիչի մը խանութին մէջ ի՞նչ բան ունի շաքարեղէնը: Սխալմունքիս պատճառն են p-stiches բաղաձայն տառախուճերը, որոնք հասարակորդ են երկու բառերուն ալ: Մնորդառնալով, կը հասկընամ որ՝ առանց կարգացած ըլլալու՝ մտքովս լրացուցեր եմ ձայնաւորները, եւ այսպէս, o-իին տեղ դնելով i-a, կարգացեր եմ pistaches, փոխանակ postichesի:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա. — Զուգորդութեան միակ՝ անհրաժեշտ և բաւական պայմանն է զուգորդելի տարրերուն յարակցութիւնը գլխակցութեան մէջ. բոլոր միւս պայմանները առարկայական և անբաւական են:

Բ. — Միջոցապէս յարակից երկու առարկաներն այն ատեն միայն կրնան զուգորդուիլ, երբ գլխակցութեան մէջ արդէն անգամ մը միացած են առաջուց:

Գ. — Նոյնպէս նաև ժամանակապէս յարակից երկու առարկաները:

Դ. — Նոյնպէս նաև պատճառի և արդիւնքի աղերսով իրարու յարակից երկու առարկաները:


Ե. — Նմանութիւնն ալ, որուն միջոցաւ առարկայ մը կարող կ'ըլլայ յիշեցնել իրեն նման ուրիշ ա-



ուարկայ մը, կը վերածուի զիտակցական յարակցութեան:

Զ. — Եւ սակայն, որպէսզի զուգորդութիւնը կարենայ գոյանալ, անհրաժեշտ է որ հիմնական նշմանութիւն մը ըլլայ տարրերուն միջև:

Է. — Զուգորդութիւնը ո՛չ միայն հին հոյութիւնը կը վերարտադրէ, այլ նաեւ կը կազմէ նորեր անոնցմէ: Այս պարագային, մասամբ կը նոյնանայ երևակայութեան հետ:



## Պ Ա Ս Է.

### ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒ ԵՐԵՒԵՅՈՒՅԻՉ ԱՐԴԻՒՆՔՆԵՐԸ

ՅՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Պատկերներու բաղադրութեան օրէնք. — Բ. Մասնաւոր պատկերակազմութիւններու պատկեր. — Գ. Տիեզերական պատկերակազմութեան պատկեր. — Դ. Երեւակայական շարայարութիւնը. — Ե. Դիտողութիւն:

Ա. Պատկերներու բաղադրութեան օրէնք. — Դանի որ ամէն զգալի հոյ պատկեր մը կը թողու իրմէ ետքը, ամէն նոր հոյ պատկեր մը պիտի մնայ զիտակցութեան մէջ: Եւ այս պատկերներն այսպէս իջարու վրայ պիտի բարդուին զիտակցութեան մէջ, ու իրենց հասարակորդ մասերը, համապատշաճ չափակցութեամբ աւելնալով իրարու վրայ, պիտի զօրանան. մինչդեռ անմասն մասերը, ոգորելով իրարու դէմ, պիտի արտաքսեն զիրար: Ասկէ կը ծագի սա օրէնքը. նկատարիւնները զիրար կ'անհրաճեն, իսկ աննկատարիւնները կը ջնջեն զիրար: Հետեւաբար, բաւական թուով զգայութիւններէ վերջ, զիտակցութեան մէջ պիտի ձեւակերպուի պատկեր մը, որուն մէջ զիրար պիտի պահպանեն բոլոր բաղադրող հոյներուն հասարակորդ տարրերը, և ուսկից պիտի անհետանան տարբեր տարրերը: Անզգիացի կալտըն բնագէտը յաջողեցաւ գործնապէս ապացուցել այս օրէնքը, լուսադրական միակ թիթեղի մը վրայ հանելով յաջորդաբար բազմաթիւ անձերու կենդանագիրները, որոնց արդիւնքն եղաւ խառն կենդանագիր մը, որ չէր նմաներ այն անձերէն մասնաւորաբար ո՛չ մէկին, այլ կը յիշեցնէր ամէնքն ալ:



Այդ պատկերը, զոր կարելի է կոչել բաղադրական պատկեր, ընդունակ է յիշեցնելու բոլոր բաղադրիչ հոյերը. ու նաև, զուգորդութեան օրէնքին հետեանքով, անոնց զուգորդներն ալ. ըսել է թէ այդ պատկերը, թէև ինքնին եղակի, յողնակի պատկեր մ'է միանգամայն: Դեղձանիկ մը, ճնճողուկ մը, հաւ մը, թուրթակ մը, սոխակ մը և ուրիշ թուռներ տեսնելէ՞ք վերջը, գիտակցութեանդ մէջ պիտի մնայ տեսողական պատկեր մը, որ զուգորդ է թոշուն և երգ բառերուն հընչական պատկերներուն: Ուստի, եթէ ժամանակ անցներէ վերջ տեսնես եկեղանիկ մը, տեսողական ըզգայութեանդ այդ տարրերը, որ հասարակորդ են ուրիշ զգայութիւններու ալ, պիտի յիշեցնեն բաղադրական պատկերը, և, անոր միջոցաւ, երգին պատկերն ալ. ու պիտի սպասես լսել եկեղանիկին ձայնը: Միեւնոյն կերպով, հրազէնին կոթը ուսին դրած որսորդի մը տեսքը կ'արթնցնէ պայթող հրազէնին բաղադրական պատկերը. ու ընահողեպէս կը սպասենք պայթումին, նոյն խակ անոր վրայ յստակօրէն դեռ չմտածուած: Առարկային զգալի և ճշմարիտ ծանօթութիւնն է ան, որ սակայն չէ իմացական և տրամախօհեալ ծանօթութիւն մը:

Բ. Մասնաւոր պատճառականութեանց պատկեր. — Բաղադրական պատկերը կրնայ կազմուիլ անընդմիջապէս իրարու յաջորդող տարրերու մէջ ալ. այն ատեն ունեցածնիս կ'ըլլայ պատճառականութեան ճշմարիտ հողերանական պատկեր մը: Այսպէս, տեսնելնէս յետոյ ձեռնոցաւոր ձեռքէ մը կանայ շարի մը քաշուիլը, լսեցինք ուռնակի մը միակ հնչիւնը. յետոյ կը տեսնենք մերկ ձեռքէ մը կտրելի շարի մը քաշուիլը, եւ

կը լսենք ուռնակին երկու անգամ հնչելը, յետոյ նորէն կը տեսնենք միայն շարի մը շարժիլը, և զանգակի մը ձայնը կը լսենք. որմէ ետքը մեր գիտակցութեան մէջ կը կազմուին երկու բաղադրական պատկերներ. մին՝ շարի մը շարժումին վերածուած նախընթացներունը, և միւսը՝ ձայնի մը արդիւնքին վերածուած հետևորդներունը: Բաց աստի, բաղադրիչ զգայութիւններուն միջև եղած յաջորդութեան կապը պիտի մնայ երկու բաղադրական պատկերներուն միջև ալ, այնպէս որ՝ երբ ձայն մը հնչէ, անմիջապէս պիտի մտաբերենք անկէ առաջ շարժուած լար մը, ու երբ տեսնենք լարի մը քաշուիլը, պիտի սպասենք անոր յաջորդող ձայնի մը: Հողեխօսական բերում մը պիտի ունենանք, այսպէս, հետևորդին սպասելու, նախընթացը ունեցած ատեննիս, և նախընթացը ենթադրելու՝ հետևորդը ունեցած ատեննիս:

Ուրեմն նախընթացներուն և հետևորդներուն միջև կայ իրական կապ մը, որ է գործնական գրեթէ ճշգրիտ համազօրը՝ պատճառականութեան ճշմարիտ կապին:

Զուգորդութիւնը, պատկերներու բաղադրութեան հետ միացած, այսպէս կ'ընտելացնէ զմեզ իրարու հետ միացնելու այն մտապատկերացումները որոնք միշտ միասին կը ներկայանան:

Գ. Տիեզերական պատճառականութեան պատկեր. — Զուգորդութեան օրէնքը, ինք միայնակ, աւելի հեռուն կը տանի զմեզ, եւ պատճառականութեան սկզբունքի այնպիսի գործնական համազօր մը կը հայթայթէ մեր գիտակցութեան, որով սա կարող կ'ըլլայ կապել անցեալը ներկային, ներկան ապառնիլն,



և՛ այսպէս՝ տիեզերքի երևոյթներէն ձեռացնել շարա-  
յարեալ թեզան մը:

Տեսանք վերև՝ թէ կարելի է բազազրական դու-  
գորգութիւններ կազմել նախընթացներու և հետևորդ-  
ներու միջև: Արդ, դիցուք թէ ունինք հետևեալ զա-  
նազան զուգորգութիւնները.

Ա	Բ
Գ	Դ
Ե	Զ
Է	Ը

Բազազրական պատկերներու օրէնքին զօրութեամ-  
բը, նմանութիւնները զիրար կ'ամրացնեն, իսկ ան-  
նմանութիւնները կը ջնջեն զիրար. որով բոլոր մաս-  
նաւոր, յատկաւորութիւնները, կամ Ա. Բ. Գ. Դ.  
Ե. Զ. Է. Ը. պիտի անհետանան, և պիտի մնայ միայն  
՝. Գ. ընդհանուր յատկաւորութիւնը, որ կը դրդէ զի-  
տակցութիւնը նախընթաց մը ենթադրել միշտ և ար-  
դիւնքի մը սպասել:

Անշուշտ աշխարհի մէջ կան բազմաթիւ փոփոխա-  
կան պատահարներ, որոնք կարծես թէ պէտք էին հա-  
կառակիլ այսօրինակ անդիմադրելի զուգորգութեան  
մը կազմութեան:

Ձոր օրինակ, զօրահանդէսի մէջ փողհարութիւն  
մը լսելէ վերջ, տակաւին շատ բաներ կը լսենք և կը  
տեսնենք այդ փողհարութեամբ հրամայուած շարժու-  
մին կատարումէն առաջ. բայց նշանին և շարժումին  
միջև լսուած ու տեսնուած այս բաները կը փոխուին  
ամէն վայրկեան. մինչ հանդէսին ամբողջական մըտա-  
պատկերացումին մէջ անոնք զիրար փճացնող աննը-  
մանութիւններ են, և նմանութիւններն են միայն որ  
պիտի մնան ի վերջոյ. այսինչ փողհարութիւնը, այնինչ

շարժումը, ու նոյնիսկ այս կամ այն փողհարութեան,  
այս կամ այն շարժումին միջև եղած աննմանութիւն-  
ները կ'անհետին, ու մենք ո՛չ այլ ինչ կ'ունենանք  
եթէ ոչ տարտամ պատկերը փողհարութեան մը՝ փո-  
ղի ձայնի մը, որ կապուած է իրեն հետևող շարժու-  
մի մը տարտամ պատկերին:

Ուրեմն, բազազրական պատկերներու օրէնքով  
նոյն իսկ, կ'արտաքսուին այն ամէն պատահարները  
որոնք փոփոխական են և չեն վերաբերիր ոչ մէկ ան-  
փոփոխ նախընթացի: Վասնզի, այդ պատահարները,  
իրենց բազմազանութեան պատճառով նոյն իսկ, տե-  
ւական հետք չեն կրնար թողուլ գիտակցութեան մէջ,  
վասնզի զիրար կ'ոչնչացնեն:

Այսպէս է նաև ո՛ր մեր երեակայութեան օրէնք-  
ներուն զօրութեամբը նոյն իսկ, կրնանք մտքերնուս  
առջև պատկերացնել տիեզերական յատկաւորութիւնը,  
այսինքն աշխարհի բոլոր պատահարները անփոփոխա-  
պէս կապակից նկատել իրարու, այնպէս որ մեզի ա-  
նանկ կը թուի թէ նոյն նախընթացներուն միշտ պիտի  
յաջորդեն նոյն հետևորդները: Եթէ սուլումի ձայն մը  
լսենք սարդենիի մը վրայ, աչքովս կը տեսնենք  
սուլող սարեակը. եթէ տեսնենք որսորդ մը որ խա-  
րազան կը վերցնէ իր շունին վրայ, կը սպասենք որ  
ոռնայ շունը, ծեծին ցաւէն: Պատահարներու յատ-  
կաւորեալ շարայարութեան այս երեակայութիւնը,  
կայս շարունակեալ սպասումը՝ ուր մենք անցեալին  
նմանող ապագայի մը կը սպասենք, պատճառականու-  
թեան սկզբունքին գործնական համազօր մը կը կազ-  
մեն, քանի որ երբեք չենք կրնար երեակայել ինքն-  
իր մէջ կզվիացեալ երևոյթ մը, որ անպատճառ կա-  
պակցեալ չըլլայ նախընթացի մը եւ հետևորդի մը,







կազմուի այդ մտապատկերացումը: Ի մի բան, մեր  
զանազան ներքին պատկերացումներուն շարայարու-  
թիւնը կ'ապացուցանէ ո՛չ թէ իրերու այլ միայն մեր  
ներքին պատկերացումներուն շարայարեալ ըլլալը:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա. — Աւելի կամ նուազ իրերանման առարկանե-  
րու պատկերներուն բաղակցութիւնը սա օրէնքին հա-  
մեմատ կը կատարուի: Նեանութիւնները զիրար կ'առ-  
ուացնեն, իսկ աննեանութիւնները զիրար կ'ոչնչացնեն:  
Բաղակցութեան մնացորդն է զանազան բաղադրիչ ա-  
ռարկաներու երեւցուցիչ պատկեր մը. բաղադրական  
պատկեր մը:

Բ. — Մասնաւոր յաջորդութեանց բաղադրական  
պատկերները՝ պատկերն են մասնաւոր պատճառակա-  
նութեանց:

Գ. — Պատահարներու յաջորդութեան բաղադրա-  
կան պատկերը՝ պատկերն է տիեզերական պատճառա-  
կանութեան:

Դ. — Զուգորդութեամբ վերակոչուած պատկեր-  
ները կը լրացնեն զգայութեան ընդհատները, եւ, թէ՛  
միջոցին, եւ թէ՛ ժամանակին մէջ յառաջ կը բերեն  
շարայարեալ մտապատկերացումներ:

Ե. — Մեր երեւկայութեան օրէնքները կը դրդեն  
զմեզ շարայարութիւն տեսնելու ամենուրեք: Այսու  
ամենայնիւ, մեր միտքին այս ձգտումը պէտք է  
նկատել ապացոյց շարայարութեան իրականութեան:

**Պ Ա Ս Ը.**

**ՊԱՏԿԵՐՆԵՐՈՒՆ ՇԱՐԺԻԶ ԱՐԴԻԻՆՔՆԵՐԸ**

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Ամէն զգայութիւն շարժումներու  
է կապուած. — Բ. Ամէն պատկեր այսպէս յորդուած է շարժիչ  
պատկերներու. — Գ. ֆորձառական ապացոյցներ. — Դ. Պատկերնե-  
րու ուժական օրէնք. — Ե. Անդրադարձ գործելութիւն. — Զ. Շարժիչ  
պատկեր. — Է. Պատկերներու իրագործութեան օրէնք. Պարագայ՝ ուր  
պատկերը միակ է. — Ը. Պարագայ՝ ուր պատկերը մէկէ աւելի է.  
Առաջին պարագայ. — Թ. Երկրորդ պարագայ. — Ժ. Հանդիմն եւ  
ցաւին շարժիչ դերը:

Ա. Ամէն զգայութիւն կապուած է շարժումներու. —  
Ամէն զգայութեան կ'ընկերանան շարժումներ, այսին-  
քըն ամէն անգամ որ կը զգանք, այդ զգայութիւնը  
մեզի հասցնող գործարանը կը կատարէ շարժումներ,  
որոնց՝ ինչպէս միւսնոյն ատեն նաև նոյն ինքն ըզգա-  
յութեան գիտակցութիւնը կ'ունենանք մենք: Տեսու-  
ղական զգայութիւնները կապուած են աչքի մկան-  
ներուն շարժումներուն, լսողական զգայութիւնները՝  
ծոծրակային մկաններու, և, կարգ մը անասուններու  
մէջ, ականջակոնքի մկաններուն շարժումներուն, հո-  
տառական զգայութիւնները՝ շրթունքի, լեզուի, այ-  
տերու եւ ծնօտներու շարժումներուն, շօշափական  
զգայութիւնները՝ ձեռքի, ոտքի եւ մարմնոյ զանա-  
զան մասերու շարժումներուն: Բայց որովհետև մար-  
մինին գործարանաւորութիւնը մասերու համապատ-  
շաճութենէն կազմուած ամբողջութիւն մ'է, մկան մը  
ձգտելուն կամ թուլնալուն պէս՝ միւսներն ալ աւելի  
կամ նուազ կը մասնակցին անոր շարժումին: Այսպէս,  
հարուած իջուցած ատեննիս ձայն կը հանենք, քալած



ատեննիս թեւերնիս կը շարժենք, և այլն: Հետեւաբար, ամէն զգայութիւն կապուած է ոչ միայն իր երեւումին պայմանը եղող գործարանին շարժումներուն, այլ նաև բոլոր այն շարժումներուն, որոնք կ'ընկերանան այդ երեւումին: Ուստի և ամէն զգայութիւն, կապուած է բազմաթիւ շարժումներու, և այն զգայութիւններուն՝ որոնք յառաջ կուգան այդ շարժումներէն:

Բ. Այսպէս ամեն պատկեր զուգորդ է շարժիչ պատկերներու. — Զուգորդութեան օրէնքին հետեւանքով, ամէն պատկեր, իբրև տկար մնացորդը զգայութեան, ինքն ալ կապուած պիտի ըլլայ շարժումներու պատկերներուն: Բայց, ինչպէս որ զգայութիւնը կապուած է գործարանական կերպաւորութեան մը, պատկերն ալ նոյնպէս կապուած պիտի մնայ նոյն բնոյթն ունեցող գործարանական կերպաւորութեան մը, որ սակայն աւելի տկար է քան այն կերպաւորութիւնը որ պայմանն է զգայութեան: Հետեւաբար տեսողական պատկերն ունի նոյն այն գործարանաւորական պայմանները — միայն թէ աւելի տկարացած —, զորս ունի զգայութիւնը, ու մկանային զգայութեան մը պատկերը ունի նոյն այն գործարանական պայմանները, թէև տկարագոյն աստիճանով, զորս ունի նոյնինքն զգայութիւնը: Ըսել է թէ ամէն պատկեր, չըրջապատուած ըլլալով, ինչպէս տեսանք, մկանային պատկերներու մթնոլորտով մը, ինքն ալ կապուած պիտի ըլլայ աւելի կամ նուազ զգալի մանր շարժումներու հոյլի մը: Այսպէս ամէն պատկեր, մինչեւ մէկ աստիճան, շարժիչ բնութիւն մ'ունի:

Գ. Փորձառական ապացոյցներ. — Դիւրաւ կը

ստուգուի այս բանը: Ըստ որում շրջանակի տեսողական պատկերն ունինք մեր զիտակցութեան մէջ, երբ բոլորակի վրայ խօսինք, ձեռքի շարժումներով շրջանակ մը կը ձեւագրենք միջոցին մէջ: Տկար ձայնի մը՝ թեթեւ մրմունջի մը վրայ խօսած ատեննիս, զլուսնիս կը հակենք, փսփսուքի մը ականջ դնելու ձեով: Հոտի մը վրայ խօսած ատեննիս, պինչքերնիս կը շարժենք. համի մը պատկերը բերնի շարժումներ ընել կուտայ մեզի, կլանումի շարժումներ, կը զբզուէ լորձնագեղձերը. կը ջրոտի բերաննիս՝ եթէ համագամի պատկեր է, իսկ եթէ գարշահամ կերակուրի պատկեր է՝ նողկանք կ'ունենանք: Միևնոյն կերպով, վերջապէս, ողորկի և քնքուշի պատկերներն ալ թեթեւ թրթուումներ կ'առթեն մատներուն ծայրը:


Աւելի եւս շարժիչ պէտք է ըլլան, ի հարկէ, շարժումի պատկերները: Այս պատկերներն արդարեւ անբաժան կերպով կապուած են իրենց ներկայացուցած մկանային կծկումներուն, որոնք տկար վիճակով կը սկսին երեւան դալ, երբ պատկերը երեւի: Ամէն շարժումի պատկեր այդ շարժումին պատրաստումը, ծրագրումը, սկսումն է նոյն իսկ:

Դ. Պատկերներու ուժական օրէնք. — Կարելի է աւելի հեռուն ալ երթալ եւ բանաձեւել սա օրէնքը՝ Ո՛ր եւ շարժումի պատկեր անբաժան կերպով կապուած է այդ շարժումը իրականացնելու ձգտումի մը, կամ աւելի համառօտ ձեով, ամեն պատկեր՝ ամեն գաղափար իր իրականացումին կը ձգտի:

Կենդանի էակն արդարեւ, ամէն վայրկեան, իր ներսը կը զգայ ոյժ մը, կորով մը, որ կը ձգտի շարժումներ արտագրելու: Զղային զգալի տպաւորու-



թիւնները, զգայութիւնները եւ պատկերները միայն կրնան որակել այդ ոյժին կիրարկութեան աստիճանները, այն մասնաւոր շարժումները՝ զորս պէտք է արտադրէ այդ կորովը: Առաջին պարագային, շարժումը անդրադարձ է, եւ բնախօսութենէն կախում ունի, միւս երկու պարագաներուն մէջ՝ ինքնաբերական կամ կամաւոր է, եւ հոգեբանութենէն կախում ունի: Էակը չի գործեր առանց գործելու թելադրուած ըլլալու: Գործելէ աւելի կը հակադործէ, եթէ կարելի է այսպէս ըսել: Աւելի մօտէն ուսումնասիրենք այս հակադդեցութիւնները:



Ձեւ 5

Ե. Անդրադարձ գործողութիւն. — Ձղային շարժիչ հոսանքները ըստ բախտի պիտի ծաւալէին մարմնոյն արտաքին երեսին վրայ, եթէ յատուկ ուղղութիւն մը չվարէր զիրենք: Այդ ուղղութիւնն է այն համապատասխանութիւնը, զոր ունին անոնք Ձղային զգալի հոսանքներուն հետ: Երբ Ձղային զգալի կամ կեդրոնաձիգ Ձ հոսանք մը (ձեւ 5), կը հասնի Կ Ձղային կեդրոնին, եւ անկէ կը մեկնի նորէն անմիջապէս Ձղային շարժիչ կամ կեդրոնախոյս Մ հոսանք մը, առանց ժամանակ թողուլու որ գիտակցութիւնը ո եւ է զգայութիւն արձանագրէ, Ձղային շարժիչ հոսանքին արտադրած շարժումը կը կոչուի անդրադարձ գործողութիւն: Ուրեմն անդրադարձ գործողութիւնները՝ անզգալի մնացած Ձղային տպաւորութեանց տրուած

շարժիչ պատասխաններն են: Անդրադարձ գործողութեամբ է որ յաճախ կը խոնարհին արտեանունքները, փոքր լեզուն կ'ելնէ եւ կ'իջնէ, եւայլն: Անդրադարձ գործողութիւնները բնախօսութիւնը կ'ուսումնասիրէ:

Զ. Շարժիչ պատկեր. — Բայց շատ անգամ, կամ երբ Ձղային կեդրոնաձիգ հոսանքը մինչև ուղեղը բազկացնող կեդրոններուն կը հասնի, գիտակցութիւնը կ'արձանագրէ ընդունած զգայութիւնը, եւ ինք կուտայ անոր շարժիչ պատասխանը: Ինչպէս ըսինք վերև, զգայութիւնը՝ զուգորդութեամբ՝ կ'արթնցնէ բազմաթիւ շարժիչ պատկերներ: Ահա այս պատկերներէն մէկն է որ, իրականանալով, կուտայ շարժիչ պատասխանը և միւսնոյն ատեն կը ծառայէ իբր անցք Ձղային կեդրոնախոյս հոսանքին: Զոր օրինակ, հացարարի խառութին տեսքը գիտակցութեան մէջ կ'արթնցնէ այնպիսի շարժիչ պատկերներ, որոնք կը համապատասխանեն կերակուր ուտելու արարքներուն, եւ այդ պէտքը գոհացնելու զանազան եղանակներուն:

Է. Պատկերի իրականացման օրէնք. Պատկերին վիակ ըլլալու պարագան. — Այդ պատկերներէն ո՞րը պիտի իրականանայ:

Սա յայտնի է որ եթէ զուգորդութիւնը միակ շարժիչ պատկեր մը արթնցնէ, այդ պատկերը պիտի իրականանայ անվրէպ: Սեւուն գաղափարի կամ քընածական թելադրութեան պարագան է ասիկա: Ո՛չ վարանում և ոչ յսպաղում կ'ըլլայ այն ատեն, գործը կ'իրականանայ անդրադարձ գործողութեան մը աւագութեամբն ու ճակատագրականութեամբը:

Բնածութեամբ թմրած անձը ի՛նչ թելադրութիւն




որ ընդունի՝ կ'իրականացնէ զայն, բաւական է որ այդ թեւադրութեան նկարագիրը ինքն իր մէջ հակասական բնութիւն մը չունենայ:

Այսպէս նաև մենամոլները, գողնալու կամ ըսպաննելու սևեռուն գաղափարէն հալածուած, կը գողնան կամ կը սպանեն անվրէպ:

Ը. Պատկերին բազմաթիւ ըլլալու պարագաներ. Առաջին պարագայ. — Եթէ, ինչպէս կը պատահի ստէպ, բազմաթիւ շարժիչ պատկերներ միանգամայն արթննան, բազմաթիւ պարագաներ կրնան մտապատկերուիլ:


Կամ այն է որ այս պատկերները կրնան խմբուիլ և դասակարգուիլ և յաջորդաբար իրականանալ աւելի կամ նուազ երկարութեամբ տևող գործողութեան մը մէջ, կամ չեն կրնար: Առաջին պարագային, գործելութիւնը կ'իրականանայ, պատկերներու իրականացումը յաջորդաբար կատարուելով: Այդ օրէնքը կրնայ այսպէս բանաձևուիլ. բոլոր այն պատկերները որոնք իրարու չեն հակառակիր, կը ձգտին նաև զիրար կազմակերպելու, և յետոյ, իրականացնելու այդ կերպով կազմուած դրութիւնը: Գեղեցիկ արեւի մը տեսքը պտոյտի, որսի և ձիարշաւի պատկերները կը ծնի մեր մէջ: Այս երեք պատկերահոյլերը, եթէ յետոյ անոնց չգան խառնուիլ ուրիշ հակառակող պատկերներ, զիրար կը կազմակերպեն, կը դասաւորեն, այնպէս որ ընդհուպ քաշել կուտանք ձին, մօտ կամ հեռու տեղ մը որսի երթալու համար, թէև առ այդ ո՛ր և է հրաման մը կամ կարգադրութիւն մը ըրած չըլլանք կանխաւ:

Թ. Երկրորդ պարագայ. — Պատկերներուն մէջ, սովորաբար, իրարու հակառակողներ ալ կը գտնուին,



Ձեւ 6


այսինքն այնպիսիներ որոնք չեն կրնար միանգամայն իրականանալ: Պատկերներու այդ շփոթ խառնումը այն ատեն կրնայ սա տարազը առնուլ (ձև 6). այն պատկերները որոնք կրնան կազմակերպուիլ, կը ձևացընեն հոյլեր (ձև 7), այնպէս որ Ա. և Բ երկու մեծ հոյլերը միայն կը մնան և քանի մը առանձին պատկերներ Գ:



Ձեւ 7

Այս վերջին պատկերները (Գ) դրեթէ անմիջապէս կ'ընդոտնուին:

Որով կը մնան միայն երկու մեծ հակառակ հոյլերը (Ց և Է). այն ատեն յառաջ կուգայ հաւասարա-



Ձեւ 8

կշուութիւն և վարանում, և կամ երկու ներհակ ձըկտուամները՝ հաւասարազօր ըլլալով՝ զիրար կը կշռեն,



ու չենք կրնար գործել, կամ երկուքէն մին միւսին կը յաղթէ: Եթէ, օրինակի համար, պայծառ արևի մը տեսքը ծովային որսի և միւսնոյն ատեն անտառային որսի և պտոյտի պատկերները թելադրէ, եւ ասոնց հետ գան խառնուելն ընթերցումի կամ այցելութեան տարտամ պատկերներ ևս, իսկոյն կը կազմուին երկու հոյլեր, մին՝ ծովային որսի պատկերներու, իսկ միւսը՝ անտառային որսի, ու ընթերցումի կամ այցելութեան պատկերները կ'ոչնչանան. յետոյ, երկու հոյլերէն զօրաւորագունին ազդեցութեամբ՝ կա՛մ անտառ կ'երթանք կամ ծով: Եթէ, ինչ որ շատ սակաւադէպ է, երկու հոյլերը զիրար հաւասարակչուն, վտարուած մանր պատկերներն իրենց տեղը կը դառնան, եւ ընթերցում կ'ընենք կամ որսի կ'երթանք: Այսպէս ամէն պատկեր կը ձգտի իր իրականացումին. երբ պատկերը առանձինն է, կ'իրականանայ անվրէպ իսկ երբ բազմաթիւ պատկերներ կը գրաւեն զիտակցութեան դաշտը, մէկ կամ աւելի հոյլերու վերածուելէն ետքը, միակ կամ հզօրագոյն հոյլը կ'իրականանայ: Նմանութեան բնագոյ կոչուածը ոչ թէ բնագոյ է իսկապէս, այլ հետեւանքը ա՛յն ոյժին որ պատկերը իր իրականացումին կը մղէ: Գործի մը տեսքը զայն կատարելու տրամադրութիւնն ալ կը ստեղծէ:

Ժ. Հանոյիքն եւ վիճիքն կատարած դերը պատկերներու շարժումին մեջ. — Ուրեմն պատկերներն ու իրենց կազմած հոյլերն աւելի կամ նուազ մեծ ոյժ մը կը ձևացնեն: Անոնց իրականանալու ձգտումը՝ աւելի կամ նուազ զօրաւոր կերպով՝ կ'ազդէ մկաններուն վրայ: — Ո՛րսակից կուգայ այդ ազդուութիւնը: — Մարդուն մէջ, կա՛մ զգալի տարրերէ պէտք է գայ ան,

կա՛մ բանաւոր տարրերէ: Թողլով առ այժմ այս վերջինները և իրենց հետ եղած ազատութիւնը, քանի որ տակաւին զգայական հոգեբանութեան օրէնքներուն հետ է գործերնիս, պիտի զբաղինք միմիայն զգալի տարրերով, որոնք պատկերներուն ոյժը կը շատցնեն կամ կը պակսեցնեն, այսինքն հաճոյքով և վիշտով:

Քանի որ հաճոյական զգայութիւնները անոնք են որ կ'ընկերանան ոյժի աճումի զիտակցութեան, և ընդհակառակն անհաճոյ զգայութիւնները կապուած են ոյժի նուազութեան, ըսել է թէ հաճոյական պատկերները իրենց ազգած ախորժին համեմատական ոյժ մը պիտի ունենան, իսկ անհաճոյ պատկերներն, ընդհակառակն պիտի տկարացնեն՝ կարկամեն զիրենք իրականացնել ջանացող մկաններուն շարժումները:

Համի հաճոյական պատկերները ա՛յնքան ուժգին կը ներգործեն տղաքներուն վրայ որ, արդեւքի կամ պատիժի գաղափարը միտքերուն մէջ դեռ չարթնցած, արդէն կերած կ'ըլլան անոնք կարկանդակը կամ աւուշուղէնը:

Ընդհակառակն, գարշանք ազդող համերուն անհաճոյ պատկերները կը դժուարացնեն ուտելիքին ծասքումը, շրթունքն ու ծամելիքը թուլցնելով: Այսպէս երկիւղը կը ջլատէ, սրունքները կը կթոտին՝ կը կարկամին. մորթին ծակտիքները կը լսկին եւ քրտինք կ'արտաթորեն:

Իայց եթէ անհաճոյ պատկերի մը հետ վիշտին իրականացումը խափանելու կարող շարժումի մը պատկերը զուգորդուի, այս վերջին պատկերը իր մէջ կը կեդրոնացնէ էակին բովանդակ ոյժը, եւ կ'իրականանայ սաստիկ թափով: — Յափրանքին մէջ, շրթունքն ու ծամելիքը միանգամայն կը թուլնան, որկորը կը



խցուի, անհաճոյ ուտելիքին ներմուծումը արգելելու աստիճան: Երկիւղին մէջ, փախուստ մտաբերուած վայրկեանին միայն կ'արիանայ մարդ, եւ կը շտապէ քալուածքը: Երկիւղը, վայրկեան մը ջլատելէ վերջ, յետոյ նորէն թւեր կուտայ:

Այսպէս, բանականութենէն եւ ազատութենէն դուրս, ամէն անգամ որ գործողութիւնը կ'իրականանայ առանց տրամախոհեալ խորհրդածութեան, պատկերահոյլին իրականացումը պատրաստող ոյժը յառաջ կուգայ այն մեծագոյն հաճոյքէն, զոր այդ հոյլը կըրնայ հայթայթել մեզի:

#### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Ամէն զգայութիւն անբաժան կերպով կապուած է շարժումներու հետ, թէ՛ երբ անոնցմէ յառաջ գայ ուղղակի, և թէ՛ երբ անոնք ընկերանան այն շարժումներուն, որոնցմէ յառաջ կուգայ ինք. ուրեմն կապուած է մկանային զգայութիւններուն:

Բ. — Ամէն պատկեր, այդ պատճառաւ, զուգորդ է մկանային և շարժիչ պատկերներու:

Գ. Դ. Ե. — Դասին մէջ յառաջ կը բերուին վերոյիշեալները հաստատող բազմաթիւ իրողութիւններ, որպիսիներ տակաւին զիւրաւ կրնայ գտնել անձնական փորձառութիւնը:

Զ. Է. — Կրնանք սապէս բացատրել պատկերներուն շարժիչ պաշտօնը. ամէն պատկեր իր իրականացումին կը ձգտի: Երբ պատկերը միակ է, կ'իրականանայ անվրէպ:

Ը. Թ. — Եթէ բազմաթիւ պատկերներ կան, անոնք կա՛մ կրնան դասաւորուիլ, գրութիւն կազմել,

որ ատեն ամբողջ գրութիւնը կ'իրականանայ, կա՛մ չեն կրնար, այն ատեն հզօրագոյն հոյլը կը յաղթէ: — Նմանութիւնը պատկերներու շարժիչ պաշտօնին մասնակի մէկ ցուցակութիւնն է միայն:

Ժ. — Հաճոյքը կը շտացնէ պատկերին շարժիչ ոյժը, իսկ վիշտը կը պակսեցնէ զայն, և կը ձգտի՝ նոյն իսկ՝ յարուցանելու ներհակ պատկերներ, և անոնցմով՝ ներհակ շարժումներ:



ԱՆՈՐԺԱԿՆԵՐԸ ԵՒ ԿԱՐԵԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

ՅՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— Հանոյի բնութիւնն ու սեսակները.— Բ. Ախորժակները.— Գ. Զգացումները.— Դ. Հանոյին եւ վիճին օրէնքները զգացումներուն մէջ.— Ե. Այս օրէնքներուն բացատրութիւնը.— Զ. Համակրութիւնը.— Է. Միտումները.— Ը. Պահպանումի եւ փոփոխումի միտումները.— Թ. Ընթացեալի միտումները.— Ժ. Ընկերային միտումները.— ԺԱ. Արդիւնաւորում ախորժակներու եւ միտումներու:

Ա. Փափաքին բնութիւնն ու սեսակները.— Գիտակցութիւնը ունինք ո՛չ միայն պատկերներուն եւ զանոնք իրականացնող շարժումներուն, այլ նաեւ այն ոյժին՝ որով պատկերները կը ձգտին իրենց իրականացումին: Այդ ոյժին այդ գիտակցութիւնը կը կոչուի փափաք: Ուրեմն փափաքը պատկերներու ոյժին նկատմամբ մեր ունեցած գիտակցութիւնն է:

Վշտագին պատկերները, զուգորդութեամբ, կ'արթընցնեն հեռացումի կամ փախուստի շարժիչ պատկերներ: Փափաքը այն ատեն խորշումի կը փոխուի:

Փափաքը՝ երբ տարտամ եւ անստոյգ ըլլայ, եւ ներկայացնէ անորոշ ձգտում մը վիճակի փոփոխութեան, յաւաջ եկած է տհաճութենէ մը, յոգնութենէ մը կամ անհանգստութենէ մը, որ շարժիչ որոշ պատկերներ արթնցնելու աստիճան զօրաւոր չէ եղած: Զանձրոյթ ըսուածը այդօրինակ փափաք մ'է:

Յաճախ, փափաքը ճշգրտուած եւ կատարեալ ձև մը կ'ունենայ: Ասիկա կը պատահի, երբ շարժիչ պատկերները յօրինուածեալ կարգի մը վերածուին, նա-

խորդ դասին մէջ նկարագրուած կերպով. երբ, զոր օրինակ, տարտամ փափաքին յաջորդէ ճամբորդութիւն մը կատարելու կամ ա՛յս ու այն զբաղմունքով պարապելու փափաքը:

Բ. Ախորժակները.— Ախորժակ կը կոչուին Ֆիզիկական այն փափաքները որոնք պարբերաբար կը վերանորոգուին: Էակին պահպանումին համար կարևոր եղող ախորժակները կը կոչուին պեճ կամ կարիփ:

Ամէն ախորժակ հաստատուն կըռոյթ մ'ունի. վիշտով մը կը սկսի եւ հաճոյքով մը կը զոհացուի: Յետոյ կուգայ աւելի կամ նուազ երկար տևող հանգիստ մը, ու վիշտը յետոյ նորէն կ'երևի, իր շրջանը վերսկսելու համար:

Գլխաւոր ախորժակներն ասոնք են. քաղց, ծարաւ, շարժումի պէտք, հանգիստի պէտք: Ասոնցմէ իւրաքանչիւրին վրայ դիւրին է ճշմարտել վերեւ բանաձևուած օրէնքները:

Նօթութիւնն ու ծարաւը, զոր օրինակ. կը սկսին վիշտով մը. երբ զոհացուին՝ տեղի կուտան հաճոյքի: Ապա կուգայ բաւական երկար հանգիստ մը. յետոյ վիշտը կը վերերեւի, երբ մարմինն գործարանաւորութիւնը ենթակայ ըլլայ կորուստներու, որոնք նոր սնուցում մը կը պահանջեն: Ախորժակներուն մէջ, զործունէութեան ժամանակէն աւելի երկար է հանգիստին ժամանակը: Ուստի, կրնանք ըսել թէ բարոյապէս եւ Ֆիզիկապէս հիւանդ, կամ որկրամուլ է կամ դժուարամարտութիւն ունի այն մարդը որ անընդհատ կ'անօթենայ:

Գ. Զգացումները.— Զգայութիւնները, հաճոյքի



կամ վիշտի ուղղակի հայթայթիչ ըլլալնէն զատ, նը-  
շանակելի են նաև այն հաճոյական ու անհաճոյ հան-  
գամանքներով, զորս կը ներկայացնեն մեզ, մեր կան-  
խազոյն զուգորդութեանց հետ իրենց ունեցած յարա-  
բերութեանց համեմատ: Զուգորդական այս հաճոյք-  
ները կամ վիշտերը որոնք զուտ հոգեբանական են և  
ո՛չ թէ բնախօսական, կը կոչուին զգացում և տարբեր  
են զգայութենէն:

Անհաճոյ տպաւորութիւն մը կը զգանք, անվա-  
րազոյր տեսնելով պատուհան մը, զոր միշտ վարա-  
գուրեալ տեսնելու վարժուած էինք. այդ տհաճու-  
թիւնը տեսողական վիշտ մը չէ, այլ սովորական զու-  
գորդութեան մը եղծումէն յառաջ եկած վիշտ մը, որ  
բոլորովին հոգեբանական է. այս է ահա զգացումը:

Գ. Ի՞նչ օրէնքներով հանոյական կամ վեսագին  
կ'ըլլան զգացումները. — Կրնանք հետեւեալ օրէնքները  
բանաձևել, բացատրելու համար զգացումներու հաճո-  
յական կամ վշտազին ըլլալուն պատճառները: —

1. Հաճոյական զգացում յառաջ կը բերէ ամէն  
նոր պատկեր որ դիւրութեամբ կը յարի մեր կանխա-  
գոյն զուգորդութիւններուն:

2. Անհաճոյ զգացում յառաջ կը բերէ ամէն նոր  
պատկեր որ դժուարաւ կը յարի մեր կանխազոյն զու-  
գորդութիւններուն:

3. Ոչ մէկ զգացում յառաջ չի բերեր ամէն մտա-  
պատկեր որ չի ներկայացներ ո՛ր և է նորութիւն:

Այսպէս, հանգստաւէտ բնակարան, շատոնց փա-  
փաքելի եղած յառաջացումներ, և ընդհանրապէս բո-  
լոր լաւութիւններ, ա՛լ ոչ մէկ հաճոյական զգացում  
չեն առթեր, ձեռք բերուելնէն քիչ ետքը: Անոնց

մտապատկերները որքան հիննան, այնքան կը կոր-  
սուլին նաև իրենց հրապոյրները:

Ընդհակառակն, շատոնց և սերտիւ փափաքուած  
այդ լաւութիւնները հրապուրիչ կ'երևին անմիջապէս  
ձեռք բերուած ատեննին, վասնզի իրենց հայթայթած  
տեսողական կամ շօշափական զգայութիւնները դիւ-  
րաւ կը տեղաւորուին մեր արդէն ունեցած զուգոր-  
դութեանց մէջ: Եւ եթէ ենթադրուածէն նուազ հրա-  
պուրիչ կ'ըլլան մեզի, պատճառն այն է որ մեր նախ-  
կին մտապատկերներովը արդէն ճաշակած կ'ըլլանք  
զանոնք ի պատկերի, և մեր երևակայութեանը մէջ  
թառամեցուցած՝ անոնց թարմութիւնը:

Հակադարձաբար, անակնկալ և յանկարծահաս յա-  
ջողութիւնները անհաճոյ ցնցումներ կը պատճառեն:  
Ուրախութիւնը կը լացնէ, կ'ըսեն, ճշդագոյն էր ըսել  
անկարծելի լաւութիւնները կը շուարեցնեն մարդս:  
Բաւական ժամանակ պէտք է, որպէսզի այդ լաւու-  
թեան մտապատկերը տարրանայ մեր կանխազոյն զու-  
գորդութեանց հետ և կարենայ ազատ համարձակ գոր-  
ծել մեր մտաւոր կեանքին մէջ:

Շատ անգամ, մտապատկերի մը բացակայումն ալ  
ցաւ և նեղութիւն կը պատճառէ մեզի, երբ ներկայ  
զգայութիւններնուս հոյլերը ա՛լ չեն համաձայնիր մեր  
անցեալին պատկերահոյլերուն հետ, որմէ յառաջ կուգայ  
զմեզ տազնապեցնող մտահոգութիւն մը: Ճիշտ ինչպէս  
կարասիի մը կորուստը վիշտ կը պատճառէ մեզի:

Տաժանելի բայց ընտելական եղած զգայութիւն-  
ներուն պակասումն անգամ կրնայ ցաւառիթ ըլլալ:  
Երգիծաբան հեղինակ մը շատ ճիշտ գաղափար մը  
սրախօսած է, իր էրկանը մահը ողբացող կնոջ գոչել  
տալով. « Աւա՛ղ, ա՛լ պիտի չծեծէ զիս »:



Ասո՛վ կը բացատրուի նաեւ այն իրողութիւնը թէ երկտասարգները կը սիրեն, իսկ ծերերը կը մերժեն փոփոխութիւնը: Առաջիններուն սակաւաթիւ եւ անօտր զուգորդութիւնները դիւրաւ կը միաւորին նոր պատկերներու հետ, մինչ վերջիններուն պնդացած, բլւրեղացած զուգորդութիւնները կ'ընդհարին և կը ժխտեն ամէն նորութիւն:

Ե. Ի՞նչպէս պէտք է բացատրել այդ օրէնքները. — Այդ օրէնքներուն բացատրութիւնը հաճոյքի և վիշտի ընդհանուր օրէնքներէն կ'ածանցուի: Եթէ հաճոյքը էակին օրէնքներուն պահպանումի զգացումէն կը բղխի, և եթէ կենդանիին ընդհանուր օրէնքը լինելութիւնը (devenir) կամ եղափոխութիւնն (evolution) է, դիւրաւ կը բացատրուի երրորդ օրէնքը: Նորութիւն չներկայացնող զգայութիւնները յառաջացումի մէջ չեն դնել էակը, չեն օգնել անոր եղափոխումին, չեն առթեր ո՛ր և է զգացում:

Ըստ այնմ կը բացատրուի առաջին օրէնքն ալ. ո՛ր և է նոր զգայութիւն որ դիւրաւ կը տարրանայ մեջ կանխագոյն զուգորդութիւններուն հետ, կ'աւելցնէ գիտակցութեան ստացուածքը, կը ճոխացնէ զայն, առանց բան մը կորսնցնել տալու անոր, կը յառաջացնէ զայն, և այսպէս ծնունդ կուտայ հաճոյքի:

Ասոր մէջ է նաեւ երկրորդ օրէնքին բացատրութիւնը: Կանխագոյն զուգորդութիւնները քակտող զգայութիւնները կը քայքայեն գիտակցութիւնը, և ո՛չ միայն չեն հարստացներ՝ այլ կը չքաւորեն զայն: Փոխանակ յառաջխաղացութեան մէջ դնելու, կը վերջոտնեն զայն, խանգարելով անոր օրէնքները, և այսպէս պատճառ կուտան վիշտի: Եւ այս վիշտը այնքան սաս-

տիկ կ'ըլլայ, որքան կարեւոր ըլլան այդ զգայութեանց քակտած զուգորդութիւնները: Այս կերպով կը բացատրուին դարձեալ սիրելիներու մահով պատճառուած սոսկալի վիշտերը, բարոյական անդամահատութիւնները, և սփոփանքը՝ զոր կը բերէ ժամանակը, զուգորդութիւնները վերակազմելով և վերանորոգելով, սպիացնելով վէրքերը: Ասոր համար է ահա որ բուռն ու սուր երեւակայութիւն ունեցող անձերը սաստիկ կը վշտակրին և շուտով կը մխիթարուին: Ասո՛ր համար է նաեւ որ անասունները ցաւատանջ կերպարանք մը կը ցուցնեն՝ երբ նշանաւոր յեղաշրջում մը կատարուի իրենց սովորական զգայութիւններուն մէջ, զոր օրինակ, երբ տէրերնին անյայտանայ: Կրնայ պատահիլ նոյնիսկ որ քայքայումն այնքան սաստիկ ըլլայ որ պատկերներն ա՛լ չեն կրնար վերակազմուիլ, և ասկից կը ծագի յիմարութիւնը: Այս քայքայումը կրնայ, զուգորդութեամբ ա՛յն շարժիչ պատկերներուն՝ որոնք նոյնպէս զուգորդ են կեանքին պահպանումին համար էական եղող մկանային շարժումներուն, յառաջ բերել արեան շրջանառութեան, մարսողութեան եւ շնչառութեան խանգարումներ, որոնց հետեանքն է մահ: Ըսել է թէ վիշտը կրնայ նոյնիսկ մեռցնել:

Զ. Համակրութիւն — Համակրութիւնը այն հաճոյական զգացումն է, զոր՝ զուգորդութեամբ և յաճախ մեր գիտակցութեանէն անկախօրէն՝ յառաջ կը բերէ հաճոյական պատկերներ արթնցնող աւարկայի մը տեսքը: Տէքարդ, երկտասարդութեանը միջոցին, սիրած ըլլալով շիլ անձ մը, իր ամբողջ կեանքին մէջ համակրութիւն տածեց բոլոր թիւրակն անձերուն համար: Կրութիւն տածեց բոլոր թիւրակն անձերուն որոնց բանական է որ համակրինք ա՛յն անձերուն որոնց բա-



բիք ըրած ենք, վասնզի անոնց մտապատկերը մեր մտքին մէջ զուգորդ է մեր գործունէութեան կատարումէն յառաջ եկած հաճոյքին:

Հակակրօնութիւնն, ընդհակառակն, այն անհաճոյ զգացումն է, զոր կ'ունենանք, երբեմն զուգորդութեամբ և յաճախ առանց իսկ գիտնալու, անհաճոյ պատկերներ արթնցնող առարկայ մը տեսած ատեննիս: Թէև ո՛չ գովելի՝ բայց վերջապէս բնական բան մըն է որ միշտ հակակրօնութիւն կը սնուցանենք դէպի այն անձերը, որոնք նեղութիւն տուած են մեզի. վասնզի անոնց մտապատկերը մտքերնուս մէջ զուգորդ է մեր տկարութեանը տաժանելի զգացումին:

Է. Միտումներ. — Զգացումներէն կը ծնին միտումները, որոնք ո՛չ այլ ինչ են եթէ ոչ ձգտումներ՝ հաճոյական զգացումներ ձեռք բերելու և անհաճոյ զգացումներէ խոյս տալու:

Հոս զգացական միտումներուն վրայ միայն պիտի խօսինք: Ատոնք են, պահպանումի և փոփոխումի միտումներ, ընտանեկան միտումներ, ընկերային միտումներ:

Ը. Պահպանումի եւ փոփոխումի միտումներ. — Բոլոր մարդիկ կը խրտչին փոփոխումէն, կ'ուզեն պահել ունեցածնին այնպէս ինչպէս որ ունին. և միեւնոյն ատեն ամէնքն ալ ունին փոփոխումի այնպիսի բաղձանք մը որ զիրենք կը մղէ բարուքելու իրենց վիճակը. կամ նոյնիսկ փոփոխել՝ միայն փոփոխած ըլլալու համար: Այս կրկնակ և հակասական միտումը ամէն մարդոց մէջ կայ: Աշակերտ մը կրնայ շատ գոհ մնալ դպրոցին կամ դասարանին կանոնադրին վրայ

կատարուած մէկ փոփոխութենէն, և միեւնոյն ատեն դժգոհիլ և ձանձրանալ նոր ուսուցուած տարօրինակ զբօսանքի խաղէ մը: Բայց քիչ անգամ կը պատահի որ երկու միտումներն հաւասարակշիռ ըլլան իրարու: Այնպէս որ պահպանիչ միտումը կրնայ արտադրել թէ զգօն դիմադրութիւն մը անխորհուրդ փոփոխումներու, և թէ սովորամոլութիւն, նոյնպէս նաև փոփոխումի միտումը կրնայ ծնիլ թէ՛ յառաջդիմութիւն եւ թէ՛ պարզապէս անհաստատութիւն:

Նստուկ կենցաղի միտումը պահպանումի միտումին մէկ կերպն է: Յայտնի է թէ ո՛րքան զօրաւոր է անիկա ծերերուն մէջ, որոնք կը սոսկան ամէնէն անշահան ճամբորդութենէն, ամենափոքր տեղափոխումէն: Ասկից կը հասկցուի թէ տեսողական զգայութեանց միջանի հոյլեր՝ զուգորդութեամբ ա՛յնքան ամուր միացած են ուրիշ հոյլերու հետ, որ երբ իրենք պակսին, միւսները կը կորսնցնեն իրենց ոյժը՝ սաստկութիւնը, և հետեւաբար հաճոյականութիւնը: Կան կարգ մը անասուններ ալ, ինչպէս կատունները, որոնք աւելի տուներուն քան անձերուն յարած են, և անոնց կարօտէն կրնան հիւանդանալ նոյն իսկ: Իրենց երկրէն հեռացած մարդոց հայրենաբաղձ հիւանդութիւնը այս միտումին խափանումէն յառաջ կուգայ: Ծննդավայր երկրի սէրն ալ, որ հայրենասիրութեան տարբերքներէն մին է, յառաջ կուգայ այս միտումէն:

Թ. Ընտանեկան միտումներ. — Ընտանեկան միտումները իրարու կը միացնեն ընտանիքի մը զանազան անդամները: Մանուկին՝ ընտանիքին մէջ միշտ ներկայ լինելուն հետեւանքով, անոր պատկերը ծնողացը ընտելական զուգորդութիւններուն կազմիչ մասե-



րէն մին կ'ըլլայ, ծնողացը պատկերն ալ նոյնը կ'ըլլայ որդւոյն համար: Որդւոյն մտապատկերը ամբապէս կը զուգորդուի ծնողքին մտապատկերներուն հետ, ու փոխադարձաբար: Այսպէս, ընտանիքի անդամներուն համապատկերը իւրաքանչիւրին դիտակցութեանը մէջ կը ձևացնէ համերաշխ հոյլ մը, որմէ եթէ միակ տարր մը նուազի կամ անհետանայ, միւս ամէնքը կը քակտին, կը խանգարուին: Հաճոյքներուն պէս ցաւերն ալ ուրեմն հասարակորդ կ'ըլլան բնակահօրէն: Մատամ տը Սէվինեէ հոգեբանական պարզ ճշմարտութիւն մը կ'արտայայտէր ըսելով թէ իր կուրծքըն ալ կը ցաւէր աղջկանը կրծացաւին ժամանակ:

Մտապատկերներու այս հոյլերուն համերաշխութեան կարճ կամ երկար տեւելը կախում ունի կենդանիներուն մտային կարողութենէն եւ գործարանաւորութենէն: Ընտանեկան հոյլը շատ զօրաւոր է ըստնաւորներուն մէջ, ուրիշ կենդանիներէն աւելի, գոնէ մօրն ու զաւակներուն միջև: Բայց, ծծթող ըլլալնէն վերջ զաւակները կամ ձագերը անմիջապէս կ'օտարանան իրենց մօրմէն շատ քիչ բացառութեամբ: Հաւանական է որ բնախօսական վիճակի փոփոխումը պատճառ կ'ըլլայ հոգեխօսական վիճակի քայքայման, ճիշտ նման այն քայքայումին՝ զոր պիտի ցոյց տանք յետոյ մարդուն մէջ ալ, ուշաթափութեան վրայ խօսած ատեննիս: (Տե՛ս ի դասն ԺԸ. յօդ. Ը.):

Ժ. Ընկերային միտումներ. — Ընկերային միտումներն անոնք են որ կ'երեւին մարդոց և կարգ մը անասուններու վրայ, և որոնք կը դրդեն էակը իրեն նմաններու ընկերութիւն մը փնտռել և պաշտպանել զանոնք, երբ յարձակում կրելու վիճակի մէջ ըլլան:

Այն անասուններուն համար, որոնց ընկերային գործերը հետեւանք են զուտ բնագոյումի, սապէս կը բացատրուի ընկերային միտումներուն եւ անոնցմով ձևացած զանազան ընկերակցութիւններուն կազմութիւնը:

Ամէն անասուն իր անձին զգալի մտապատկերն ունի իր մէջ, աւելի՛ հոտառական և տեսողական: Այս պատճառաւ երբեմն նմանի մը ներկայութիւնը հաճելի կ'ըլլայ իրեն, մինչդեռ իրմէն տարբերի մը ներկայութենէն անախորժ ազդեցութիւն կ'ընդունի: Բաւական է որ մոտենդինն առատ ըլլայ, և ո՛ր և է արտաքին պատճառով մը իրարու անհաճոյ չըլլան. միշտ զիրար եւ նոյնիսկ իրենց նմաններ պիտի փնտռեն բնական բերումով: Երբ վտանգ մը պատահի, կամ անհատներէն մէկը յարձակում կրէ, միւս ամէնքը իրենց ընկերը տառապեցնող վիշտին ազդեցութիւնը պիտի կրեն հասար չափով. իւրաքանչիւրը շարժումներ պիտի կատարէ զայն պաշտպանելու համար թշնամիին դէմ: Այսպէս, անհատական թշնամին հասարակորդ թշնամի մը պիտի ըլլայ, հոգեբանական զուգորդութեանց հետեւանքով: Ասո՛ր համար է ահա որ կարգ մը կենդանական ցեղերու առանձնակեաց անհատներ, զոր օրինակ, վայրի ցուլերը, չեն ապրիր այն երկիրներուն մէջ, ուր շիկերէններ շատ կը գտնուին. ընկերակցօրէն շրջող ցուլերը միայն հոն կրնան երկարակեաց ըլլալ. այս պատճառաւ այդ անասունները խմբովին միայն կը գտնուին: Ուրեմն ընկերութեանց ծագումն ալ մասամբ մտապատկերներու զուգորդութեամբը կը բացատրուի:

Նոյն հոգեբանական մեքենական զօրութեամբ, անասուն մը կրնայ նաև պատահաբար ընկերանալ տարբեր տեսակի պատկանող անասուններու հետ: Այս-



պէս, շունը չի խորշիւր իր տիրոջմէն: Ու տեսնուած է որ կենդանաբանական պարտէզներուն մէջ առիւծները սիրողաբար վարուած են իրենց գառազեղին մէջ դըրուած ուրիշ անասուններու հետ:

ԺԱ. Ախորժակներուն եւ միտումներուն արդիւնաւորումը.— Ախորժակներն ու միտումները, իբրև կեդրոններ ձգտումներու՝ որոնք զուգորդ են ընդհանուր բաղադրական պատկերներու, կը կազմեն ճշմարիտ ընդհանուր ձգտումներ:

Այս ընդհանուր ձգտումները հետեւեալ կերպով կ'արդիւնաւորին մասնակի պարագաներու մէջ: Օրինակ, անտուն ծարաւի մարդ մը. խմելու ձգտում մը ունի նա. ո՞ւր, ե՞րբ և ի՞նչպէս պիտի խմէ: Զգտումը՝ ախորժակը չ'որոշեր զայն: Ճամբուն վրայ է, ո՛չ բաժակ կայ և ո՛չ սկահ. յանկարծ կը տեսնէ աղբերակ մը և կ'աճապարէ խմել, առանց իսկ խորհելու նախապէս՝ ափովը: Ի՞նչ կատարուեցաւ մարդուն հոգեխօսական խառնուածքին մէջ: Աղբիւրին տեսողական զգայութիւնը արթնցուց ըմպելիի մը ընդհանուր պատկերը, որ զուգադիպեցաւ ծարաւի ախորժակին. խմելու ընդհանուր ձգտումը իսկոյն կերպափոխուեցաւ այդ ջուրը խմելու մասնակի ձգտումի մը: Առանց բաժակի, ձեռքին ափովը խմելու կերպն յանկարծ միտքն ինչպէս զուգորդութեամբ, և այսպէս գործն իրականացաւ: Անասուններն ալ այս կերպով կը գործեն: Արիստոտէլ, որ զայս նշմարած էր վաղուց, սա հաւաքաբանութիւնը կազմած էր անկից. ախորժակը կ'ըսէ թէ պէտք է խմել, զգայութիւնը կ'ըսէ՝ ահա ջուր, ու կենդանին կը խմէ:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա.— Փափաքը՝ գործելու ձգտումին գիտակցութիւնն է: Կրնայ ըլլալ մղիչ կամ վանիչ, տարտամ և անորոշ, կամ բացայայտ և որոշ:

Բ.— Ախորժակները ֆիզիզական և պարբերական փափաքներ են: Վիշտով կը սկսին և կը վերջանան հաճոյքով, որոնց յետոյ կը յաջորդէ հանգիստ մը: Գլխաւորներն են, քաղց, ծարաւ, հանգիստի պէտք, շարժումի պէտք:

Գ.— Զգացումները՝ հոգեբանական մտապատկերներէ յառաջ եկած վիշտեր կամ հաճոյքներ են:

Դ.— Էակին ֆիզիզական աճմանը նպաստող ամէն զգացում հաճոյական է. ընդհակառակն անոր ֆիզիզական աճմանը խափանարար ամէն զգացում անհաճոյ է:

Ե.— Այս օրէնքները կը բացատրուին զուգորդութեան և հաճոյքի ու վիշտի նախնական օրէնքներով:

Զ.— Համակրութիւնը և հակակրութիւնը զուգորդութեամբ բացատրուող զգացումներ են:

Է.— Միտումները՝ անհաճոյ զգացումներէ խորշելու և հաճոյականներուն յարելու հոգեկան ձգտումներ են:

Ը.— Պահպանումի միտումին վախճանն է պահել մեր ամենազգի ունակութիւնները, խորշիլ տալով մեզի նորութենէ. փոփոխումի միտումը ճիշտ ներհակը կ'ընէ ասոր:

Թ.— Ընտանեկան միտումներուն գործն է էակը մղել ներքնապէս զուգորդուելու ընտանիքին անդամ-



ներուն հետ, ինչպէս անոնց մտապատկերները սերտիւ զուգորդ են իրարու՝ իր զիտակցութեանը մէջ:

Ժ. — Ընկերային միտումները էակը կը մղեն ընկերակցելու իրեն նմանող էակներու հետ, ի պահպանութիւն և ի պաշտպանութիւն իր և անոնց կեանքին: Այս միտումները ո՛չ միայն մարդոց մէջ կը գտնուին, այլ նաև այն անասուններուն, որոնք կրնան կազմել ձգձարիտ անասնահոյլ ընկերակցութիւններ:

ԺԱ. — Ախորժակներն ու միտումները՝ ընդհանուր ձգտումներու կեդրոններ են: Զգալի զրգուութիւններ կը մասնաւորեն յետոյ այդ ձգտումներուն գործադրման կերպերը:

## Գ Ա Ս Ժ.

### Բ Ն Ա Ջ Դ

ԲՈՎԱՆԳՄԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Բնագրին սահմանը. — Բ. Բնագրին յատկանիւթերը. — Գ. Անգէտ է իր նպատակին. — Դ. Անվրէպ է. — Ե. Անբնական է յառաջդիմութեան. — Զ. Անհրաժեշտ է. — Է. Անփոփոխ եւ նոյն է միեւնոյն տեսակին մէջ. — Ը. Տեսակէ տեսակ կը փոխուի. — Թ. Գործարանաւորութեան կախում ունի. — Ժ. Բնագրին բնոյքը. — ԺԱ. Բնագրին արդիւնականացումը:

Ա. Բնագրին սահմանը. — Գործելութեան ձրգտումներէն զատ, որոնք զիտակից եւ ստացիկ են եւ յառաջ կուգան պատկերներէ, զիտակից էակները ուրիշ բնածին ձգտումներ ալ ունին, որոնք կը կոչուին բնազգ: Ուրեմն բնազգը էակին կամ տեսակին պահպանութեանը համար օգտակար եղող կարգ մը շարժումներ կատարելու բնածին ձգտումն է: Բնազգին շնորհիւ է որ կուղբերը կը շինեն իրենց թումբերն ու բնակարանները, և մեղուներն՝ իրենց բջիջները:

Բ. Բնագրին յատկանիւթերը. — Հետեւեալ վեց յատկութիւններով կը բարացուցուի բնազգը.

Ա. Անգէտ է նպատակին.

Բ. Անվրէպ է.

Գ. Անբնական է յառաջդիմութեան.

Դ. Անհրաժեշտ է.

Ե. Անփոփոխ և նոյն է միեւնոյն տեսակի պատկանող ամէն անհատի վրայ.

Զ. Անպատճառ կը տարբերի տեսակէ տեսակ:

Դ. Անգէտ է նպատակին. — Նպատակին անգի-



տութիւնը բազմաթիւ փորձերով հաստատուած է: Յրետերիկ Գիւլվիէ թանգարանի վանդակներուն մէջ ապրող կուղբերու առջեւ շինուածանիւթ դնելով տեսաւ որ անասուններն սկսան շինել թումբեր որոնց բնաւ պէտք չունէին: Մենք ալ, սխալ քայլ առած ատեննիս, այնպիսի շարժումներ կը կատարենք, որոնց նպատակն ու վախճանն է թէև արգիլել անկումը, բայց մենք այդ նպատակին գիտակցութիւնը՝ շարժումները կատարելնէս վերջը միայն կ'ունենանք: Ահա այդ միջոցին բնազդով կը գործենք: Բեռնակիրը, որ քամակը կը ծռէ, հաւասարակշռութեան մէջ պահելու համար ինքզինքը, բնազդով կը գործէ, վասնզի չի գիտեր ըրածին նպատակը, և խելամուտ չէ ծանրութեան կեդրոնի բնազդական օրէնքներուն:

Դ. Անվրեպ է. — Թերեւս կուղբերուն ճարտարութեամբ իւրը բաւական ըլլայ ապացուցելու համար այս կէտը: Կուղբերն իրենց թումբերը կը շինեն արուեստի ամէն կանոններուն համեմատ: Աւազարգէց (ammophile) կոչուած պատենաթե միջատը իր թրթուրները սնուցանելու համար պարտաւորուած է գորշագոյն որդի մը ողջ մը կերցնել անոնց: Տեսէ՛ք թէ ինչ միջոցներ ի գործ կը դնէ, որդը միանգամայն կենդանի և անշարժ պահելու համար. խայթոցովը կը ծակէ այն եօթը ջղային կեդրոնները որոնք կը կառավարեն որդին յօդուածները: Յետոյ երկու կղակներուն մէջ կը ճմլէ անոր գլուխը, մինչեւ որ խեղճը բոլորովին անդամալուծուի, առանց սակայն բոլորովին դադրելու ապրելէ: Թէ խի ճշմարիտ ըլլար, ինչ որ հաւանական է, թէ միջատը մէկ անգամէն չէ որ որդէն կը խլէ կը փրցնէ ջղային կեդրոնները, նորէն

սա՛ ստոյգ պիտի մնար թէ ա՛յնքան փափուկ ու բազմախառն այդ գործին պահանջած բնախօսական եւ անդամազննական ծանօթութիւնները շատ վեր են անոր մտային կարողութենէն: Միջոցներու կատարել պատշաճեցում մը կայ նպատակին, զոր կրնանք անվրէպ կոչել, առանց չափազանցած ըլլալու:

Ե. Անրեզուևակ է յառաջդիմութեան. — Բնազդին անվրէպ ըլլալը արդէն ինքնին կը ցուցնէ թէ յառաջդիմութեան անընդունակ է ան: Բայց ասով ըսել չենք ուզեր թէ բնազդական գործերը անպատճառ ամէնքն ալ նոյն և նման են իրարու. տարբերութիւններ կան բնազդին գործադրման պարագաներուն մէջ. երբ այդ պարագաները զանազանուին, բնազդէն կախում ունեցող գործերն ալ կը զանազանուին: Ուրեմն բնազդական արարքները կրնան փոխուիլ կամ եղանակաւորուիլ միջավայրին հետ. բայց բնազդը ինքնին միշտ կը մնայ նոյն, անփոփոխ: Այդ արարքներուն վրայ երեցած փոփոխութիւնները յառաջդիմութիւնն են, այլ՝ պատշաճեցումներ: Յառաջդիմումը յոռիէն լաւին, լաւէն լաւագոյնին անցնիլն է: Պատշաճեցումը՝ նոյն բարւոք վիճակը պահելու համար գործելու կերպը փոխելն է: Եղանակին համեմատ հագուստ փոխելը ոչ թէ յառաջդիմել է, այլ՝ պատշաճիլ: Անասունը այս կերպ որս մը գտնել չկրցած ատենը կ'եղանաւորէ իր ընթացքն ու որսական ունակութիւնները, այն կերպ որսի մը՝ երէի մը ձերբակալմանը պատշաճեցնելու համար ինքզինքը, բայց ասով յառաջդիմած չ'ըլլար: Այս ըսել չէ թէ անասունը չի կրնար յառաջդիմել, այլ թէ չի կրնար յառաջդիմել այն գործերուն մէջ միայն, որոնք ուղղակի և մի միայն բնազդէն կախում ունին:



Զ. Անհրաժեշտ է. — Յայտնի է որ, կենդանի է-  
 աղը՝ տակաւին ո՛րեւէ փորձառութիւն եւ հետեւաբար  
 ծանօթութիւն չունեցած՝ եթէ ո՛չ մէկ ներքին մղումէ  
 չզրոյուէր գործելու, պիտի մեռնէր, առանց իր ինչ  
 ըլլալն իմանալու: Գիտնալու համար՝ պէտք է ապրիլ՝  
 ապրելու համար՝ նախ պէտք է գործել. պէտք է ու-  
 բեմն նախ գործել առանց գիտնալու: Ի՞նչ պիտի ըլ-  
 լար տղուն վիճակը, եթէ պէտք ըլլար ծծել սովրե-  
 ցնել անոր: Ի՞նչ պիտի ըլլար աւազաբզէզներուն  
 ցեղը, եթէ հարկ ըլլար սովրեցնել թէ ի՞նչպէս պէտք  
 է խարխափումներով անգամալուծել գորշագոյն որդի:  
 Ամէն կեանքի սկզբնաւորութեանը մէջ շարժումի որոշ  
 ուղղութիւններ կը կատարուին, և եթէ նոյն իսկ ըն-  
 դունինք թէ միւս ամէն բնագոյները կրնան վերածուիլ  
 ժառանգական ունակութիւններու, տակաւին պէտք  
 պիտի ըլլայ ընդունիլ թէ առաջին կենդանի էակին  
 կեանքը զիւրացնող բնագոյները դուրս մնացած են  
 այդ օրէնքներէն:

Է. Անփոփոխ եւ նոյն է միեւնոյն սեսակի պատ-  
 կանող անհասներուն մեջ. — Բոլոր ծիծեռնակներն,  
 ընդհանրապէս, նոյն կերպով կը շինեն իրենց բոյները՝  
 բոլոր մեղունները միեւնոյն կերպով կը շինեն իրենց  
 բջիջները:

Ը. Անպատահալ կը սարբերի սեսակի սեսակ. —  
 Ֆիլորեակները եկքանիկներուն պէս չեն շիներ իրենց  
 բոյները, ճնճղուկներն ու աղաւնիները, հաւերն ու  
 բադերը նոյն բնագոյն չունին:

Թ. Բնագոյն գործարանաւորութեան կախում ու-

նի. — Բնագոյն անասունին գործարանային կազմուած-  
 քէն կախեալ է: Այսպէս, զոր օրինակ, իրենց մար-  
 սողական կազմածին պահանջումներուն համեմատ են  
 անասուններուն սննդառութեան բնագոյները: Շաղա-  
 կերները շաղաղակերութեան բնագոյն ունին, վասնզի  
 անոնց մարտողական խողովակին կարծութիւնը չի ներեր  
 որ կարենան խտտեղէններ մարսել: Շնագայլն ու բո-  
 լեինն փտած միւս փնտռելու բնագոյն ունին, անոր հա-  
 մար որ աղաւններուն սպինգային կազմութիւնը չի նե-  
 րեր որ ջղապինդ և թարմ միւս կարենան պատահել:

Ժ. Բնագոյն բնութիւնը. — Ատեն մը այնպէս ու-  
 ղեցին կարծել թէ բնագոյն գուտ հոգեբանական բնու-  
 թիւն մ'ունի: Այսպէս, զոր օրինակ, ըսին թէ անա-  
 սունները կը գործեն ազգեցութեամբը այնպիսի մտա-  
 պատկերներու, որոնք գիտակցական չեն և կը նմա-  
 նին քնածական թելադրութիւններուն: Իբր թէ թը-  
 չունը կը շինէ իր բոյնը՝ ապագայ ձագերուն մտա-  
 պատկերէն մղուած, և իբր թէ անոր կատարած բոլոր  
 գործերը արդիւնք են վախճանական որոշ մտապատ-  
 կերի մը գրգռումին: Ծիչդ ինչպէս որ գործ մը, զոր  
 օրինակ, պղտիկ գնում մը ընել ուզած ատեննիս մենք  
 ևս կը կատարենք ա՛յնպիսի շարժումներ, որոնք ան-  
 հրաժեշտ են մտադրած նպատակնուս համար, որոնց  
 վրայ՝ սակայն՝ առաջուց չենք խորհիր: Բայց պէտք է  
 ըսել թէ բնագոյն հոգեբանական այդ բացատրութիւնը  
 քիչ մը առեղծուածային և անիմաստ է: Թէ իսկ անա-  
 սունը կարենայ ունենալ պատկերներ և անոնցմէ յառաջ  
 եկող ձգտումներ, չի կրնար ունենալ զանոնք, զգալէ  
 առաջ: Արդ, ինչպէս ըսինք վերև, կենդանի էակը  
 պէտք է նախ ապրի, և ապրելու համար՝ գործէ նախ,



նոյն իսկ առանց տակաւին ունեցած ըլլալու իր ինչ ըլլալուն զգացումն ու իմացումը:

Մենք կ'ուզենք կարծեկից ըլլալ աւելի անոնց որ կ'ընդունին թէ բնազդը ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մարմնոյն գործարանաւորութենէն կախում ունեցող ջըզային անդրադարձումներու դասաւորումին բնական մէկ հետեանքը միայն: Որ է ըսել թէ կենդանիին գործարանաւորութեանը մէջ անդրադարձ գործերը ա՛յնպէս կը դասաւորուին և կը համակարգուին, որ կ'օգնեն այդ գործարանաւորութեան զարգացումին, և կը դիմադրեն այն ամէն պատճառներուն որ խափանաւորաբ պիտի ըլլային անոր: Հետեաբար աւելի ճիշդ պիտի ըլլայ բնախօսութեան կալուածին մէջ դնել բնազդը:

ԺԱ. Բնագրին արդիւնականացումը. — Այսու հանդերձ բնազգական գործերը կերպով ուր հոգեբանութեան հետ ալ վերաբերութիւն ունին: Արդարեւ, պէտք է իրարմէ լաւ զանազանել բնազդը, որ ձգտում մը՝ ո՛ր և է ուղղութեամբ գործելու մղում մըն է, և հետեւաբար կը մնայ բնախօսական, ու բնազգական գործը, որ այդ ձգտումին արդիւնականացումը և մղումին իրականացումն է՝ որոշ գործերու կատարումով: Այդ գործերը չեն կրնար իրականանալ առանց զգայութեանց միջամտութեանը: Ներկայ զգայութիւնն է որ կ'որոշադրէ բնազդին գործադրումին պարագան՝ բաղադրական ընդհանուր պատկերին միջոցաւ, և, բոլոր ընդհանուր ձգտումներու օրէնքին համեմատ, գործին կուտայ երգակի ձև մը:

Այսպէս վերև յիշուած աւազաբղէզը՝ գորշագոյն որդը տեսած միջոցին միայն կը դրդուի գործել իր բնազդին համաձայն: Որդին հաղորդած տեսողական

զգայութիւնը կը պատշաճի իր բնազգական ձգտումին, ու կը գործէ ըստ այնմ: Բայց չի գործեր մեքենայի մը պէս, որ շարունակ հաւասարաչափ կը կշռէ իր թաւալումները, այլ միջոցները կը փոփոխէ, որդին մեծութեան եւ յօդուածներուն լայնութեան համեմատութեամբ: Ըսել է թէ զգայութիւնն է իր առաջնորդը: Բնագրին մը նշմարած է նոյն իսկ որ անիկա մէկ մէկ անգամով չի կրնար խզել լուրաքանչիւր յօդուածի ջղային կեդրոնը. ինչ որ կը ցուցնէ թէ միջատին գործառնութիւնները ամբողջովին բնազդէն չեն կառավարուիր, այլ կ'ազդուին նաև ներկայ զգայութիւններէն, որոնք ինչպէս բոլոր կենդանիներուն՝ նոյնպէս նաև աւազաբղէզին համար կրնան վրիպեցուցիչ ըլլալ շատ անգամ:

Հետեաբար կարելի չէ լոկ բնազդով բացատրել կենդանական արարքները, վասնզի զգայութիւնն ալ անպատճառ իր մասն ունի անոնց մէջ: Գործը այսպէս կախում ունի միանգամայն անփոփոխ բնազդէն և փոփոխական ու վրիպական զգայութեանէն: Կենդանիներուն գործերը, նոյն իսկ անոնք որ ամենէն աւելի են թարկուած են բնազդներու ազդեցութեանը, ինչպէս, օրինակ, մեղուններուն և ծիծեռնակներուն շինածները, փոփոխական են, թէև ասկէց կարելի չէ արժող փաստ մը հանել բնազդներու անփոփոխականութեանը դէմ:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Բնազդ կը կոչուի այն բնածին ձգտումը, որուն վախճանն է անհատի մը կամ տեսակի մը պահպանումին համար օգտակար գործեր իրականացնել:



Բ.— Բնազգը կը բարացուցուի հետեւեալ վեց  
յատկանշաններով:

Գ.— Անդէտ է նպատակին:

Դ.— Անվրէպ է:

Ե.— Անընդունակ է յառաջդիմումի, թէև կրնայ  
փոփոխումներ ներկայացնել իր գործադրումներուն մէջ:

Զ.— Անհրաժեշտ է:

Է.— Անփոփոխ և նոյն է միևնոյն տեսակին մէջ:

Ը.— Անպատճառ կը տարբերի տեսակէ տեսակ:

Թ.— Բնազգը ֆիզիզական գործարանաւորութե-  
նէն կախուած է:

Ժ.— Դժուարին է անոր մէջ տեսնել հոգեխօսա-  
կան թելադրութեան գործը:— Աւելի՛ անդրադարձում-  
ներու համագումարման արդիւնքը կը ներկայացնէ:

ԺԱ.— Բնազգը կ'արդիւնականանայ ներկայ ըզ-  
րայութեան մը շնորհիւ. և այս՝ կը ցուցնէ անոր առ-  
երևոյթ փոփոխականութիւնը, իսկական անփոփոխա-  
կանութեան հանդէպ:



Գ Ա Ս Ժ Ա.

Ո Ի Ն Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն

ԲՈՎ Ա Ն Գ Ա Կ Ո Ի Թ Ի Ի Ն.— Ա. Ունակութեան սահմանը եւ ա-  
ռաջին արդիւնքները.— Բ. Ունակութիւնը զիսակից էակներուն մէջ.  
— Գ. Ֆիզիզական ունակութիւններ.— Դ. Մտային ունակութիւն-  
ներ.— Ե. Բարոյական ունակութիւններ.— Զ. Ունակութեան ար-  
դիւնքները զգացողութեան եւ գործունեութեան վրայ.— Է. Ունա-  
կութեան վերջնական անգիսակցութիւնը.— Ը. Ժառանգական ու-  
նակութիւններ.— Թ. Անցի դէպի երկուդ մասը:

Ա. Ունակութեան սահմանը եւ առաջին արդիւնք-  
ները.— Մինչեւ ցարդ շարունակ տեսանք թէ պահ-  
պանումն է հոգեկան կեանքին խարխիսը: Գիտակցու-  
թիւնը իր անգամ մը ստացածը ալ չի կորսնցնէր,  
կը պահէ զայն: Այս օրէնքը ամէն էակի հիմնական  
օրէնքն է: Ամէն էակ կը ձգտի տեւական ընել իր էու-  
թիւնը: Տեսանք թէ պատկերները՝ ձգտումները ո՛ր-  
քան յաճախ կրկնուին, այնքան աւելի յարատե ու-  
ղիմացկուն կ'ըլլան: Էակին՝ իր նախկին եղանակա-  
ւորումները պահպանելու այս յատկութիւնը անհ կը  
կոչուի ունակութիւն: Այդ պահպանումը կը յայտ-  
նուի զանոնք (= եղանակաւորումները) աւելի՛ դիւ-  
րաւ վերարտադրելու ընդունակութեանը մէջ:

Եւ սակայն պէտք է որ եղանակաւորումը չվնասէ  
էակին, անոր միւս յատկութիւններուն մէջ տեղ մը  
բարւած ատենը չկարենայ հակազդեցիկ ըլլալ էակին  
էութեանը: Այսպէս, կարելի է վարժեցնել քարը, որ  
չկընէ, կամ անասունը՝ որ չուտէ. կարելի է որ քարը  
ունակութեամբ վարժուի օդին մէջ մնալ, կամ շունը՝  
առանց շնչառութեան ապրի տասը վայրկեան, կամ



մարդը՝ միւսնոյն շարժումները կարենայ կրկնել անընդհատ: Ամէն ոք գիտէ թէ դաշնակին մատները քանի մը անգամ յաջորդաբար կոխուելնէն ետքը կը թուլնան, այնպէս որ շարունակութիւնը աւելի յնաստակար կ'ըլլայ քան թէ օգտակար: Ունակութիւնը այն ատեն զօրեղ կը դառնայ երբ եղանակաւորումներուն կրկնումը հանգիստի կը յաջորդէ միշտ:

Ունակութիւնը առաջին եղանակաւորումէն արդէն կը սկսի: Արդարեւ, եթէ առաջին եղանակաւորումը չկարենար ունենալ ո՛րէ է արգասիք, հարիւրաւոր և հազարաւոր եղանակաւորումներն ալ՝ նո՛յն պատճառաւ՝ պիտի չկարենային ունենալ ո՛րէ է արգասիք: Արիստոտէլ ա՛յս միտքով կ'ըսէր թէ մէկ ծիծեռնակը թէև չի կրնար գարուն շինել, բայց կրնայ աւետել զայն:

Ունակութիւնը մի միայն գիտակից էակներուն յատուկ է, ընդհանուր է բոլոր էակներուն: Թուղթի մը կտորը անգամ մը ծալուելէն ետքը նորէն չի կըրնար ըստ առաջնոյն ողորկ մնալ, այլ միշտ ստացած ծալքին ուղղութիւնը կ'առնու: Ասոր համար է որ զգեստները հետզհետէ կը յարմարին զիրենք հագնող մարմնոյն:

Բ. Ունակութիւնը՝ գիտակից էակներուն մեջ. — Գիտակից էակներու մէջ, սակայն, ունակութիւնը — անոնց էական զործունէութեանը միջոցաւ իր պաշտօնը կատարելու համար — ծնունդ կուտայ ուրիշ երևոյթներու ալ, զորս կառավարող օրէնքը կրնանք սապէս բանաձևել.

Եղանակաւորումի մը շարունակումէն կամ կըրկնումէն յառաջ կուգայ այդ եղանակաւորումը վերաբարձող ձգտում մը:

Անկենդան էակներուն մէջ, եղանակաւորումներ արտադրող զործունէութեան ազբերակը իրենցմէ դուրս է. այսպէս թուղթը ինքնիրմէ չի կրնար ծալուել, արտաքին զօրութիւն մը կը ծալէ զայն: Ունակութիւնը կ'աւելցնէ միայն անոնց կերպընկալ ընդունակութիւնը, և կը նուազեցնէ արտաքին ազդակներու ոյժին սպառումը, անոնց վրայ ալ տպաւորելու համար եղանակաւորումը: Թուղթը, ունակութեամբ, աւելի դիւրաւ կրնայ ծալուել նախապէս ստացած դիրքին մէջ: Ընդհակառակն, գիտակից էակներուն մէջ՝ զործունէութեան ազբերակը իրենց ներսն է. շունը, զոր օրինակ, ինքնաբերաբար կը ցատկէ, ստումի շարժումներ կը կատարէ: Արդ, որովհետև գործունէութիւնը կը ձգտի միշտ իրականանալ նուազագոյն զիմակալութիւն ներկայացնող զծին հետևողութեամբ, բնական է որ ունակութիւնն ալ — որուն բնութիւնն է չէզոքացնել այս կամ այն եղանակաւորումին հանդէպ էակին հանած զիմակալութիւնները — ստեղծէ ներքին ձգտում մը զայն (= եղանակաւորումը) վերաբարձող. ճիշդ ինչպէս անձրևի հոսանքները արդէն գտնուած հեղեղատներէն կ'անցնին և ոչ թէ նորեր կը բանան: Ասոր համար է անհ որ դաւազանի մը առջև ցատկելու վարժուած շունը կը ցատկէ յանկարծ, եթէ նոյն իսկ առանց կանխակալ դրդումի՝ եղէգ մը կամ փայտի կտոր մը երկնցնենք առջևը:

Գ. Ֆիզիզական ունակութիւններ. — Այս կերպով կը բացատրուին նաեւ բոլոր ունակութիւն դարձած շարժումները, պարը, սրախաղը, հեծելութիւնը, որոնք կը կոչուին ֆիզիզական ունակութիւններ:



Մկանները մասնաւոր եղանակաւ և ուղղութեամբ մը շարժած ըլլալով շատ անգամներ, ներքին գործունէութիւնը, երբ սպառելու վիճակին մէջ կ'ըլլայ, զանոնք կը շարժէ նոյն այն կարգով որով արդէն շարժումները յաջորդած էին իրարու:

Գ. Մտային ունակութիւնները. — Գաղափարի զուգորդութիւններէն կը կազմուին մտային ունակութիւնները, մասնաւորաբար յիշողութիւնը, որ շատ կարեւոր ունակութիւն մըն է, և պայման՝ բոլոր միւս ունակութիւններուն: Ամէն գիտուն ունակութիւն կ'ընէ իր մշակած գիտութեան մեթոտները գործադրել միշտ եւ ամենուրեք: Թուազէտներուն միտքը՝ ունակութեամբ՝ կը վարժուի ճշգրտութեան և պայծառութեան, այնպէս որ անոնց համար ճշմարիտ և ընդունելի կը թուին այն գաղափարները և ցուցումները միայն, որոնք թիւերու անխառն պայծառութեամբ կը ներկայանան իրենց: Տէքարզի գրութիւնը ո՛չ այլ ինչ է, զոր օրինակ, եթէ ոչ յօրինուածութեան (Système) մտային ունակութիւնը: Դրականութիւնն ալ՝ նոյնպէս՝ յօրինուածութեան մտաւոր ունակութիւն մըն է: Փորձառական գիտութիւններով զբաղողներուն համար ունակութիւն կը դառնայ այն բաները միայն ըմբռնել, որոնք փորձառականօրէն ճշգրտուած են: Ու զբաղանութեան նայելով՝ պէտք է զանց ընել այն ամէն բաները որոնք չեն կրնար ենթարկուիլ փորձառութեան:

Բոլոր այս ունակութիւնները, ի վերջոյ, կը վերածուին զուգորդութիւններու:

Այսպէս լուծուած կ'ըլլայ այն խնդիրը թէ ունակութիւնները զուգորդութիւններէ՞ն կախում ունին:

Թէ զուգորդութիւնները կ'ածանցին ունակութեան: Ունակութիւնը, պահպանումի զօրութեան իր հանգամանքովը, յայտնի է թէ պայմանն է զուգորդութեանց գոյութեան. բայց զուգորդութիւններն ալ, երբ անգամ մը կազմուին, ա՛լ իրենք պայման կ'ըլլան մասնաւոր ունակութիւններու գոյութեան:

Ե. Բարոյական ունակութիւններ. — Մարդս բարոյական ունակութիւններ ալ կրնայ ունենալ, այսինքն՝ իր կամքը ա՛յս կամ ա՛յն կերպով կառավարելու ունակութիւն: Մոլութիւնն ու առաքելութիւնը բարոյական ունակութիւններ են:

Զ. Ունակութեան արդիւնքները զգացողութեան եւ գործունեութեան վրայ. — Եթէ ունակական եղանակաւորումը զգայութիւն մըն է, ունակութիւնը, տկարացնելով այդ զգայութեան արտադրումին ծառայող գործունէութիւնը, կը նուազեցնէ զգայութիւնն ալ: «Իմ անոյշ հոտի քսակս, կ'ըսէր Մոնդաներ, նախ իմ քթիս ակտորժ կ'ազգէ, եւ յետոյ՝ քովիններուս քթին միայն»: Ունակութիւնը կը բթացնէ զգայութիւնը:

Բայց, հոտոտելու տենչը՝ հաճոյքի ձգտումը նոյնը կը մնան. ուրեմն պէտք է յաճախ կրկնել զգայութիւն հայթայթող գործողութիւնը, աւելցնել ակտորժութիւն քանակը, անցեալ անգամներուն մէջ ըզգացուած և յիշողութեան վերակոչած հաճոյքին հասար հաճոյք մ'ունենալու համար: Այս նոր մղումը, նախայիշեալ (պատկերային) շարժումի աճումին վրայ աւելնալով, կը սաստկացնէ ձգտումները: Այնպէս որ՝ եթէ փափաքը կիրքի ձեւը առնու, ունակութիւնը անդիմադրելի ոյժ մը կը դառնայ:



Ասոր համար է որ, ընչադեղ՝ գոհոյ և բնափրոն գործածող անձերը անդադար կ'աւելցնեն անոնց սաստկութեան աստիճանը, մինչև ուր ուրեմն անտանելի դառնան իրենց մերձականերուն:

Է. Ունակութիւնը՝ պատճառ անգիտակցութեան. — Ունակութիւնը երբ չափազանց զօրանայ, կը ջնջէ զիտակցական արձանագրութիւնները կատարելու պաշտօն ունեցող շարժումները, մկաններն այնուհետեւ ա՛յնքան զիւրութեամբ կը շարժին որ անոնց շարժումները ա՛լ չեն կրնար արձանագրուիլ: Գրգռութիւնը զիտակցութեան դռնէն ներս չի կրնար մտնել: Ասոր համար է որ կամքի միակ զիտակցական գործողութիւն մը բաւական է՝ բոլորովին տարբեր բանի վրայ խորհելով հանդերձ շատ բազմախուռն գործեր կատարելու, զոր օրինակ՝ նուագ մը ածելու կամ գեր մը արտասանելու համար: Շարժումներն ա՛յնքան մեծ զիւրութեամբ կը կատարուին, որ ինքնին կը հասկցուի թէ ունակութիւնը միայնակ կը գործէ, և խորհրդածեալ կամքը բնաւ բաժին չունի գործին մէջ: Յորդոր եղանակի մը նուագման մէջ խորհրդածութիւնը կամ պիտի կասեցնէր և կամ շատ պիտի դանդաղեցնէր մատներուն շարժումը, այնպէս որ արդիւնքը շատ ձախող պիտի ըլլար:

Ուրեմն ունակութիւնը կ'աւելցնէ զիւրութիւնը՝ գործելու ձգտումը, և կը նուագեցնէ զիտակցութիւնը: Կը շատցնէ հատուցումը, պակասեցնելով սպառումը: Այնպէս որ զիտակցութիւնը ա՛լ ճիգով միայն ձեռք կը բերուի: Ունակութիւնները ձգտումներ կը դառնան, բոլորովին պատրաստ՝ իրականանալու, բաւական է որ զգայութիւնը գործադրումի պարագայ մը

ցուցնէ իրենց, ա՛յն մեքենականութեան համեմատ, զոր բացատրեցինք վերև, երկու անգամ, միտումներուն (Դաս Թ. 104. ԺԱ.) և բնազդներուն (Դաս Ժ. 104. ԺԱ.) վրայ խօսած ատեննիս: Ունակութիւնը այն ատեն այլևս բոլորովին բնազդին ձեռք կ'առնու: Եւ անոնցմէ կը տարբերի իր ստացիկ կամ արուեստական հանգամանքովը միայն:

Ը. Ժառանգական ունակութիւններ. — Ունակութիւնը կրնայ նոյն իսկ ժառանգական դառնալ: Բարակներուն տոհմիկ ըլլալը հաստատուած իրողութիւն մըն է: Ունակութիւնը որպէսզի տոհմիկ ըլլայ՝ պէտք է որ գործարանաւորութեան մէջ ջղային կեդրոններուն և մկաններուն վրայ կատարած իր ազդեցութեամբը, յառաջ բերէ այնպիսի եղանակաւորումներ, որոնք կարենան վերարտադրուիլ ժառանգականութեամբ: Հաւանական է որ անասուններու բնազդներէն շատերն այսպէս ժառանգական ունակութիւններ ըլլան: Զիջում մ'է ասիկա, զոր արժան է ընել եղափոխիչ զբաւրոցին: Բայց անկարելի է որ ամէնքն այդպէս ըլլան, վասնզի ունակութիւններ ունենալու համար՝ պէտք է ապրիլ և ապրելու համար պէտք է բնազդներ ունենալ, ինչպէս վերև ըսինք: Նոյն իսկ եղափոխական վարկածը եթէ ընդունինք պէտք կ'ըլլայ ընդունիլ թէ առաջին կենդանին բան մը չէ ստացած ժառանգականութեամբ, այլ բնական բերումով պէտք է կատարած ըլլայ այն առաջին շարժումները, որոնք անհրաժեշտ են իր գոյութեանը:

Թ. Մուսֆ երկրորդ մասին մեզ. — Աւարտեցինք շարքը բոլոր այն զիտակցական երևոյթներուն, որոնց-



մով գիտակից էակը կրնայ ապրել առանց խորհրդածելու (= անդրադառնալու): Այդ էակը կը զգայ, կը վայելէ, կը տառապի, կ'երեւակայէ, իմացականութեան բոլոր արտաքին նշաններն ունի, եւ այնպէս կը գործէ որ կարծես թէ այգայլսի կարողութեան մը տէր է արդարեւ. ունի զգացումներ, ախորժակներ, միտումներ, բնազդներ, ունակութիւններ, իր բոլոր արտաքին գործելութիւնները կը նմանին մարդու մը գործելութիւններուն, եւ սակայն, ասոնք կը բաւեն հաստատելու իր ճշմարիտ՝ կատարեալ մարդ մը ըլլալը: Պատասխանը շատ դիւրին է. կը տեսնենք որ մարդը կը խորհրդածէ, կը դատէ, կը բազդատէ, ինքնաբերաբար կը գործէ, մինչդեռ մեր նկարագրած գիտակից էակը այդ բոլոր եղանակաւորումները կը կրէ առանց անոնց մէջ մասնակցութիւն մը ունենալու, և կրաւորաբար կը հպատակի բոլոր այդ օրէնքներուն: Եւ սակայն, գիտակից կրաւորականութեան այդ հիմքը միշտ կայ ու կայ մարդուն մէջ: Անով կազմուած է իր գոյութեան հիւսքը, ատաղձն է անիկա, որով իմացական գործունէութիւնը, անդրադարձումին շնորհիւ՝ պիտի յօրինէ մարդկութեան պատուաբեր ամենաբարձր գործերը:

Հետեւաբար, մինչ փորձառական դպրոցը կը վերածէ մարդը յոյժ կարեւոր կազմածի մը, կամ գործիքի մը միայն, զոր նկարագրեցինք վերեւ եւ որուն օրէնքները թուեցինք ամբողջովին, մենք մարդուն մէջ կը տեսնենք այդ գործիքը գործի վարելու կարող գործունէութիւն մը: Իոլոր այն երեւոյթները զորս յաջորդաբար պիտի նկարագրենք կը բաղկանան թէ՛ այդ պատկերներէն, թէ՛ այդ նիւթեղէն ձգտումներէն, եւ թէ՛ աւելի բարձր ձեւէ մը: Ատիկա ա-

պացուցելու համար բաւական է խնամով վերլուծել այդ վերին կարգի երեւոյթները, ու մենք այսպէս փորձառութեամբ պիտի յայտնենք փորձառական դպրոցի բացատրութեանց արմատական անբաւականութիւնը:

Ահա թէ ինչու համար այնքան մտադիւրութեամբ ընդունեցինք անոր վարդապետած տեսութիւնները. կ'ընդունինք թէ բաւական կարեւոր այլ սակաւամասն ճշմարտութիւն մը կայ անոնց մէջ, բայց միեւնոյն ատեն չենք կրնար չխոստովանիլ անոնց անբաւականութիւնը, զոր և կը փափաքինք ի լոյս բերել պայծառապէս, նոյն խակ իրենց մեթոտին մանրակրկիտ հետեւութեամբը:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա.— Ունակութիւնը նախկին եղանակաւորումները աւելի դիւրաւ վերարտադրելու ընդունակութիւն մըն է: Այդ ընդունակութիւնը էակին էական օրէնքներուն մէջ կը սահմանաւորուի, և կը սկսի ստացուիլ նոյն խակ առաջին եղանակաւորումէն:

Բ.— Գիտակից էակներուն մէջ, ունակութիւնը ստացական եղանակաւորում մը վերարտադրելու ձգտում կը դառնայ:

Գ.— Գիտակից էակները ֆիզիզական ունակութիւններ ունին:

Դ.— Մարդը ֆիզիզական եւ իմացական ունակութիւններ ունի:

Ե.— Իարոյական ունակութիւններ ալ ունի:

Զ.— Ունակութիւնը կը տկարացնէ զգացողութիւնը և կը զօրացնէ գործունէութիւնը:



է. — Ունակական գործողութիւնները վերջի վերջոյ անգիտակից կ'ըլլան և, այսպէս, բնագրական գործերու ձևը կ'առնեն:

է. — Ունակութիւններէն ոմանք կրնան փոխանցուիլ ժառանգականութեամբ:

թ. — Կենդանական հոգեբանութիւնը կը վերջանայ հոս. փորձառականք կ'ըսեն թէ մարդկային հոգեբանութիւնն ալ պէտք է վերջանայ հոս: Այսու ամենայնիւ տակաւին բացատրելի կը մնան մարդկային գիտակցութեան երեւոյթներէն շատերը: Այս պիտի ըլլայ ահա երկրորդ մասին առարկան:

## ԵՐԿՐՈՐԴ ՄԱՍ

### ԽՈՐՀՐԴԱԾԱԿԱՆ

### ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ

#### Պ Ա Ս Ժ Բ.

#### ԽՈՐՀՐԴԱԾԱԿԱՆ ՎԻՃԱԿՆԵՐ ԵՒ ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Զգացական եւ Խորհրդածական վիճակներուն արտրուումը. — Բ. Ուսադուրեան սահմանումը. — Գ. Ուսադուրեան սեակաները. — Դ. Ուսադուրեան էութիւնը. — Ե. Ուսադուրիւնը եւ մկանային վիճակները:

Ա. Զգացական վիճակներուն եւ Խորհրդածական վիճակներուն արտրուումը. — Մինչև հիմա նկարագրուած բոլոր երեւոյթները, հակառակ իրենց առերեւոյթ յատակութեան, որուն համար կրնան լեզուով արտայայտուիլ, կը մնան միշտ չփոթ և խուլ երեւոյթներ, զորս կարելի է զգալ միայն, առանց խելամտութեն ըմբռնելու, ինչպէս վերագոյն ըսինք արդէն (Դաս Ա. յօդ. Ե): Այս երեւոյթներուն շնորհիւ է որ մենք կը կատարենք մեր ընդհանուր և օրական գործերուն մեծ մասը: Անոնցմով հիւսուած է մեր կեանքին անտեսանելի ոստայնը:

Այսպէս, հասարակաց ձամբէ մը լրագիր կարգա-



լով անցած ատեննիս կը զգուշանանք մեր դէմ ելլող մարդոց ընդհարելէ, ու քառուղիներու վրայ կ'աճապարենք, որպէսզի կառքի չհանդիպինք. մէկ կողմէն այս ամէնը կ'ընենք, բայց միւս կողմէն ուրիշ բանի վրայ կը խորհինք: Հանդիպած մարդերնիս կը բարեւենք, ի հարկին զանց չընելով նաև քաղաքավարական բանաձևերը. բայց այս ամէնքը չեն կըրնար ընդհատել մեր մտքի աշխատութիւնը: Այս բոլոր զանազան վիճակները գիտակցութեան զգացական վիճակներն են, որոնք կը կառավարուին զգայութեամբ՝ զուգորդութեամբ և այն ամէն շարժումներով որոնց վրայ խօսեցանք առաջին մասին մէջ: Եւ սակայն այս ամենէն վեր տակաւին կայ ուրիշ վիճակ մը, այն վիճակը՝ որուն վրայ կը խորհինք յատկապէս, այսինքն մեր ընթերցումին նիւթը, զոր օրինակ, եւ կամ այն հարցը՝ որով կը զբաղեցնենք միտքերնիս: Առաջին վիճակները կը վերաբերին զգացական հոգեբանութեան, իսկ վերջին միակը՝ խորհրդածուծուծ հոգեբանութեան:

Ի՞նչ տարբերութիւն կայ երևոյթներու այդ երկու տեսակներուն միջև: Միակ բայց գլխաւոր տարբերութիւն մը: Մինչ առաջինները, մեր մէջ տեղի ունեցած ատեննին, չենք կրնար մեզի վերագրել զանոնք, կրնանք մեր անձին վերագրել երկրորդները՝ բացորոշապէս: Ամէն անգամ որ ինքզինքնիս ենթակայ հեղինակ կրնանք համարել մեր այդ վիճակներուն, և կրնանք մեր անձին վերագրել զանոնք — և կրնանք ներքին կամ արտաքին ձայնով խօսելով ըսել՝ զո՞ր օրինակ՝ ես կը տեսնեմ, ես կը լսեմ, ես կը խորհիմ — խորհրդածական գիտակցութեան վիճակի մը մէջ կը գտնուինք: Ընդհակառակն ամէն անգամ որ մեր ըզ-

գայութիւնները կամ պատկերները տարտամ՝ ծրփանուտ և անորոշ են, ու չենք կրնար մեր անձին վերագրել զանոնք, կը գտնուինք զգացական գիտակցութեան վիճակի մը մէջ:

Որոհրդածական վիճակներուն յատկանշանը ա՛յն է ուրեմն որ անհրաժեշտաբար կցորդ են այնպիսի դատումի մը որուն ենթական է անձը կամ ետը: Որոհրդածական հոգեբանութիւնը, ի վեր քան զամենայն և էապէս, դատումի հոգեբանութիւն մըն է:

Լաւ ըմբռնելու համար այդ երկու տեսակ վիճակներուն տարբերութիւնը, ընթերցողը թող իրարու հետ բաղդատէ ինչ որ կը զգար իր ցուցամատին կամ ծնօտին վրայ քիչ մ'առաջ, երբ դեռ այս դասս չէր կարդացած, և ինչ որ հիմա կը զգայ: Անշուշտ զգայութիւնը այդքան կարճ ժամանակի մէջ չի կրնար փոխուիլ, բայց քիչ մը առաջ, երբ իր միտքը սուզուած էր ընթերցումին մէջ, չէր կրնար իրեն վերագրել զայն, յայտնի է թէ զգայութիւնը խորհրդածական դարձած է: Ուրեմն խորհրդածութիւնը (= անդրադարձութիւնը) ո՛չ այլ ինչ է եթէ ո՛չ եսին իր սեփական վիճակներուն ըմբռնողութիւնը: Զգացականութիւնը, այդ վիճակներուն՝ ըմբռնելի ըլլալնէն առաջ կազմել տուած անորոշ և ընդհանուր գիտակցութիւնն է:

Բ. Ուշադրութեան սահմանումը. — Եսը՝ իր վիճակները կարենալ ըմբռնելու համար, պէտք է որ զանոնք նախ զատէ, անջատէ իրարմէ:

Այն գործողութիւնը, որով եսը կը մեկուսացնէ իր վիճակներէն մին, զգացական այն բաղձախառնութեանն ուր կը գտնուէր ան, կը կոչուի ուշադրութիւն: Ուշադրութիւնն ուրեմն այն գործողութիւնն



է, որով եսը զգացական վիճակ մը խորհրդածական վիճակի կը փոխարկէ: Այսպէս, իր ցուցամատեն կամ կզակէն ընդունած զգայութիւնները իրեն կարենալ վերագրելու համար, ընթերցողը քիչ առաջ պարտաւորուեցաւ այդ զգայութիւնները առանձնացնել միւս զուգընթաց զգայութիւններէն, որ է ըսել՝ ուշադրութիւն ըրաւ:

Ուրեմն ուշադրական վիճակը գերակշռող և այլամերժ է:

Գ. Ուշադրութեան տեսակները. — Եթէ հանդիտութեամբ, ուշադրութիւն կոչենք նաեւ վիճակի մը ուրիշ վիճակներու վրայ ունեցած այլամերժ գերակշռութիւնը, պէտք պիտի ըլլայ ըսել թէ ինքնաբերական ուշադրութեան բազմաթիւ տեսակներ կան: Չոր օրինակ, խօսակցութեան մը միջոցին գաղափար մը կրնայ յանկարծ գալ եւ ինքնաբերաբար գրաւել գիտակցութիւնը, եւ արգիլել զայն ուրիշ բան մտապատկերելէ: Բայց, տիրապէս խօսելով, ատիկա աւելի կիրք կ'ըլլայ քան թէ ուշադրութիւն: Գիտակցական այդպիսի գրաւում մը աւելի կը փնտսէ ուշադրութեան քան թէ կ'օգնէ անոր:

Կամաւոր ուշադրութիւնը, ընդհակառակն, աշխատանքով մը կը լարուի: Միտքը ճիգ կը գործէ միակ մտապատկեր մը պահելու համար գիտակցութեան մէջ, և բոլոր միւս մտապատկերները չեզոքացնելու համար՝ իր բոլոր ծանրութեամբը կը ճնշէ անոնց վրայ:

Գ. Ուշադրութեան երկրորդ. — Ուշադրութիւնը ուրեմն կը կազմուի նախ պատկերէ մը, որ, աւելի

ճիշդ, կանխակալ պատկերացումն է ապագայ վիճակի մը, յետոյ մտքի ճիգէ մը որ կը ջնջէ այդ վիճակին արտադրումը խափանել կրցող բոլոր խոչընդոտները: Հետեւաբար, կանխակալ պատկերացումին մաս կազմող տարրերը միայն կրնան ամրապնդուիլ գիտակցութեան մէջ, իսկ անոնք որ մաս չեն կազմեր անոր՝ տեղ չեն կրնար գտնել հոն: Այդ կերպով կարելի է բացատրել ուշադրութեան արգիւնները: Օրինակ առնենք սպասող ճամբորդներու կացութիւնը: Եթէ պիտի ճամբորդենք կառքով, կառքին շէնքին՝ ձիերուն վազքին և բոժոժներուն ձայնին պատկերները կանխաւ և ա'յսպէս կը կազմուին մեր մտքին մէջ, որ ա'լ ուրիշ ամէն աղմուկ կամ պատկեր կը չեզոքանան ինքնին: Եթէ նոյն միջոցին հետեակ ճամբորդներ անցնին մեր քովէն, թերեւս և ոչ իսկ պիտի ճանչնանք կամ նոյն իսկ նշմարենք զանոնք: Ընդհակառակն եթէ կառքով կուգան անոնք, հեռուէն պիտի լսենք անոր ձայնը, ու պիտի տեսնենք զայն: Թէեւ տկար եւ աննշան են զգալի տարրերը, բայց կրնան գործ տեսնել շնորհիւ մեր միտքը գրաւող այն կանխակալ պատկերացումին, որուն հետ համաձայն են իրենք: Սպասուած զգայութեան մը ճանաչումը նուազ ժամանակ կը պահանջէ քան սովորական ճանաչում մը: Ասո՛ր համար է որ կ'ըսեն թէ վիրահատը, տակաւին նշգրալը երակին մէջ չմխած, կը տեսնէ արգէն արեան ցայտումը:

Ուշադրութեան՝ զգայութեանէն անկախ ներգործական վիճակ մը ըլլալուն մէկ նշանն ալ դուցէ սա ըլլայ որ բոլոր լեզուներուն մէջ տարբեր բայեր կան, վիճակի մը ուշադրական և զուտ զգացական կողմերը զանազանելու սահմանուած: Այսպէս, ուշադրական վիճակներու համար կ'ըսենք — կ'ունենան դրամ, կը դի-



տեմ, հոտ կ'առնում, կը շօշափեմ, կ'ըմբռնիսնեմ ևն․  
խակ պարզ զգայութիւններ բացատրելու համար կ'ը-  
սենք. կը լսեմ, կը տեսնեմ, կը հոտոտեմ, կը հպիմ, կը  
ճաշակեմ: Աւելի մասնաւորելով, կրնանք ըսել․  
երբ ձայնի մը ունկնդրեմ, ուրիշ աղմուկ չեմ լսեր-  
երբ առարկայ մը դիտեմ՝ ուրիշ բան չեմ տեսներ: Հասարակաց զգացումը անգամ և լեզուն ուրեմն (որ  
անոր թարգմանն է) ըմբռնած են որոշ տարբերութիւն  
մը ուշադրութեան և զգայութեան միջև:

Երբ ուշադրութիւնը ներքին վիճակներու վրայ  
սեւեռուած է՝ յատուկ բառով կը կոչուի անդրադար-  
ձութիւն, որ եւ՝ խորհրդածութիւն, եւ այն ատեն կը  
բացատրուի անդրադարձ բայերով: Ինչպէս, ինքզինքս  
կը տեսնեմ, ինքզինքս կը զգամ, ինքզինքս կ'ունկն-  
դրեմ, ևայլն:

Ե. Ուշադրութիւնը եւ մկանային վիճակները. —  
M. Ribot վերջերը ուզեց այնպէս կարծել թէ ամէն  
ուշադրութեան մէջ մարդս մկանային գործունէութիւն  
մը կը զգայ: Երբ, զոր օրինակ, կ'ըսեմ թէ կը նայիմ  
այլ չեմ տեսներ, ակնային մկաններու ձգտում մը  
կը զգամ, առանց սակայն տեսողական զգայութիւն  
մ'ունենալու: Ասկից սա՛ կը հետեւի թէ ուշադրութեան  
հետ լծորդաբար կը կատարուին մկանային զգայու-  
թիւններն ալ: Ուշադրութիւննիս գաղափարներու վը-  
րայ սեւեռած ատեննիս, այսպէս, կծկումներ կը զգանք  
մեր զանկը պատող մորթին մկաններուն մէջ: Յա-  
մենայն դէպս, սակայն, սա է ճշմարիտը թէ ուշա-  
դրութիւնը անջատ վիճակ մըն է զգայական վիճակէն:

## Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ


Ա. — Առաջին մասին մէջ զննուած բոլոր վիճակ-  
ները զգացական վիճակներ են. կարծես թէ առանձին  
լրողութիւններ են անոնք որ չեն կրնար վերագրուել  
անձին: Երբ մասնաւոր գործողութեամբ մը կը վերա-  
դրուին ևսին, կ'ըլլան խորհրդածական:

Բ. — Ուշադրութիւնը առաջին գործողութիւնն է,  
որ զգացականը կը փոխարկէ խորհրդածականի: Ուշա-  
դրութեան բնութիւնն է մեկուսացնել զիտակցական  
վիճակներուն մին միւսներէն, աւելի աղէկ զննելու  
համար գայն:

Գ. — Կարծես թէ երկու տեսակ ուշադրութիւն  
կայ. մին՝ ինքնաբերական, միւսը՝ կամաւորական:  
Բայց, ճիշտը նայելով՝ մէկ հատ միայն կայ, այն է  
վերջինը:

Դ. — Ուշադրութիւնը կը չեզոքացնէ մրցող պատ-  
կերները, և կ'ամրացնէ իրեն առարկայ ըրած ըզգա-  
յութիւնները:

Ե. — Ուշադրութեան միշտ լծորդ կ'ընթանան  
մկանային կծկումներ:





Պ Ա Ս Ք Պ.

ԻՄԱՅԱԿԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Վերացում. — Բ. Բաղդասուրիւն. — Գ. Ընդհանրացում. — Դ. Ընդհանուր գաղափար. — Ե. Ընդհանուր գաղափարին բնութիւնը. — Զ. Ընդհանուր գաղափարին եւ բաղադրական պատկերին տարբերութիւնը. — Է. Ընդհանուր գաղափարներուն տարբերութիւնը. — Ը. Ընդհանուր գաղափարներուն արժէքը:

Ա. Վերացում. — Երբ մեր ուշադրութեան առարկայ ընել ուզենք գիտակցական հոյլի մը մէկ տարրը, լաւագոյնս նկատի առնելու համար գայն, միւս տարրերէն կ'առանձնացնենք՝ կը վերացնենք գայն: Ուրեմն վերացումը այն գործողութիւնն է որով միտքը կը գատէ գիտակցական վիճակ մը, իրեն հետ բնականէն միաւորուած վիճակներէն, առանձին զննելու համար գայն ինքն իր մէջ: Այս կերպով առանձնացուցուած մտապատկերը կը կոչուի վերացեալ գաղափար: Չոր օրինակ, ձիու մը կամ տան մը ձեւը, գոյնը, բարձրութիւնը վերացեալ գաղափարներ են:

Բ. Բաղդասուրիւն. — Երբ վերացումով կը տարբարուծենք երկու կամ աւելի հոյլեր, միտքերնիս ինքնաբերաբար կը մղուի, գրեթէ միշտ, իրարու մօտեցընելու այդ տարբադարեալ հոյլերը, երբ մանաւանդ նոյն կամ նման տարրեր կը գտնուին անոնց մէջ: Ահա այս գործողութիւնն է որ կը կոչուի բաղդասուրիւն: Ասկէ կը ծնին երկու գատումներ, մին հաստատուած

միւսը ժխտական: Առաջինովը՝ ան իրարու կը միացնէ բաղդատուած հոյլերը, անոնց հասարակորդ տարրերուն միջոցաւ, երկրորդովը՝ կը գատէ զանոնք իրարմէ, իւրաքանչիւրին առանձնայատուկ տարրերուն իւրարմէ անջատումովը:

Այսպէս ձին ու էշը չորքոտանի են և միասմբակ. բայց չունին ո՛չ նոյն ականջները և ոչ ալ մարմինի ընդհանուր ձեւը: Ահաւասիկ այս բաղդատութենէն ծագեցան երկու գատումներ, մին հաստատական, որ կը յայտնէ նմանութիւնները և միւսը ժխտական որ կը ցուցնէ տարբերութիւնները:

Գ. Ընդհանրացում. — Մէկէ աւելի հոյլեր իրարու հետ բաղդատելէ վերջ երբ հաստատապէս կը համոզուինք թէ անոնց տարբերութիւնները պատահական բաներ են, այդ տարբերութիւնները բացատրող ժըխտական գատումը կը ջնջուի, ու կը մնայ բաղդատութեան միւս կազմիչ մասը միայն. առաջին գատումը՝ նմանութեան գատումը, որուն մէջ ստորագելիւնները հասարակորդ են բոլոր ենթականերուն: Այս է ահա ընդհանրացումը ըսուածը: Բայց անոր ձեւացումին համար անհրաժեշտ ու էական է այն յառաջագոյն գատումը որուն միջոցաւ կը համոզուինք թէ այդ տարբերութիւնները պատահական են և ոչ թէ էական:

Հոյլի մը այս կամ այն տարրին պատահական ըլլալուն և ո՛ւրէ ուրիշ մէկ տարրին էական ըլլալուն նկատմամբ համոզում գոյացնող գործը գիտակցական գործ մըն է, որ՝ յառաջ գալու համար կը կարօտի նախ բազմապատիկ փորձառութիւններու, բայց որ՝ երբ անգամ մը ի յայտ գայ, այլ եւս, առանց յառաջդիմութեան մը պէտք ունենալու, կը կատարէ իր



համոզելու գործը, ներքին այնպիսի յայտնատեսութեամբ մը որ զգայութեան յանկարծահաս բնութիւնն ունի: Ըսել է թէ մեր մէջ էականի, կամ ինչ որ նոյն է ըսել, հանրականի զգայարան մը կայ: Այդ զգայարանը կը ժողվէ զգայութիւններուն միջոցաւ հայթայթուած զգայութիւնները: Անոնց պէս բնախօսական գործարանի պէտք չունի: Այդ զգայարանը նոյն ինքն միտքը՝ մտապատկերներ (կամ իմացութիւնն) է: Մտքին սեպհական պաշտօնն է ուրեմն հանրականը գտնել եզականին մէջ, էականը պատահականին մէջ:

Գ. Ընդհանուր գաղափար. — Զոր օրինակ, բազմաթիւ ձեր, էշեր, ջորիներ տեսնելէ վերջ, միտքը այդ բոլոր էակներուն հանրական մտապատկերը կը կազմէ: Այդ մտապատկերը, զոր միտքը կը յօրինէ ընդհանրացումով, կը կոչուի հանրական մտապատկեր: Ուրեմն ընդհանուր գաղափարը վերացեալ գաղափար մըն է և ոչ այլ ինչ:

Կարելի է զանազանել երկու տեսակ ընդհանուր գաղափարներ. 1. էակներու ընդհանուր գաղափարներ, որոնք ծնունդ կուտան բնական սահմանումներու եւ դասաւորումներու. զոր օրինակ, կենդանիի, ողնաւորի, ստնաւորի գաղափարներ և այլն: 2. Յարաբերութեանց ընդհանուր գաղափարներ, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ օրեմիտեր: Արդարև, բնութեան բոլոր օրէնքները — բնագիտական ըլլան կամ բընականացական — եզրերու միջեւ գտնուած ընդհանուր յարաբերութիւնները բացատրելու կը ծառայեն: Այսպէս ծանրութեան օրէնքը  $\frac{U}{V} = \frac{\partial}{\partial r^2}$  կը բացատրէ ինկող մարմինի մը կտրած միջոցին, և զայն կտրելու

համար անոր գործածած ժամանակին միջեւ եղող ընդհանուր յարաբերութիւնը: Բայց այս երկու տեսակ գաղափարները, իրապէս, միակի մը կը վերածուին: Ստուգել, էակներու ընդհանուր գաղափարները, յատկութեանց ընդհանուր յարաբերութիւններն ալ կրնան բացատրել:

Սովորութիւն է եղած ընդհանուրացում կոչել մտքի այն գործողութիւնը որ երեւան կը հանէ եզակի էակներու մտապատկերներուն մէջ եղած ընդհանուր յարաբերութիւնները, եւ մակածոքիւն՝ մտքի այն գործողութիւնը որ ընդհանուր յարաբերութիւններ կը յայտնաբերէ եզակի եզելութեանց մտապատկերներուն մէջ: Բայց եթէ քիչ մը աւելի խորը թափանցենք իրերուն, պիտի տեսնենք թէ այդ երկու գործողութիւնները բոլորովին նոյն են. ու երկուքն ալ աւելի յայտնատեսական են քան տրամախոհական, կամ ոչ թէ պատճառաբանութիւն կը պահանջեն այլ ներհայեցիկ տեսողութիւն, ա'յնպիսի նկատողութիւն մը որ էակներու կամ երեւոյթներու շարժականութեան ներքեւ ջանայ ի յայտ բերել անշարժ իսկութիւն մը, ընդհանուր և հաստատուն ինչ մը՝ այլազան, անցաւոր և եզական ինչերուն մէջ:

Ե. Ընդհանուր գաղափարի բնութիւնը. — Ընդհանրացումին արդիւնքը ընդհանուր գաղափար մը կամ խնայք մըն է: Ընդհանուր գաղափարին որակիչ յատկութիւններն են լայնում և խելամտութիւն: Լայնում կը կոչուի աւելի կամ նուազ խոշոր թիւը այն անհատներուն որոնց իսկութիւնը կը բացատրէ ընդհանուր գաղափարը, իսկ խելամտութիւն՝ աւելի կամ նուազ խոշոր թիւը պատկերային այն տարրերուն զորս կը



բովանդակէ գաղափարը: Այսպէս, կենդանի, ողնաւոր, սնկաւոր, երկնեանի պատկերային տարրերը կը կազմեն մարդ գաղափարին խեղանդարթունը, իսկ մարդկային անհատներու համայնքովը կը ձևանայ նոյն պատկերին շայնուը: Խելամտութիւնը խոտորնակ կը համեմատի լայնումին. կամ, ո՛րչափ աւելի ըլլան գաղափարին ներկայացուցած էակները, այնչափ նուազ հասարակորդ յատկութիւններ կ'ունենան անոնք: Զոր օրինակ, վերև յիշուած մարդուն խելամտութեանը վրայ եթէ աւելցնենք ալիսակ յատկութիւնն ալ, ինքնին առանձին խումբերու կը տրոհուին գաղափարին լայնումին պարփակած թուիս, դեղին և շէկ մարդերը:

Ընդհանուր գաղափարին հանգամանքն է անընդունակ ըլլալ պատկերի մը միջոցաւ անքերի կերպով ներկայացուելու: Այսպէս, ունեցած գոյնի գաղափարնիս էապէս տարբեր է ամէն գունաւոր գոր օր. կապոյտ, կարմիր, կանաչ և այլն պատկերէ: Զայնի գաղափարն ալ էապէս տարբեր է ամէն մասնաւոր հընչական պատկերէ: Նոյնը կարելի է ըսել հոտի, համի և ձևի գաղափարներուն համար եւս:

Ուրեմն պէտք է ունենանք առ նուազն հինգ ընդհանուր գաղափարներ, որոնք կը համապատասխանեն մեր հինգ զգայարանական պաշտօնակատարութեանց: Բայց նոյն այս գաղափարներէն կը ծնին ուրիշ ընդհանուր գաղափարներ ալ:

Մեր անձերուն և մեր եղանակաւորութեան մասին մեր ունեցած գիտակցութիւնը մեզի կուտայ էակին հոլքեան և յատկութեան հանրական պատկերները: Էակ բառը արտասանած կամ լսած ատեննիս ամէնքս ալ պատկեր մ'ունինք մեր մէջ: Եւ ոչ մէկ պատկեր, ինչ տեսակէ ալ ըլլայ, չի կրնար ներկայացնել զայն ան-

թերի կերպով. պատկեր մը էա՛կ մը միայն կրնայ ներկայացնել և ոչ թէ էակը: Զոր օրինակ, կրնամ ունենալ Պետրոս անուն մարդու մը, Յովազ անուն շան մը և Նոտր-Տամ-տը Բաւի անուն եկեղեցիի մը պատկերները, բայց այս պատկերներու իւրաքանչիւրը էակի մը պատկերն է և ո՛չ թէ էակին. մէկ պատկերը չի կրնար երեք էակներուն հասարակորդ յատկութիւնները ներկայացնել: Նոյնպէս նաեւ, ո՛չ մէկ պատկեր չի կրնար անթերի կերպով ներկայացնել յատկութիւնը. պատկեր մը յատկութիւն նշն է, և ո՛չ թէ յատկութիւնը: Զոր օրինակ, կրնամ ունենալ ճերմակին, դեղինին և անուշահամին պատկերները. բայց այս պատկերներէն իւրաքանչիւրը յատկութեան մը պատկերն է և ոչ թէ յատկութիւնը, չէ՛ պատկերը այն բանին՝ որ հասարակորդաբար կը գտնուի այդ երեք յատկութիւններուն վրայ, և որուն պատճառաւ, այդ յատկութիւնները՝ կարենալ գոյանալու համար՝ կը հարկադրուին ենթակայի մը վերաբերիլ:

Աւելի վերջը առիթ պիտի ունենանք թուելու իմացականութեան էական եղող հանրական գաղափարները: Առ այժմ բաւական է միայն հաստատել թէ կա՛ն այնպիսի գաղափարներ, և թէ անոնք չեն կրնար շփոթուիլ պատկերներու հետ:

Զ. Ընդհանուր գաղափարին եւ Բաղադրական պատկերին տարբերութիւնը. — Բայց, անոնք որ կը հաւատան թէ մեր բոլոր գաղափարները փորձառութեան մնացորդներ են միայն, և այս պատճառաւ կը կոչուին նաև փորձառականի, գուցէ՛ առարկեն՝ որ եթէ գաղափարները չեն կրնար շփոթուիլ պատկերներուն հետ, բայց գոնէ նոյն չե՞ն միթէ այն բաղադրական



պատկերներուն հետ զորս սորվեցանք վերեւ (Գասե. եւ է.) եւ որուն միջոցաւ միտքը կրնայ միանգամ պատկերացնել բազմաթիւ նման առարկաներ:

Այս առարկութեան պատասխանելու համար, բաւական է հաստատել միայն այն տարբերութիւնները որոնք կ'անջատեն բուն ընդհանուր գաղափարը՝ բազմատական պատկերէն, որ՝ սակայն՝ մերթ ընդ մերթ կը փոխանակէ զայն կամ անոր տեղը կ'անցնի:

Այդ տարբերութիւններուն երեք էականներն ասոնք են:

1. Ընդհանուր գաղափարը եւ բազադրական պատկերը իրարմէ կը տարբերին իրենց կազմութեամբ:

Պատկերը կը կազմուի յառաջատուութեամբ եւ կրաւորաբար. բազմաթիւ թուչուններ տեսնելէս վերջն է որ մեր մէջ կը կազմուի թուչունի բազադրական պատկերը. ինչպէս բացատրուեցաւ է. դասին մէջ:

Գաղափարը յանկարծաբար կ'երևի, և մենք մեր մէջ կը զգանք գործողութիւն մը որով կը ջնջուի բազմատուութեան ժխտական գատումը, ու կը կազմուի գաղափարը: Զոր օրինակ, որպէսզի կարենամ կազմել Նիստաբակի մը գաղափարը, իշու, ձիու եւ ջորի պատկերներով, պէտք է ջնջեմ անոնց մարմնոյն ընդհանուր տեսքէն, սկանջներուն երկարութենէն, եւ այլն արտադրուած տարբերութիւնները:

2. Ընդհանուր գաղափարն ու պատկերը կը տարբերին իրենց իսկութեանը:

ա. — Պատկերը սահմանափակ է իր լայնութիւն մէջ, որոշ սահմանէ մը անցնելէ վերջ՝ ա՛լ կը դադրի դոյ լինելէ: Գունաւոր պատկերը չի կրնար ներկայացնել բոլոր գոյները: Ո՛րքան անոր լայնումն աւելնայ, ա՛յնքան աւելի պարզ ու յստակ կը դառնայ: Մար-

դուն գաղափարը աւելի պարզ է քան Եւրոպացիին գաղափարը, և աւելի ևս պարզ է ստնաւորին գաղափարը քան մարդուն գաղափարը: Նոյն են գաղափարին և էակին սահմանները, այսինքն թէ կրնանք ուղածնուս չափ ընդհանրացում ընել, ա՛յն ատեն միայն պիտի հարկադրուինք կանգ առնուլ, երբ ըմբռնենք էակին գաղափարը: Ամենէն ընդհանուր գաղափարն է ասիկա, որ կրնայ ըլլալ:

բ. — Որչափ աւելի աճի խելամտութիւնը, ա՛յնքան աւելի շփոթ ու մութ կը դառնայ պատկերը: Բիւրակողմի մը եւ հազարակողմի մը պատկերները չեն կրնար զանազանուիլ իրարմէ:

Ընդհակառակն ի՛նչ ալ ըլլայ գաղափարին խելամտութիւնը, գաղափարը միշտ կը մնայ խմանալի եւ յստակ: Հազարակողմի մը գաղափարը ոչ նուազ յստակ է քան եռանկիւնի մը գաղափարը:

3. Ընդհանուր գաղափարն ու պատկերը կը զանազանուին իրենց կիրառութեամբը:

Պատկերը՝ անցեալ փորձառութեանց զուտ արդիւնքն ըլլալով, ա՛յն բանը միայն կը ներկայացնէ որ մօտաւոր է այդ փորձառութիւններուն, կը մերժէ այն ամէն բաները որ անոնց չեն վերաբերիր. իր նախընտրութիւնները ոչ թէ իրերուն բնութեանը վրայ կը հիմնէ, այլ անոնց կազմութեան զիպուածական պահիմնէ, այլ անոնց կազմութեան զիպուածական պահիմնէ, այլ անոնց կազմութեան զիպուածական պահիմնէ: Միայն մեր կլիմային թուչունները տեսնողի մը համար, թուչունի բազադրական պատկերը աւելի ջգջիկին պիտի յարմարէր, զոր օրինակ, քան թէ ջայլամին, որ նուազ թուչուն պիտի ըլլար քան խայտիտը. ու կէտը նուազ ստնաւոր պիտի ըլլար քան կովը կամ մաքին:

Ընդհակառակն գաղափարը կրնայ հաւասար կեր-



պով ներկայացնել բոլոր նոյն բնութիւնն ունեցող էակները. իրենց անցեալ փորձառութեանց հակառակող էակներն անգամ գաղափարով այնքան ճիշդ ու լաւ կը ներկայացուին, որքան անոնք որ ամէն կերպով համաձայն են սովորական փորձառութեանց: Կէտ մը ոչ նուազ ստնաւոր է քան կով մը, ու ջղջիկ մը այնքան թուշուն է որքան առնէտ մը:

Է. Ընդհանուր գաղափարներուն տարազական մտապահեցումը.— Եւ սակայն պէտք է ընդունիլ թէ գաղափարը թէեւ անջատ է պատկերէն, բայց անոր պէտք ունի՝ արտայայտուելու համար թէ՛ արտաքին կերպով կամ արտաքին լեզուով, և թէ՛ ներքին լեզուով այսինքն գիտակցութենէն ներս: Այսպէս, եռանկլիւն մը երեւակայել կ'ուզեմ, եռանկլիւնին սահմանումը բաղկացնող երկրաչափական գաղափարներուն հետ՝ ունիմ նաև տեսողական պատկերը՝ ձերմակ յատակի մը վրայ սեւ գիծերով, կամ սեւ յատակի մը վրայ ձերմակ գիծերով ձևացուած պղտիկ եռանկլիւնի մը, եւ կամ հնչական պատկերը եռանկլիւն բառին: Տեսանելի՝ շօշափելի կամ հնչական այդ զգալի պատկերը, որ թէև անջատ է գաղափարէն, այլ անհրաժեշտ է մեզի, գաղափարին գիտակցութիւնը կարենալ ունենալու համար, կը կոչուի տարազ (scheme = սքեմ): Գիտակցութիւնը ինքն իսկ կը ցուցնէ պատկերին անհրաժեշտութիւնը: «Առանց պատկերի բան մը չի կրնար մտածուիլ», կ'ըսէր Արիստոտէլ: Ամէն անգամ որ կը խորհինք, նոյն իսկ ամենէն վերացեալ և ամենէն աննիւթական իրերու վրայ, պատկեր մը ունինք մեր մտքին մէջ:

Իայց, պատկերին՝ գաղափարէն անջատ ըլլալն

ու իր բովանդակ արժէքը անկէց ստանալը անո՛վ աւելի կը յայտնուի որ, գաղափարը, առանց տարբերութիւն դնելու, անխտիր կ'ընտրէ ա՛յս կամ այն պատկերը, իբրեւ անդրուվար կամ թարգման իրին: Որևէ գաղափար կրնայ ներկայանալ որևէ իցէ պատկերով: Ասո՛վ կը բացատրուի լեզուներուն զանազանութիւնը: Ու, գաղափարը աւելի կը տուժէ քան թէ կը շահի, երբ արտայայտուի ա՛յնպիսի պատկերներով որոնք կարի մերձաւոր են իր զգալի ծագումին: Աւելի աղէկ է շո՛ւն, canis կամ chien կոչել շունը, քան ղա՛լ ղա՛լ: Այդ լեզուական անունները կրնան հաւասարապէս պատշաճիլ բոլոր շուններուն, մինչ վերջին բնածայնը չի կրնար պատշաճիլ ոչ մոլոսներուն և ոչ մուշ շուններուն:

Ուրեմն ընդհանուր գաղափարները իրերուն հանրական օրէնքներուն մտապատկերներն են: Իրերը անոնցմո՛վ միայն կրնան իմանալի ըլլալ: Հետեւաբար, իմանալի աշխարհն եւս՝ գրութիւն մըն է ընդհանուր գաղափարներու: Ա՛յն ատեն միայն կրնանք ըմբռնել թանձրացեալ առարկաներուն էութիւնը, երբ տարբաղադրելով զանոնք իրենց ընդհանուր գաղափարներուն մէջ, նորէն վերակազմենք զանոնք: Ու բուն իսկ բնական գիտութեանց գործն է ասի: Ասո՛ր համար է որ բնական գիտութիւնները էակները կը տարբաղադրեն գործարանային գրութիւններով, անոնց համակարգութեամբը յետոյ կազմելու համար էակին սահմանումը: Այսպէս, զոր օրինակ, մարդը սահմանումը: Այսպէս, զոր օրինակ, ստնաւոր, երկձեռնի նելու համար կ'ըսենք, ողնաւոր, ստնաւոր, երկձեռնի կենդանի: Եւ սակայն, անձնիւր անհատի և անձնիւր պատահարի վրայ կը մնայ տարր մը, զոր կարելի է գաղափարի վերածել, եւ որ բուն իսկ առարկան է



ղղայութեան, կամ, ընդարձակ առումով, փորձառութեան:

Ը. Ընդհանուր գաղափարներու արժեքը. — Ընդհանուր գաղափարներու արժեքի խնդիրը տեղի տուած է բազմաթիւ դրուժիւններու, որոնք թէև ամէնքն ալ աւելի բնագանցական տարողութիւն մ'ունին, բայց պէտք է նշանակուին հոս:

Ոմանք (Պղատոն) պաշտպանած են սապլոտի կարծիք մը թէ՛ ընդհանուր գաղափարները կը ներկայացնեն բուն իրականութիւնները, որոնք միայն գոյութիւն ունին, այսինքն իմանալի էութիւնները կամ գաղափարները, որոնք կը գտնուին վերին աշխարհի մը մէջ, եւ որոնց ստուերը եւ ուրուատեսիլը միայն կրնան տալ զգալի իրերը: Այս դրուժիւնը միջին դարու մէջ կոչուեցաւ Իրապաշտութիւն (réalisme), վասն զի կ'ընդունէր սեռերու իրականութիւնը: Այսպէս, անհատական կովերը գոյութիւն պիտի չունենային, գոյակը մի միայն սեռ կոյն է, կովը ըստ ինքեան, կոյնքիսինը: Նոյն բանը կը խորհուէր մարդոց եւ ամէն բանի համար: Գոյութիւն ունեցողը մարդկութիւնն է միայն, և այլն:

Ուրիշներ (Ապելար, Քանդ) կ'ըսեն թէ ընդհանուր գաղափարները մտքի պարզ հաստատութիւններ են, որոնց համապատասխան բան չկայ իրերուն մէջ: Ընդհանուրը մտքին մէջ միայն գոյութիւն ունի. անհատական է և եզակի: Այս դրուժիւնը կը կոչուի Իւնացիալիստութիւն. վասնզի սեռերուն մէջ կը տեսնէ գաղափարներ կամ ինացիներ միայն: Հոս անհատական կովերը միայն գոյութիւն ունին, բայց մենք ունինք գաղափար մը, որ կը համառօտէ և կը խտացնէ անոնց

ընդհանուր յատկութիւնները. կոյնքիսինը մեր միտքին մէջ միայն գոյութիւն ունի:

Իսկ այլք ևս (Գոնտիլեսք, Հիւմ) կը պաշտպանեն սա՛ կարծիքը թէ՛ ընդհանուր գաղափարը, ըստ ինքեան գոյութիւն չունի, ու մեր մտքին մէջ եղողները բառեր են միայն: Այս դրուժիւնը կոչուած է Անուանակալութիւն, վասնզի կ'ընդունի թէ սեռերը անուաներ են միայն: Հոս, կոյնքիսինը ոչ իսկ մտածութիւն է, ու մեր արտաբերած անունները աննշանակ ձայներ են միայն: Անհատական էակներ, կովեր, անհատական մարդեր միայն կան, և անոնց համապատասխանող եզակի զգայութիւններ:

Այս երեք դրուժիւններէն զատ կարելի է ձևացնել ուրիշ նուազ մտացածին մըն ալ, և զայն կոչել իրապաշտ խնացիալիստութիւն կամ քառեփեալ իրապաշտութիւն: Զայն ուսուցանողներն եղած են մասնաւորաբար Սրիստոտէլ, Ս. Թովմաս և Լայբնից: Այս դրուժեան մէջ, ընդհանուր գաղափարները կը ներկայացնեն իմանալի ճշմարիտ իրականութիւններ, որոնք եթէ չեն էակներ, այլ գոնէ խորհուրդներն են ստեղծագործ պատճառին: Ըստ այսմ մեր ընդհանուր գաղափարները կը համապատասխանեն այն օրէնքներուն որոնցմով կազմուած է աշխարհը:

Ա. Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Վերացումն իմացական այն գործողութիւնն է, որով միտքը գիտակցական վիճակներու բազմախառնութենէն կը հանէ, կը զատէ մէկ հատը, առանձնաբար զննելու համար զայն:



Բ. — Բաղդատուութիւնը գործողութիւն մըն է, որով զիտակցական վիճակներու մէկէ աւելի հոյլերն իրարու կը մերձեցնենք, նկատելու համար թէ ի՞նչ բաներով կը նմանին իրարու, կամ կը տարբերին իրարմէ:

Գ. — Ընդհանրացումը գործողութիւն մըն է, որ միակ մտապատկերի մը մէջ կը միացնէ զիտակցական վիճակներու բազմաթիւ հոյլերը, իրենց հասարակօրէ՛ էական տարբերուն միջոցաւ:

Դ. — Այդ մտապատկերը ընդհանուր գաղափար մըն է: Ընդհանուր գաղափարներ կան էակներու, ընդհանուր գաղափարներ կան յարաբերութիւններու: Այ՞ս վերջինները կը կոչուին օրէնքներ:

Ե. — Ընդհանուր գաղափարը շայնու՛մ և խելաւտութիւն ունի: Ընդհանուր գաղափարին որոշիչ հանգամանքն է տիեզերական ըլլալ եւ անթերի կերպով չ՛լ կարենալ բացատրուիլ ոչ մէկ պատկերի միջոցաւ:

Զ. — Ընդհանուր գաղափարը կը տարբերի բազազրական պատկերէն անով՝ որ կը կազմուի յանկարծակի, կրնայ ունենալ անսահման լայնում մը, և ի՛ն խելամտութիւնը ո՛րքան ալ բազմախառն ըլլայ, ինք միշտ կը մնայ յստակ, վերջապէս կը յարմարի բոլոր այն էակներուն՝ որոնք կրնան պարունակել զայն: Պատկերին յատկանշանները գլխովին ներհակ են անոնց:

Է. — Ընդհանուր գաղափարը թէ և անջատ է պատկերէն, բայց զիտակցական պատկերացումին մէջ միշտ կցօրդ է պատկերի մը: Այդ պատկերը, որ կրնայ փոփոխուիլ, — մինչ գաղափարը անփոփոխ կը մնայ. — կը կոչուի գաղափարին սարսզը:

Ը. — Փիլիսոփաները երեք բնազանցական դրութիւններ կերտած են, ընդհանուր գաղափարներու արմէքին խնդրը լուծելու համար: 1. Իրապաշտութիւն:

2. Ինսցֆադաւստութիւն. 3. Անուսնակստութիւն: Կարելի է ընդունիլ չօրրօրդ մըն ալ, որ է բանաւորագոյնը, և կոչել զայն՝ Իրապաշտութիւնստութիւն կամ Բարեփաշտութիւն:





Պ Ա Ս Թ Պ .

ԴԱՏՈՒՄ ԵՒ ՏՐԱՄԱԽՈՀՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— Ա. Դատումին սահմանը.— Բ. Դատումներուն դատաւորութիւնը. Յայնաստեական եւ Բաղդասական դատումներ.— Գ. Դատումներու ուրիշ սեականեր.— Դ. Տրամախոնութիւնը եւ իր զանազան սեակաները.— Ե. Մակաձուքեան վերալուծումը.— Զ. Տրամախոնութեան բոլոր ձեւերուն հասարակաց էութիւնը:

Ա. Դատումին սահմանը.— Դատումը անդրադարձուած կամ խորհրդածեալ մտածումին գործն է: Ամէն անգամ որ կը խորհինք, զգացումը կ'ունենանք ներքին երկուութեան մը, զոր կը վերածենք միութեան: Երբ, զոր օրինակ, շուն մը կը տեսնեմ եւ կը խորհրդածեմ այս տեսողութեանս վրայ, ինքնիրենս կ'ըսեմ. այս տեսածս շուն մըն է: Այս օրինակին մէջ գտնուող երկուութեան առաջին տարրը՝ տեսածս՝ ենթակայ է, իսկ երկրորդ տարրը՝ շուն մը՝ ստորոգելին: Համադրական այն գործողութիւնը, որով ստորոգելին կը կցուի ենթակային, լեզուի բացատրութեամբ կը կոչուի բայ: Այսպէս, նախադասութիւնը դատումի մը արտայայտումն է:

Ամէն գաղափար, որ իր մէջ ունի որակումներու գումարութիւն մը, կը պարունակէ լռելեայն դատում մը: Յայտնի է թէ մէկ բառով մը բացատրուած գիտակցական ամէն շփոթ վիճակ կրնայ, նոյն իսկ պէտք է, տարբադադրուել բաղմամբիւ նուազ շփոթ գիտակցական վիճակներու: Այսպէս վարդի մը վրայ մտածած ատեննիս գիտակցական ա'յնպիսի վիճակ մը ունինք՝ որուն մէջ շուտով կրնանք իրարմէ զանազանել:

ձեւի, գոյնի, հոտի եւայլն տարրերը: Բայց թէ իսկ այդ վերլուծումին արդիւնքը խօսքով արտայայտենք կամ ոչ՝ դատումը նորէն չի դադրելը դատում ըլլալէ:

Բ.— Դատումներուն դասաւորութիւնը. Յայնաստեական եւ Բաղդասական դատումներ.— Իրենց կազմութեան կամ յօրինուածքին տեսակէտներէն դիտուելով, դատումները քանի մը տեսակներու կրնան բաժնուիլ:

Իրենց կազմութեան տեսակէտով՝ դատումները կրնան ըլլալ յայնաստեական կամ բաղդասական:

Յայտնատեսական դատումը, որ առաջին դատումն է, խորհող մտքին էական գործողութիւնն է, անձին գիտակցութիւնը անով է պարուրուած, անթարգմանելի է, եսն է անոր մնայուն ենթական: Իրեն համապատասխաններն են սա նախադասութիւնները. կը խորհիմ, կը տեսնեմ, կը վայելեմ, կը տառայիմ: Բայց այս նախադասութիւնները, իրենց բառակազմական վիճակին մէջ արդէն այլ ևս չեն կրնար համարուել յայտնատեսական դատումներ: Յայտնատեսական դատումը այն գործողութիւնն է, որով միտքը կը զգայ իր խորհիլը, տեսնելը, վայելելը, տառայիլը, եւայլն եւ կրնայ իրեն վերագրել իր վիճակները, բայց առանց անուննին տալու: Անուննին տալու համար, պէտք է որ ինք իր վիճակէն դուրս ելնէ եւ զանոնք բացատրելու բառեր վնտոէ: Իսկ այս ընելու համար, պէտք է քալէ, խօսի, այսինքն դադրի յայտնատեսելէ: Օրինակի համար, կը խորհիմ, կը տեսնեմ եւայլն բայական դատումները բաղդատական դատումներ են: Որպէսզի միտքն իրաւունք ունենայ խորհուրդ, տեսիլ, վայելք կամ վիշտ անուններով իր այդ վիճակներն որակելու, պէտք է



դանոնք բաղդատէ համանման վիճակներու այն մտապատկերներուն հետ, որոնց զուգորդ են բառերը. եթէ զգացած վիճակը նման է այդ մտապատկերին, կ'անուանակոչէ զայն, ապա թէ ոչ՝ կը պարտաւորուի ուրիշ մը փնտռել: Կը տեսնուի ահա թէ բաղդատուածիւն մը իրապէս խօսք մը կայ մէջտեղը:

Ըսել է թէ ամէն արտայայտեալ դատում բաղդատական է, այնպէս որ եթէ, Lockի պէս, միայն արտայայտեալ դատումները համարինք դատում, պիտի պարտաւորուինք ըսել թէ մի միայն բաղդատական դատումներ կան: Բայց եթէ, ինչպէս հոգեբանութիւնը կը ցուցնէ, խօսքէն անդին անդրադարձեալ խորհուրդի ներքին գործողութիւնը կայ, պէտք է լինի նաեւ յայտնատեսական համադրութիւն մը, որ ճշմարիտ դատում մըն է, աղբիւր և յարացոյց բոլոր միւս դատումներուն:

Գալով այն դատումներուն, զորս սովորաբար բաղդատական կը կոչենք, ինչպէս. այս վարդը դեղիկ է, այդ քութակը շաղիաղի է, տակաւին չարտայայտուած արագ տրամախոհումներու եզրակացութիւններ են անոնք, զորս հոգեբանները սովորաբար անճիշդ կերպով կը բացատրեն: Եւ արդարեւ, վարդ գաղափարը չէ որ կը բաղդատենք դեղիկ գաղափարին հետ, կամ քութակ գաղափարը շաղիաղի գաղափարին հետ: Գործողութիւնը շատ աւելի բազմախառն է և տարբեր կերպով կը կատարուի:

Առաջին օրինակին մէջ, ունինք նախ բազմախառն վիճակ մը, ուր ձեւը և գոյնը խառն են: Երկրորդ օրինակին մէջ ձեւը, գոյնը և ձայներն է որ խառն են: Երբ գիտակցութիւնը կ'ուսնենանք այդ բազմախառնութեան, առաջին յայտնատեսական դատումը կը կա-

տարենք: Յետոյ առաջին օրինակին մէջ, երբ վերացումը կը բաժնէ ձեւը գոյնէն, երկրորդ յայտնատեսական դատումը կը կատարուի: Անջատեալ ձեւը կը յիշեցնէ տեսանելի ձեւ մը, որուն զուգորդ է վարդ հընչական ձեւը, ու կ'ըսենք. այդ ձեւը վարդ մըն է: Առաջին բաղդատական դատումն է աս: Անջատեալ գոյնը կը յիշեցնէ ուրիշ պատկեր մը, որուն զուգորդ է դեղիկ հնչական ձեւը, ու կ'ըսենք. այս գոյնը գեղին է: Երկրորդ բաղդատական դատում մ'է աս: Երբ երկու տարբերը այսպէս յանուանէ կ'ուսուծեսիրուին, այս վարդը դեղիկ է բայական համադրութիւնը կը կազմուի, որ ճշգրտօրէն կը վերարտադրէ նախնական զգալի համադրութիւնը: Ուրեմն ենթական ստորոգելիին հետ չենք բաղդատեր, իմանալու համար թէ պէտք է զանոնք միացնել թէ ոչ, անոնց միացումը ոչ թէ եզրակացութիւն մըն է, այլ տուեալ մը: Ասիկա ճիշդ է այն ամէն դատումներուն համար որոնց երկու եզրերը անմիջական կերպով կ'ըմբռնուին զգալի յայտնատեսութեանը մէջ:

Երբ ստորոգելին ենթակային հետ միաժամանակ չ'զգացուիր, վերագրումը միջնորդի մը միջոցաւ կը կատարուի, փայտը կը տաքցնէ, կրակը միջնորդ է. բայց այն ատեն ո'չ թէ դատում կ'ըլլայ ըրածնիս, այլ ճշմարտապէս տրամախոհութիւն:

Գ. Գաւուժի ուրիշ բաժանումներ. — Իրենց յօրենուածքին տեսակէտէն դիտելով, դատումներուն մէջ կ'ունանք նշմարել անոնց

1. Որակաւորուող. — Այսինքն հաստատական կամ ժխտական ըլլալնին [այս վարդը կարմիր է կամ այս վարդը կարմիր չէ]: Երկբայական վիճակը հոգեբանա-



պէս գոյութիւն չունի: Արդարեւ, սա բանին վրայ կը կախածիմ խօսքը հաստատական դատումի արտայայտութիւն մըն է. տարակոյսը մտքի մասնաւոր վիճակ մ'է, զոր գիտակցութիւնը կը ճանչնայ և իրեն կը վերագրէ հաստատումով մը: Ոմանք ըսած են նաև թէ ժխտական դատումն ալ կրնայ վերածուիլ հաստատական դատումի. այս առարկան աթոռ մը չէ = այս առարկան ոչ-աթոռ մըն է. ասիկա կրնայ ճիշդ ըլլալ տրամաբանապէս, բայց հոգեբանական տեսակէտով ոչ, գիտակցութիւնը կը մատնանշէ էական տարբերութիւն մը ենթակայի մը մէկ յատկութեան հաստատումին կամ ժխտումին մէջ: Այն գործողութիւնը, որով միտքը կը միացնէ զոր օրինակ գիևի ենթակային շառ որակականը, ըսելով գիևի շառ ե, բոլորովին տարբեր է այն գործողութենէն, որով կը բաժնէ որակականը՝ ենթակայէն, ըսելով գիևի շառ չե:

2. Որբանութիւնը. — Այսինքն, եզակի, մասնակի կամ յոգնակի ըլլալին: Ենթական եզակի է, երբ նոյն տեսակէն միակ առարկայ կը ներկայացնէ, զոր օրինակ, այս մարդը լաւ է. մասնակի՝ երբ քանի մը վր հատը կը ներկայացնէ, զոր օրինակ. քանի մը մարդիկ լաւ են, յոգնակի՝ երբ ամէնքը կը ներկայացնեն զոր օրինակ. բոլոր մարդիկ մահկանացու են:

3. Որպիտութիւնը. — Այսինքն պատահական կամ հարկաւոր ըլլալին, պատահական են, երբ ստորագելին, առանց հակասութեան տեղի տալու, կրնայ չվերագրուիլ ենթակային, զոր օրինակ, Սպինոզայ լա շէյի մէջ մեռաւ. հարկաւոր՝ երբ ստորագելին չկրնար բաժնուիլ ենթակայէն. զոր օր. եռանկիւնի մէջ երեք անկիւններն հաւասար են երկու ուղղանկիւններն:

Դատումները կը բաժնուին տակաւին իրենց վերջածանր և հարկաւոր հանգամանքներով: Վերլուծական դատումներն անոնք են, որոնց մէջ ենթական ստորագելին մէջ կրնայ պարունակուիլ, կամ, հետևաբար, կը բացատրէ ենթակային էական խելամտութիւնը մասամբ կամ ամբողջովին, զոր օր. մարդը կենդանի մըն է, վագրը ստնաւոր մըն է: Համադրական դատումներն անոնք են, որոնց մէջ ստորագելին բան մը կ'աւելցնէ ենթակային էական խելամտութեանը վրայ, զոր օր. այս մարդերը քաջ են, այս եռանկիւնը 10 մէթր խարխիս ունի:

Կան վերջապէս կարգ մը դատումներ ալ զորս միտքը իբր ճշմարիտ կ'ընդունի առանց ո՛ր և է փորձառութեան գիմելու, անոնց բառերը հասկնալուն պէս, ատոնք են ի յառաջագունէ դատումները. զոր օր. ամբողջը մասէն մեծ է (թուագիտական դատումներն ամէնն ալ այս դասակարգին կը վերաբերին). եւ ուրիշ դատումներ, որոնց ճշտութիւնը միտքը կ'ընդունի անոնց եզրերուն կապակցութիւնը մէկ կամ աւելի փորձառութիւններով հաստատելէ վերջ միայն: Ասոնք են ի յեկնագունէ դատումները. զոր օր. կէտը ստնաւոր մըն է, արեւը կը շողայ, Բարիք քաջաք կայ:

Ի յառաջագունէ դատումները միշտ հարկաւոր են, ի յեկնագունէ դատումները՝ միշտ պատահական: Միտքը չի կրնար ինքնիրեն հասկնալ, մինչ փորձառութիւնը վաղը կրնայ այսօրուան տուածէն բոլորովին տարբեր բան մը տալ մեզի:

Դ. Տրամախօնութիւնը եւ իր զանազան տեսակները. — Երբ մէկ կամ աւելի դատումներ ծնունդ կու



տան նոր դատումի մը, որ կը տարբերի առաջիններէն, կը կազմուի տրամախոհութիւն: Երեք եղանակաւ կրնայ կատարուիլ ասիկա:

Կրնայ ըլլալ որ նախկին դատումները ընդհանուր ըլլան և նոր դատումը նուազ ընդհանուր. այն ատեն տրամախոհութիւնը ընծայութիւն մըն է. զոր օրինակ. ամէն ստնաւոր թոք ունի. կէտը ստնաւոր է, ուրեմն թոք ունի: Ընծայական հաւաքաբանութիւն մըն է աս, որուն երկու առաջին նախադասութիւնները կը կոչուին նախարեալի, իսկ վերջինը՝ եզրակացութիւն:

Կրնայ ըլլալ նաև որ նախկին դատումները եզակի ըլլան, նոյնպէս նաև նոր դատումն ալ եզակի, այն ատեն տրամախոհութիւնը պարզ զուգորդութեան ձեւ մըն է, որ չունի տրամաբանական հանգամանք, և չէ հարկաւոր, ու կրնայ կոչուիլ լոկ հետեւութիւն, զոր օր. բազմիցս փորձուած է որ այսինչ տունկը կը բուժէ տենդը. ասկէ հետեւցնենք թէ նոյն այդ տունկը հիմակ ալ կրնայ բժշկել այսինչ տենդաժէտը, բայց մտքերնէս չ'անցնիր յայտնել ընդհանուր օրէնք մը այդ տունկին միշտ և ամենուրեք տենդահալած ըլլալը հաստատող:

Կրնայ ըլլալ դարձեալ որ, նախկին դատումներն եզակի ըլլան, իսկ նոր դատումը՝ հանրական. տրամախոհութիւնն այն ատեն նախադասութիւն մ'է. զոր օր. սա կէտը ստնաւոր է, նա միւսն ալ ստնաւոր է նոյնպէս, ուրեմն բոլոր կէտերը ստնաւոր են:

Ե. Մակաձուրեան վերլուծումը. — Մակաձուրեանը կրկնակ գործողութիւն մը կ'ենթադրէ. 1. դէպքերուն և էականերուն մէջ պատահական նկարագրութիւններուն էական նկարագրութիւններէն զանազանումը: 2. Եզակի

դէպքերուն և էականերուն մէջ յայտնուած էական նկարագրութիւններուն կապակցութեամբը հանրական օրէնքի մը յօրինումը:

Առաջին գործողութիւնը բնաւ չի տարբերի ընդհանրացումէն: Երկրորդը՝ որ աւելի կարևոր է, քիչ մը դժուար կը բացատրուի: Բայց վերջապէս պէտք է բացատրել զանոնք:

Նախ և առաջ, էական տարրերուն պատահական տարրերէն զանազանումովը կը կազմուի վերացում մը, որուն մէջ կ'անտեսուին ժամանակի և տեղի մասնաւորութիւնները: Այսպէս, կէտ ձուկի ընդհանուր գաղափարը վերացեալ է ժամանակի և տեղի բոլոր պայմաններէն. ոչ անցեալ օրուան Սէն-Մալօի մէջ տեսնուած կէտն է, և ոչ անցեալ տարուան Թրուվէլի մէջ երեցածը: Նոյնպէս նաև, բնագիտական օրէնքի մը, զոր օրինակ, ծանրութեան մտապատկերը վերացեալ է ժամանակէն, և այն տեղէն՝ ուր փորձառութիւնը երևան հանած է զայն: Ծանրութեան օրէնքի բանաձևին մէջ, ակնարկութիւն չկայ ո՛չ այսինչ մարմինին, զոր օրինակ՝ քարի, կապարի, պղինձի կամ երկաթի, ո՛չ ու է ժամանակի, զոր օրինակ՝ երեկուան, նախընթաց օրուան կամ ժամ մ'առաջուան, և ո՛չ որ և է միջոցի, զոր օրինակ՝ մէկ, երկու, երեք, չորս կամ աւելի մէթր բարձրութենէ անկումի. ընդհանուր գաղափարներու միջև գտնուած ընդհանուր յարաբերութիւնները միայն բացատրուած են անոր մէջ: Էութեան մտապատկերը կամ ընդհանուր գաղափարը այսպէս կը կազմուի անկախաբար միջոցի ամէն կէտերէն և ժամանակի ամէն վայրկեաններէն, որով և զիւրութեամբ կրնայ զետեղուիլ միջոցին ո՛ր և է մէկ կէտին և ժամանակին ո՛ր և է մէկ վայրկեանին մէջ:



Ուրեմն, որպէսզի էակ մը կամ երեւոյթ մը կարենան ենթակարգուել այդ էութեան տակ, բաւական է միայն որ միտքը զայն ի յայտ բերէ անոնց մէջ, ինչ որ կ'ընէ արդարեւ վերլուծումով և վերացումով: Այսպէս, դիցուք թէ Ա. երեւոյթին կամ էակին մէջ միտքը վերլուծումով գտնէ թ և դ էութիւնը: Բայց, որովհետեւ այս թ և դ էութեան մէջ կը պարունակուին զ և շ մասնաւորութիւններն ալ, Ա. պէտք է այս զ և շ մասնաւորութիւններն ալ ցուցնէ: Այսպէս, էութեան մէկ մասը կը ծառայէ իբր միջնորդ եզր ընդ մէջ այն էակին կամ երեւոյթին, որուն մէջ ինքը ի յայտ կուգայ, և միւս մասին: Թանձրացեալ օրինակ մը յառաջ բերելու համար, առնենք կէտ ձուկը. վերլուծումը անոր մէջ կը ցուցնէ ստինքներ, ըսել է թէ այդ կենդանին ստնաւորներու էութիւնն ունի, բայց այդ էութիւնն իր մէջ կը պարունակէ նաեւ թոքային շնչառութիւն. ուրեմն կէտը թոքերով շունչ կ'առնու:

Ատով ճշմարիտ ընծայութիւն մ'ալ ըրած կ'ըլլանք: Ուրեմն ընծայութեամբ է որ ժամանակական և տեղային ամէն պայմանի վերացեալ օրէնք կը պատշաճի բոլոր մասնաւոր պարագաներուն:

Այսպէս կը բացատրուի, ըստ մեր կարծեաց, այն անմիջական կիրարկութիւնը, որով միտքը անցեալին օրէնքները կը գործածէ ներկայ դէպքերու համար: Այսու հանդերձ կ'ընդունինք նաեւ որ եթէ ասի բաւական է բացատրելու համար գիտական փորձարկութիւնը, բաւական չէ արդարացնելու համար զայն. եւ թէ միջոցին մէկ քանի վայրերուն եւ ժամանակին մէկ քանի վայրկեաններուն մէջ միայն հաստատածը ամբողջ ժամանակին վրայ տարածելու իրաւունք ունենալու համար՝ պէտք է աւելի բարձր օ-

րէնքներու դիմել: Բայց այն ատեն դուրս կ'ելլենք հոգեբանութեան կալուածէն և կը մտնենք բնագիտութեան կալուածին մէջ:

Ձ. Տրամախոհութեան բոլոր մեկերուն հասարակորդ եութիւնը. — Պէտք է գիտել թէ տրամախոհութիւնը, ինչ ալ ըլլայ իր արտաքին ձևը, հաստատապէս նպատակ ունի իրերուն մէջ ի յայտ բերել հանրականը կամ էութիւնը, կամ խելամտական տուեալներուն բազմութիւնը վերածել ամենուրեք նոյն եւ միշտ էական ստորոգելիներու սակաւաւոր թիւի մը: Մակաձութեան մէջ, վերլուծումը կրնայ ուղղակի կազմել ամբողջական էութիւնը, ինչպէս տեսանք կէտին օրինակովը: Իսկ ընծայութեան մէջ, այժմեան վերլուծումը էութեան մէկ մասը միայն կուտայ, ու տրամախոհութիւնը կը ծառայէ վերակազմելու ամբողջական էութիւնը, ինչպէս բացատրեցինք վերեւ, կէտին ստնաւոր յատկանշանին առիթով: Այսպէս, ընծայութիւնը ներկայ վերլուծումին պակաս թողածները կը լրացնէ անցեալ վերլուծումներու արտաբերութիւններովը:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա. — Դատումն այն անդրադարձիկ կամ խորհրդրածական գործողութիւնն է, որով գաղափար մը ուրիշ գաղափարի մը կը վերագրենք:

Բ. — Իրենց կազմութեան տեսակէտով, դատումներն յայտնատեսական կամ բաղդատական կ'ըլլան: Յայտնատեսական դատումը անարտայայտելի կը մնայ,



վասնզի արտայայտուելուն պէս՝ ալ բազդատական կ'ըլլայ:

Գ. — Իրենց յօրինուածքին տեսակէտով՝ դատումները կ'ըլլան հաստատական և ժխտական, եզական՝ մասնակի և յոգնակի, պատահական և հարկաւոր, վերլուծական և համադրական, յառաջագունեան և յետնագունեան:

Դ. — Տրամախոհութիւնը տեղի կ'ունենայ, երբ միտքը կ'անցնի նոր դատումի մը՝ կանխագոյն դատումներու միջոցաւ: Տրամախոհութեան երկու գըլխաւոր ձևերն են մակածութիւն և ընծայութիւն:

Ե. — Մակածութիւնը վերլուծումէ մը և ընդհանրացումէ մը կը բաղկանայ: Նպատակն է ի յայտ բերել էականերուն և անոնց յարաբերութիւններուն անանցական էութիւնը: Ատով կը բացատրուի, թէ եւ չ'արդարանար, անցեալին հետաքննութեան արդիւնքները ապագային համար կիրարկելու հնարաւորութիւնը:

Զ. — Տրամախոհութեան բոլոր ձևերը հասարակորդ էութիւն մ'ունին, որ է՝ վերլուծել ծանօթը՝ հանրականին միջոցաւ անծանօթը հանելու համար անկէց:

## Գ Ա Ս Ժ Ե .

### ԻՄԱՅՈՂՈՒԹԵԱՆ ԷԱԿԱՆ ԻՄԱՅԲՆԵՐԸ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Թուում իմացողութեան հինգ էական իմացմերուն. — Բ. Հոգեբանական տեսակէտ եւ լնական տեսակէտ. — Գ. Միջոց. — Դ. Ժամանակ. — Ե. Թիւր:

Ա. Իմացողութեան հինգ էական իմացմերը. — Խորհուրդին բազմամասնութեանը մէջ, միասնաբար կամ զատ զատ, միշտ սուղուած կը գտնուին կարգ մը մտապատկերներ, որոնք ի յայտ կուգան՝ ամէն անգամ որ միտքը կը խորհի: Այդ մտապատկերները կամ գաղափարները ա'յնքան սերտիւ կապուած են բոլոր միւս մտապատկերներուն հետ, որ կարծես թէ չեն կրնար անոնցմէ անջատուիլ: Ըսել է թէ անոնք են մեր մտապատկերներուն բաղկացուցիչական տարրերը. մինչդեռ այն միւս բազմախառնեալ մտապատկերները, որոնց մէջ սուղուած են ասոնք, պատահական տարրեր են: Հետագայ վերլուծումը կը հաստատէ այդ գաղափարներուն գոյութիւնը և բնութիւնը:

Ամէն անգամ որ տեսողական մտապատկեր մը կ'ունենանք, միջոցի մտապատկեր մը կը խառնուի այդ մտապատկերին մէջ: Կը տեսնեմ կաղամարս, զրասեղանս, ձեռքս. բայց այդ կաղամարը, ձեռքը և զրասեղանը միջոցին մէջ են: Կրնանք մտապատկերել միջոց գաղափարը՝ առանց գոյն գաղափարի, բայց ոչ գոյն գաղափարը՝ առանց միջոց գաղափարին: Ուրեմն միջոցն էական է, իսկ գոյնը պատահական:

Կը զգանք որ մեր բոլոր գիտակցական վիճակները կը տւեն և կը յաջորդեն իրարու. ամէն մէկը



իր մէջ կը ծածկէ ժառանգական մտապատկերը: Հիմակ կը գրեմ, քիչ առաջ կը կարգայի, երէկ որսի ելայ. այս բոլոր երևոյթները տեղաւորում մ'ունին ժառանգական մէջ: Ուրեմն ժամանակն էական է, իսկ գիտակցական եզակի վիճակը՝ պատահական:

Մեր մտապատկերներն, իրենց ներկայացուցած առարկաներուն պէս բազմաւոր և այլազան բազմաւորութեան մը նկարագրովը կ'երեւին մեզի միշտ: Գրասեղանիս վրայ կան մէկէ աւելի առարկաներ. կազամար մը, երեք կապարգրիչ, չորս գրչակոթ, հինգ թղթակալ, և այլն: Այս առարկաները բազմաւոր են, ու կապարգրիչներուն բազմաւորութիւնը և գրչակոթերուն և թղթակալներուն բազմաւորութիւնը նոյն չեն: Ձանազան թիւերով կ'արտայայտուի անոնց որքանութիւնը: Հո՞ս ալ՝ թիւն է էականը, իսկ զանազան բազմաւորութիւնները պատահական են:

Երբ մեր մտապատկերները իրարու կը միացնենք կայական տեսակէտէ, այսինքն զանոնք հաստատուն եւ անշարժ կը համարինք զոնէ զիրենք զիտած ատեննիս, կը տեսնենք որ միշտ եւ ամենուրեք կան կարգ մը մտապատկերներ, զորս մենք կ'ենթադրենք իբր նկեղակ եւ գոյացութիւն միւս մտապատկերներուն: Զոր օրինակ, երբ սա թուղթին եւ իր գոյնին վրայ կը նայիմ, այնպէս կը համարիմ թէ գոյնը թուղթի վրայ հանդէս է. և թուղթը զատ գոյացութիւն մըն է, որ իր վրայ կը կրէ գոյնը: Այսպէս, գոյացութեան գաղափարը էական յղացում մը կ'ըլլայ:

Երբ մեր մտապատկերները իրարու կը միացնենք ուժական տեսակէտով, այսինքն իրարու յաջորդական և հետեանք կը համարինք զանոնք, կը տեսնենք որ ամենուրեք և միշտ կը գտնուին կարգ մը մտապատ-

կերներ, որոնք արտագրիչ կ'ըլլան ուրիշներու: Զոր օրինակ, երբ փողոցին մէջ լսած աղմուկս կը միացնեմ կառքի պատկերին, կառքը կը համարեմ էական արտագրիչ կամ պատճառ աղմուկին: Ըսել է թէ պատճառին գաղափարը էական յղացում մըն է:

Կրնանք ուրեմն ըսել թէ առնուազն հինգ էական մտապատկերներ կան, որոնք միշտ սուղուած կը գտնուին մեր բոլոր միւս մտապատկերներուն մէջ, և որոնք են միջոցի, ժառանգական, թիւի, գոյացութեան և պատճառի գաղափարները: Անշուշտ այս գաղափարներն ամէնքն ալ նոյն կարեւորութիւնն ու դերը չունին: Զոր օրինակ, գոյացութեան և պատճառի գաղափարները կը գտնուին մեր բոլոր մտապատկերներուն մէջ, մինչդեռ թիւի կամ որքանութեան գաղափարը կրնայ գտնուիլ ամէնուն մէջ առ հասարակ, բայց ոչ՝ գոյացութեան և պատճառի զուտ գաղափարներուն մէջ արանհրաժեշտաբար, իսկ ընդհակառակն անհրաժեշտաբար կը գտնուի բոլոր միջոցային եւ ժամանակային մտապատկերներուն մէջ:

Միջոցի և ժամանակի գաղափարներն ալ, անհրաժեշտաբար չեն գտնուիր մեր բոլոր մտապատկերներուն մէջ: Զուտ գաղափարները (ընդհանուր գաղափարները) միջոցի և ժամանակի մէջ չեն կրնար պարփակուիլ, ժամանակը եղանութեան (devenir) և հետեւեալը ներքին եղելութիւններու շարունակումին հետ միայն վերաբերութիւն ունի, այնպէս որ ճիշդ է Քանդի խօսքը թէ ժամանակը «ներքին զգացողութեան ձևն է»: Իսկ միջոցը, տեսողութեան և շօշափողութեան մտապատկերներուն հետ միայն վերաբերութիւն ունենալով՝ արտաքին զգացողութեան ձևն է:



Բ. Հոգեբանական տեսակէս եւ քննական տեսակէս. — Չանազան խնդիրներ յուզուած են մտքին էական իմացքներուն նկատմամբ: Ատոնցմէ հոգեբանական տեսակէտով կարևորագոյնն է անոնց ծագումին կազմութեան, կամ ինչպէս սովորութիւնն է ըսել, ծնունդին խնդիրը: Ամէն ոք պէտք է համաձայնի նախ ընդունելու համար թէ այդ իմացքներուն գոյութիւնը ի յայտ կուգայ վերլուծումով: Մեր մտապատկերներուն վերլուծման մէջ է որ երեւան կուգան այդ մտապատկերներուն հանրական եւ հաստատուն տարբերը: Վերոյիշեալ վերլուծումներն ու օրինակները կրնան հաստատել զայս: Արիստոտէլ, Լայպնից, Հիւմ եւ Քանդ համաձայն են այս մասին:

Համաձայնութիւնը այն ատեն միայն կրնայ դադարիլ և կը դադարի արդեամբք, երբ այս փիլիսոփաները հարցնեն թէ ի՞նչ է այդ իմացքներուն դերը: Ուղղակի անոնցմով կամ անոնց շնորհիւ է արդեօք որ գոյութիւն ունին այն բազմախառն մտապատկերները, որոնց մէջ սուզուած կը գտնուին իրենք: Եւ կամ իրենք իրենցմով թէ այդ մտապատկերներուն հետ միշտ կցորդաբար գոյութիւն ունին անոնք: Խնդիրը ճշգրտօրէն կարենալ ըմբռնելու համար՝ պէտք է խընամով ճշգրտօրէն անոր հոգեբանական և քննական կողմերը: Ի՞նչպէս կը յաջողինք ճանչնալ էական գաղափարները իրենց գտնուած բազմախառն եւ եզակի մտապատկերներուն մէջ: Հոգեբանական հարցն է ասի՝ էական գաղափարները ի՞նչ դեր կը կատարեն բազմախառն և եզակի մտապատկերներուն մէջ: Ա՛ս ակքնական հարցն է:

Հոգեբանութեան դասընթացքին մէջ առաջին հարցին միայն կարենալով պատասխանել, պէտք է ըսենք

թէ մտքին էական իմացքները գտնել և ճանչնալ կարենալու համար, պէտք է վերլուծումով վերացնենք զանոնք, վերոյիշեալ կերպով, իրենց գտնուած մտապատկերներուն մէջէն: Արդ, որովհետեւ այս մտապատկերներով կը բաղադրուի փորձառութիւնը, պիտի յաջողինք ի յայտ բերել իմացքները՝ վերլուծելով փորձառութիւնը:

Գ. Միջոցը. — Ըստ այսմ, վերացումով միայն կրնանք գտել միջոցին իմացքը, մեր տեսողութեան և շօշափողութեան փորձառական ստացութիւններէն: Գոյները, տարածութիւնները, շօշափական տպաւորութիւնները ամբողջովին վերջացնելէն ետքը, կը մնայ եռակի տարածութեամբ եւ վեցեկի ուղղութեամբ հնարաւորուած անորոշ ծաւալում մը, որ, իր համասեռութեանը շնորհիւ՝ անխտրօրէն կրնայ ըզգենուիլ ամէն ձև, ամէն գոյն, ամէն իր, և, վերջապէս ամէն մարմին: Եւ ասիկա միջոցին ստոյգ ծանօթոյքն է: Արդարեւ միջոցը կրնայ անորոշապէս ընդարձակուիլ և անկարելի է սահմանաւորել զայն, իրական աշխարհէն անդին կը տարածուի հնարաւոր աշխարհը, հետեւաբար՝ միջոցը: Համասեռ է, վասնզի միջոցին բոլոր մասերը նոյն բնութիւնն ունին, բացարձակապէս նման իրարու: Անխտրական է, վասնզի կրնանք ուղածնուս չափ կոտորակել զայն և բոլոր ուղած մարմիններն իս և ձևերն իս տեղաւորել անոնց վրայ:

Դ. Ժամանակը. — Գլխակցութեան եղանութեանը մէջէն երբ բոլորովին վերացնենք զայն բաղկացնող դիպուածական տարբերութիւնները, պահելով միայն այդ եղանութեան պատահարներուն դէպքերուն պէս-



պխտութիւնը, կ'ունենանք եռակի կացութեամբ անորոշապէս հնարաւորուած յաջորդութիւն մը անցեալի, ներկայի և ապառնիլի: Զոր օրինակ, կը տեսնեմ ճընճղուկի մը թռիչքը, յետոյ կը լսեմ ժամացոյցին ձայնը և ապա դրանս բաղխուելը: Յաջորդութիւն մըն է ասիկա: Եթէ այս երևոյթներուն իւրաքանչիւրին պարունակութիւնը վերացնեմ վերոյիշեալ կերպով, ինծի պիտի մնայ անոնց յաջորդութիւնն ու գիրքերուն յարաբերութիւնը միայն: Երկրորդին ատենը առաջինը անցած էր եւ երրորդը զեռ չէր եկած: Այս վերացական դադափարը կը կազմէ մեր մէջ մտապատկերը անցնող ժառանգիկն, կամ, ըստ Արիստոտէլեան սահմանումի, այն ժամանակին որ թիւն է փոփոխումին:

Բայց կայ ուրիշ ժամանակ մըն ալ, ուրիշ մտապատկեր մը՝ ուրիշ դադափար մըն ալ, որ է *սետոյ ժառանգիկն*, տեղութեան՝ կայունութեան գաղափարը կամ մտապատկերը: Պէտք է իրարու հետ շփոթել այս երկու գաղափարները, որոնք թէև անուանապէս շատ նման, բայց ըստ էութեան ներհակ են իրարու: Տեղութեան գաղափարն ալ, շարժական ժամանակի գաղափարին պէս, գիտակցական փորձառութենէն կը վերացնենք: Արդարև վերոյիշեալ վերլուծումին մէջ ուրիշ բան չնկատեցինք բայց եթէ յաջորդութեան յարաբերութիւնները. բայց այդ յարաբերութիւններն ալ կրցած են գոյութիւն ունենալ անոր համար որ մէն մի երևոյթ, զոր օր. ժամացոյցի ձայնը, ունեցած է ինքն առանձին տեղութիւն մը, ներկայ մը: Այդ ներկան՝ արդէն եղածին (կամ ճնճղուկին թռիչքին) եւ ըլլալիքին (կամ դրան բաղխումին) միջեւ անցում մը չէ լոկ. ինքն ալ առանձինն եւ անշարժ իրակա-

նութիւն մըն է, որ ունեցած է աւելի կամ նուազ երկար կամ կարճ տեղութիւն մը:

Ուրեմն ժամանակ բառը երկու անճատ գաղափարներ կը ներկայացնէ. նախ՝ եղանութեան յաջորդական կացութիւնները, և եղանութեան երկու վայրակեաները իրարու միացնող կապին կայունութիւնը:

Ե. Թիւր. — Թիւրն իմացքը երկու կերպով կ'ուսենանք, թէ՛ միջոցին մէջ եղած կէտերուն զիրքի բազմաւորութեան վերացումովը եւ յայտնատեսութեամբը, ինչպէս զոր օրինակ երբ բազմակողմի մը գաղաթները կ'որոշենք նախ և յետոյ կը գումարենք զանոնք, կամ ժամանակին մէջ եղած վայրկեաններուն զիրքին բազմաւորութեան վերացումովը, ինչպէս զոր օրինակ՝ երբ կարգ մը յաջորդական պատահարներ կ'որոշենք նախ և յետոյ ի մի կը գումարենք զանոնք: Այսպէս կը կազմենք իր մասերուն հաւասարութեամբը կամ գումարովը սահմանուած բազմաւորութեան մը գաղափարը, որ է նոյն ինքն թիւին գաղափարը:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա. — Մեր մտապատկերները վերլուծելով կը տեսնենք թէ անոնք հաստատուն կերպով կը բովանդակեն կարգ մը տարերային էական մտապատկերներ: Կրնանք հինգի վերածել այդ մտապատկերները. միջոց, ժամանակ, թիւ, գոյացութիւն և պատճառ:

Բ. — Խնդիր է թէ ի՞նչ է այդ հինգ մտապատկերներուն ծագումը: Հոգեբանական տեսակէտէ դի-



տելով՝ փորձառութիւնն է անոնց ծնունդ տուողը՝ վերլուծելով միայն կրնանք տարրոչել այդ գաղափարները մեր մտապատկերներէն: Իսկ թէ այդ գաղափարները միտքին հարկաւոր ձևերն են թէ ենթակայական օրէնքներ կամ առարկայական վերացումներ՝ քննական խնդիր մըն է ասիկա, զոր վերջի կը վերապահենք:

Գ.— Միջոցը՝ երկայնութեան, լայնութեան եւ խորութեան ծաւալումին անսահման հնարաւորութիւնն է:

Դ.— Ժամանակը՝ յաջորդութեան անսահման հրնարաւորութիւնն է անցեալին եւ ապագային մէջ: Այս գաղափարը պէտք է շփոթել տեւողութեան գաղափարին հետ:

Ե.— Այն ամէն բաները որոնց հաւասարութիւնը կամ գումարը կարելի է սահմանել՝ կը կազմեն թիւին գաղափարը:

## Գ Ա Ս Ժ Զ.

### ԻՄԱՅՈՂՈՒԹԵԱՆ ԷԱԿԱՆ ԻՄԱՅՔՆԵՐԸ

#### (Շարունակութիւն)

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— Ա. Պատճառին առժամեայ սահմանը.— Բ. Պատճառին գաղափարը արտաքին փորձառութենէն չէ որ կուգայ.— Գ. Վերլուծումէն ալ չի գար ան.— Դ. Ներքին փորձառութենէն կուգայ.— Ե. Պատճառին բնութիւնը.— Զ. Գոյացութեան ծանօթոյթը.— Է. Գոյացութեան եւ պատճառին նոյնացումը օրէնքին ծանօթոյթին մէջ:

Ա. Պատճառին առժամեայ սահմանը. — Իմանալու համար թէ ինչպիսի փորձառութեամբ կ'ըմբռնենք պատճառի գաղափարը, պէտք է որ նախ այդ գաղափարին էութիւնը բացայայտող առժամեայ սահման մը տանք: Որ և է իր՝ որմէ ուրիշ նոր իրի մը գոյութիւնը կ'ելնէ, անոր պատճառը կը նկատուի: Այսպէս, սա գրասեղանը շինող կահագործը ասոր պատճառը կը նկատուի, վասնզի նա՛ էր որ գոյացուց այս գրասեղանը, որ անոր աշխատութենէն առաջ գոյութիւն չունէր: Փնտռեցէք հիմա թէ ինչպիսի փորձառութիւն է այն՝ որմէ կը ստանանք այդ գաղափարին նախնական ծանօթութիւնը:

Բ. Պատճառին գաղափարը չի կրնար արտաքին փորձառութենէ գալ. — Պատճառին գաղափարը, ինչպէս ապացուցած է Հիւմ, չի կրնար ստացուիլ արտաքին փորձառութեամբ: Արդարև, այս փորձառութիւնը յաջորդութիւններ միայն կրնայ տալ մեզի, և ո՛չ երբեք պատճառական ազդերսի հասկացողութիւն: Արտաքին



փորձառութեան միջոցաւ, կը վկայենք միայն թէ այսինչ երևոյթն իր ետեւէն կը բերէ այնինչ երևոյթը, բայց չենք կրնար տեսնել այն կապը, որով հետևորդ երևոյթը կը կցորդուի նախընթաց երևոյթին: Երբ պիւլարտի դունտ մը կ'ընդհարուի ուրիշ դունտէ մը, կը տեսնենք թէ այս վերջինը կը շարժի առաջինին զարնուելէն ետքը, բայց բնաւ չենք տեսներ այն կապը որ երկրորդին շարժումը կը միացնէ առաջինին շարժումին:

Գ. Վերլուծումն ալ չի կրնար սալ զայն. — Ըստ տեսութեան միեւնոյն փիլիսոփային, ո՛չ պատճառք կրնայ յայտնուիլ արդիւնքին վերլուծումին մէջ, եւ ո՛չ ալ արդիւնքը պատճառին վերլուծումին մէջ: Այս տեսութիւնը Բանդ յետոյ սա կերպով բացատրեց՝ պատճառականութեան դատումը համադրական գատում մըն է, եւ ո՛չ թէ վերլուծական դատում մը: Աշխարհիս ամենէն նշանաւոր մեքենագէտը ի գու՛լ պիտի վերլուծէր ելեքտրական մեքենան, անոր մէջ գտնելու համար ելեքտրական կայծը. նոյնպէս ի գու՛լ պիտի վերլուծէր ելեքտրական կայծը, մէջը գտնելու համար մեքենան:

Դ. Ներքին փորձառութիւնը միայն կրնայ սալ զայն. — Հիւմի կարծիքով, պատճառականութեան գաղափարն ի յայտ բերող փորձառութիւնը՝ որոշադրութեան (détermination) այն ներքին փորձառութիւնն է, զոր մեր մէջ կը կազմէ հետևորդի մը նախընթաց մը գու՛րգորելու ունակութիւնը: Մէն տը Պիրան և Ամբէռ այդ փորձառութեամբ կը հասկնան այն անմիջական զգացումը, զոր ունինք մեր անձին պատճառա-

յին գործունէութեանը մասին: Կը զգանք թէ ներքնապէս կը գործենք, կ'աշխատինք, միշտ գոյութիւն տալով նորանոր վիճակներու. այս վիճակները մեզի միացնող կապն է ահա պատճառականութեան կապը, ու պատճառի գաղափարնիս ոչ այլ ինչ է եթէ ոչ պատճառականութեան աղերսին առաջին եզրին վերացեալ գաղափարը. իսկ արդիւնքի գաղափարնիս՝ նոյնին երկրորդ եզրին վերացեալ գաղափարը: Այսպէս, մըտածումս արտայայտելու համար գրած ատենս, ներսիդիս կը զգամ մտային ուժ մը, որ կը տիրէ երեւակայութեանս եւ յիշողութեանս վրայ, ու միեւնոյն ժամանակ յասուկ կերպով մը շարժման մէջ դնելով մկանները բազուկիս եւ ձեռքիս որոնք կ'արտադրեն դիրք: Խորհուրդիս եւ զայն արտայայտող բառերուն միջև զգացուած կապը, պատճառական կապը, պատճառականութիւնն է: Խորհուրդիս ուժը առանձին նըկատուած՝ պատճառն է. գրուածքը՝ առանձինն նկատուած՝ արդիւնքն է:

Ե. Պատճառականութեան բնութիւնը. — Ասկէց այնպէս կը հետեւի թէ պատճառը նախընթաց գործողութիւն մըն է, որուն հարկաւորաբար կապուած են հետևորդ երևոյթներ: Եւ սակայն ճշմարիտ պատճառականութիւն չէ ամէն հարկաւոր յատկաւորում՝ որով հետեւանք մը կը կապուի նախընթացի մը: Տակաւին գործունէութիւն մըն ալ պէտք է աւելնայ անոր վրայ: Այսպէս ընծայութեան մը մէջ եզրակացութիւնը նախադրեալներուն կապող յատկաւորումը ճըշմարիտ պատճառականութիւն չէ, ու ճիշդ չէ նախադրեալները եզրակացութեան պատճառները կոչել. մտքին տրամախոհական գործունէութիւնն է միայն



անոր պատճառը . գաղափարային մտապատկերները այդ գործունէութեան կատարման եւ, հետեւաբար, եզրակացութեան տրամաբանական պայմաններն են միայն :

Եթէ աւելի խորունկ կերպով քննենք, իմանալու համար թէ ինչպէս կը կազմուի այս պատճառականութիւնը որով հետեւորդները հարկաւորաբար կը կապուին նախընթաց գործունէութեան մը, պիտի տեսնենք թէ ատիկա կրնայ ըլլալ համադրական եւ հետեւաբար մտապատկերային գործունէութեան մէջ միայն, որ միանգամայն կը տարրորոշէ, կը շղթայէ, կը միացնէ, կը համակարգէ եւ կը ստորակարգէ իր մտապատկերային զանազան տարրերը : Եւ այդ գործունէութիւնը նոյն ինքն խորհուրդն է :

Կը խորհիմ եւ կը գրեմ : Գիրիս պատճառ եղող խորհուրդը աւելի կամ նուազ շփոթ կերպով մը՝ միահամուռ՝ կը մտապատկերացնէ այն զանազան տարրերը որոնք զինքը կը բաղկացնեն : Կը տարրորոշէ զանոնք, վասնզի մէն մի բառի վրայ անշատօրէն կը խորհիմ . կը միացնէ եւ կը շղթայէ, վասնզի պարբերութեան մը մէն մի բառն կապուած է իր նախորդին եւ յաջորդին . կը համակարգէ, վասնզի հիմակ գրած պարբերութիւնս ճշտիւ չափակից է անկէ առաջ գրածին :

Վերջապէս կը ստորակարգէ զանոնք իրարու, վասնզի բայը ենթակայէն ու խնդիրը բայէն կախում ունին : Միևնոյն կերպով կը կատարուի ամէն գործ, որուն մէջ ճշմարիտ պատճառ մը կայ : Գրասեղանը շինող կահագործը նախ կը տարրորոշէ անոր մասերը, յետոյ կը հաւաքէ, կը համակարգէ, կը ստորակարգէ զանոնք, իր խորհուրդին մէջ եղած հաւաքումներուն համակարգութիւններուն եւ ստորակարգութիւններուն :

համեմատ : Գրասեղանը խորհուրդին մէջ նախապէս յօրինուած ըլլալուն համար է միայն որ ձեռքերը յետոյ կրնան շինել զայն : Մեքենան անգամ, գործած ատենը, ճարտարագործին խորհուրդը միայն կը վերարտադրէ : Ուրեմն ճշմարիտ պատճառը խորհուրդ մը միայն կրնայ ըլլալ :

Բայց մինչդեռ մեքենային՝ կահագործին աշխատանքին ու ձեռքի շարժումներու մէջ, զանազան շարժումները իրարմէ իրապէս կը գատորոշուին, եւ յաջորդական կերպով միայն կրնան իրականանալ, զուտ խորհուրդին մէջ, մտապատկերային տարրերուն շղթայումները, միացումները՝ համակարգումներն ու ստորակարգումները անկախ են ո՛ր եւ է յաջորդութենէ, պատճառը ցորչափ կը գործէ իբր պատճառ, արտաքոյ է եղանութեան շարժունութենէն եւ է զուտ տեսողութեան մէջ միայն : Իր գործունէութեան եղելութիւնը ո՛ր եւ է այլայլում յառաջ չի բերեր իր վրայ, գործած ատենը ոչինչ չի կորսնցնէր իր ուժէն : Causo movento non movetur (=պատճառ շարժէ այլ ոչ շարժի) կ'ըսէին նախնիք, որ ըսել է թէ պատճառը շարժիչ ըլլալով հանդերձ կը մնայ միշտ անշարժ :

Ձ. Գոյացութեան ծանօթոյք . — Չուտ պատճառին անշարժութեանն այսպէս անգամ մը համոզուելէ վերջ ա՛լ ինքնին իմանալի կ'ըլլայ գոյացութեան ծանօթոյքը : Արդարեւ գործօն խորհուրդին այս անշարժութիւնը կը հակառակի զգայութիւններու շարժունութեան եւ ծածանումին երևոյթներուն, որոնք կարծես թէ կը ծփան անոր մակերեսին վրայ, առանց այլայլելու յատակին անշարժութիւնը : Արդ, գոյացութեան գաղափարն ոչ այլ ինչ է եթէ ոչ գաղա-



փարը այն բանին որ կայուն կը մնայ, միւսներուն փոփոխուած ատենն իսկ: Տէքարդ շատ գեղեցիկ կը բացատրէ զայն «Առնունք, զոր օրինակ, մեղրամով կտոր մը. դեռ նոր հանած ենք զայն փեթակէն, մեղրին համը տակաւին վրան է, նոյնպէս ծաղիկներուն հոտը. շատ որոշ են իր գոյնը, ձեւը և մեծութիւնը. կարծր, պաղ և ձեռնելի է. եթէ վրան զարնէք՝ ձայն կը հանէ. վերջապէս մարմին մը որոշակի ճանչցնող բոլոր բաները կը գտնուին վրան: Բայց ահա կրակին կը մօտեցնեմ, և ընդհուպ կը տեսնեմ թէ համը փախեր, հոտը թուեր, գոյնը փոխուեր, ձեւը աւրուեր, մեծութիւնը աճեր է. տաք հեղուկ մը եղեր է, որուն վրայ չենք կրնար ձեռք գպցնել, և որ եթէ վրան զարնենք իսկ, ա՛լ ձայն չի հաներ: Այս փոփոխումէն վերջ մոմը նորէն մոմ կը մնայ: Անտարակոյս այ՞, ոչ ոք կրնայ ժխտել զայն»:

Այդ մնացողն է ահա բուն իսկ գոյացութիւնը. բայց ինչպէս կը դիտէ Տէքարդ նոյն տեղը, պատահարներու պէսպիսութեան ներքեւ իրօք հաստատուն մնացող կայունութեան մը գաղափարը տուողն է, ոչ թէ արտաքին փորձառութիւնը, այլ ներքին փորձառութիւնը մեր խորհուրդին, որուն մէջ կը զգանք կայուն բան մը, որ կը դիմադրէ բոլոր փոփոխումներուն:

Է. Գոյացութեան եւ պահպանիւն նոյնութիւնը. — եթէ աւելի խորը քննենք, պիտի տեսնենք որ պատճառը և գոյացութեան գաղափարը իրարու կը գուգադիպին օրէնքին ծանօթութեանը մէջ: Արդարեւ օրէնքը ոչ այլ ինչ է եթէ ոչ այն անփոփոխելի յարաբերութիւնը, որով երևոյթներն իրարու հետ կը միանան պատահարներու մէջ, այն կարգը՝ որով յատկութիւնն

ները կը համակարգուին և կամ կը ստորակարգուին էակներուն մէջ: Պատճառը կարգաւորիչ խորհուրդ մը ըլլաով, օրէնքներ կը դնէ, բայց այնպիսի օրէնքներ, որոնք համաձայն են զինք բաղկացնող օրէնքներուն. արդ, գոյացութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ պատճառին բաղկացուցիչ օրէնքը: Ուրեմն գոյացութիւնը այն օրէնքն է, որուն համեմատ պատճառը գոյ է և կը գործէ. ու պատճառը նոյնինքն այդ օրէնքն է, իր գործունէութեանը մէջ: Այսպէս, գոյացութեան ծանօթոյքը պատճառին գաղափարէն հանուած վերացում մըն է: Գոյացութիւնը՝ առանց գործունէութեան պատճառն է. իսկ պատճառը գործունէութեամբ միասին գոյացութիւնն է:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

- Ա. — Ի սկզբան այնպէս կը թուի թէ պատճառն այն է որ ուրիշ իրի մը գոյութիւն կուտայ:
- Բ. — Արտաքին փորձառութիւնը յաջորդութիւններ միայն կրնայ տալ մեզի. և ոչ երբեք պատճառականութիւն:
- Գ. — Պատճառին վերլուծումը չի կրնար տալ արդիւնք, ոչ ալ արդիւնքին վերլուծումը՝ պատճառ. ուրեմն պատճառ-արդիւնք կապը ո՛չ թէ վերլուծական է այլ համադրական:
- Դ. — Մեր մտային գործունէութեան ներքին փորձառութիւնը միայն կը ցուցնէ մեզի պատճառականութիւնն ի գործունէութիւն. և այսպէս՝ վերացումով՝ պատճառին գաղափարը կուտայ մեզի:
- Ե. — Պատճառը, ըստ էութեան, նոյն է մտածող



գործունէութեան հետ: Դուրս և վեր կը մնայ շարժումէն:

Զ. — Գոյացութիւնը՝ իր փոփոխական արդիւնքներուն կայուն եկեղծակայ նկատուած պատճառն է: Սուրհուրդին հիմնական նոյնութեան փորձառութեամբն է որ կը գտնենք գոյացութեան ծանօթութիւնը:

Է. — Գոյացութիւնն ու պատճառը կը նոյնանան իրարու հետ, օրէնքին մէջ: Պատճառը՝ ուժական տեսակէտէն նկատուած օրէնքն է, իսկ գոյացութիւնը՝ կայական տեսակէտէն նկատուած օրէնքն է:



## Գ Ա Ս Ժ Է.

### ԱՌԱՋԻՆ ՍԿՋԲՈՒՆՔՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Սկզբունքներուն սահմանը. — Բ. Սկզբունք նոյնութեան. — Գ. Սկզբունք բանի. — Դ. Վերուծում բանի սկզբունքին. Սկզբունք վախճանականութեան. — Ե. Սկզբունք պահապանականութեան. — Զ. Սկզբունք գոյացութեան. — Է. Սկզբունքներ ի յայտ կ'ածուին մտային վերլուծութեամբ. — Ը. Սկզբունքներու ծագումի խնդիր. — Թ. Նոյնութեան փորձառական վարդապետութիւնը եւ հերումը. — Ժ. Պահապանական սկզբունքի ծնունդին փորձառական վարդապետութիւնը. — ԺԱ. Բնագիտութեամբ. — ԺԲ. Սկզբունքներուն ծագումը, ըստ եղանակական վարդապետութեան. — ԺԳ. Բնագիտութեամբ:

Ա. Սահման սկզբունքներուն. — Առաջին սկզբունքը կը կոչուին հանրական եւ հարկաւոր այն դատումները զորս լռելեայն իր մէջ կը բովանդակէ ամէն մտածական աշխատանք: Այնպէս որ կրնանք նոյն իսկ խորհուրդի օրէնքներն կոչել գանտնք:

Երկուքի կը վերածուին այդ սկզբունքները. որոնք, նոյնպէս, կը ստորաբաժանուին: Առաջինն է նոյնութեան սկզբունքը. երկրորդը՝ բանական սկզբունքը:

Բ. Նոյնութեան սկզբունք. — Նոյնութեան սկզբունքն այն է, որով ամէն խորհուրդ նոյն կը մնայ ինքն ինքեան, ցորչափ չի կրեր որ և է եղանակաւորում: Այդ սկզբունքը կրնայ սապէս բանաձևուիլ «Այբ»ը «Այբ» է, նոյնը նոյն է, մարդը մարդ է: Այս սկզբունքէն կը ծագի հակասութեան սկզբունքը. իր մը չի կրնար ըլլալ միակամայն ինչ որ է եւ ինչ որ չէ.



սեղան մը չի կրնար միևնոյն ժամանակ թէ՛ ըլլալ եւ թէ չըլլալ սեղան. և արտաքսեալ երրորդին սկզբունքը. իրի մը և անոր միտումին մեջ չկայ միջին տեղ: Ամէն սեղան սեղան է. ամէն ինչ որ սեղանն է, է սեղան. ընդ մէջ այն բանին որ սեղանն է և այն բանին որ է սեղան, չկայ ոչինչ: Այս սկզբունքին դէմ գործողը այլանդակութեան մէջ կ'ընայ, անխմանալի և հակասական կ'ըլլայ, ինչպէս պիտի ըլլար մէկը՝ եթէ ըսէր թէ շրջանակը քառակուսի է կամ զրօն քանակութիւն մըն է: Այս սկզբունքը մտածումին հնարաւորութեան պայմանն է: Առանց անոր անհնար է որ կազմուի ո՛ր և է մտածում, և թէ իսկ կազմուի՝ կը ջնջուի նոյն հետայն, միտքին մէջ դատարկութիւն միայն թողուով: Ճիշդ ինչպէս եթէ ըսէինք Ա.—Ա. հասար է 0:

Գ. Բանի սկզբունք. — Բանի սկզբունքն ա՛յն է որով միտքն իրարու կը լծորդէ իր մտապատկերին զանազան տարրերը: Այդ սկզբունքը կրնայ սապէս բանաձևուիլ. — Առեւ մտապատկեր բաւարար պատճառ մ'ունի, այսինքն կրնայ տարբազարուիլ իմանալի տարրերու, որոնք իրարու հետ կապակից են իմանալի օրէնքներով: Այս պատճառաւ, այս սկզբունքը կը կոչուի նաև սկզբունք տիեզերական իմանալիութեան: Այս սկզբունքն է որ կը կանոնէ և կ'ուղղէ խորհուրդին գործողութիւնը: Եթէ նոյնութեան սկզբունքը մտքին կայական օրէնքն է, բանի սկզբունքը անոր ուժական օրէնքն է: Այս սկզբունքը կը տարբազարուի այնքան մասնաւոր օրէնքներու, որքան կարելի է դնել հարկաւոր պատճառներ՝ բացատրելու և իմանալի ընելու համար մտապատկեր մը:

Դ. Բանի սկզբունքէն ածանցող սկզբունքներ. Վախճանականութեան սկզբունք. — Իւրաքանչիւր մտապատկեր մասն է ամբողջի մը, և կը կորսնցնէ իր ոյժը, եթէ մեկուսացնեն զինքը այդ ամբողջէն, իր յատկաւորումները կը բացատրուին ամբողջին հետ ունեցած իրենց յարաբերութեամբը: Հետևաբար, ամէն մտապատկեր, որպէսզի բացատրելի ըլլայ, պէտք է վերաբերութիւն մ'ունենայ այն ամբողջին հետ, սրուն մաս կը կազմէ ինքը: Բայց մասերու ստորաբաժանուող ամբողջն ալ ըստ ինքեան ուրիշ բանն է, եթէ ոչ վախճան մը միայն: Այս տողերուն նպատակն է, զոր օրբացատրել բանական սկզբունքը: Բայց բանի սկզբունքին այդ բացատրութիւնը կրնայ իրականանալ խորհուրդիս զանազան տարրերո՛ւն շնորհիւ միայն, և այն շարժումներուն՝ որք զայն կը թարգմանեն գրաւորաբար: Ամէն գիր, ամէն բառ, ամէն ուրոյն խորհուրդ միջոց մըն է, նկատմամբ վախճանին, և մասն է այդ վախճանին՝ որ իր ամբողջն է: Այսպէս կահագործին նպատակն է սեղան մը շինել. մէն մի փայտի կտոր մասն է սեղանին՝ որ իր ամբողջն է, և միևնոյն ատեն միջոց մըն է սեղանին, որ իր վախճանն է: Ուրեմն խորհուրդի ամէն առարկայ վախճան մ'ունի, ուրուն պէտք է վերաբերի: Անկարգաւ թան չկայ. ա՛յն է վախճանականութեան սկզբունքը:

Ե. Պատճառականութեան սկզբունք. — Իւրաքանչիւր մտապատկեր արդիւնք է մտքի ներքին գործունէութեան մը, առանց այդ գործունէութեան կարելի չէ բացատրել ոչ մէկ մտապատկեր: Սա վայրկեանիս ունեցած խորհուրդներս իմ մէկ կամելութեանս կը վերաբերին, զանոնք կը բացատրեմ անոր համար որ կա-



մեցայ բացատրել. կամելութիւնս է այդ բացատրութեան արդիւնարար պատճառը: Նոյնպէս կահագործը սեղանին արդիւնարար պատճառն է եղած: Ուրեմն խորհուրդի ամէն առարկայ ունի արդիւնարար պատճառ մը որ խորհուրդին մէջ կը ձևէ զինքը: Առանց պատճառի երևոյթ չիլայ. այս է արդիւնարար պատճառականութեան կամ պարզապէս պատճառականութեան սկզբունքը:

2. Գոյացութեան սկզբունքը. — Մեր մտապատկերներէն իւրաքանչիւրը հարկաւորաբար կը վերաբերի մեր էութեան, և մեզի կը թուի իբր աւելի կամ նուազ վաղանցուկ մէկ եղանակաւորումը մեր մտքին յարակայութեան: Զոր օր. մէն մի խորհուրդս կը վերաբերի այն էակին որ ես եմ. և այդ էակին մէկ եղանակաւորումը՝ մէկ ստորոգելին է: Նոյնպէս սեղանին փայտը կրնայ սենալ, կարծրանալ, որդերէն կըծուել, ձեւ փոխել կամ քայքայուիլ. այս եղանակաւորումները նորէն միշտ փայտին պիտի վերաբերին: Ուրեմն խորհուրդի ամէն առարկայ գոյացութիւն մը կամ գոյացութեան եղանակաւորում մըն է: Առեկ ինչ ի գոյացութեան եւ գոյացութեան միայն գոյ է, կամ առեկ եղանակաւորում գոյացութեան մը կը վերաբերի, եւ առեկ ստորոգելի՝ ներակայի մը:

Երբ խորհուրդի առարկայի մը նպատակը, պատճառը և գոյացութիւնը կը ճանչնանք, գիտցած կ'ըլլանք ամէն ինչ որ կարելի է գիտնալ. մտապատկերն ամբողջովին իմանալի և հասկնալի եղած կ'ըլլայ մեզի, զայն բացատրող բոլոր պատճառներուն ամբողջովին խելամտած կ'ըլլանք. բանականութիւնն իս ամբողջովին կը գոհանայ: Եթէ այդ հարցումներէն մէկ

հատը առանց պատասխանի մնայ, անշուշտ մտապատկերին գոյութիւնը և նոյն իսկ օրինակաւորութիւնը վէճի տակ չեն իյնար ատով, բայց բանականութիւնը մութ, անհասկնալի և խորհրդաւոր բան մը կը նշմարէ անոր մէջ, ինչ որ իրեն համար ախորժելի չէ: Եւ սակայն մտապատկերն այն ատեն միայն անճիշտ կը նկատուի, երբ կարելի չ'ըլլար պատասխանել այդ երեք հարցումներէն և ոչ մէկուն:

է. Այս սկզբունքները մտաւոր վերլուծումով կը յայտնուին. — Ինչպէս էական իմացքները, նոյնպէս անոնց գործել տուող սկզբունքները ի յայտ կուգան մտքի գործունէութեան վերլուծումին մէջ: Միտքը ինքն իր մէջ կը գտնէ իր սեփական օրէնքները, ինչպէս Ֆիզիքական օրէնքները կը գտնէ արտաքին իրողութեանց վերլուծումին մէջ: Որ եւ է տեղէ աւելի հոս, բացայայտ կերպով կը զանազանէ հանրականը պատահականէն, կ'ըմբռնէ անոր էութիւնը, եւ զայն կը զանազանէ այն ամէն բաներէն զորս չէ ինք. եւ այսպէս կը հաստատէ թէ մտապատկերներն իրարու հետ միացնող օրէնքները անջատ են նոյն այդ մտապատկերներէն: Կը զգայ թէ այդ օրէնքները պայման են իր գործունէութեանը կատարումին. կը զգայ թէ անոնք հարկաւոր են իրեն խորհելու համար, ինչպէս մկանները՝ քալելու համար: Խորհրդածութիւնն (= անդրադարձումն) է ուրեմն որ կը ճանչնայ կամ կը ծանուցանէ այդ օրէնքներուն կամ սկզբունքներուն հարկաւոր և հետեւապէս հանրական ըլլալը: Առեկնք սա նախադասութիւնը. այս քաղաքի քաղաքի շինուած է: Յայտնի է թէ՛ որպէսզի այս խօսքէն բան մը հասկցուի, պէտք է նախ՝ 1. որ մէն մի բառի իմաստը



անփոփոխ մնայ, ցորչափ բառը մտքիս մէջ է (սկզբ-  
բունք նոյնութեան). յետոյ պէտք է որ՝ 2. միտքը  
ձանչնայ թուղթը քուրջին միացնող կապը (սկզբունք  
գոյացութեան): Եթէ այս նախադասութեան վրայ ա-  
ւելցնենք սպազորութեան պիսի գործածուի, վախճանա-  
կան պատճառը նշանակած կ'ըլլանք. իսկ եթէ զայն  
պատրաստող թղթարարն ալ յիշենք, արդիւնարար  
պատճառն ևս նշանակած կ'ըլլանք:

Ը. Սկզբունքներու ծագումին խնդիրը. — Այս կամ  
այն ձևով, մանրամասնութեանց մէջ քիչ կամ շատ  
տարբեր, բայց յընդհանուրն համաձայն տեսութիւն-  
ներով բոլոր փելիստիաներն ընդունած են այս սկզբ-  
բունքներուն գոյութիւնը: Անհամաձայն են սա կէտին  
վրայ միայն թէ այս սկզբունքներն ինչ կերպով կը  
ծնին և ինչ կերպով կը կազմուին մտքին մէջ: Այս  
մասին յայտնուած կարծիքները, հոգեբանական տե-  
սակէտով, երկու ներհակ ենթադրութեանց կը վերա-  
ծուին:

1. Ի յառաջագունե ենթադրութիւն, որ կ'ընդու-  
նի թէ այդ սկզբունքներն փորձառութենէն առաջ են,  
եւ խորհուրդին բաղկացուցիչ օրէնքներն ըլլալով՝ ա-  
ռաջին անդրադարձութենէն իսկ անմիջապէս ետքը  
նշմարելի կ'ըլլան անոր, ուստի եւ են հարկաւոր եւ  
անփոփոխ:

2. Ի յենապունե ենթադրութիւն (կը կոչուի նաև  
փորձառական), որ կ'ընդունի թէ այդ սկզբունքներն  
ոչ այլ ինչ են եթէ ոչ ստացիկ կամ ժառանգական ու-  
նակութիւններ, զորս միտքը կը ստանայ այդ մտա-  
պատկերներուն բազմապատիկ կրկնումովը. ուրեմն  
այդ ունակութիւնները պատահական ու փոփոխելի են:

Առաջինէն աւելի բացատրական ըլլալուն համար,  
հաւանականագոյն պիտի ըլլար վերջին կարծիքն, եթէ  
սակայն մեզի կարենար ցոյց տալ նաեւ թէ ինչպէս  
նոյնութեան՝ պատճառականութեան ևայն սկզբունք-  
ները կրնան տակաւ առ տակաւ կազմուիլ փորձառու-  
թեամբ և ունակութեամբ: Ըստ այսմ Պէնի բանաձևը  
յառաջագունեան ենթադրութիւնը հերքած կ'ըլլայ,  
անոր տեղը միւսը միայն զնելով պարզապէս, վասն  
զի յառաջագունեան ենթադրութիւնը թէև չի բացա-  
տրեր թէ ինչպէս կը կազմուին սկզբունքները, այլ կը  
հաստատէ արդէն անոնց գոյութիւնը մտքին մէջ: Ոչ  
միայն բացատրութիւն մը չէ ան, այլ և մերժում ա-  
մէն բացատրութեան: Բացատրութիւնը միշտ նախըն-  
տրելի է: Տեսնենք ուրեմն թէ փորձառականութիւնը  
ի՞նչպէս կը բացատրէ այդ օրէնքներուն կազմութիւնը:

Թ. Փորձառականաց վարդապետութիւնը նոյնու-  
թեան սկզբունքին վրայ եւ հերժում. — Նոյնութեան  
սկզբունքը բացատրել ուղեղով, Հիւմ կ'ըսէ, թէ իր  
մը նոյն (identique) կը կոչենք ցորչափ յոյժ նշանակե-  
լի փոփոխութիւն մը չի կատարուիր անոր վրայ. այս-  
պէս նոյն է նաև՝ կայմեր ու պատեանը փոխուելէն  
վերջն ալ, կամ ցորչափ կը պահէ այն վախճանը որուն  
սահմանուած էր ի սկզբան այսպէս, գիւղի մը եկե-  
ղեցին, ուրիշ տեղի մը վրայ, ուրիշ ատաղձներով և  
նոր յատակագծով շինուելէն վերջ, կը մնայ նոյնը: —  
Ըսել է թէ, ըստ Հիւմի, նոյնութեան գաղտնիք ըս-  
ուած բան չկայ. բաւական է միայն զուգորդութիւն  
մ'ունենալ հին և նոր մտապատկերներուն միջև, իրա-  
ւունք ունենալու համար վերջինը նոյն կոչելու առա-  
ջինին հետ: Ահա այսպէս նոյնութեան օրէնքը կը վե-



բածուի զուգորդութեան օրէնքի և փորձառութեան, որմէ կը բղխի արդէն զուգորդութիւնը:

Բայց և այնպէս, դիւրին է համոզուիլ թէ փիլիսոսփային այս տեսութիւնը ոչ թէ բացատրութիւնն է նոյնութեան սկզբունքին, այլ անոր ուրացումը: Այլ է ըսել թէ նաև մը ամէն բանը փոխուելէն վերջ նոյն է տակաւին, և ա՛յլ կարծել զայն այնպէս: Յուցուած նոյնութիւնը ձևի և վախճանի նոյնութիւն է միայն, և ոչ թէ ամբողջական նոյնութիւն: Բաց աստի Հիւժ և բոլոր միւսներն ստիպուած չե՞ն միթէ խօսիլ՝ տըրամախոհել, արդ, ամէն խօսք ամէն տրամախոհում կ'ենթադրէ բառերուն իմաստներուն յարակայ նոյնութիւն մը, գոնէ խօսուած կամ տրամախոհուած միջոցին:

Ժ. Փորձառականաց վարդապետութիւնը պատճառականութեան ծագումին մասին. — Անցնինք պատճառականութեան սկզբունքին: Տեսանք (է. Դասին մէջ) թէ ի՞նչպէս, զուգորդութեան եւ բաղադրական պատկերներու շնորհիւ, մեր մտքին մէջ՝ ամէն խորհրդածութենէ առաջ՝ կրնար կազմուիլ տիեզերական սահմանականութեան եւ հետեւապէս տիեզերական պատճառականութեան մտապատկեր մը: Արդ, փորձառականութիւնը Ստուարտ Միլի բերնով կ'ըսէ թէ ամէն երևոյթի անպատճառ նախընթաց մը և հետեւորդ մը վերագրելու յատկաւորումին գիտակցութիւնը ուրիշ բան չէ եթէ ոչ պատճառականութեան սկզբունքին կամ օրէնքին գիտակցութիւնը ինքնին: Այդ օրէնքը հարկաւոր կ'երևի մեզի, վասնզի ունակութիւնը կը ստիպէ գմեզ իրարմէ չանջատել զուգորդեալ տարբերը, և հարկը ո՛չ այլ ինչ է, բայց եթէ ունակու-

թեան միջոցաւ անբաժանելի եղած զուգորդութիւնը: Այդ օրէնքը հանրական (= տիեզերական) կը թուի մեզի, վասնզի իր կազմութեան եղանակովն իսկ կը զեղչուին արդէն բոլոր այն տարբերութիւնները որոնք կրնային հակասել իրեն: Այս կերպով ահաւասիկ կը ծագի և կը կազմուի մեր մտաւոր օրէնքներուն հարկաւորութիւնն ու հանրականութիւնը: Միին կամ խորհրդաւոր ոչինչ ունի այդ ծագումը, վասնզի կը գտնուի փորձառութեան մէջ եւ կը բացատրուի զուգորդութեան օրէնքով:

ԺԱ. Բննադատում. — Երկու պատասխան ունինք Ստուարտ Միլի դէմ. 1. Ունակութիւնը կամաց կամաց կը հաստատուի. յամբարար, յաջորդական աճումներով. ընդհակառակն պատճառը արդիւնքին և արդիւնքը պատճառին միացնող կապը անմիջական է և յանկարծական. ու չենք կրնար մեր կեանքին մէջ յիշել պահ մը, ուր զայն ունեցած ըլլանք աւելի տկար վիճակով մը քան զոր ունինք այժմ: 2. Մանուկը իր իմացողութեան առաջին զարթումէն իսկ ետքը, ամէն բանի պատճառը կ'որոնէ, թէ և կարելի չէ որ անոր շատ սահմանափակ փորձառութիւնը իրեն տուած ըլլայ այնպիսի զօրաւոր ունակութիւններ, որոնց ազդեցութենէն չկարենայ ազատ մնալ:

ԺԲ. Սկզբունքներուն ծագումը, ըստ եղափոխական վարդապետութեան. — Այս վերջին առարկութիւնը զօրաւոր գտնելով Ստուարտ Միլի և սովորական փորձառականութեան դէմ, Հերպէրտ Սթենսըր պարտաւորուեցաւ այդ փորձառականութեան վրայ պատուաստել ենթադրութիւնը այն վարդապետութեան, որ կը պաշտ-



պանէ թէ մարդկային ցեղը անասնական ստորին ցեղերէ կը սերի, և որ կը կոչուի եղափոխականութիւն (évolutionisme): Ըստ կարծեաց այս փիլիսոփային, սկզբբունքները ստացիկ չեն, այլ բնածին են անհատին մէջ. ո՛չ թէ անհատն է զանոնք ստացողը՝ այլ ցեղը: Նորածին մանուկը կը ժառանգէ արդէն մաս մը իմացական այն մայր-գումարէն, զոր հաւաքած են անցեալ սերունդները և որոնց արտադրոյթն է իր ուղեղը. զարմանալի չէ ուրեմն թէ ինչպէս մանուկը իր իմացողութեան առաջին զարթումին մէջ իսկ կը ցուցնէ այդ սկզբունքներուն ու մասնաւորաբար պատճառականութեան սկզբունքին ստացութիւնը:

Ժ. Գ. ԲՆՆԱԳԱՏՈՒՄ. — Եղափոխումի վարդապետութեան յարակից բոլոր դժուարութիւնները մէկ կողմ դնելով, խնդիրը նկատի առնունք զայն ընդունողի մը պէս: — Սկզբունքին ցեղային ստացումը կրնայ բացատրել անոր հարկաւորութիւնն ու հանրականութիւնը: — Սա չափը միայն կրնայ բացատրել ան թէ ինչպէս հոգեբանօրէն ընդունակ ենք բանաձևելու այդ սկզբունքը, բայց ոչ թէ ինչպէս կրնանք զայն իբր ճշմարիտ ըմբռնել: Չի բացատրուիր մանաւանդ թէ ինչ է պատճառը որ չենք կրնար ենթադրել անոր չգոյութիւնը կամ սխալութիւնը: Արդարև, փորձառական ենթադրութեան մէջ (Ստուարդ Միլի տեսութիւնը ըլլայ այն կամ Հերպերտ Սբէնսըրի ճոխացեալ վարդապետութիւնը) կ'ենթադրուի թէ անհատին կամ ցեղին կեանքին մէջ եղած է վայրկեան մը, ուր մտային ունակութիւնը տակաւին անընկճելի չէր. այդ միջոցին տակաւին կարելի էր ժխտողաբար պատասխանել պատճառականութեան հարցումին: Արդ, չենք կարծեր որ

մտաւոր այդպիսի վիճակ մը գոյութիւն ունեցած ըլլայ երբեք: Չենք կարծեր թէ մարդ մը՝ որուն հարցուած ըլլալով թէ այս պատահարը կամ այս երևոյթը պատճառ մ'ունի՞, կրցած ըլլայ պատասխանել. Ո՛չ: — Հարցումը կրնայ չառաջարկուիլ, բայց առաջարկուելն վերջը պէտք է պատասխանուի անոր, և պատասխանուի հաստատական կերպով:

Բայ աստի, փորձառական ենթադրութեան մէջ այդ մտաւոր վիճակը ընդունակ է անհետանալու, վասնզի փորձառութիւնը կրնայ եղծել իր շինածը, ունակութիւն մը կրնայ ջնջուիլ հակառակ ունակութենէ մը: Կարելի պիտի ըլլայ երևակայել այն ատեն վայրկեան մը, ուր ապագայի միտքերը ժխտողաբար պիտի կարենան պատասխանել պատճառականութեան հարցումին: Բայց զիտենք վստահապէս թէ անկարելի է երևակայել մտքի այդպիսի վիճակ մը: Ուրեմն պատճառականութեան սկզբունքը լոկ մտքի անընկճելի ունակութիւն մը չէ, այլ նաև ճշմարիտ ու բացայայտ պէտք մըն է անիկա, ինչ որ պէտք մըն է չ'ընդունիր աստիճանաւորում, որ եւ հետեւաբար չ'ընդունիր յամբ ու յաջորդական կազմութիւն: Ուրեմն, յառաջադուենան դպրոցի ըսածին պէս, մեր միտքին մէջ պատճառականութեան յարաբերութիւն մը զգացածնուս պէս, կ'իմանանք նաեւ այդ յարաբերութեան հարկաւորութիւնն ու հանրականութիւնը:

Հոս ալ, ինչպէս ընդհանուր գաղափարին կազմութեանը մէջ, տարր մը կայ, որ չի վերածուիր զուտ փորձառութեան, և որ անոր հետ սերտիւ խառնուած ըլլալով հանդերձ, բացորոշապէս կը զանազանուի անկէց և զմեզ կը ստիպէ մեր միտքին մէջ առանձին տեղ մը շնորհելու՝ իր մտապատկերներուն կազմութեանը մէջ:



## Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Առաջին սկզբունքները հանրական և հարկաւոր դատումներ են, որոնք մտածումին օրէնքն են նոյն իսկ:

Բ. — Նոյնութեան սկզբունքը մտածումին հնարաւորութիւնը պայմանաւորող սկզբունք է: Ասիկա սապէս կը բանաձևուի. *նոյնը նոյն է: Անիկա ծնունդ կուտայ հակասութեան և արտաքսեալ երրորդի սկզբունքին:*

Գ. — Բանին սկզբունքը կը պայմանաւորէ մտածումին իրականութիւնը: Անիկա սապէս կը բանաձևուի. *ոչինչ զոչ չի առանց բաւարար պատճառի:*

Դ. Ե. Զ. — Բաւարար պատճառը երեք էական պատճառներու կը տարբազարուի. վախճանական պատճառ, արդիւնարար պատճառ և գոյացութիւն: Ատիկէ յառաջ կուգան բանի սկզբունքէն ածանցուած երեք սկզբունքները. վախճանականութեան սկզբունքը՝ առեւտրային վախճան մը ունի. պատճառականութեան սկզբունքը՝ առեւտրային պատճառ մը ունի. գոյացութեան սկզբունքը՝ առեւտրային իր նկատմամբ ունի:

Է. — Մտածումը վերլուծելով է որ կը գտնենք անոր օրէնքները, ինչպէս ֆիզիկական օրէնքները վերլուծելով է որ կը գտնուին ֆիզիկական օրէնքները:

Ը. — Հարց եղած է թէ ի՞նչ է այս սկզբունքներուն ծագումը: Դպրոց մը պնդած է թէ սկզբունքները քիչ քիչ կը կազմուին, ունակութեան շնորհիւ. փորձառապաշտ դպրոցն է ան. ուրիշ դպրոց մը կը պաշտպանէ այն կարծիքը թէ սկզբունքները մտածումին ընդհանուր օրէնքներ են. բանապաշտ կամ յառաջագունեան դպրոցն է ան:

Թ. — Հիւմ կը կարծէ փորձառութեամբ և զուգորդութեամբ բացատրել նոյնութեան ծանօթոյքն ու սկզբունքը. բայց այդ կերպով կ'աղարտէ ու կը փճացնէ միայն զայն:

Ճ. — Ըստ Հիւմի և իր յաջորդներուն, պատճառականութեան սկզբունքը կրնար գալ՝ ունակութեան շնորհիւ անբաժան դարձած զուգորդութենէ մըն ալ:

ԺԱ. — Բայց մանուկները այդպիսի ունակութիւններու տիրանալու պատեհութիւն և ատեն չեն ունեցած, և սակայն ունին այդ սկզբունքները:

ԺԲ. — Հէրպերտ Սպենսըր կ'ընդունի այդ առարկութիւնը և կ'ըսէ թէ սկզբունքը բնածին է անհատին մէջ, բայց ցեղին միջոցաւ ստացուած է:

ԺԳ. — Բայց այն ատեն եղած է ատեն մը՝ ուր սկզբունքը հարկաւոր չէր, և պիտի ըլլայ նաև ատեն մը ուր ա՛լ պիտի չըլլայ անիկա հարկաւոր: Անկարելի է երեւկայել այս պահերը: Ուրեմն սկզբունքները փորձառութեան չեն կրնար վերածուիլ: Անոնք ի յառաջագունէ տարր մը ունին իրենց մէջ:



Գ Ա Ս Ժ Ը .

Յ Ի Շ Ո Ղ Ո Ի Թ Ի Ի Ն

ԲՈՂԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— Ա. Սկզբունքներուն հետեւանքները.— Բ. Յուշին պայմանները.— Գ. Վերյիշոււմը եւ յուշը.— Դ. Անցեալի դատումին շարժառիթները.— Ե. Տեղականացոււմը անցեալին մէջ.— Զ. Լաւ յիշողութեան մը պայմանները.— Է. Յուշարուեստը.— Ը. Յիշողութեան հիւանդութիւնները:

Ա. Սկզբունքներուն հետեւանքները.— Վերեւ խօսեցանք թէ ինչպէս ի յայտ կուգան այն օրէնքները, որոնց համեմատ կը խորհինք: Այժմ պէտք է բացատրենք թէ ինչպէս այդ օրէնքները, պատշաճելով մեր փորձառական և զգացողական ստացութիւններուն, կը կազմեն մեր դրական ծանօթութեանց զանազան դասակարգերը, զանազան դատումները, որոնցմով մեր գիտակցական երեւոյթները կը վերագրենք մեր անձին, արտաքին աշխարհի և կամ Աստուծոյ:

Մեր անձին վերագրած մեր գիտակցական երեւոյթներուն մէջ՝ կա՛ն որ ներկայ կ'երևին մեզի, կա՛ն դարձեալ որ անցեալի մը հեռաւորութեան մէջէն կ'երևին մեզի: Այդ վերջիններն են ահա որ կը բաղկացնեն յիշատակները և կը վերաբերին յիշողութեան: Նախ ասոնք պիտի ուսումնասիրենք:

Արդարև ներկայ վիճակներ կան, որոնք՝ սակայն՝ կը զգանք թէ անցեալ են: Երբ, զոր օրինակ, կ'ըսեմ թէ «երէկ պտոյտի գացի», ներկայապէս պտոյտին պատկերը ունիմ մտքիս մէջ, այդ ներկայ պատկերին գիտակցութիւնը ունիմ. միայն այսչափ չէ, այլ նաեւ կը դատեմ թէ այդ պատկերն սկզբնական չէ, այլ

անհետացած անցեալ մը կը վերարտադրէ, զայն կը ճանչնամ ես իբր անցեալ: Մտային ներկայ վիճակի մը իբր անցեալ վերծանութիւնն է ահա յուշի կամ յիշատակ ըսուածը:

Բ. Յիշատակին պայմանները.— Եթէ վերուծենք յիշատակը պիտի տեսնենք թէ հետեւեալ պայմաններն ունի ան. 1. Գիտակցական յառաջագոյն եղանակաւորումներու պահպանումը էակին մէջ (Տես Դաս Ե. յօդ. Դ. Ե.), եթէ պտոյտին պատկերը պահուած չըլլար ու է է կերպով մը, պիտի չկարենար վերադառնալ: 2. Մոռացում, այսինքն գիտակցութեանս դաշտէն անոր աւելի կամ նուազ երկարատեւ անհետացումը: Եթէ, ինչ որ անհնարին է, երէկի պտոյտը չմոռնայի բնաւ, գիտակցութեանս դաշտը ամրապէս գըրաւուած պիտի մնար անով, և ես միշտ պիտի պըտըտէի զաղափարապէս. ներկայ ժամուս պիտի չկարենայի պտըտած ըլլալս յիշել, վասնզի պիտի զգայի որ տակաւին կը պտըտիմ ի գաղափարի: 3. Հին վիճակին վերակոչումը շնորհիւ զուգորդութեան մեքենականութեան: 4. Յիշատակը, զոր կը յօրինէ մտքին այն գործողութիւնը, որ իբր հին կը ճանչնայ վերակոչեալ վիճակը: Առանց այդ դատումին երեւակայական յիշողութեան՝ վերյիշողութիւն պիտի կենար և ո՛չ թէ իմացական յիշողութիւն՝ յիշատակ:

Գ. Վերյիշուլիւն եւ Յիշատակ.— Պէտք է տարբերել երեւակայական յիշողութիւնը, որ զուտ կարեւոր է, և զուգորդութեան մեքենականութեան օգնութեամբ հին վիճակներուն վերերեւելն է միայն, իմացական յիշողութիւնէն կամ յիշատակէն: Երեւա-



կայական յիշողութիւնը լոկ վերջիշում միայն կուտայ, որուն մէջ կը վերերեւի անցեալը, առանց ինչ ըլլալը ճանչցուելու. իմացական յիշողութիւնը անոր վրայ կ'աւելցնէ վերձանութեան բացորոշ դատում մը, եւ վերջիշումները յիշատակի կը փոխարկէ: Վերարտադրել հեղինակի մը տողերը, առանց կասկածելու խիթէ անգամ մը կարդացած ենք զանոնք, վերջիշում է միայն, վստահ ըլլալ թէ կարդացած ենք զանոնք յիշատակ է:

Դ. Անցեալին դատումին շարժառիթները. — Բայց որպէսզի կարենանք դատել թէ այսինչ ներկայ վիճակը հին վիճակ մըն է և ոչ թէ ճշմարտապէս սկզբնական, պէտք է որ ունենանք շարժառիթ մը կամ պատճառ մը:

Անցեալին դատումին շարժառիթը ի յայտ բերելու համար՝ պէտք է զատորոշել երեք պարագաներ:

1. Վերջիշուած վիճակը իրեն հետ կը կրէ, իբրև լրացուցիչ տարր, անցեալին նշանը: Աշխատութիւն մը, ընթերցում մը, պտոյտ մը կամ տօն մը լրացնելնէս վերջ յաճախ կ'ըսենք. եղաւ լմնցաւ (= անցաւ): Այսպէս, անցեալին գաղափարը կը խառնենք այն վիճակներուն մէջ: Երբ այդ վիճակները վերագառնան, իրենց հետ պիտի բերեն անցեալին նկարագիրը: Անոնց գէպի անցեալը նահանջումը պիտի կատարուին քնարերաբար:

2. Վերջիշուած վիճակը կը տկարանայ ներկայ վիճակներու անուղղակի հակապատկերովը: Տեսողական և հպողական պատկերներու պարագան է ասի՝ — Նշանակենք նախ թէ վերջիշեալ վիճակները պատկերներ են: Հետեաբար տկար վիճակներ, որոնք զվ-

տակցութեան մէջ կը մարտնչին զգայութիւններուն դէմ, որոնք զօրաւոր վիճակներ են: Արդ, յաճախ կը պատահի որ տկար վիճակներն ու զօրաւոր վիճակները կը հակադիպին իրարու, այնպէս որ չենք կրնար ընդունիլ միահաղոյն գոյութիւնը այն առարկաներուն, որոնց կը վերաբերին անոնք: Զոր օրինակ. սա վայրկեանիս, գիտակցութեանս մէջ ունիմ Նոտր-Տամի աշտարակներուն տեսքը, տկար վիճակով, և այս գըրած թուղթիս տեսքը զօրաւոր վիճակով: Աշտարակներուն պատկերին մէջէն կը տեսնեմ թուղթս, եւ թուղթին մէջէն կամ ետին բան մը չեմ տեսներ: Բայց Նոտր-Տամի աշտարակները չեն յարմարիլ, իմ տեսած միւս առարկաներուն շրջանակին մէջ չեն կրնար մըտնել. չեմ կրնար դպչիլ իրենց, կամ աշխատասենեակիս մէջ տեղ մը զետեղել զանոնք. ըսել է թէ անոնց տկար տեսքը հակապատկեր կը շինէ իմ բոլոր միւս զօրաւոր վիճակներուն դէմ. ուրեմն միւսնոյն բնութեամբ պատճառ մը չունի ան: Արդ, զօրաւոր վիճակները ներկայ են և ես կրնամ զանոնք վերագրել ներկայ առարկաներու. ուրեմն տկար վիճակը չի կրնար ընծայուիլ ներկայ առարկայի մը: Բայց այդ վիճակն ալ պէտք է ունենայ իրեն պատճառ մը. արդ, քանի որ արտաքին ներկային մէջ չունի զայն, պիտի ունենայ ներքին անցեալին մէջ: Ասիկա բացայայտ է տեսողական և տարածական վիճակներու համար:

3. Վերջիշեալ վիճակը կը տկարանայ անուղղակի հակապատկերով: Դիցուք թէ նուազի մը վերջիշում մը ունեցած ատեննիս, միւսնոյն ատեն լսենք նաև ուրիշ բաղմամբիւ ձայներ. յայտնի է թէ այդ լըսուած ձայներուն ամենէն զօրաւորներն անգամ, զոր օրինակ, սաստիկ աղմուկներ, բարձր խօսուածքներ,



կառքի թաւալուսներ, իրենք միայնակ պիտի չկրնան վտարել անցեալին մէջ՝ նուազային վերջիչեալ այդ վիճակները, որոնք լսողական տկար վիճակներ են: Բայց գիտենք թէ ոչ մէկ վիճակ առանձին չէ, այլ միշտ մաս կը կազմէ հոյլի մը ուր բոլոր վիճակներն իրենց բաժինն ունին: Նուազին լսողութեան պատկերին զուգորդ են տեսողական պատկերներ ալ. օրինակ՝ հանդիսասրահին և երաժշտախումբին պատկերները, ևն: Այս վերջին պատկերները, որոնք, ինչպէս տեսանք նախորդ հատուածին մէջ, կը տկարանան տեսողական զօրաւոր վիճակներու հակապատկերով, իրենց հետ կը տկարացնեն նաև լսողական պատկերներն ալ: Հոյլին լսողական տարրերը բաղդակից կ'ըլլան ամբողջ հոյլին, որուն մասերն են: Եթէ զուտ ժամանակաւոր վիճակները չեն զուգորդուած զիրենք տկարացնող վիճակներու, չեն մղուիր դէպի անցեալը, և միշտ ներկայ կը մնան, իբրև սկզբնական վիճակներ. գրական վերջիչումներու, տեսանելիքի պատկերներու և գաղափարային յիշատակներու պարագան է աս:

Այսպէս դէպի անցեալը կը մղուին գիտակցական ինչ ինչ վիճակներ, որոնք պատճառականութեան սկզբունքին զօրութեամբ չեն կրնար մեր ներկային մէջ գտնել իրենց ամբողջական բացատրութիւնը:

Ե. Անցեալին մեզ տեսնողութիւնը. — վերջիչումով վիճակը միմիայն դէպի տարտամ անցեալ մը մղելով չենք շատանար. յաճախագոյնս տեղ մը կը գնենք, այսինքն աւելի կամ նուազ ճշգրիտ թուականով մը կը նշանադրենք զանոնք: Ի՞նչպէս կ'ըլլայ ասիկա: Նըկատենք նախ թէ յիշատակներ կան՝ որոնք իրենց հետ կը բերեն ոչ միայն հնութեան նկարագիրը, այլ նաև

իրենց թուականը անցեալին մէջ: Մեր կեանքին կարևոր դիպուածները այսպէս թուականուած են, և կը ձևացնեն նշանացիցեր, որոնք ժամանակի կէտեր կը հաստատեն ժամանակին մէջ: Յիշատակ մը տեղաւորելու համար պէտք է ուրեմն զայն սահեցնել ժամանակին գծին վրայ, մինչև որ գտնէ անիկա իր բնական տեղը երկու նշանացիցերու միջև: Այդ յիշատակը ճշգրիտ համար կարելի է կոչել նաև այն միւս յիշատակները, որոնք կրնան ծառայել այդ յիշատակը ամբողջացնելու, և որոնք, իրենց հետ կցորդ եղող տեղութեան ծանօթութիւններովը, կրնան յայտնել անոր դիրքը:

Ձոր օրինակ, կրնայ ճշգրտուել ի Բարիզ առաջին ճամբորդութեան մը յիշատակը, վասնզի անիկա եղած է անմիջապէս ետքը այն քննութենէն որ այսինչ թուականը կը կրէ: Կրնանք գտնել ճշգրիտ թուականը, վասնզի արձակուրդի միջոցին կատարուեցան, վասնզի արձակուրդի վերջերը ուրիշ տեղ գացեր էինք և սկիզբները հիւանդ էինք: Ուրեմն 18... տարուան Օգոստոսի վերջերը կամ Սեպտեմբերի սկիզբները պէտք է տեղի ունեցած ըլլայ այդ ճամբորդութիւնը:

Զ. Լաւ յիշողութեան մը յսկութիւնները. — Լաւ յիշողութեան մը յատկութիւններն են 1. մտավարժութիւն, այսինքն բան մը դիւրաւ սովորիլ. 2. լաւ միտք պահել. 3. արագ միտք բերել: Յայտնի է թէ որքան աւելի դիւրաւ միտք պահէ մարդ իր տեսածը եւ լսածը, ա՛յնքան աւելի հաստատուն կերպով կը պահէ, շուտով միտք կը բերէ և աղէկ կը յիշէ զայն: Բացառապէս բարեբաստ պարագաներէ զատ, յիշողութեան ամրութիւնը ուղիղ չի համեմատիր իր դիւրութեանը հետ: Ընդհանրապէս աղէկ միտք կը պա-



հենք այն բաները, որոնք ճիգ մը կը պահանջեն, ու ամբողջիւնը միշտ համեմատական է ուշադրութեան ուժեղութեան հետ:

Յիշողութիւնը կրնայ ըլլալ երեակայական, տեսողական, հնչական կամ բառական. այս վերջին պարագային՝ գաղափարները բառերով կը սորվուին. այս տեսակ յիշողութիւնները զօրեղ կ'ըլլան, բայց ընդհանրապէս նուազ հաստատուն. կրնայ ըլլալ նաև գաղափարային. այն ատեն բառերը գաղափարներով և գաղափարի կապակցութեամբ կը սորվուին: Յիշողութեան այս վերջին տեսակը յամբ է թէև, բայց շատ դիմացկուն է: Տղաքներն ընդհանրապէս յիշողութեան առաջին տեսակն ունին քան երկրորդը: Անոնք պատկերէն բառին և բառէն գաղափարին կ'երթան:

Է. Յուշարուեստ. — Այսպէս կը կոչուի յիշողութենէն հնարաւոր օգուտը քաղելու ծառայող արուեստը: Յիշողութիւնը, ունակութիւն մը ըլլալով, ընդունակ է զարգացման. իսկ այդ ունակութիւնը մտալին ունակութիւն մը ըլլալով, կը զարգանայ անսահմանօրէն: Յիշողութիւնը զարգացնելու լաւագոյն միջոցը, լաւագոյն յուշարուեստը, վարժութիւնն է: Պէտք է վարժուիլ կամ վարժեցնել աշակերտները շատ արագ կարգալու և արտասանելու, և այսպէս նախ տող մը, յետոյ երկու տող, և ապա երեք տող կարդալէն վերջ, կը զարգանայ սորվելու դիւրութիւնը. այսպէս կը վարժուին քիչ միջոցի մէջ ուշադրութեան զօրաւոր մթերք մը ունենալ: Բայց ամուր միտք պահել կարենալու համար, ոչ մէկ բան այնքան օգտակար է, որքան ամբողջ ուշադրութիւնը կեդրոնացնել սովորուած բանին վրայ: Արագ միտք բերել վարժեցնելու

համար պէտք է անակնկալ հարցումներ ընել, ստիպելով որ իսկոյն պատասխանուի: Գայով թուականներ, իրողութիւններ և կանոններ միտք պահելու արուեստական միջոցներուն, յուշածական տղերուն պէս՝ զորս հին մանկավարժութիւնը շատ կը գործածէր, կրնան օգտակար ըլլալ անոնք մասնաւոր պարագաներու մէջ. բայց որովհետև զուտ փորձառական են անոնք, իրենց գործածութիւնը կրնայ վնասակար ըլլալ. ճշմարիտ յիշողական արուեստին հետ բնաւ յարաբերութիւն չունին անոնք:


Ը. Յիշողութեան հիւանդութիւնները. — Մտացումը կրնայ անհետացնել, աւելի կամ նուազ երկար ատեն, մեր կեանքին այս կամ այն շրջանին մէջ ըստացուած յիշատակ մը կամ կարգ մը յիշատակներ: Բայց կը պատահի նաև որ ամբողջ յիշատակի դասակարգեր անհետանան, կամ նոյն իսկ գոյութեան ամբողջական շրջաններու յիշատակներ: Այս անկանոնութիւնները յիշողութեան հիւանդութիւններ են և կը կոչուին յուշարախորթիւն: Մասնական կ'ըլլայ յուշաթափութիւնը, եթէ անհետացումները յիշատակի դասակարգեր են միայն: Այսպէս, Անգլիացի բժիշկ մը՝ Հոլլանտ, Հարցի հանքերը այցելութեան ելած միջոցին օր մը յանկարծ կորսնցուց իր գերմաներէնի տեղեկութիւնը եւ դարմանուելէ վերջ միայն կրցաւ գտնել զայն:

Յուշաթափութիւնը ամբողջական կ'ըլլայ երբ բուրովին կ'անհետանան կեանքի ժամանակամասի մը յիշատակներու դասակարգերը: Զոր օր. կին մը գետ մը կ'իջնայ, և շնչահեղձութիւն ունենալէ վերջ կը կորսնցնէ իր նախկին կեանքի ամբողջական ծանօթութիւնը:




Ամբողջական յուշաթափութիւնները երբեմն փոփոխակի տեղի կ'ունենան, այն ատեն կը կոչուին պարբերական յուշաթափութիւններ: Իժիշկ մը գիտած է թէ կլին մը երկու փոփոխ վիճակ ունէր, միոյն մէջ զուարթ էր նա և կը յիշէր իր ամբողջ կեանքը, միւսին մէջ՝ տխուր, և իր տխրական վիճակները միայն կրնա՞ր յիշել:

Առաջին վիճակին մէջ անոր կեանքը կարելի է այսպէս մտապատկերել




Ձեւ 9

Երկրորդ վիճակին մէջ, այսպէս




Ձեւ 10

Ուրիշ տիկին մըն ալ, ըստ տեղեկութեան ամերիկացի բժիշկի մը, իր ամբողջ կեանքին յիշատակը կորսնցնելէ վերջ, շարունակեց ապրիլ ժամանակ մըն ալ. յետոյ կորսնցուց այս վերջին ժամանակին յիշատակը, ի փոխարէն գտնելով առաջին ժամանակամասին յիշատակները: Այսպէս երկու անջատ և իրարու անհաղորդ կեանքեր, կամ կենցաղներ ունէր անիկա՞ր: Առաջին վիճակը կրնայ այսպէս պատկերացուիլ՝



Ձեւ 11

Իսկ երկրորդը՝ այսպէս



Ձեւ 12

Երկրորդ վիճակին պայմանները կը լրացնեն առաջին վիճակին թերի թողած պայմանները: Մէկ վիճակէն միւսը, նկարագիրն ու սովորութիւնները կը փոխուին:

Հաստատուած են նաեւ այնպիսի պարագաներ, ուր յիշողութեան գործունէութիւնը ծայրայեղ աստիճան մը ունեցած է. այդ վիճակները կարելի է կոչել Գերյուշութիւն: Իբր օրինակ կրնայ ծառայել Ե. Դասի հինգերորդ յօդուածին մէջ յիշուածը:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա. — Զգայութիւններուն, զգացումներուն և պատկերներուն պատշաճեցուող սկզբունքները կը մղեն զմեզ մեր գիտակցական երեոյթներն վերագրել էակներու: Անոնցմէ մեր անձին վերագրածներնուս մէջ կան այսպիսիներ զորս անցեալ կը նկատենք և կը յիշենք զանոնք:

Բ. — Յիշատակին պայմաններն են, 1. հին վիճակին պահպանումը. 2. անոր մասնաւորումը. 3. աւոր վերերեումը. 4. այն գործողութիւնը որով միտքը իբր հին կը ճանչնայ վերակազմուած վիճակը եւ զայն անցեալին մէջ կը հեռացնէ:

Գ. — Կարգ մը վիճակներու այսպէս դէպի անցեալը հեռացուելուն շարժառիթներն են, 1. նոյն ինքն բնութիւնը այդ վիճակներէն ոմանց, որոնք իրենց հետ կը




բերեն անցեալին նկարագիրը. 2. կարգ մը ուրիշ վիճակներուն ուղղակի հակադիպութիւնը մեր զօրեղ վիճակներուն հետ. 3. անուղղակի հակադիպութիւնը անոնց, որոնք մեր զօրեղ վիճակներուն հետ կը մնան, իրենց հետ ուղղակի հակադիպող վիճակներուն հետ ունեցած կապակցութեան հետեւանքով:

Դ.— Յիշատակ մը անցեալին մէջ տեղաւորելու համար, զայն կը սահեցնենք ժամանակի գիծին վրայ, մինչև որ շրջանակին մէջ մտնէ կարգ մը այն յիշատակներուն, որոնք ինքնին թուականներու կապուած են արդէն, և այդ կերպով նշանացիցեր կը ձեւացնեն անցեալին մէջ:

Ե.— Լաւ յիշողութեան մը յատկութիւններն են, 1. գիւրաւ միտք առնել, 2. լաւ միտք պահել, 3. արագ միտք բերել:

2. Յուշարուեստը յիշողութիւնը զարգացնելու արուեստն է: Մտառութիւնը գիւրացնելուն և յուշածութիւնը արագցնելուն մէջ կը կայանայ ան: Արուեստական միջոցները կրնան օգտակար ըլլալ կարգ մը պարագաներու մէջ. բայց եթէ ընդարձակ սահմանի մէջ գործածուին, վտանգաւոր կ'ըլլան:

Ե.— Յիշողութիւնը ընդունակ է զանազան հիւանդութեանց, որոնք են. մասնաւոր յուշաթափութիւն, ամբողջական յուշաթափութիւն, պարբերական յուշաթափութիւն, և գերյուշութիւն:



Գ Ա Ս Ժ Թ.

ՍԵՓԱԿԱՆ ՄԱՐՄՆՈՅՆ ԸՄԲՈՆՈՒՄԸ

ԲՈՎԱՆԳՈՒԿՈՒԹԻՒՆ.— Իճնչպէս պէ՛տք է դնել հարցը.— Բ. Զգայութիւններուն սեղականացումը.— Գ. Ռէյ Ռէժիսի նկատառութիւնը.— Դ. Մարմինի գիտակցական կառուցումը.— Ե. Ասլախին կազմութիւնը.— Զ. Ժուճոյի սեսութիւնը եւ պատասխաններ:

Ա. Իճնչպէս դնել հարցը.— Գիտակցութեան միջոցաւ՝ անմիջաբար կ'ըմբռնենք մեր մարմինը, թէ միւս արտաքին մարմիններուն պէս զայն տրամախոհումով կը ճանչնանք: Եթէ գիտակցութեամբ կ'ըմբռնենք, ըսել է թէ մեր եսին մտապատկերին մէկ տարրն է մեր մարմինը. իսկ եթէ տրամախոհումով կը ճանչնանք զայն, այն ատեն հարկ է որ օտար մը եղած ըլլայ եսէն, եւ, ինչպէս կ'ըսէր Ժուճրուա, « Եսին յարած նիւթին մէկ մասը միայն »: Պէտք է ուրեմն բացատրել թէ ինչպէս մենք մեզի կը վերագրենք այդ մարմինը, մինչդեռ չենք կրնար մեզի վերագրել զմեզ շրջապատող միւս մարմինները:

Բայց ասիկա խնդրոյն մէկ բանաձեւն է միայն, այնպէս որ կրնանք զայն ձեւափոխել ուրիշ կերպի մը: Այսպէս, նոյն հարցումն ըրած պիտի ըլլանք, ըսելով թէ ինչպէ՞ս կը տեղականացնենք մեր զգայութիւնները. այսինքն ինչպէ՞ս կ'ըլլայ որ մեր զգայութիւնները աւելի այս քան այն գործարանին մէջ կը տեղաւորենք. ինչպէ՞ս կ'ըլլայ զոր օր. որ կ'ըսեմ թէ գրիչս մասներուս ծայրովը կը բռնեմ, կամ ոտքս տախտակամածին կը դպչի, ևն. մինչդեռ այդ երկու զգայութիւններն ալ եսին մէջ նոյն իսկ կը զգացուին: Յայտ-



նի է թէ երկու հարցումները յարակից են իրարու: Քանի որ մարմինը իր գործարաններուն ամբողջութիւնն է միայն և ոչ այլ ինչ, եթէ զգայութիւնները ամբողջաբար եւ ինքնաբերաբար կը տեղականանան գործարաններուն մէջ, մարմինը անմիջաբար կ'ըմբռնուի. եթէ զգայութիւնները մտային աշխատանքէ մը, աւելի կամ նուազ երկար տրամախոհումէ մը վերջ միայն կը տեղականանան, մարմինը ոչ թէ ըմբռնուած այլ եզրակացուած կ'ըլլայ, ո՛չ թէ անմիջաբար ըզգացուած՝ այլ յօրինուած կ'ըլլայ: Փնտռենք ուրեմն թէ ի՞նչպէս կը տեղականանան մեր զգայութիւնները:

Բ. Զգայութեանց տեղականացումը. — Բազմաթիւ հոգեբաններ կ'ըսեն թէ զուգորդութեամբ կը կատարուի տեղականացումը: Նախ, շատ նշանակելի իրողութիւն մըն է որ, կ'ըսեն անոնք, երբ ձեռքերնիս սեղանի մը վրայ կը պտտցնենք, մատներնուս ծայրին վրայ շօշափական միակ զգայութիւն մը կ'իմանանք, մինչդեռ երբ ձեռքերնիս պտտցնենք մեր մարմինին վրայ կրկնակ զգայութիւն մը կ'իմանանք, նախ ձեռքերնուս մէջ և յետոյ մարմինին շօշափուած մասին վրայ: Այսպէս իրարմէ կը զանազանենք այն մտապատկերները, որոնց մէջ պարզ զգայութիւն մը կը գտնենք, և այն մտապատկերները՝ որոնց մէջ երկու զգայութիւններ իրարու կը հանդիպին. այս վերջին զգայութիւնները մասնաւորաբար կը վերաբերին մեզի և կը ծառայեն միւսները տեղականացնելու:

Բայց կրկնակ զգայութիւնը չունի ո՛րևէ բացառիկ առաւելութիւն, վասնզի կ'ենթադրէ միայն, ինչ որ արդէն կը կարծէինք թէ պիտի արտադրէ. ըսել կ'ուզենք՝ տեղականացումը: Արդարև, եթէ շօշափա-

կան զգայութիւնը իրեն հետ չի բերեր տեղականացում մը կամ յատկացուցում մը, զուր տեղը կը կրկնուի. ո՛չ կը յատկացուի և ո՛չ ալ կը տեղականանայ: Եթէ առաջուց չզիտնայի թէ ինծի կը վերաբերին թեալ ու մատներս, և թէ անոնք միջոցին մէջ են, թէև սեղանին դպած ատեննին զգացածէս տարբեր բան մը պիտի զգայի, բայց պիտի չկրնայի ո՛չ ինծի սեփականել և ո՛չ ալ տեղականացնել այդ զգայութիւններէն մին աւելի քան միւսը:

Գ. Ռեյ Ռեթիսի դիտողութիւնը. — ԺԸ. դարուն Մոնթէլիէցի բժիշկ մը, Ռէյ Ռէճիս, դիտողութիւն մը ըրած է որ իրմէ վերջն ալ հաստատուած է բազմիցս, և որ բաւական լոյս կը սփռէ խնդրոյն վրայ: Կիսանդամալոյծ մը, մարմնոյն շարժել չկրցած կողմին վրայ խայթուած ք մը ընդունած ատեն, կը զգար խայթուածքը և կրնար տեղականացնել զայն եթէ տեսնէր մարմնին ո՛ր կէտին խայթուելը, իսկ եթէ չտեսնէր՝ չէր կրնար տեղականացնել զայն: Ինչո՞ւ համար է ուրեմն որ առողջ անձինք կրնան տեղականացնել ո՛րևէ խայթուածք, առանց իսկ տեսնելու զայն: Վասնզի ունին Ռէյ Ռէթիսի կիսանդամալոյծին չունեցածը, շարժիչ կարողութիւնը, ներքին շօշափական զգացութիւնը որ կը համապատասխանէ մկաններու կծկումին, ի մի բան՝ մկանային զգայութիւնը: Ուրեմն մկանային զգայութիւնները բաւական են տեղականացնելու համար զգայութիւնները ու դժուարին չէ հասկնալ թէ ինչպէս կը կատարուի ասիկա:

Դ. Մարմինին գիսակցական կառուցումը. — Տղուն կատարած մէն մի շարժումը յառաջ կը բերէ մը-



կանային զգայութիւն մը, որ կը տարբերի շարժող մկանին համեմատ: Երբ տղան իր գլուխը կը շարժէ տարբեր զգայութիւն կ'ունենայ թեւ շարժած ատեն ունեցածէն: Երբ թեւը շարժէ՝ տարբեր զգայութիւն կ'ունենայ ոտքը շարժած ատեն ունեցածէն: Նոյնպէս, տարբեր բան մը կը զգայ շրթունքները շարժած միջոցին, եւ տարբեր՝ այտերը ունեցուցած ատենը. տարբեր՝ բազուկը շարժած ատենը, ու տարբեր՝ ձեռքը կամ դաստակը շարժած ատենը: Զանազան զգայութիւնները իրարմէ տարբեր կերպով, առանձնաբար, կ'ըզգացուին. և երբ, միեւնոյն ժամանակի մէջ բազմութեամբ տեղի կ'ունենան, ինչ որ սովորական է, կ'արտաքնանան և միջոցին մէջ կէտեր կը նշանակեն: Ուրեմն կը կազմուի միջոց մը՝ որուն սահմանակէտերն զգայութիւնները կ'ըլլան: Ըսել է թէ զգայութիւնները իրենց հետ կը բերեն իրենց անմիջական տեղականացումը. գիտակցական վիճակներու օգնութեամբ այսպէս ըմբռնուած մարմինը չունի ո՛չ հաստատուն զատութիւններ և ո՛չ շարայարեալ տարածութիւն: Պարզ երկրաչափական ձևի մը բնութիւնն ունի: Անշուշտ մարմին մըն է. եսին յարած միջոցային բազմաութութիւն մը, բայց մարմին մը՝ որ չունի հաստատուն զատութիւններ, մարմին մը՝ անորոշապէս նուազուկամ ծաւալուն:

Ե. Ասլաաներուն կազմութիւնը. — Շօշափական արտաքին զգայութիւն մը գալուն պէս՝ արտաքին շօշափելիքը կ'արթնցնէ ներքին և մկանային շօշափելիքը, ու կը տեղականանայ անով. յետոյ մարմինին սահմանները կրկնակ զգայութեամբ կը ճանչցուին, ու մարմինը, այսպէս, կը սահմանագծուի և կը ճշգրտուի:

եւ ահա այն ատեն կը կազմուի Թէնի շօշափական ստլաս կոչածը:

Ապա տեսողութեան շնորհիւ կը կազմուի տեսողական ատլասը, մեր մարմինին տեսողական մտապատկերը: Յետոյ ապա անուններով կ'որոշենք այդ մարմինին իւրաքանչիւր մասը, այնպէս որ երբ բան մը կը հպի մեզի՝ ոչ միայն կը զգանք հպուած տեղը, այլ նաև տեսողաբար կ'երևակայենք հպուած մասը, և զայն կ'անուանակոչենք, և այլն:

Ծանօթ իրողութիւն մըն է թէ անդամատուածները իրենց կորսուած անդամներուն զգայութիւնները կրնան տեղականացնել: Սրունքին կտրուած անձինք ոտքի յօդացաւ կը զգան, թէև ոտք չունին. թեւերնին կտրուած անձինք մատներու մտում կը զգան, թէև ձեռք չունին, և իրենց այնպէս կուգայ թէ շարժել ուզած ատեննին կը շարժեն զանոնք եւ այլն: Այս է ահա անդամատուածներու պատրանք ըսուածը: Մեր տեսութեան համեմատ, սապէս կը բացատրուին այդ պատրանքները: Զգայութիւնը, որ նշանն է արտաքնացման, կապուած է ոչ թէ ջիզի ծայրերուն՝ այլ ջղային կեդրոններու հետ: Հետևաբար մկանային տեղականացումը միշտ տեղի կ'ունենայ, թէեւ ծայրական անդամները պակաս ըլլան, իրեն հետ արթնցնելով բոլոր արտաքին շօշափական եւ բոլոր տեսողական պատկերները, որոնք իրեն հետ զուգորդ են ունակութեամբ:

Արդիւնաւորուած և բարդ տեղականացումը դուրրութեամբ կը ստացուի և կը կազմուի ուրեմն. բայց կայ նախնական և պարզ տեղականացում մընալ, որ բոլորովին ինքնաբերական է եւ դուրս կ'ելլէ շօշափելիքի այն մասէն, որ կը կոչուի մկանային ըզ-



զայարան: Հետեւաբար մեր մարմինը եղող տարածու-  
թիւնը ամբողջաբար կը ցուանայ գիտակցութեան մէջ:  
Մարմինը մասն է եսին, և սոսկ իբր ծածկոյթ կամ  
զգեստ է որ կը ծառայէ անոր:

2. Ժուճեռուայի սեսուքիւնը եւ հերքում. — Ժուճե-  
րուա կ'ըսէ թէ կրնանք մարմինը ամբողջովին օտա-  
րացնել: Արդարեւ, երբ թեւս, գլուխս կամ իրանս ա-  
ռանձնաբար կը նկատեմ, զանոնք կ'օտարացնեմ եսէս:  
գլուխս ես է, բայց եսիս գլուխն է: Ինչ որ անշուշտ  
շատ տարբեր է: Եւ սակայն մարմնական անգործու-  
թեան և ներքին անդրադարձութեան վիճակին մէջ,  
ուր կը գտնուիմ հիմա, կրնամ արդեօք եսիս մտա-  
պատկերը անջատել մարմնական ամէն մտապատկերէ:  
Չեմ կարծեր: Խորհուրդներուս իւրաքանչիւրին, նոյն  
խսկ ամենէն վերացեալներուն, կ'ընկերանայ միշտ մար-  
մինի զգացում մը, և, ինչ որ ալ ընեմ, չեմ կրնալ  
խորհուրդիս մէջ ճշմարտապէս ինքզինքս (= եսիս գոյ-  
ւլլալն) զգալ, առանց այդ գոյութեան՝ ո՛ր և է մար-  
մնական մտապատկեր, մասնաւորաբար գլխի մտա-  
պատկերը խառնելու:

Բայց եթէ զուրս ելնեմ ֆիզիզական անգործու-  
թեան և զուտ անդրադարձութեան վիճակէն, և բա-  
զուկի կամ մարմինի և կամ սրունդի ճիգ մը ընենք,  
մարմինին գործօն մասը անմիջապէս եսին մտապատ-  
կերին մէջ կը մտնէ, և ա՛լ անկարելի կ'ըլլայ զայն  
օտարացնել անկէ: Մկանային աշխատանք կատարող  
մարդը չի կրնար օտարացնել իր մարմինը, զայն կը  
զգայ իբր ինքզինքը. իր վրայ անդրադարձող (=   
խորհրդածող) մարդը միայն կրնայ զայն օտարացնել  
մեծագոյն մասամբ, եւ, լեզուի հանգիտութիւններու

օգնութեամբ, կը կարծէ ամբողջովին օտարացնել զայն:  
Այսպէս, ուրեմն մարմինը մասն է եսին: Եսին  
մտապատկերին միշտ կցորդ է աւելի կամ նուազ,  
տարտամ կամ ճշգրիտ մտապատկերը մարմինին այն  
մասին, որով կը կատարուի եսին գործունէութիւնը:  
Իրաւամբ ըսուած է որ եթէ հոգեխօսութիւնը պէտք  
ունի բնախօսութեան, իր ինչ ինչ երևոյթներուն գո-  
յութեան պայմաններուն վրայ ճշգրիտ տեղեկութիւն-  
ներ ստանալու համար անկէ, բնախօսութիւնն ալ իր  
ծագումին մէջ պէտք ունեցած է գիտակցութեան ծա-  
նօթութիւններուն, իր խուզարկութիւններուն ձեռնար-  
կելու և զանոնք ուղղելու համար: Ամէն ժամանակի  
մարդիկ զգացած են թէ մարտողութիւնը կը կատար-  
ուի մարտողական խողովակին, մասնաւորաբար ըստա-  
մօքսին և աղիքներուն մէջ. զգացած են սրտին կա-  
րեւոր դերը, և կուրծքին մէջ տեղականացուցած են  
չնչաւութեան գործարանը: Բնախօսութիւնը նախա-  
պէս եղած է ուրեմն զուտ հոգեխօսական գիտութիւն  
մը, որուն մէջ գործարանները և երակները կը ճանչ-  
ցուէին իրենց գտնուած տեղին գիտակցութեան տար-  
տամ զգացումովը միայն: Այսպէս, հիները թէև սխալ  
բաղադրանք ունէին գլխաւոր երակներու ձեւին վրայ,  
բայց նորէն գիտէին անոնց դիրքն ու պաշտօնը: Կը  
զգային թէ ուղեղը խորհուրդի գործարանն է, այս  
մասին բնախօսական ապացուցութիւն մ'ունենալէ շատ  
առաջ:

Ա. Մ. Փ. Ռ. Փ. Ռ. Մ.

Ա. — Խնդիր է թէ մեր սեփական մարմինը ուղ-  
ղակի կ'ըմբռնենք թէ տրամախոհութեան մը միջոցաւ  
կ'եզրակացնենք զայն:



Բ.— Այս հարցումէն անբաժան է սա ուրիշ հարցումը. Տրամախոհումի մը հետեւանքով է որ մեր զգայութիւնները կը տեղաւորենք զանազան գործարաններու մէջ, թէ առանց այլեւայլի, եւ այնպէս մը կ'ընենք որ զգայութեան տեղաւորումը զգայութեան հետ նոյն իսկ տեղի կ'ունենայ:

Գ.— Ռէյ Ռէժիս բժիշկին մէկ զիտողութիւնը ցոյց կուտայ թէ մկանային զգայութիւնները իրենց հետ ունին իրենց տեղաւորումը:

Դ.— Անոնց զատորոշումը ուրեմն մեզի կուտայ որոշ և նոյնաժամանակեայ կէտեր, հետեւաբար և տարածութիւն մը՝ որ մերինն է, այնքան՝ որքան մերինն է զգայութիւնը:

Ե.— Կրկնակ շօշափումը կը սահմանազօծէ այս տարածութիւնը և կը կազմէ շօշափական քարտէսը՝ տեսողութիւնը կը միանայ անոր, և կը կազմէ տեսողական քարտէսը: Այս երկու քարտէսներուն իրարու և մկանային քարտէսին հետ հաղորդակցութիւնը կը կատարուի զուգորդութեամբ:

Զ.— Ժուֆրուս կ'ըսէր թէ մարմինը եսին կցուած նիւթի մասնիկ մըն է լոկ: Ընդհակառակն կը տեսնուի թէ մարմինը եսին յարակից մէկ մասն է:

## Պ Ա Ս Ի .

### Ն Ե Ր Ք Ի Ն Ը Մ Բ ՈՒ Ն Ո Ւ Մ

ՅՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Եսին գաղափար. — Բ. Եսի գաղափարին սարեր. — Գ. Ներքին ըմբռնում. — Դ. Եսին գործունէութիւն. — Ե. Յիւստոսեան գեր. — Զ. Եսի իր վիճակներուն արդիւնքն է. — Է. Այս տեսութեան մասին քննութիւն. — Ը. Ներքին ըմբռնումին սահմաններ:

Ա. Եսին գաղափար. — Հիմակ ալ կրնանք, կարծեմ, փիլիսոփայաբար պատասխանել ի՞նչ ենք մենք հարցումին: Ի՞նչպէս մենք ինքզինքնիս կը ճանչնանք: Որո՞նք են այն ստորոգելիները, զորս կը ճանչնանք մեր եսին վրայ:

Մէն մի մարդու եսը ի՞նչ է իրեն համար: Եսը հաստատուն ենթական է մեր բոլոր եղանակաւորումներուն, մեր բոլոր գիտակցական գործողութիւններուն: Երբ կը տխրիմ կամ կը հրճուիմ, երբ կ'աշխատիմ կամ կը հանգչիմ, երբ կ'ուզեմ կամ կը խորհիմ, միշտ ես եմ որ կը տխրիմ կամ կը խորհիմ: Ի՞նչ որ էի երէկ նոյնն եմ այսօր, թէ և փոփոխութիւններ մը կատարուեցան եսիս վրայ, և թէ և իմ էութեանս մէջ յաճախ կը զգամ կռիւներ և հակասութիւններ, բայց բոլոր այդ հակասութիւնները միակ և պարզ եսի մը կ'ընծայեմ: Ուրեմն եսը էութիւն մըն է զիտակից, տեսական, պարզ, նոյնագոյ, իր եղանակաւորումներուն ենթական և իր գործողութիւններուն պատճառը: Մըտքին համար էական իմացք մըն է եսը:

Բ. Եսի գաղափարին սարեր. — Որո՞նք են այն տարրերը, որոնք այդպիսի մտապատկերի մը կազմութեան մէջ կը մտնեն:



Նախ մեր էութեանը վրայ *sarsar* գիտակցութիւնը ունինք մենք. ու չկայ գիտակից էակ մը որ չունենայ այդ գիտակցութիւնը: Յետոյ այդ գիտակցութիւնը կը *ágrsm* եւ կը *hauus* լինի:

Գիտակցութեան վիճակներէն իւրաքանչիւրին մէջ կը զգացուի եսը: Գիտակցական վիճակներուն՝ եսին վերագրումը տեղի կ'ունենայ ամէն անդրադարձութեան մէջ: Եթէ միակ վիճակ մը ունենայինք, այդ վիճակը պիտի շփոթուէր եսին հետ. ու անդրադարձեալ դատումին մէջ ենթական և ստորոգելին նոյն պիտի ըլլային իրարու հետ, որ է ըսել թէ դատումը վերլուծական պիտի ըլլար:

Բայց անդրադարձեալ դատումը համադրական է: Ոչ վերագրուած վիճակը հարկաւորապէս կը բովանդակուի կարծես ես ենթակային մէջ, և ոչ ալ ես ենթական հարկաւորապէս մեզի կրնայ ցոյց տալ կարծես վերագրուած վիճակը: Զոր օրինակ սա պահուս կը գրեմ, բայց կրնայի չգրել ու նորէն ես ես ըլլալ, ուրեմն գրելս հարկաւոր չէ, անհրաժեշտաբար ստիպուած չեմ գրելու: Այո՛, վասնզի երկրորդ անդրադարձումէ մը վերջ՝ կ'որոշենք տարր մը՝ որ նոյնը կը մնայ ինչպէս էր առաջինին մէջ. և նոր տարր մը՝ որ առաջին և երկրորդ վիճակներուն տարբերութիւնը կը կազմէ նոյն իսկ: Քիչ առաջ կը խօսէի և հիմակ կը գրեմ: Այս անդրադարձութեանս մէջ կը տեսնեմ թէ ես կամ ինչի՞ որ հիմակ կը գրէ, նոյնն է պահ մը առաջ խօսող եսին կամ ինքնիս հետ: Խօսելու կամ գրելու գիտակցական վիճակներու զգացումներուս մէջ՝ զգացումը կայ բանի մը՝ որ նոյն է երկուսին մէջ ալ: Եսը իր բոլոր վիճակներուն մէջ կը նշմարէ մասնաւոր տարր մը որ տիրական ձև մը կամ երանգ մը կուտայ անոնց: Այդ *ju*

*quid proprium*), զոր կարելի էր Wundtի հետ «բարոյական բեկբեկման նշան մը» կոչել, կայուն և անփոփոխ կը մնայ: Ամէն մէկ նոր վիճակի մէջ, վերլուծումով կրնանք շարունակ գտնել այդ անփոփոխ տարրը, փոփոխական տարրերուն քով: Այսպէս վերացումի շնորհիւ, կը կազմենք մեր գիտակցութեան մէջ հաստատուն կերպով գոյ եղող ընդհանուր բանին գաղափարը: Այս ընդհանուր գաղափարը թէև կը կազմուի նոյն այն կերպով որով կը կազմուին միւսները, եւ սակայն անոնցմէ կը տարբերի անով որ անդրադարձութեան մէջ՝ պնդապէս կը կցորդուի մեր գոյութեանը անմիջական զգացումին, գաղափարն է ան ոչ թէ գիտակցութեան վիճակներուն ընդհանրաբար, այլ մեր վիճակներուն, եսին: Իմացք մը չէ ան, այլ էակի մը գիտակցութիւնը:

Ուրեմն այդ գաղափարը պարզ, նոյն եւ անյեղ է, քանի որ ընդհանուր գաղափար մըն է: Պէտք է նաև ըլլայ ենթական մեր բոլոր եղանակաւորումներուն, և պատճառը մեր բոլոր գործողութիւններուն, քանի որ անմիջական ըմբռնումը կը թանձրացնէ զայն, միացնելով մեր գոյութիւնը զգացումին: Ուրեմն եսին գաղափարը անհատական էութեան մը գաղափարը եւ իր վիճակներուն ընդհանուր գաղափարն է միանգամայն: Իբրև ընդհանուր վիճակներու գաղափարը, կը վերաբերի բանականութեան. իբրև գաղափարը անհատական էութեան՝ ուղղակի արդիւնք է յայտնատեսութեան (*intuition*) կամ ինքնահայեցութեան: Ըսել է թէ եսին կազմութեան մէջ բաժին ունին բանականութիւնը և անմիջական ըմբռնումը:

Գ. Ներքին ըմբռնում. — վերև ըսածնիս բացա-



տրուծիւնն է ներքին ըմբռնումին: Եսը կը ճանչնայ իր վիճակները և զանոնք իրեն կը վերագրէ: Կրնայ ինքզինքը զանազանել անոնցմէ. վասնզի կը զգայ թէ ամբողջովին իրեն չեն պատկանիր անոնք ամէնքն ալ: Ոմանք կը գլեն զինքը, եւ, սերտիւ իրեն հետ միանալով հանդերձ, կը տիրեն իրեն. աւելի անոնք կը տիրանան իրեն, քան թէ ինք անոնց. կ'ամփոփուի անոնց ներքեւ, անձնատուր ըլլալով իրենց: Այդ վիճակները բանաւորական վիճակներն են, ընդհանուր գաղափարները, հանրական եւ հարկաւոր սկզբունքները: Զոր օրինակ, երբ գիտական օրէնքները կը մտապատկերենք, կը զգանք թէ, թէև կը ճանչնանք այդ օրէնքները, բայց անոնք մեր մտքին արդիւնքը չեն, մերինը չեն, այլ մեր մտքին վրայ հարկադրուած գաղափարներ են միայն, որոնք մաս չեն կազմեր մեր եսին: Ոմանք ալ կան որ կը հակառակին անոր, կը սահմանափակեն իր գործունէութիւնը, ուստի ինք կ'արտաքնացնէ եւ արտաքին աշխարհին ատաղձները կը շինէ զանոնք: Ահա այսպէս կը զգանք որ պատերը, աթոռները, սեղանները, և այլն, կը սահմանափակեն մեր տեսութիւնը, ճիշտ ինչպէս կը գոցեն մեր շօշափական ծանօթութեանց սահմանը, գիմադրելով մեր շարժումներուն իրենց հպած ատեննիս: Կրնայ ըլլալ նաև որ, — և այս կը պատահի երազներու միջոցին, և երբ անդրադարձութիւն չենք կրնար ընել, — եսը բոլորովին կը նուաճուի իր վիճակներէն, կը ցրուի, կը ցնդի անոնց մէջ, կը կորսուի անոնց բազմաւորութեանը փոշիին մէջ: Ասոնք կրայոյդ վիճակներն են: Եւ այս ամէնը տեղի կ'ունենայ ներկային մէջ:

Ներկային մէջ դարձեալ, եսը իբր անծաւալ կէտ

մը չ'զգար ինքզինքը: Ինչպէս տեսանք նախընթաց դասին մէջ, կը զգայ միջոցին մէջ իր ճառագայթումը, ինչ ինչ ուղղութեանց համեմատ, բնական կերպով կը տեղաւորէ իր ինչ ինչ վիճակները, մինչդեռ ուրիշներ ալ կը պահէ աննիւթական վիճակի մը մէջ, անխառն ամէն միջոցային մտապատկերէ: Այսպէս, եսը կ'երկարածողի մարմնոյն մէջ զոր իրեն կը վերագրէ, և զոր կը զգայ իբրև մասն իրեն:

Անդրադարձութեան օգնութեամբ, եսը կը զգայ ոչ միայն իր գոյ լինելը, այլ նաև տեւելը, այսինքն կը զգայ իր գործերուն շարունակումը: Խօսք մը արտասանած կամ գրած ատենս, գիտակցութիւնը ունիմ ոչ միայն արտաբերած վանկիս կամ գրած տառիս, այլ նաև այն վանկերուն կամ տառերուն, զորս արտաբերած կամ գրած եմ, և այն վանկերուն կամ տառերուն, զորս դեռ պիտի արտաբերեմ կամ գրեմ: Ամբողջի մտապատկերին շարայարեալ տեղութեանը առջև կը քակտուին տարրերը: Այդ շարունակեալ տեղութեան զգացումն է որ կը կազմէ էութեան ներքին զգացումը: Աւելի ետքն է որ տարրերը իրարմէ զանազանելով, և անոնցմէ մէկին միայն ըստ կամս յարելով, եւ զայն իբր ներկայ նկատելով, անցեալ կ'անուանենք անոր նկատմամբ նախընթաց եղողները, և ապառնի՝ հետեւորդները: Գիտակցութեան իրականութեանը մէջ երեք ժամանակները համադրութիւն մը կը կազմեն. տեղութիւն մը՝ որուն մէջ եսը միանգամայն կ'ըմբռնէ, ի գաղափարի, անմիջական անցեալը, ներկան, և անմիջական ապագան: Անցեալին վրայ կը թնամ՝ կը պատրաստէ ապագան, և կամ, լաւ ևս ըսելով, երեք ժամանակները իրեն համար անջատաբար գոյութիւն ունին մեռեալ անցեալին վրայ կա-



տարուած վերացումին մէջ միայն: Գիտակցութեան հեանքին մէջ տեղ մէկ ներկայ մը միայն կայ:

Դ. Եսին գործունէութիւնը. — Եսը իրեն կը վերագրէ այն ամէն բաները, որոնց մէջ ինք կը գործէ, և այն ատեն միայն չ'ուզէր աւելի հեռուն մղել իր էութիւնը: Երբ իր գործունէութիւնը կը կասի: Այսպէս, եսին գիտակցութիւնը և անհատական գործունէութիւնը միևենոյն պարունակն ունին: Եսը կ'որոշուի թէ՛ բանական այն պայմաններէն որոնք անկախ են իրմէն և առանց որոնց չի կրնար ըլլալ ինք, և թէ՛ միանգամայն արտաքին սահմանաւորումներէն, որոնք ուղղակի կ'ընդդիմակալեն իր գործունէութիւնը: Ուրեմն, եսին ըմբռնումին համար էական և հարկաւոր է բանականութիւնը, իսկ ո՛չ-եսը երբեք անհրաժեշտ չէ անոր: Անսահման ու անխափան գործունէութեան մը գիտակցութիւնը բնաւ հակասական չէ. անձիգ գործի մը կամ իր գործովը չսպառող կորովի մը գիտակցութիւնն է ան: Արդ, մեր խորհուրդին կատարումին մէջ նոյն իսկ ունինք մենք բաւարար փորձառութիւն, այսպիսի կորով մը իմանալու: Մտածումը կատարուելով չի նուազիր. ան կը մնայ նոյն ինչ որ էր: Ուրեմն եսը ինքզինք կ'ըմբռնէ իբրև խորհող գործունէութիւն մը՝ որ կը տեւէ եւ կը շարունակէ միշտ հաւասար եւ նոյն ինքն իրեն հետ:

Ե. Յիշողութեան դերը. — Բայց այդ տեղուցութիւնն իսկ եղանութիւն մը, եղափոխում մը ունի: Միտքը չի կրնար շարունակ պահել պատահարները՝ որոնք կ'անցնին, կը հեռանան: Կը մոռնայ: Յիշողութիւնն է որ անոր յետոյ կը յիշեցնէ իրմէն դուրս խուս

սափած իր կերպաւորումները, և ինք անոնց վրայ կը գտնէ իր գրողմը՝ կնիքը, իր բեկբեկումին նշանը, և, իրեն վերագրելով զանոնք, անցեալին գանձերովը կը հարստացնէ իր ներկան: Իր տեղութեան և շարունակումին ներքին զգացումը կ'ունենայ: Խորքունէ ելնելէ վերջ իր ներկայ կեանքը կը կապէ անցեալ կեանքին, և, այն օրինակներուն մէջ իսկ, ուր տեսանք թէ ոչ մէկ յիշատակ չէ մնացած յառաջագոյն կեանքէն, ոչ մէկ հեղինակ չի կարծեր որ եսը կուրուսած ըլլայ ամէն զգացում յառաջագոյն և շարունակեալ գոյութեան մը: Կարելի է որ ենթակաները չկարենան ըսել թէ ինչպէս եղած են: Բայց անկարելի է որ չգիտնան թէ ինչպէս եղած են: Անոնք որ — ինչպէս Գեղտա իր առաջին կացութեանը կամ Մաքնիշի՛ իր երկու կացութիւններուն մէջ — չեն կրնար որոշակի ճանչնալ կորսնցուցած վիճակուն տեղութեանը յիշատակը, կը հաստատեն, սակայն, գիտակցութեան շարունակում մը, եւ ատով՝ հաստատած կ'ըլլան իրենց գոյութեան շարունակումը այդ ընդհատումին միջոցին:

Ներքին կապ մը, որ խոյս կուտայ սահմանէ, զոր սակայն կրնայ գիտակցութիւնը զգալ, անցեալ վիճակները կը միացնէ ներկայ վիճակներուն: Եսը կը հաստատէ թէ՛ իր գոյութիւնը անցեալին մէջ, և թէ՛ այդ անցեալը ներկային միացնող շարունակումը: Այսպէս յիշողութիւնը, որուն պայմանն է էակին շարունակումին գոյութիւնը (վասնզի ի՞նչպէս հին վիճակը կրնար պահպանուիլ՝ եթէ ամէն ինչ փոխուած ըլլար անոր պահարանը եղող էակին մէջ), ինքն ալ իր կարգին էակին կը յայտնէ այդ շարունակումին գոյութիւնը և կ'օգնէ այլո՛ց ալ ցուցակելու զայն: Ուրեմն, եսին



գաղափարն ամբողջ է՝ անդրադարձեալ զխտակցութեան առաջին վիճակէն սկսեալ, հետզհետէ աւելի կ'որոշուի և կը ճշգրտուի միայն:

Ձ. Եսը իր վիճակներուն արդիւնքն է. — Ուրեմն այս գաղափարը չի կազմուիր նոյն ձայնականութիւնը ունեցող աւելի կամ նուազ բազմաթիւ զգայութեանց կուտակումովը, ինչպէս կը կազմուի բաղադրական պատկերը: Եսին գաղափարը այդպիսի պատկերէ մը զատորոշողն է ներքին գործունէութեան մը զգացումը, որ միշտ կցորդ է այդ գաղափարին: Եթէ եսին գաղափարը մնացորդ միայն ըլլար մեր բոլոր զգայութիւններուն, այն ատեն կրաւոր և անգործ պիտի ըլլար, պիտի կրնար ենթակայի դեր կատարել, բայց ոչ պատճառի: Պիտի կրնայինք ըսել սիրուած եմ, սիրուած եմ. բայց պիտի չկրնայինք ըսել սիրած եմ, սիրկած եմ: Արդ, եսը, ամէն բանէ առաջ, պատճառ մըն է: Այն ատեն միայն կը զգամ գոյ ըլլալս կամ եղած ըլլալս, երբ կը զգամ գործելս կամ գործած ըլլալս:

Կ'առարկեն, սակայն, թէ եսին մեր զգայութիւններուն մնացորդն ըլլալուն ապացոյցն ա՛յն է որ, եթէ մեր զգայութեանց տիրող ձայնը (ton) կամ երանդը փոխուի, եսն ալ կարծես թէ կ'այլայլի, կ'երկճղի, կը քայքայուի: Քրիշնապէր բժիշկին մէկ հիւանդը, որուն զգացողութիւնը խորապէս այլայլած էր, կը զգար թէ ուրիշ ոմն մը կ'ըլլար, նոր ես մը կարծես թէ հետըզհետէ կը փոխանակէր իր հին եսը: Երբ զգայութեան տիրող ձայնին փոփոխումը շատ մեծ է, քայքայումը կատարեալ կ'ըլլայ, յիշողութիւնը կ'ընդհատի, և անկարելի կ'ըլլայ մեր վիճակին մէջէն յիշել միւս վի-

ձակը: Ճիշտ ինչպէս Ֆելիտա իր առաջին կացութեանը մէջ և Մաքնիշի Տիկինը իր երկու կացութիւններուն մէջ:

Է. Այս տեսութեան ֆնկուսիւնը. — Դիտել կուտանք նախ թէ, եսը ցորչափ չի խաբուիր իր զգացած քայքայումի երեւոյթներէն, երբեք չ'այլայլիր, ինք կը մնայ միշտ նոյն ինքն. թէև ծանր փոփոխումներ կը զգայ իր մէջ, բայց այդ փոփոխումները իր մակերեսը միայն կրնան այլայլել, յուզել, չեն կրնար այլայլել ներքին էութիւնը: Քրիշնապէր բժիշկին հիւանդը կ'ըսէ թէ երբեք չէ հաւատացած որ ինք «այլ ոմն» մ'էր: Եսը ալ ինքը չէր, նոյն եսը չէր, աւելի կամ նուազ զայս կը զգար: Իայց քաջ գիտէր ալ թէ եսը ինքը եւ «այլ ոմն» մը չէր միանգամայն:

Պաշտով անձնաւորութեան պէսպիսութեանց, զորս իրարու հետ կարծես մրցելով կը յիշեն ժամանակակից հեղինակներ, փափաքելի էր նախ, որ զննութիւնները աւելի ուշադիր քննողութեամբ կատարուէին և տեղեկագրուէին, կարևոր թերոյթներէ(\*) (lacune) և ճշմարիտ հակասութիւններէ(\*\*) զերծ մնալու համար: Բաց աս-

(\*) Տիկին Մաքնիշի պարագան. — Ձեռնոր կը մոռնայ ըսելու թէ երբակամ իր առաջին վիճակափոխութեանը մէջ գիշեր հագուելի, թէ ոչ, կրնա՞ր գանգանել հագուստին կտրուէր եւ անոց կիրարկուիւնը, եւայլն: Այս փոքրիկ մանրամասնութիւններ անհրաժեշտ են կարեւոր նկարագրութեան մը համար:


(\*\*) Ֆելիտայի պարագան. — Ազամ բժիկը կ'ըսէ մեզի, զոր օրինակ, թէ Ֆելիտա յուշատէր մ'ունէր, իր երկրորդ կացութեան մէջ, կ'արձանագրէր այն բաները զորս կ'ուզէր յիշել իր առաջին կացութեանը մէջ: Եթէ սակայն առաջին կացութեան վիճակներուն մէջ բոլորովին մոռցած էր երկրորդ կացութեան վիճակները, ապա ուրեմն ի՞նչպէս պիտի յիշէր յուշատէրին մէջ նօթեր արձանագրած ըլլալը:



տի, յիշատակներու կոչումն այնքան կատարեալ չէ որ երկաքանչիւր կարծեցեալ ես զգայ իր թերոյթները և իրեն չվերագրէ իր մոռացումները:


Մաքնիչի տիկինը, զոր օրինակ, իր երկրորդ կացութեանը մէջ զիտէ թէ իր զխտակցութիւնն ընդհատուեր է, թերոյթներ կը զգայ իր յիշողութեանը մէջ, բայց իրեն կը վերագրէ այդ մոռացումները, և զիտէ թէ ապրած է, — թէև չի զիտէր թէ ինչ կերպով կեանքին այն մոռցուած մասերուն մէջ:

Անիկա ինքզինքին կը վերագրէ ուրեմն այն վիճակները զորս սապէս պատկերացուցինք ժ.Ը. դասին տարազին մէջ.




Ձեւ 13

Միայն թէ զանոնք ինքզինքին կը վերագրէ դատարկ, այսինքն՝ սպիտակ գրութեան մէջ, ու իր առաջին կացութեան մէջ, միեւնոյն վերապահումով ինքզինքին կը վերագրէ երկրորդ կացութեան վիճակները, զորս այսպէս ներկայացուցած էինք.




Ձեւ 14

Հակառակ երևոյթներուն ուրեմն իր կեանքին մէկ շարունակումը կայ, շարունակում՝ զոր այնքան ճշմարիտ կերպով կ'ընդհնմարէ որ առաջին կացութեան մէջ իր կեանքը պէտք է սապէս ներկայացուի.



Ձեւ 15

Իսկ երկրորդ կացութեան մէջ՝ սապէս.



Ձեւ 16

Երկու եսերէն երկաքանչիւրին յիշատակները կը համապասխանեն իրարու մոռացութեան, այնպէս որ երկուքն ալ ինքզինքնին շարունակեալ կը հաստատեն, ու այդ շարունակումին պարունակութիւնը երկուքին համար նոյն է ամէն կերպով, միայն թէ այն ժամանակը զոր մին իրեն կը վերագրէ իբր թափուր եւ ա՛նորոշ, միւսը կը վերագրէ իբր լեցուն եւ որոշեալ ու փոխադարձաբար: Նմանապէս երկաքանչիւրը կը զգայ եւ կը հաստատէ իր նոյնագոյ՝ տեւական՝ եւ շարունակեալ ըլլալը: Անտարակոյս, այս պարագաներուն մէջ իւրաքանչիւր ես պէտք է նկատուի անշատ միւսէն. ինչ որ ըսել չէ թէ մէկ մարդու մը մէջ միաժամանակ կրնան գտնուիլ երկու էութիւններ, այլ թէ միեւնոյն էութիւնը կրնայ յաջորդաբար կատարել երկու տարբեր և իրարու գրեթէ անհաղորդական գերեր: Գիտակցութեան մէջ երկու ես, կամ՝ ըստ արդի հոգեբանութեան՝ երկու անձնաւորութիւն կենալէն երբեք չի հետեւիր որ երկու անձ կամ երկու էակ կենայ մարդուն մէջ: Առաջին նախադասութիւնը հոգեբանական հաստատում մըն է, զոր չենք կրնար անվիճելի համարել. երկրորդը բնազանցական մակածութիւն մըն է, որուն վրայ վիճելու տեղը չէ հոս: Թող զայդ, անձնաւորութեան այդ պէսպիսութիւնը կարծուածին չափ տարօրինակ ալ չէ: Արբեցութեան, քունի և նոյն իսկ բնական վիճակի մէջ տեղի կ'ունենայ ան յաճախ, թէ՛ մեր բնութեան բաղադրիչ տարրերուն քայքայու-



մէն եւ թէ՛ օտար անձերու նմանողութենէն, եւայլն։ Այսպէս, հակառակ անձնաւորութեան պէսպիսութեանց, եսին մէջ կը մնայ միշտ համադրող գործունէութիւն մը, զոր վերլուծումը չի կրնար ի յայտ բերել զգայութիւններու մէջ, զանոնք իրենք իրենց վիճակին վերածելէ վերջ։ Եսը կը զգայ իր գործելը, կազմութեան միջև ընդհանուր գաղափարներուն, որոնք երբեք չեն վերածուիր զգայութիւններու. ուրեմն արդիւնքէ մը տարբեր բան մըն է ինքը, գործիչ մը նոյն իսկ. իր յիշատակներուն յանկարծական խըզումն է որ զայն կ'ենթարկէ երկուութեան մը, որ աւելի առերևոյթ է քան իրական, արտաքին, եւ ոչ թէ ներքին։ Վասնզի միութեան կը վերածէ նոյն իսկ այն վիճակները, որոնց յիշատակը կորսուած է. ինքզինք շարունակեալ կ'արտայայտէ, և իրեն կը վերագրէ իր մոռացումները։

Ը. Ներքին ըմբռնումին սահմանները. — Բայց, եթէ ճշմարիտ է թէ եսը չի կրնար վերածուիլ իր զգայութիւններուն գումարին, ու եթէ, ատկէ զատ, զանոնք գումարող հաշուարարի գրոշմովը կ'ըմբռնուի ինքը, ոչ նուազ ճշմարիտ է նաև թէ գիտակցութիւնը չի կրնար գոյ ըլլալ զգայութիւններէ թափուր էակի՛ մը մէջ, որ նոյն ինքն գոյացութիւնը պիտի ըլլար։ Ամէն անգամ որ կ'ըմբռնենք ինքզինքնիս, կ'ըմբռնենք զայն խորհող, կամեցող կամ զգացող. զուտ ինքզինքի գիտակցութիւն չկայ։ Չենք կրնար նշմարել մեր էութեան գոյացական խորքը, զայն կը յղանանք ու կ'եզրակացնենք միայն։

Աւելի ևս, չենք կրնար մեր մէջ նշմարել անհուն, բացարձակ, կատարեալ էակը, որ կը պայմանաւորէ և

կը գլէ զմեզ։ Եսը իր սեփական գործունէութենէն աւելի հեռու չի կրնար երթալ. ինքն իր մէջ կը զգայ այդ գործունէութեան և իր էութեան պայմանները, բայց զանոնք կը նշմարէ իր գործունէութեան արտայայտութիւններուն հետ խառնուած. միայն կը զտէ զանոնք վերլուծումով, ու զտելուն և ճանչնալուն պէս, ի բաց կը վանէ իրմէ եւ իրեն չի վերագրեր զանոնք։

Ա Մ Փ Ո Փ Ո Մ

Ա. — Եսը մեզի կ'երևի իբրև գիտակից, տեւական, պարզ, նոյնատարր, իր եզանակաւորումներուն տէր և իր գործողութիւններուն պատճառ էակ մը։

Բ. — Եսին գաղափարին մէջ մտնող տարրերն են. 1. Գիտակցութեան մէջ անփոփոխ տարրի մը հաստատումը. 2. Այս անփոփոխ տարրին հետ ներքին կապակցութեան զգացումը. 3. Փոփոխական տարրերու հաստատումը։

Գ. — Արտաքին ըմբռնումը այն գատումն է որով մենք եսին կը վերագրենք իրեն պատկանող վիճակները։

Դ. — Իրեն պատկանող վիճակները անոնք են, զորս կը զգայ թէ իր խորհող գործունէութեամբը արտադրած է։

Ե. — Յիշողութիւնը կ'ամբողջացնէ ներկայ ներքին ըմբռնումը, թոյլ տալով եսին որ ինքզինքին վերագրէ իր անցեալ ինչպէս և ներկայ վիճակները։

Զ. — Ըսուած է. եսը արդիւնք մըն է լոկ, որուն առաջին գործիչները զգայութիւններն են։ Կը փորձեն հաստատել այս պարագան՝ պարբերական յուշաթա-



փութեանց միջոցին նկատուած անձնաւորութեան պէս-  
պիսութիւններով:

Է. — Բայց յուշաթափները ինքզինքնուն կը վե-  
րագրեն իրենց մոռացումները, և այսպէս կը հաստա-  
տեն իրենց էութեան շարունակումը: Եսը չէ ուրեմն  
որ ամբողջովին կը փոխուի, այլ իր պարունակութիւնը:

Ը. — Ներքին ըմբռնումը իրեն առարկայ չի կրնար  
ընել անձը, անհատական և խորհող գիտակցութիւնը,  
այլ կը սահմանափակուի եսին մէջ: Աւելի ևս, անիկա  
չի կրնար իրեն առարկայ ընել բացարձակը: Միտքով  
կը յղանանք, կ'եզրակացնենք բացարձակը և զԱս-  
տուած, չենք ըմբռներ զանոնք:



Գ Ա Ս Ի Ա.

Ա Ր Տ Ա Ք Ի Ն Ը Մ Բ Ո Ն Ո Ւ Մ

ԲՈՎ ԱՆԳՈՒԿՈՒԹԻՒՆ. — Ա. Արտաքին ըմբռնումի խնդիր. —  
Բ. Սկզբնական լուծում. — Գ. Պատահի վարդապետութիւնը. —  
Դ. Բնագոյն. — Ե. Տեսութիւն մակաբերութեան. — Զ. Առա-  
կութիւն. — Է. Պատասխան:

Ա. Արտաքին ըմբռնումի խնդիրը. — Արտաքին ըմ-  
բռնումը այն դատումն է, որով կը հաստատենք թէ  
մեր գիտակցութեան կարգ մը եզակի վիճակները չեն  
վերաբերիր մեզի, այլ պէտք է զանոնք վերագրել  
մենէ դուրս եղող եզակի էակներու: Զոր օրինակ. երբ  
կ'ըսեմ թէ հոն թուղթ մը կը տեսնեմ, ըսել կ'ուզեմ  
թէ այժմ ունեցած տեսողական գիտակցութեանս վի-  
ճակը ինձմէ չի գար, այլ կուզայ արտաքին առարկա-  
յէ մը, զոր թուղթ կ'անուանեմ. ասով արտաքին ըմ-  
բռնումի դատում մը արտայայտած կ'ըլլամ:

Արտաքին ըմբռնումի խնդիրը կը կայանայ այն  
հարցին մէջ թէ ի՞նչպէս կ'ըլլայ որ այսպէս կրնանք  
օտարացնել մեր վիճակներէն մէկ քանին. ի՞նչ է այդ  
օտարացումը մեզի հարկադրող շարժառիթը:

Բ. Սկզբնական լուծում. — Երեք պատասխաններ  
տրուած են այս հարցումին:

Առաջինը, զոր տուած են Ռայտ և Սկոլտա-  
կանք, կ'ըսէ թէ օտարացումը կը կատարուի ինքն-  
իրմով: Տեսակ մը բնագոյն մենք մեր մէջ կը զա-  
տորոշենք ա՛յն որ մերինն է, ու զայն կ'անջատենք  
անկէ որ մեր մէջն է՝ առանց մերինը ըլլալու: Այդ  
մեկուսացումը երբ կատարուի, մեր մէջը եղող՝ այլ



մերինը չեղող զգայութիւնները կ'առարկայանան և իրենք իրենցմէ կը մարմնաւորուին: Մէկ խօսքով, Ռայտ և իր աշակերտները պարզապէս կը հաստատեն արտաքին ըմբռնումին իրողութիւնը, և զայն կը համարին օրէնքը մտքի բնական մէկ յատկութեան: Կ'ըմբռնենք արտաքին առարկաները, կ'ըսեն, վասնզի կարողութիւնը ունինք զանոնք ըմբռնելու:

Ասի անշուշտ ճշմարիտ է, բայց բացատրութիւն մը չէ:

Գ. Պատրաստութիւնը վարդապետութիւնը. — Թէն, որուն այս մասին կարծեկից է նաև Ռայտէ, փորձեց տալ այդ բացատրութիւնը, ըսելով թէ արտաքին ըմբռնումը պատրանք մը, ճշմարիտ բանդագուշանք մըն է: Հասկըցնենք թէ ինչ կ'ուզէ ըսել ատով. ամէն զգայութիւն, իր գոյութեան իրողութեամբն իսկ, կը ձգտի առարկայանալու, և կ'առարկայանայ արդարև, ցորչափ չի տկարանար իրմէ աւելի զօրաւոր ընթացակից զգայութիւններէ, կամ ցորչափ հինգերորդ դասի երկրորդ յօդուածին մէջ բացատրուած մեքենականութեան զօրութեամբ՝ գիտակցական զգայութիւններ չեն վերածեր զայն պատկերի վիճակի: Ուրեմն ամէն պատկեր, ամէն զգայութիւն էապէս բանդագուշական է, քանի որ իրապէս և արտաքնապէս ներքին է եւ շարունակ կը ձգտի արտաքնանալու: Միայն թէ սխալ բանդագուշանքներ եւ ճշմարիտներ կան: Սխալ բանդագուշանքներն անոնք են որ անհամաձայն են իրարու և անկապակից, կը հակասեն զիրար, և չեն կրնար հաստատուն և կանոնաւոր օրէնքներու վերածուիլ: Բանդագուշական պիտի ըլլար այսպէս զգայութիւններու շարայարութիւն մը, զոր օրինակ՝

քարի մը կամ երկաթի կտորի մը, ըստ հաճոյս ծալուելը մատներուս տակ, պահելով հանդերձ իրենց քարի կամ երկաթի յատկութիւնները: Ընդհակառակն ճշմարիտ բանդագուշանքներն անոնք են որ կը համաձայնին ոչ միայն ներկայ վայրկեանին, այլ նաև անցեալ զգայութեանց հետ, բնութեան կանոնաւոր ընթացքը պահպանելու եղանակով: Այս մտք է որ Լայբնից կ'ըսէր թէ կեանքը կանոնաւորեալ երազ մըն է:

Գ. Բննադատում. — Այս վարդապետութիւնը, հակառակ իր ճշմարտագանց երևոյթին եւ գիտնական կերպարանին ոչ այլ ինչ է, ըստ մեզ, եթէ ոչ Ռայտի միամիտ ըմբռնողութեան կրկնաբանութիւնը, ենթակայական բառերով: Արդարև, ըսել թէ բոլոր զգայութիւնները կը ձգտին առարկայանալու, կրկնել չէ՞ միթէ Ռայտի ըսածը թէ մեր վիճակներէն մէկ քանին կ'արտաքնանան բնական կերպով: Եւ ըսելով թէ այդ արտաքնացումը ճշմարիտ է յարակից եղած միջոցին, և սխալ՝ անյարակից եղած ատենը, մատնանշած միայն կ'ըլլանք ճշմարտութեան սխալին տարբերիչ նշանը, բայց ոչ երբեք բացատրած թէ ինչո՞ւ համար յարակից կամ անյարակից զգայութիւնները կը ձգտին արտաքնանալու: Ռայտ և Թէն առանց բացատրելու կը հաստատեն միայն զգայութիւններուն մենէ դուրս արտաձգուելուն իրողութիւնը: Զգայութիւնները կ'առարկայանան, կ'ըսեն երկուքն ալ, վասնզի յատկութիւն ունին առարկայանալու:

Միակ պատասխանը, որ այս վարդապետութեան կուսակիցները կուտան անոնց որ կը հարցնեն իրենց թէ ինչո՞ւ համար գիտակցութեան վիճակներուն մէջէն միմիայն զգայութիւնները կ'առարկայանան, սա՛ է թէ



անոնք ամէնքը շարժումներու հետ կապուած են: Շարժումները հեռաւորութեան, անջրպետի զաղափար մը ունին իրենց հետ միշտ: Ամէն շարժում կ'ենթադրէ անցըւած միջոց մը, մեկնակէտէ մը հեռացում մը: Ուրեմն շարժումի մը զուգորդ զգայութիւնը զուգորդ է հեռաւորութեան մը զաղափարին: «Այսպէս կը գործէ կոյրը, աչքերը բացուելէն անմիջապէս վերջը՝ գունաւոր առարկան նախ բիծ մը կը թուի անոր՝ իր աչքին վրայ. յետոյ երբ բազկի շարժումով մը կը հպի առարկային, բոլորովին կը փոխուի իր տեսողական տպաւորութիւնը, ու կը հասկնայ թէ այդ հպուած առարկան է եղեր իր տպաւորութեան պատճառը. տեսողական տպաւորութիւնը այնուհետեւ կը զուգորդի առարկային զաղափարին, կը զօդուի առարկային հետ, և, այսպէս, կ'արտաքնանայ» (Rabier Հոգեբանութիւն, Գլ. Ա. էջ 422):

Այս պատճառաբանութեան մէջ «կրկնումն սկզբան» մը կայ: Արդարեւ խնդիր է գիտնալ թէ ինչպէս զգայութիւնները կ'արտաձգուին մենէ. մեզի սա միայն կ'ըսեն թէ ինչպէս տեսողական զգայութիւններն ու շօշափական զգայութիւնները միեւնոյն տեղւոյն վրայ կը գտնուին. չեն ըսեր սակայն թէ ինչպէս շօշափական զգայութիւնները կ'արտաքնանան: Եթէ այս վերջինները արտաքնացած են թագրուէին, խնդիրը կը վերջանար. բայց կարելի է ատիկա: Ուրեմն խնդիրը կը մնայ նորէն խնդիր, կամ թէ ինչպէս զգայութիւնները, — իմա՛ նաև շօշափողական զգայութիւնները — կ'արտաքնանան, այսինքն կ'արտաձգուին մենէ:

Ե. Տեսութիւն մակաբերութեան. — Յարգ կարելի չեղաւ բաւարար պատասխան մը՝ առաջադրուած

հարցին: Զայն լուծելու երրորդ եղանակ մըն ալ կայ, որ կը կոչուի մակաբերութեան դրութիւն: Ըստ այս տեսութեան, մեր վիճակներէն մէկ քանիին օտարացման շարժառիթը կը գտնուի մասնաւոր հանգամանքի մը մէջ, զոր զիտակցութիւնը անոնց վրայ կը հաստատէ, չթողլով նոյն ատեն որ այդ վիճակները ետին վերագրուին. ու օտարացման արդարացումը այսպէս պատճառականութեան սկզբունքին մէջ կը մնայ:

Կրնանք սապէս ներկայացնել իրողութիւնը: Դիցուք թէ սա թուղթէն ինծի եկածն ըլլայ տեսողական վիճակը. այդ սպիտակ վիճակը իմ մէջս է, բայց ես ոչ միայն կը զգամ թէ անոր արտադրութեանը մէջ ես բնաւ բաժին չունիմ, այլ նաև կը զգամ որ եթէ ուզեմ ալ՝ պիտի չկրնամ ջնջել զայն. միեւնոյնը կը զգամ լսած ձայներու և կատարած հպումներու համար ևս: Այս վիճակներուն քով, որոնք ինձմէ չեն դար և անկախ են ինձմէ, կը հաստատեմ ուրիշներու ալ գտնուիլը, որոնք կը զգամ թէ ինձմէ կուգան և որոնց վրայ իշխանութիւն մը ունենալս կը զգամ: Այս վերջիններն են ահա զորս անձիս կը վերագրեմ, նախընթաց դասին մէջ ցուցուած կերպով: Իմ մէջս, իմս են, ինձմէ կուգան անոնք: Ես կ'արտաբերեմ զանոնք, ես եմ անոնց պատճառը: Ու քաջ կը զգամ թէ միւսները միեւնոյն կերպով չեն վերաբերիր ինծի: Այս հանգամանքը, այս նկարագիրն է ահա որ կը զատուողէ իրարմէ այն վիճակները՝ որ իմ մէջս են ինձմով, և այն վիճակները՝ որոնք իմ մէջս են առանց իմինս ըլլալու:

Այս հանգամանքին հաստատումը բաւական է ինքնին, կազմելու համար օտարացումը այն վիճակներուն՝ որոնք իմս չեն, բայց ոչ վաւերելու համար անոնց



գիրքն իբր առարկայ: Այս առարկայացունն կը կատարուի արագ մակաբերութեամբ մը, որուն խարխուլըն է պատճառականութեան սկզբունքը:

Կ'ըսենք մենք մեզի. այն երևոյթը, որ իմ մէջն է, ինձմէ չի գար, զայն պատճառողը ես չեմ, բայց ամէն երևոյթ պատճառ մը ունի, ուրեմն այդ երևոյթն ալ ունի իր պատճառը, որ ինձմէ դուրս է. ու այդ պատճառին կը վերադրեմ երևոյթին յատկութիւններն անգամ, այսինքն եզակիութիւնը, տարածութիւնը, գոյնը, հոտը, և այլն: Ուրեմն մեր գիտակցութեան ինչ ինչ վիճակներուն առարկայացումը կը կատարուի ներքին բանի մը միջոցաւ, որուն զսպանակն է պատճառականութեան սկզբունքը:

Զ. Առարկուբիւն. — Այս վարդապետութեան հակառակողները կ'առարկեն թէ մանուկն ու անասունն ալ ունին ծանօթութիւններ արտաքին աշխարհի վրայ, և թէ չենք կրնար ենթադրել որ արամախոհումով ստացած ըլլան անոնք այդ ծանօթութիւնը, քանի որ չունին բանականութիւն:

Է. Պատասխան. — Այս առարկութեան պատասխանը սա՛ է. իրաւ է թէ անասունն ու մանուկը ունին տարտամ զգացում մը իրենց էութեան մասին, բայց անոնց այս վիճակը բացատրելու համար երբեք պէտք չկայ ընդունելու թէ անոնք կրնան բացորոշապէս գատորոշել իրենց անձը՝ արտաքին աշխարհէն: Անոնք ո՛չ գաղափարապաշտ են և ո՛չ իրապաշտ. արտաքին աշխարհի գոյութեան խնդիրը գոյութիւն չունի անոնց համար, վասնզի բանական չեն: Ըմբռնել եսը, և զայն զանազանել ոչ-եսէն, արդարեւ արամախոհ

հում մը կազմելու չափ բարձր գործ մըն է: Հարկ է ուրեմն ընդունել սա երկու վարկածներէն մին. կա՛մ անասունն ու մանուկը ընդունակ չեն բնազանցականի, կամ ընդունակ են անոր: Երկրորդ պարագային մէջ անոնք կրնան զանազանել եսը ոչ-եսէն, բայց կրնան արամախոհել, հետեաբար մակաբերութեան վարդապետութիւնը անոնց կը պատշաճի, ինչպէս մեզի. առաջին պարագային մէջ, անոնք մակաբերութիւն չեն ընել, բայց ատակ ալ չեն որոշակի զանազանելու եսը ոչ-եսէն. ահա այս վերջին կարծիքէն ենք մենք:

Ըսել է թէ արտաքին ըմբռնումի դատումին շարժառիթն է այն ընդգլխահարութիւնը, զոր մեզի կ'ընեն մեր ինչ ինչ վիճակները, ու զայն վաւերողն է պատճառականութեան այն սկզբունքը, որով կրնանք մենք արտաքին պատճառներու վերագրել այն վիճակները, որոնց պատճառը մենք չենք:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա. — Արտաքին ըմբռնումը այն դատումն է, որով մենք մենէ արտաքոյ էակներու կը վերագրենք, իբրև իրենց պատճառ եղողներու, մեր գիտակցութեան կարգ մը վիճակները:

Բ. — Այս դատումին կազմութիւնը բացատրելու համար, Ռայտ և Սկոլտականները կ'ըսեն թէ բնական ազդումէ մը յառաջ կուգայ ան: Բայց ասիկա բացատրութիւն մըն է միայն, և ոչ թէ հաստատում մը:

Գ. — Թէն և Ռայտի կ'ըսեն թէ մեր զգայութիւնները բանդազուշական են, թէ անոնք կը ձգտին առարկայանալու. և արդարև կ'առարկայանան ամէն անգամ որ ընթացակից զգայութիւններ չեն տկարացներ զիրենք:



Դ. — Բայց ասով բան մը չի բացատրուիր. և ստիպուած ենք պարզապէս կրկնելու Ռայտի հաստատումը, այսինքն ըսելու թէ զգայութիւնները կ'առարկայանան:

Եթէ հարցուի այս տեսութեան կողմնակիցներուն թէ զգայութիւնները ինչո՞ւ համար կ'արտաքնանան, կը պատասխանեն թէ ատոր պատճառն ա՛յն է որ անոնք զուգորդուած են իրենց հետ հեռաւորութեան գաղափար մը բերող շարժումներու:

Բայց այս բացատրութիւնը «կրկնումն սկզբան» մը կը պարունակէ: Շարժումի զգայութիւնները ի՞նչ պէս մենէ դուրս գոյանալու առանձնայատկութիւնը կ'ունենան:

Ե. — Կը մնայ մակաբերութեան տեսութիւնը, որ կ'ընդունի թէ զգայութեանց օտարացումը յառաջ կու գայ մասնաւոր հանգամանքէ մը, որ այս վիճակներուն մեր գործունէութեան զիմակալումն է, և թէ այդ զգայութիւններուն՝ արտաքին էակներու վերագրումը պատճառականութեան սկզբունքով է որ կը կատարուի:

Զ. — Կ'առարկուի թէ անասուններն ու մանուկները այդպիսի տրամախոհութիւն մը չեն կրնար ընել:

Է. — Կը պատասխանենք որ եթէ անասուններն ու մանուկները այդպիսի տրամախոհութիւն մը չեն կրնար ընել, պատճառն այն է որ բնազանցական աէ չեն կրնար ընել, հետեւաբար և չեն կրնար իրենց եսը ըմբռնել և յստակօրէն զանազանել զայն արտաքին աշխարհէն:



Պ Ա Ս Ի Բ .

ԲԱՆԴԱԳՈՒՇԱՆՔ ԵՒ ԵՐԱԶ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Բանդագուեանին սահմանումը. — Բ. Ինչպէս կարելի է ուղղել բանդագուեանը. — Գ. Հաւաքական բանդագուեաններ. — Դ. Երագ. — Ե. Բանդագուեան եւ Երագ. — Զ. Երագի զանազան տեսակներ. — Է. Պատասխանատուութիւնը երագին մէջ:

Ա. Սահման բանդագուեանի. — Բանդագուեանը սխալ արտաքին ըմբռնում մըն է: Երբ պատկեր մը, զուգորդութիւններէ թելադրուած, կը վերերեւելի մեր գիտակցութեան մէջ՝ այնպիսի ոյժով մը, որ կը տարամերժէ բոլոր ընթացակից զգայութիւնները: Ինքն ալ ներկայացնելով զգայութեան մը բոլոր յատկանիւնները, միտքը բնականօրէն կ'առարկայացնէ զայն, ու կը վերագրէ արտաքին պատճառի մը, ահա այն ատեն տեղի կ'ունենայ բանդագուեանը: Եթէ քնացած պահուս մարդու կերպարանք մը տեսնեմ սենեկէս ներս, բնականաբար այնպէս պիտի կարծեմ թէ մարդ մը կայ սենեկիս մէջ: Զգայութեան հանգամանքները նոյնութեամբ ներկայացնող զօրաւոր պատկերը ծնունդ կուտայ նոյն տրամախոհումին և միւսնոյն եզրակացութեան:

Ճշմարիտ է նաև որ ամէն պատկեր, թէ իսկ տըկար ըլլայ ան, առարկայանալու ձգտում մը ունի: Բայց ասի, ըստ մեզ, պատկերին համար ոչ թէ էական, այլ եկամուտ յատկանշական մըն է, որ կուգայ պատկերին սկզբնական զգայութեանէն: Արդարև եթէ այդ զգայութիւնը կ'արտաքնանայ յատուկ կերպով կատարուած դատումով մը, զայն տկար կերպով վերար-



տադրող պատկերն ալ, արտաքին ըմբռնումի դատումին հետ ունեցած իր զուգորդութեան հետեւանքովը՝ կը պահէ արտաքնանալու ձգտում մը:

Բ. Ինչպէս կ'ուղղուի բանդագուճանքը. — կարելի է ուղղել բանդագուճական սխալը, զայն բաղդատելով միւս զգայարաններէն նախնաբար ստացուած ծանօթութեանց կամ փորձառութեանց արդիւնքին հետ: Եթէ այն կերպարանքը տեսած միջոցիս ձեռքս երկնցնեմ մինչև սենեկիս պատը, տեսիլն իսկոյն կը փարատի, անհետանալով կարծես պատին մէջէն: Կրնայ պատահիլ որ մէկէ աւելի զգայարաններ միանգամայն բանդագուճուին. այսպէս, կերպարանքը տեսած ատեննիս կրնայ ըլլալ նաև որ մեզի այնպէս թուի թէ կը խօսի ալ մեզի հետ, կամ զգանք նոյնիսկ անոր մեզի դպչելով: Եթէ այդ կերպարանքը առանց մեր տեսնելուն դուռը բացած է և ներս մտած, կամ եթէ մեզմէ զատ ոչ ոք կը տեսնէ զայն կամ կը կը լսէ, նորէն կրնանք իմանալ թէ բանդագուճուած ենք: Այս վերջին պարագային, մեր զգայութիւններուն՝ բնութեան օրէնքին հետ համաձայնումն է որ պիտի ըլլայ կանոն և ստուգանիչ այդ զգայութեանց առարկայացումին: Պէտք է սակայն նկատել նաև թէ որովհետև զգալի բնութեան օրէնքները զգայութեանց միջոցաւ կը գտնուին միշտ, այս պատճառաւ ըստուգանիչը բացարձակ արժէք մը չունի:

Գ. Հաւաքական բանդագուճանքները. — կրնան, վերջապէս, կազմուիլ նաև հաւաքական բանդագուճանքներ: Մեծ մարդու մը գալուստին կամ մեծ դէպքի մը կատարումին սպասող բազմութեան մը մէջ,

չատ կարելի է որ ամէնքն ալ, գրեթէ միևնոյն ատեն, տեսնեն դէպքը կամ անձը: Բայց դիւրաւ կ'որոշուին այդպիսի բանդագուճանքները, ոչ թէ վասնզի շատ սակաւադէպ են, այլ անոր համար որ անոնց մէջ գրեթէ ամբողջովին կը պակսին անվիճելի հաւաստիքներ, տեսիլքին իրական և առարկայական ըլլալն հաստատող: Ասոր համար բաւական է բաղդատել հանդիսատեսներուն պատմածները: Եթէ ատոնք համաձայն են յընդհանուրն՝ բայց մանրամասնութեանց մէջ կը հակասեն իրարու, բանդագուճուած են. իսկ եթէ համաձայն են մանրամասնութեանց վերաբերմամբ ևս, զորս չէին կրնար առաջուց գիտնալ, այն ատեն չենք կրնար տարակուսիլ անոնց վկայութեան ճշմարտութեան վրայ, առանց տապալելու պատմական ստուգութեան հիմքը: Պատահարի մը արտաստվոր երեւիլը բաւական փաստ մը չէ, իրաւունք տալու համար պատմիչին որ զայն մերժէ: Բնութեան կարգէն մեզի ծանօթ եղած բաները շատ աւելի սակաւաթիւ են քան անծանօթ մնացածները. ոչ ոք իրաւունք ունի անկարելի պատրուակելով ուրանալ իրողութիւն մը: Միակ բանը, որուն պարտի ուշադիր ըլլալ պատմիչը, վկայութեան բնութեանը եւ արժէքին գնահատութիւնն է:

Դ. Երազը. — Բայց բանդագուճանքը կարծուածին չափ անբնական բան մը չէ: Մեզմէ ամէնուս ալ կը պատահի ան, քունի ժամանակ, երազի ձևով: Ինչ որ ալ ըլլայ քունին հոգեբանական իսկութիւնը, սա՛ ճշմարիտ է թէ այն միջոցին ուղեղային գործունէութիւնը դանդաղած է, և առարկայական տպաւորութիւնները չեն կրնար մինչև զգայարաններու գործարան-



ներն հասնիլ. թէ ատոր համար ենթակայական պատկերները զիրենք տկարացնողներ չեն ունենար իրենց ընթացակից զգայութիւններուն մէջ, և, այդ պատճառաւ կ'առարկայանան:

Ե. Բանդագուռանքը եւ Երազը. — Արթուն վիճակով բանդագուռութեան մէջ, պատկերը՝ հոգե-բնախօսական զանազան պատճառներու ազդեցութեան տակ այնքան կ'ուժովեայ որ ընթացակից զգայութիւնները տկար կը մնան, և ինք կը յաջողի պատկերի վիճակին վերածել զանոնք. ընդհակառակն, երազին մէջ, որ քուն վիճակով բանդագուռանքն է, զգայութիւնն է որ կը նուազի, կ'անգործանայ, մինչդեռ պատկերը ի՞նչ նախկին դիրքին մէջ կը մնայ, առանց ատով մասնաւորաբար ուժովեալու պէտքն ունենալու: Առաջին պարագային մէջ պատկերը կը նմանի դերասանի մը, որ տեսարանի մոտ խորքէն դուրս ելնելով կանթեղաշարին քով կուգայ և կը դիմակաւորէ հանդիսականներուն ուշադրութիւնն ամբողջովին զբաւող առաջին դերասանը. երկրորդ պարագային մէջ, այս առաջին դերասանը, այսինքն զգայութիւնը, կ'անհետի կարծես յատակադրան մը մէջ, և այսպէս՝ երեւելի կ'ըլլայ այն դերասանը զոր ինք կը ծածկէր:

Զ. Երազի զանազան տեսակներ. — Երազին բարացուցիչ յատկանիշներն են՝ անհաստատութիւն, անկանոնութիւն և մտապատկերներու անյարակցութիւն: Պատճառական կապը ջնջուած կամ գոնէ շատ թուրցած կը թուի: Եւ սակայն երազներ կան, որոնք կատարելապէս շարայար և յարակից են, բայց ասոնք բացառիկ կը թուին: Քնաչըջկութիւնը գործօն երազ

մըն է, որուն յատկանշանն է արթնցած ատենը մոռացում ամէն յիշատակներու: Քնածութիւնը քնաչըջկութիւն մըն է, ինչ ինչ միջոցներով յառաջ բերուած՝ աւելի կամ նուազ չափով և նախատրամադրեալ անձերու վրայ, որոնք կ'ենթարկուին իրենց հետ հաղորդակցութեան մէջ եղող ուրիշ անձերու թելադրութիւններուն, ինչպէս բնական քնաչըջիկները իրենց ներքին պատկերներուն:

Երազները, իրենց ծագումին նայելով, կրնանք բաժնել երեք կարգի:

ա. — Անոնք որ կուգան արթուն վիճակի վերջին մտածութեան զուգորդութենէն: Զինուորականի մը վրայ խորհելով քնացող մը կ'երազէ մարդ և ումբ:

բ. — Անոնք որ կուգան իրական զգայութեան մը առթած տկար տպաւորութենէն: Տէքարթ լուէ մը խայթուած ատեն, կ'երազէր սուրի հարուած մը ընդունիլ: Գիշեր մը երբ Պ. Մօրիի ծոծրակին վրայ ինկաւ իր անկողնին սրահակները կախակայող փայտը, ան երազեց թէ մահուան դատապարտուեր էր եւ կը զլխատուէր:

գ. — Անոնք որ արթուն վիճակի սովորական մը տածութիւններէն կուգան: Դպրոցականը իր վարժապետները և զօրականը իր զօրահանդէսները կ'երազէ:

է. Պատասխանաւորութիւնը Երազին մէջ. — Մեր երազներէն անոնք որ առաջին երկու դասակարգերուն չեն կրնար վերածուիլ, անպատճառ կը վերածուին երրորդին, և այսպէս կրնան մեզի ծառայել իբրեւ միջոցներ մեր անձին ծանօթութեան, վասնզի մեզի ցոյց կուտան մեր բնութեան անծանօթ վիճակները և



այն թաքուն ձգտումները, որոնք երևան ելլելով կ'ուզեն տեսանելի ըլլալ: Անշուշտ պատասխանատու չենք մեր երազներուն, բայց սա՛ ևս ճշմարիտ է թէ անոնք մեր սեփական բնութեան մէկ կողմը կը բացատրեն, ուստի և չենք կրնար բոլորովին անսլարտ զգալ ինքզինքնիս իրենց հանդէպ:

### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Բանդագուշանքը սխալ արտաքին ըմբռնում մըն է, որուն առիթ տուած է պատկերին անբնականոն մէկ ոյժը:

Բ. — Բանդագուշանքները կ'ուղղուին, բազդատուելով ուրիշ զգայութիւններու և բնութեան սովորական օրէնքներուն հետ:

Գ. — Հաւաքական բանդագուշանքները կ'ուղղուին, նոյնպէս մանրամասնեալ վկայութիւններու բազդատութեամբ:


Դ. — Երազը տեսակ մը բնականոն բանդագուշանք է, որ քունի միջոցին տեղի կ'ունենայ:

Ե. — Բուն բանդագուշանքին մէջ, պատկերը ընթացակից զգայութիւններէն աւելի զօրաւոր կը դառնայ. երազին մէջ զգայութիւններն են որ կ'անհետանան, ասպարէզը պատկերներուն թողելով:

Զ. — Քնաչըջկութիւնը գործօն երազ է, որ կը մոռցուի արթնութեան միջոցին. քնածութիւնը պատճառով մը յառաջ եկած քնաչըջկութիւն է: — Երազները երեք դասակարգի կը բաժնուին. 1. արթնու-

թեան վիճակի վերջին մտածումէն թելադրուած երազները. 2. իրական զգայութիւններէ թելադրուած երազները. 3. արթուն վիճակի ունակութիւններէն թելադրուած երազները:

Է. — Մեր երազներուն համար չենք կրնար պատասխանատու ըլլալ: Այսու ամենայնիւ անոնք կը յայտնաբերեն գոյութիւնը ձգտումներու և պատկերներու, զորս կարեոր է ճանչնալ:





ԲՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍՏԱՅԱԿԱՆ  
ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ.— Ա. Բնական ըմբոնումներ եւ ըստ-  
ցական ըմբոնումներ. — Բ. Խնդիր. — Գ. Հետեւուելիք մեքոսը.—  
Դ. Հստաուրեան, նաւակելիքի, լսողութեան, շօտաիելիքի բնական  
ըմբոնումներ. — Ե. Տեսողութեան բնական ըմբոնումներուն խրն-  
դիրը. — Զ. Փորձառականներու կարծիքը. — Է. Այս փաստերուն  
քննադատութիւնը բնայնականներու կարծիքով. — Ը. Ի ձեռք կոյրե-  
րու վրայ փորձառութիւններ. — Թ. Հակառակ փորձառութիւն-  
ներ. — Ժ. Վերջին փաստեր. — ԺԱ. Զգայարանքի վրիպանքներ

Ա. Բնական ու ստացական ըմբոնումները. — Ար-  
տաքին ըմբոնումի խարխիսն է ուրեմն այն հաստա-  
տումը, որով զգայութեանց մեղմէ չգալը կը հաւատ-  
տենք: Զգայութեանց պատճառին արտաքին առար-  
կայի մը մէջ հաստատումը բնական արդիւնքն է ըմ-  
բոնումին, այս պատճառաւ այդ հաստատումը կո-  
չուած է բնական ըմբոնում: Այսպէս, երբ թութակ մը  
տեսնելով կ'ըսենք թէ այս թութակը կանաչ է, տե-  
տողութեան բնական ըմբոնում մը արտայայտած կ'ըլ-  
լանք: Բայց չենք շատանար զգայութեան տուածը  
միայն արտայայտելով դատումին մէջ, ու զգայութեան  
չուրջը կը խոնենք զուզորդութեամբ վերակոչուած  
աւելի կամ նուազ թուով պատկերներ, զորս առար-  
կայացնելով իբրև յատկութիւն կը վերագրենք զգա-  
յութեան առարկային: Զոր օրինակ. լսելով ընդհատ  
յաջորդութեամբ շարունակուած հնչիւններ, կ'ըսենք  
թէ այնինչ հանրային ժամացոյցը այսինչ ժամը կ'ը  
զարնէ: Այսպէս, ներկայ ըմբոնումը կը ճոխացնենք

կանխագոյն փորձառութեան ստացութիւններով: Բնա-  
կան ըմբոնումի այս լրացուցիչները շատ իրաւամբ կո-  
չուած են ստացական ըմբոնումներ:

Արիստոտէլ բնական ըմբոնումները կ'անուանէր  
բուն զգալի և ստացական ըմբոնումները՝ պատահաբար  
զգալի: Զոր օրինակ. կանաչը տեսութեան բուն զգալի  
մըն է. իսկ ժամացոյցը՝ լսելիքին պատահաբար զգալի  
մըն է:

Բ. Խնդիր. — Հոս խնդիր մը կը ներկայանայ  
մեզի. որո՞նք են մէն մի զգայարանի բնական ըմբոն-  
ումները, բուն զգալիները, և որո՞նք՝ անոր ըստա-  
ցական ըմբոնումները կամ պատահաբար զգալիները:  
— Խնդիրը շահեկան է այնու զի բնական ըմբոնում-  
ները, քանի որ զուտ գիտակցական վիճակներ միայն  
կ'արտայայտեն, չեն կրնար սխալական ըլլալ, մինչ-  
դեռ ստացական ըմբոնումները, քանի որ անդին կ'անց-  
նին անմիջական փորձառութեան սահմաններէն, կըր-  
նան ընդհակառակն խաբել զմեզ: Զայն մը կամ ձայ-  
ներ կը լսեմ ըսած ատենս, չեմ կրնար սխալիլ, բայց  
կրնամ սխալիլ զանոնք այսինչ ժամացոյցին կամ  
այնինչ չէնքին վերագրելու մէջ: Այս տեսակէտով  
ուրեմն Արիստոտէլի տուած անուանները, որոնք ոչ մէկ  
վարդապետութիւն չեն ենթադրեր, և գիտակցութեան  
վիճակին պարզ հաստատումը միայն կ'արտայայտեն,  
աւելի ճիշդ են քան արդի կոչումները:

Գ. Հետեւուելիք մեքոսը. — Այս մասին հետեւուելիք  
մեթոտը սա պիտի ըլլայ որ բազմախառն ըմբոնումի  
մը տարբերուն մէջ բուն կամ բնական պիտի համա-  
րենք այն՝ որուն անհետացումը, անհետացում կը



Գ Ա Ս Ի Գ .

ԲՆԱԿԱՆ ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՍՏԱՅԱԿԱՆ  
ԸՄԲՈՆՈՒՄՆԵՐԸ

ԲՈՎԱՆԴՈՒԹԻՒՆ.— Ա. Բնական ըմբոնումներ եւ ըստ-  
ցական ըմբոնումներ. — Բ. Խնդիր. — Գ. Հետեւելիք մեքոսր.—  
Դ. Հոստութեան, նաւակելիքի, լսողութեան, շօշափելիքի բնական  
ըմբոնումներ. — Ե. Տեսողութեան բնական ըմբոնումներուն խն-  
դիրը. — Զ. Փորձառականներու կործիքը. — Է. Այս փաստերուն  
ճննադատութիւնը բնայնականներու կործիքով. — Ը. Ի ձգէ կորե-  
րու վրայ փորձառութիւններ. — Թ. Հսկառակ փորձառութիւն-  
ներ. — Ժ. Վերջին փաստեր. — ԺԱ. Զգայարանի վրիպանքներ

Ա. Բնական ու ստացական ըմբոնումները. — Ար-  
տաքին ըմբոնումի խարխիսն է ուրեմն այն հաստա-  
տումը, որով զգայութեանց մեզմէ չգալը կը հաւաս-  
տենք: Զգայութեանց պատճառին արտաքին առար-  
կայի մը մէջ հաստատումը բնական արդիւնքն է ըմ-  
բոնումին, այս պատճառաւ այդ հաստատումը կո-  
չուած է բնական ըմբոնում: Այսպէս, երբ թուլթակ մը  
տեսնելով կ'ըսենք թէ այս թուլթակը կանաչ է, տե-  
սողութեան բնական ըմբոնում մը արտայայտած կ'ըլ-  
լանք: Բայց չենք շատանար զգայութեան տուածը  
միայն արտայայտելով գատումին մէջ, ու զգայութեան  
չուրջը կը խոնենք զուգորդութեամբ վերակոչուած  
աւելի կամ նուազ թուով պատկերներ, զորս առար-  
կայացնելով իբրև յատկութիւն կը վերագրենք զգա-  
յութեան առարկային: Զոր օրինակ. լսելով ընդհատ  
յաջորդութեամբ շարունակուած հնչիւններ, կ'ըսենք  
թէ այնինչ հանրային ժամացոյցը այսինչ ժամը կը  
զարնէ: Այսպէս, ներկայ ըմբոնումը կը ճոխացնենք

կանխագոյն փորձառութեան ստացութիւններով: Բնա-  
կան ըմբոնումի այս լրացուցիչները շատ իրաւամբ կո-  
չուած են ստացական ըմբոնումներ:

Արիստոտէլ բնական ըմբոնումները կ'անուանէր  
բուն զգալի և ստացական ըմբոնումները՝ պատահաբար  
զգալի: Զոր օրինակ. կանաչը տեսութեան բուն զգալի  
մըն է. իսկ ժամացոյցը՝ լսելիքին պատահաբար զգալի  
մըն է:

Բ. Խնդիր. — Հոս խնդիր մը կը ներկայանայ  
մեզի. որո՞նք են մէն մի զգայարանի բնական ըմբոն-  
ումները, բուն զգալիները, և որո՞նք՝ անոր ըստա-  
ցական ըմբոնումները կամ պատահաբար զգալիները:  
— Խնդիրը շահեկան է այնու զի բնական ըմբոնում-  
ները, քանի որ զուտ գիտակցական վիճակներ միայն  
կ'արտայայտեն, չեն կրնար սխալական ըլլալ, մինչ-  
դեռ ստացական ըմբոնումները, քանի որ անդին կ'անց-  
նին անմիջական փորձառութեան սահմաններէն, կըր-  
նան ընդհակառակն խաբել զմեզ: Զայն մը կամ ձայ-  
ներ կը լսեմ ըսած ատենս, չեմ կրնար սխալիլ, բայց  
կրնամ սխալիլ զանոնք այսինչ ժամացոյցին կամ  
այնինչ չէնքին վերագրելու մէջ: Այս տեսակէտով  
ուրեմն Արիստոտէլի տուած անունները, որոնք ոչ մէկ  
վարդապետութիւն չեն ենթադրեր, և գիտակցութեան  
վիճակին պարզ հաստատումը միայն կ'արտայայտեն,  
աւելի ճիշդ են քան արդի կոչումները:

Գ. Հետեւելիք մեքոսր. — Այս մասին հետեւելիք  
մեթոտը սա պիտի ըլլայ որ բազմախառն ըմբոնումի  
մը տարբերուն մէջ բուն կամ բնական պիտի համա-  
բենք այն՝ որուն անհետացումը, անհետացում կը



պատճառէ նաեւ ամբողջ հոյլին, եւ ստացական ու պատահական պիտի նկատենք այն՝ որ կրնայ անհետիլ, առանց իրեն հետ անհետացնելու ամբողջ հոյլն ալ:

Դ. Հոսառութեան, նաշակելիքի, լսողութեան եւ շօտափողութեան բնական ըմբռնումները. — Հստ այսքամ կը տեսնենք թէ հոտի, համի զգայութիւնները այն ստեն միայն կը գոյանան՝ երբ իրօք հոտ մը կամ համ մը կը զգանք. հոտաւէտ կամ համեղ առարկային ձեւը, գոյնը կամ անունը չերեւակայած ատեննիս ալ նորէն չ'անհետիր անոր հոտը կամ համը:

Ուրեմն, հոտը՝ հոտառութեան, և համը՝ ճաշակելիքին բուն զգայութիւններն են:

Լսողութիւնը բնականապէս ձայներ կուտայ մեզի՝ բայց բնականապէս կուտա՞յ նաեւ այն հեռաւորութիւնը որուն մէջ կուգան անոնք: Ո՛չ. վասնզի փորձառութենէ վերջ միայն կը խորհինք արտաքնացնել հնչական պատկերները. ուստի և չենք կրնար գետեղել զանոնք 10 կամ 100 մէթր և այլն անդին: Եւս աւելի, լսողութիւնը պատահաբար միայն կրնայ տալ մեզի հնչական առարկաներու ձեւը, գոյնը:

Շօշափելիքը բնականապէս կուտայ մեզի գիմարհարութիւնը, կակղութիւնը, կարծրութիւնը, անհարթութիւնը, յղկութիւնը, քնքշութիւնը, ցրտութիւնն ու ջերմութիւնը: Շօշափողութեան զգայարանին մկանային ճանաչողութիւնը կուտայ մեզի առարկաներուն ձեւը, հաստատուն զատութիւնները, հեռաւորութիւնը, և հետեւաբար՝ եւկզիդեան միջոցին երեք զատութիւնները, երկայնութիւն, լայնութիւն և խորութիւն: Եթէ առարկայ մը հպած ատեննիս անոր գոյնը կամ հանած ձայնն ալ կ'երեւակայենք, ասիկա՞

պատահական միայն կրնայ ըլլալ, ուստի եւ գոյնն ու ձայնը շօշափելիքին համար ստացական ըմբռնումներ են:

Ե. Տեսողութեան բնական ըմբռնումներուն խրկիքը. — Տեսողութիւնը բնականապէս կուտայ մեզի առարկաներուն ձեւն ու գոյնը: Կարևոր պայքար մը յուզուած է սա խնդրին վրայ թէ արդեօք տեսողութիւնը բնականապէս կուտա՞յ մեզի երրորդ զատութիւնն ալ, թէ շօշափական ըմբռնում մըն է ան, զուգորդութեամբ փոխադրուած՝ տեսողութեան ըմբռնումներուն մէջ: Առաջին պարագային մէջ տեսողական միջոցն ալ երեք զատութիւններ պիտի ունենար, շօշափական միջոցին պէս. երկրորդ պարագային՝ երկու զատութիւններ միայն պիտի ունենար անիկա. այն ստեն միջոցին ծանօթութեան տարբերքները հաստատուն և անյեղ պիտի չըլլային, այլ յարաբերական՝ զիրենք հայթայթող զգայարանին հետ: Երրեակ զատութեամբ տարածութիւնը շօշափելիքին մէկ տուրքը պիտի ըլլար, իսկ երկեակ զատութեամբ տարածութիւնը՝ տեսանելիքին տուրքը:

Ընդհանրապէս բաւական համաձայն են տեսանելիքին երկու զատութիւններ տալու կարծիքին վրայ, այսինքն՝ լայնութիւն և երկայնութիւն: Խնդրոյն գըլխաւոր կէտն է գիտնալ թէ խորութիւնն ալ կուտա՞յ ան, կամ թէ, ինչ որ նոյն է, կրնա՞յ տալ առարկային ունեցած հեռաւորութիւնը:

Ձ. Փորձառականներու կարծիքն ու փաստերը. — Փորձառականք ժխտական կերպով կը պատասխանեն այս հարցումին, եւ իբր ասպարոյց մէջ կը բերեն սա



պարագան թէ աչքը կը կարծէ տեսնել երրորդ զատութիւնը և ըմբռնել հեռաւորութիւնը, այն ատեն նոյն իսկ՝ երբ մակարդակ պատկերներ միայն ունի իր առջև, հեռատեսիլի օրէնքով գծուած: Բաց աստի, կ'ըսեն, տեսողութիւնը կը սխալի հեռաւորութեանց գնահատումին մէջ: Երկու նաւեր ծովուն վրայ իրարու շատ մօտ կ'երևին, թէև իրօք շատ հեռի ըլլան իրարմէ. երկու առարկաներ իրարու փակչած կը կարծենք, երբ զանոնք բաժնող առարկաները չենք տեսներ ո՛ր և է կերպով մը: Երկու նաւերու կայմերը, միայնակ տեսնուած ատեննին, այսինքն երբ չենք տեսներ նաւերուն մարմինը և անոնց ներքևի ջուրը, կարծես թէ միևնոյն նաւուն կը վերաբերին, և այլն:

է. Այս փաստերուն հերքումը բնայնականաց կարծիքով. — Բնայնականք (Լայնից, Լոք) այսպէս կը պատասխանեն.

1. Տեսողութեան վրիպանքը, որով անիկա մակարդակներուն վրայ խորութիւն ալ կը հետևցնէ, ապացոյց մը չէ: Տրամախոհութիւնն է որ կ'ենթադրէ խնդրական եղածը: Հեռատեսիլի օրէնքներուն նպատակը ոչ այլ ինչ է, բայց եթէ մակարդակի մը վրայ արուեստապէս վերաբառադրել լոյսի այն ցուքերը, որոնք իրականութեան մէջ կ'ընկերանան երրորդ զատութեան. աչքը իր ունակութիւններուն համեմատ կը մեկնէ այդ տեսողական ստացութիւնները: Հեռատեսիլի օրէնքները երրորդ զատութեան տեսարաններու վրայէն առնուած են, այս պատճառաւ այդ օրէնքները հակառակ ապացուցութիւն մը չեն կրնար կազմել այդ երրորդ զատութեան գոյութեան դէմ:

2. Այլ է նշմարել երրորդ զատութեան գոյութեան

թիւնը, ա՛յլ է գնահատել զայն: Աչքը կրնայ սխալիւ հեռաւորութեանց գնահատմանը մէջ. կարևորը այն է որ կարենայ զանազան մակարդակներու վրայ զետեղել առարկաները, ու յիշուած օրէնքները կը ցուցնեն թէ աչքը միևնոյն մակարդակին վրայ չի տեսներ ո՛չ կայմերը, ո՛չ նաւերը:

Ը. Ի ծնէ կոյրերէն քաղուած փորձառութիւն. — Նոր բժշկուած ի ծնէ կոյրի մը տուած վկայութիւնը կարծես թէ պիտի կրնայ վճռել խնդիրը: Եթէ ճիշդ է փորձառականաց կարծիքը, պէտք է որ ի ծնէ կոյրը իր աչքին հետ շփման մէջ տեսնէ առարկաները, և գործէ այնպէս՝ իբր թէ իրապէս անմիջական շփման մէջ ըլլային անոնք այդ գործարանին հետ:

Արդ, շատ մը ի բնէ կոյրեր բժշկուելէն անմիջապէս ետքը այդպէս զգացած և ինքզինքնին այդպէս արտայայտած են: Ամենէն նշանաւորն է ան գորբժշկեց Cheselden անգլիացի վիրաբոյժը: Սա ինքն իր դիտողութիւնները հրատարակած է 1728ին: Երկուստարզը՝ որուն «աչաց վարագոյրները բացած էր», կը հաւաստէր որ իրեն այնպէս կը թուի թէ տեսած առարկաները աչքին դպած են, ու բացումէն քանի մը օր վերջը տակաւին կ'երկնցնէր իր ձեռքերը, հեռուի առարկաները բռնելու համար: Փորձառականաց կարծիքն այսպէս կը թուէր հաստատուած ըլլալ: Միևնոյն արդիւնքը տուին ուրիշ բազմաթիւ դիտողութիւններ ալ:

Թ. Հակառակը հաստատող փորձառութիւններ. — Բնայնականները յառաջ բերած են ուրիշ իրողութիւններ, որոնք կը թուին հակասել նախորդներուն: Չուէն



նոր ելած վառեակը ուղղակի հատիկներուն կը վազէ ու կը կոցէ զանոնք, ինչ որ պիտի չընէր, եթէ իր աչքին հպող մակարդակի մը վրայ տեսնէր զանոնք։ Նոյնպէս մտրուկը ծնելէն քանի մը ժամ վերջը մօրը վրայ կը վազէ՝ կաթ ծծելու համար։ Այս անասունները, ու է շօշափական փորձառութիւն դեռ չունեցած, ահա կը գործեն այնպէս, որպէս թէ ունենային հեռաւորութեան զգացումը։

Ժ. Ուրի՞ս փաստեր. — Միւս կողմանէ, գիտել կուտայ Բօլ-ժանէ, թէ բժշկուած ի ծնէ կոյրերուն այն խօսքը թէ առարկաներն իրենց աչքին կը դպչին, պէտք է դասական իմաստով ըմբռնել։ Առարկային իրենց աչքին վրայ ըրած տպաւորութիւնը նշանակելու համար անոնք կը գործածեն այն լեզուն՝ զոր միայն գիտեն, շօշափելիքի լեզուն։ Կը դպչին կը նշանակէ ոչ թէ այժը կը շօշափեն, այլ այժիս փրայ սպաս շորոքին կ'ընեն։ Թէ այդ բացատրութիւնը այս փոխաբերական իմաստով պէտք է հասկնալ, անով ալ կը հաստատուի որ ժամանակ անցնելէ վերջ, երբ արտեանունքին ելեւէջը, և գլխուն և մարմնոյն շարժումը կը համոզեն ենթակաները թէ առարկաները շփման մէջ չեն իրենց հետ, անոնք դարձեալ կը շարունակեն ըսել թէ առարկաները իրենց աչքին կը դպչին։ Գալով կատարած շարժումներուն, ասոնք ոչ թէ կը հաստատեն թէ անոնք բնաւ գաղափար մը չունին հեռաւորութեան վրայ, այլ թէ չեն գիտեր ճշդիւ զնահատել զայն, ինչ որ երբեք նոյն բանը է, ինչպէս արդէն ըսինք։

Ինչայնպէս կարծիքին համար նպաստաւոր են հետեւեալ բնախօսական գիտողութիւններն ալ։ Մը-

կանները կը շարժեն տեսողական գունտը, որ զանազան շարժումներ կը կատարէ, առարկաներուն շարժումները նայուածքներովը լաւ մը չափելու և առարկաներուն հեռաւորութիւնը յարմարելու համար։ Տեսողութեան կ'ընկերանայ տարտամ գիտակցութիւն մը այդ շարժումներուն, և այդպէս՝ տեսանելիքը կրնայ խորութեան կամ հեռաւորութեան տպաւորութիւն մը միայն տալ։ Անշարժ աչքը թերեւս կրկնակ զատուութիւններով միջոց մը միայն նշմարէր, բայց աչքը կենդանի է և շարժուն, և մեզի տուած միջոցը երբեքակ զատուութիւններ ունի, ճիշդ ինչպէս շօշափական միջոցը։

Եւ սակայն աչքին միջոցաւ հեռաւորութեան դրնահատումը վարժութեան պէտք ունի, և հետեւաբար ստացական բան մըն է։

ԺԱ. Զգայարաններու վիպանք. — Զգայարաններու վրիպանք կը կոչուին այն սխալները, զորս կը գործենք ըմբռնումներու մեկնութեան մէջ։ Այսպէս, ջուրին մէջ միտուած գաւազան մը բեկուած կ'երևի աչքին։ Տեսանելիքը է որ կը խաբէ զմեզ. անիկա ճշդիւ կ'աւանդէ մեզի լուսեղէն տպաւորութիւնը, այլ միջավայրին տարբերութիւնն է որ կ'եղանակաւորէ տպաւորութիւնը, եւ հետեւաբար, առարկային հետ համաձայնութիւնը։ Պէտք է ուրեմն որ երբ մեր զգայարաններու պաշտօնավարութեան ընթացքին մէջ այլալուրթիւն մը տեղի կ'ունենայ, ա'լ չվստահինք մեր զգայութեանց սովորական մեկնութիւններուն, այլ հակադրուենք զանոնք միւս զգայարաններու տուած ծանօթութիւնովը, և եթէ հարկ կայ, ուղղենք։



Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Բնական ըմբռնում կը կոչուի այն ըմբռնումը զոր միայն մէկ զգայարան մը կուտայ, առանց միւս զգայարաններուն օգնութեանը: Ստացական ըմբռնում կը կոչուի այն ըմբռնումը զոր զուգորդութիւնը թոյլ կուտայ միացնել բնական ըմբռնումին: Արիւստոտէլ շատ իրաւամբ բնական ըմբռնումները կը կոչէր զգալի ըմբռնումներ, և ստացական ըմբռնումները՝ պատահաբար զգալի ըմբռնումներ:

Բ. — Խնդիր կը յարուցուի սա մասին թէ որո՞նք են մէն մի զգայարանի բուն զգալիները կամ բնական ըմբռնումները:

Գ. — Մէն մի զգայարանի բուն զգալիները կամ բնական ըմբռնումները ճանչնալու համար պէտք է և կը բաւէ որ զգայարանը գործած ատեն՝ ըմբռնումները գոյանան, եւ զգայարանը գործելէ դադրած ատեն ըմբռնումներն ալ անհետանան:

Դ. — Հոտառութեան, ճաշակելիքի և լսելիքի բնական ըմբռնումներն են, իւրաքանչիւրին համեմատ հոտերը, համերը և ձայները: Շօշափելիքը բնականօրէն կուտայ զիմահարութեան, ցուրտի, տաքի, և երեք զատութեանց ըմբռնումը:

Ե. — Տեսութիւնը բնականօրէն կուտայ գոյներու և երկու զատութեանց ըմբռնումը: Բնականօրէն կուտայ նաև հեռաւորութեան, երրորդ զատութեան ըմբռնումը: Տեսողական միջոցը նոյն ինքն շօշափական միջոցն է:

Զ. — Փորձառականները կ'ըսեն թէ երրորդ զատութիւնը տեսողութեան ստացական ըմբռնում մըն է: Կը կարծեն ցոյց տալ թէ այդպէս է, պնդելով այն

սխալներուն վրայ զորս տեսողութիւնը կ'ընէ հեռաւորութեանց գնահատումին մէջ:


Է. — Բնայնականները կը պատասխանեն թէ մարդ կրնայ սխալիլ հեռաւորութեան գնահատումին մէջ, բայց կը տեսնէ հեռաւորութիւն մը:

Ը. — Ի ծնէ կոյրերը, իրենց աչքին վարագոյրը վերահատութեամբ բացուելէն ետքը, կ'ըսեն թէ առարկաները իրենց աչքին կը դալչին. այս կերպով, անոնք կը թուին իրաւացի նկատել տալ փորձառականներուն փաստը:

Թ. — Բնայնականները կ'առարկեն թէ կենդանիները, նոր ծնած ատեննին, որ եւ է շօշափական փորձառութիւն ունենալէ առաջ, կը յայտնեն երրորդ զատութեան ներհայեցողութիւն մը:

Ժ. — Եւ սակայն, ի ծնէ կոյրերուն խօսքը, զորս յառաջ կը բերեն փորձառականները, այլաբանական է, քանի որ անոնք կը շարունակեն նոյն լեզուն գործածել իրենց պատրանքը հասկնալէն ետքն ալ: Բաց աստի, տեսողութեան գործողութիւնը կը կատարուի մկանային զգայութիւններու միջոցաւ, որոնք տեսութեան կը խառնեն երրորդ զատութեան ներհայեցողութիւնն ալ:

ԺԱ. — Զայներու սխալներ կը կոչուին սուտ գատումները, զորս կ'ընենք, անճիշտ կերպով մեկնելով զգայարաններու տուեալները:





ԲԱՆԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԳԱՂԱՓԱՐՆԵՐԸ

ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Բարձրագոյն ծանօթոյքներ. — Բ. Անհուճին գաղափարը արտառոց է. — Գ. Կասարեային գաղափարը. — Դ. Բացարձակին գաղափարը. — Ե. Բացարձակ էակը. — Զ. Կասարեայը. Ասուած :

Ա. Բարձրագոյն ծանօթոյքներ. — Նախընթացաբար մեր հաստատած էակները, եսն ու աշխարհը, հունաւոր են, սահմանաւոր, անկատար, յարաբերական. արդ, մենք ունինք այնպիսի ծանօթոյքներ, որոնք չեն կրնար վերագրուիլ այդ էակներուն, յոյժ բարձր ըլլալով անոնցմէ. ատոնք են անհունի, կասարեայի և քացարձակի ծանօթոյքները :

Այդ ծանօթոյքները ճշմարտապէս դրական, իմանալի գաղափարներ են թէ ոչ սուտ իմացքներ, բարի մը տակ հակասական գաղափարներու գումարութիւն մը բովանդակող : Իմանալի՞ են այդ ծանօթոյքները թէ արտառոց :

Բ. Անհուճին ծանօթոյքը արտառոց է. — Անհունին ծանօթոյքին համար պէտք է նախ երկու պարագայ որոշել. մին՝ այն պարագան, որով այդ ծանօթութիւնը պիտի ընծայէինք այնպիսի առարկայի մը, որուն գոյութիւնը իր սահմաններով հաստատուած է. միւսը, այն՝ որ կ'ենթադրէ այնպիսի առարկայ մը, որ առանց սահմաններու ալ կրնայ գոյ ըլլալ :

Առաջին պարագային մէջ, յայտնի է թէ, անհունութեան նշանակութիւնը արտառոց է : Թիւի տակ բովանդակուող բոլոր առարկաներուն պարագան է այս :

Արտառոց է ըսել թէ եռանկիւն մը անհուն է. վանդի եռանկիւն մը զինքը սահմանաւորող երեք կողմերուն դիրքով միայն կրնայ ըլլալ գոյ : Եռանկիւնն անհուն է ըսած ատեննիս միանգամայն ըսած կ'ըլլանք՝ 1. ասինսանկեր ունի, քանզի եռանկիւն է. 2. յունի ասինսան, քանզի անհուն է : Արտառոցութիւն է ասիկա : Ամէն իրական անհուն քանակութիւն այսպէս արտառոց պիտի ըլլար, և հետեւաբար արտառոց է նաև անհուն քանակութեան մը իմացքը :

Կրնանք միեւնոյն դատումը ընել յատկութեան մասին ալ : Այո՛, կարգ մը յատկութիւններու համար՝ որոնք կերպով մը իսկակից են քանակի : Զոր օրինակ, արտառոց է անհուն արագութիւն մը, վանդի անհուն պիտի կրնար ըլլալ այն արագութիւնը միայն, որուն մէջ ո'ւ է միջոց պիտի կտրուէր 0 ժամանակի մէջ : Բայց արագութեան բուն տարազն ըլլալով  $U = \frac{V}{\Delta t}$ , եթէ փոխէինք զայն և գրէինք այսպէս  $U = \frac{V}{0}$ , (որ անհուն արագութեան տարազն է) անիմաստ պիտի դառնար : Շարժումը պիտի ջնջուէր արագութեան մէջէն և ի՞նչ է միթէ արագութիւնը՝ առանց շարժումի :

Բայց կան յատկութիւններ ալ, ինչպէս իմացականութիւն, բարութիւն, զօրութիւն, զորս մեր միտքը չի յղանար սահմաններու տակ. առանց որոնց, սակայն, ընդհակառակն, անհասկնալի են անոնց համապատասխանող ժխտական յատկութիւնները : Իմացականութեան սահմաններն են՝ անդիտութիւնն ու վրիպանքը : Արդ, անդիտութիւնը կամ վրիպանքը չէ որ մեզի կը գլտցեն թէ ի՞նչ է իմացականութիւնը. ընդհակառակն իմացականութիւնն է որ մեզի կը ճանչցընէ թէ ինչ է անդիտութիւնը կամ վրիպանքը : Ու-



ըեմն, անեզր, անհուն, այսինքն առանց անգիտութեան կամ վրիպանքի եղող իմացականութեան մը վրայ մտածած ատեննի՛ս միայն խոկապէս մտածած կ'ըլլանք բովանդակապէս իմացական իմացականութեան մը վրայ. որով՝ արտառուցութիւն մը չենք կրնար մտցնել իմացքին մէջ, այլ ընդհակառակն զայն կը զտենք, կը մաքրենք այն ամէն բաներէն՝ որոնք փորձառութեան մէջ իրօք կրնան հակասել և կը հակասեն անոր:

Նոյնպէս տկարութիւնը չի կրնար մեզի ճանչցնել զօրութիւնը, բայց զօրութիւնը կը ճանչցնէ մեզի տրեկարութիւնը: Ուրեմն անհուն, այսինքն առանց տկարութեան եղող զօրութիւնն է միայն խոկապէս զօրութիւն, զուտ զօրութիւն, կատարելապէս իմանալի: Եթէ անհուն զօրութեան իմանալիութիւնը քիչ մը զբժուարին է, ա՛յն է պատճառը՝ որ զօրութեան գաղափարին մէջ չարժուածի և ատով քանակի մտապատկեր մը կը մտցնենք, ինչպէս այդ կ'ընենք մեքենականութեան մէջ, ուր զօրութիւն բառը կը նշանակէ արագութեան միջոցաւ զանգուածին յառաջ բերած արդիւնքը: Զուտ զօրութիւնը, կամ, ինչպէս Արիստոտել կ'ըսէր, տարամերժաբար որակական զուտ գործը՝ հասկասկան չէ ըստ ինքեան, երբ չի հպատակիր ոչ մէկ սահմանաւորումի:

Նոյնպէս դարձեալ, բարութիւնն է որ իմանալի կ'ընէ զօրութիւնը, և ոչ թէ զօրութիւնն է որ իմանալի կ'ընէ բարութիւնը: Ուրեմն անհուն բարութիւնը արտառուց չէ, այլ ընդհակառակն՝ անխառն է ամէն հակասութենէ:

Զօրութիւնը, իմացականութիւնը, բարութիւնը անհուն կ'ըսուին, երբ կը զտուին ու կը զատուին տկար

ութենէ, անգիտութենէ և չարութենէ, որոնք, փորձառութեան մէջ, կը չափաւորեն, կը սահմանաւորեն զանոնք: Ուրեմն անհունին իմացքը կը բացատրէ այն եղանակը՝ որով կարող կ'ըլլանք կազմելու այդ իմացումները, տրամաբանական արտայայտութիւն մըն է անիկա:

Գ. Կասարեալին գաղափարը. — Զօրութիւնը, իմացականութիւնը, բարութիւնը կատարեալ կ'ըսուին, երբ զանոնք կը նկատենք իրենց զուտ վիճակին մէջ, առանց խորհելու այն միջոցին վրայ, որով կը ստանանք այդ զուտ յղացումները: Ուրեմն կատարելութեան իմացքը իմացքն է գրական յատկութեան մը, որմէ ջնջուած է ամէն ինչ որ չէ ինքն, ու ամէն ինչ որ կը հակասէ իրեն: Արդ, յայտնի է թէ ասիկա հնարաւոր է, գոնէ վերացումի միջոցաւ: Ուրեմն կատարեալին իմացքն ալ, անհունին իմացքին պէս, չէ արտառուց:

Դ. Բացարձակին գաղափարը. — Բացարձակին իմացքը ո՛ր է արտաքին ազդեցութենէ մը բովանդակ անկախութեան մը իմացքն է: Արդ, այդ անկախութիւնը երկու կերպով կրնայ իմացուիլ, ներքնապէս կամ արտաքնապէս: Առաջին պարագային մէջ, բացարձակը կը նշանակէ այն որ անկախ է անկեղծից յասկառորումէ, այսինքն ինչ որ չունի որ և է յատկութիւն: Ըսել է թէ այդ իմացքը կը ներկայացնէ միայն զուտ ծանօթոյքը անորոշ էութեան, որուն բոլոր ստորոգելիները վերացուցուած են: Այս ծանօթոյքը արտառուց չէ, գատարկ չէ, և հնարաւորը միայն կը ներկայացնէ: Երկրորդ պարագային մէջ, բացարձակ



կը նշանակէ՝ այն որ անկախ է անհն արտաբնէն յասկա-  
ւորումէ, այսինքն այն որ ստորագասեալ չէ ոչ մէկ  
արտաքին էութեան: Այս վերջին պարագային մէջ,  
բացարձակ բառը կրնայ ընծայուել կա՛մ վերացեալ  
յատկութեան մը և կա՛մ թանձրացեալ էութեան մը:

Բացարձակ բառը չի կրնար, առանց արտաոցու-  
թեան, պատշաճիլ վերացեալ յատկութեան մը: Ար-  
դարեւ, 1. իմացականութիւնը կրնանք յղանալ միտ-  
քով, զօրութիւնը և բարութիւնը հեռացընելով իրմէն,  
բայց չենք կրնար զայն մեր մտքին առջև գոյաւորել՝  
ժխտելով անոր բոլոր ազերսը զօրութեան և բարու-  
թեան հետ: Անհուն իմացականութեան մը յղացումը  
կրնայ զանց ընել այդ իմացականութեան յարաբերու-  
թիւնները զօրութեան ու բարութեան հետ. այդ յղա-  
ցումը հնարաւոր է. բացարձակ իմացականութեան ծա-  
նօթութիւնը պիտի ժխտէր իմացականութեան՝ զօրու-  
թեան ու բարութեան հետ յարաբերութիւն մը ունե-  
նալը, և այսպէս նոյնիսկ իմացականութեան հակառա-  
կելով, արտաոցութիւն պիտի մտցնէր ծանօթութեան  
մէջ, վասնզի ինքն իմացականութիւնն իսկ է որ կը  
ցուցնէ թէ ինք չի կրնար գոյ ըլլալ, առանց կապուած  
ըլլալու զօրութեան մը, գործի մը, խորհող ներգոր-  
ծութեան մը: Չենք կրնար յղանալ իմացականութիւն  
մը, որ չունենայ ոչ մի զօրութիւն, ոչ մի գործու-  
նէութիւն. պէտք է որ անիկա ունենայ գոնէ ինքզինքը  
հասկնալու զօրութիւնը, խորհուրդին գործունէու-  
թիւնը: 2. Միտքը չի կրնար խորհիլ յատկութեան մը  
ընծայուած բացարձակը, վասնզի չի կրնար իր առջև  
գոյաւորել անյատակ յատկութիւն մը. պէտք է ուրեմն  
խորհի անոր վրայ, թէ՛ ի յարաբերութեան դնելով  
էակին հետ ուր կը գտնուի ան, և թէ՛ այն մտքին՝ որ

զայն կը խորհի: Երկու պարագաներէն և ո՛չ մէկուն  
մէջ ուրեմն չի կրնար մտաբերուել իբր բացարձակ:

Ուրեմն չենք կրնար մենք բացարձակ յատկու-  
թիւններ իմանալ:

Ե. Բացարձակ եակը. — կրնա՞նք մեր մտքին մէջ  
յղանալ բացարձակ էակ մը: Այդ էակը անհուն և կա-  
տարեալ յատկութիւններով միայն պիտի կարենայ  
կազմուիլ: Ապա թէ ոչ իր սահմանաւորումներէն  
պիտի կախում ունենար անիկա, և այդ պատճա-  
ռաւ պիտի չկրնար ըլլալ բացարձակ: Ուրեմն անհուն  
եւ կատարեալ յատկութիւններու համադրումով մը  
կրնա՞նք կազմել էակի մը իմացքը: Նախ՝ իմա-  
նալի՞ է, և յետոյ՝ բացարձակ է անհունապէս զօրա-  
ւոր, անհունապէս իմացական, անհունապէս բարի էակ  
մը:

Իմանալի է ան. վասնզի բիրտ ոյժը կրնայ հա-  
կասել իմացականութեան և լոկ միայնակ իմացա-  
կանութիւնն ալ կրնայ հակասել բարութեան. բայց  
իմացական զօրութիւնը ճշմարիտ զօրութիւն է. վա-  
սնզի առաւելագոյն կ'արտադրէ ան նուազագոյն  
վատնումով. ու բարի իմացականութիւնն է ճշմարիտ  
իմացականութիւնը, վասնզի չար իմացականութիւնը  
հակասութիւն կը ծնի, այսինքն կը ձգտի ինքնիրեն  
ջնասելու: Ուրեմն զօրութիւնը, իմացականութիւնը և  
բարութիւնը ոչ միայն իրարու չեն հակասեր, այլ և  
կ'ամբողջացնեն զիրար. զօրութիւնը այն ատեն միայն  
ճշմարտապէս զօրաւոր է, երբ իմացականութիւնն է  
զինքը վարողը, և իմացականութիւնը ա՛յն ատեն մի-  
այն ճշմարտապէս իմացական է երբ բարութեան կը  
ծառայէ: Այսպէս, բարութիւնն իր մէջ կը բովան-



գակէ, իբրեւ իրեն յենարան նոյն իսկ, երկու ուրիշ յատկութիւններ, եւ չի կրնար իմանալի չըլլալ:

Այդ բարութիւնը կրնա՞յ բացարձակ կոչուել: Անտարակոյս այո՛, վասնզի իր համադրական ծանօթութեանը մէջ ունի ան ամէն ինչ որ իրեն հարկաւոր է. ունի զօրութիւն, ուրեմն կրնայ ըլլալ. ունի իմացականութիւն, ուրեմն ունի էութեան օրէնքները. ունի բարութիւն, ուրեմն ունի էութեան պատճառները: Ա՛լ որո՞ւ կամ ինչի՞ պէտք ունի ըլլալու համար: Ուրեմն բացարձակ էակն իմանալի է, բաւական է որ էութենէ թափուր վերացումի մը չվերածուի: Բացարձակ բաւարը կը բացատրէ նաև միշտ յարաբերութիւն մը, ոչ թէ բացարձակ էակին՝ ուրիշ էակներու հետ, ինչ որ հակասութիւն պիտի ըլլար, այլ մեր խորհուրդին՝ ի՞մ մտայղացումին հետ:

2. Կասաբեալը. Աստուած. — Այդ էակը արժանի է անհուն կոչուելու, ինչպէս զայն բազկացնող յատկութիւններն ալ, և մանաւանդ կատարեալ կոչուելու: Բացարձակ բարութիւնը անհուն եւ կատարեալ է: Այս է այն բարձրագոյն և ճառագայթող ծանօթութիւնը, որ կը պսակէ մեր խորհուրդին հորիզոնը, և զոր մարդկութիւնը ողջունած է Աստուած անունով:

Ամէն բանի մէջ այս ծանօթութենէն տիրապետուած, կը զգանք մեր խորհիւր, անխմաստ պիտի ըլլար ընդունիլ թէ մենք է ըլլանք, և թէ ան չունենայ ուրիշ գոյութիւն, մեր խորհուրդին իրեն ընծայած գոյութենէն զատ: Եթէ իրերը է են համեմատութեամբ իրենց բարութեան և լինելութեան պատճառին, ի՞նչպէս մենք է պիտի ըլլայինք, ու կատար-

եալը պիտի չըլլար այնպէս: Ի՞նչպէս անկատարօրէն բարի իրերը է պիտի ըլլային ու կատարելապէս բարին Աստուած պիտի չըլլար այնպէս: Անխմանալի է, նոյնպէս, որ աւելին կարենայ նուազէն յառաջ գալ, ուրեմն եթէ մենք կատարելապէս բարի չենք, ինչ որ մեր գիտակցութիւնը կը վկայէ մեզի, և սակայն կրնանք յղանալ կատարեալ բարութիւնը, ինչ որ մեր իմացականութիւնը կը ցուցնէ մեզի, ո՞ւրսկից կրնայ մեզի գալ, եթէ ոչ՝ իր էութենէն նոյն իսկ, վեհագոյն բարութեան այն գաղափարը, որ կ'առաջնորդէ մեզի, կը սրտապնդէ և կը հմայէ զմեզ:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Յարաբերական, անկատար եւ հունաւոր ծանօթոյքներէն վեր, մենք մեր միտքով կը յղանանք կամ կը կարծենք յղանալ անհունը, կատարեալը, բացարձակը:

Բ. — Քանակութեան անհունը արտաուոց է: Նոյնը չենք կրնար ըսել սակայն որակութեան անհունին համար: Կրնանք միտքով յղանալ անհուն իմացականութիւն մը, զօրութիւն մը, բարութիւն մը:

Գ. — Կատարեալին գաղափարը ուրիշ բան չըլլալով՝ եթէ ոչ անհուն յատկութեան դրական պարունակութեան գաղափարը, — վերացաբար անոր մտայղացումին հասցնող կերպէն — չի կրնար արտաուոց ըլլալ ան:

Դ. — Բացարձակ յատկութեան մը գաղափարը արտաուոց է, վասնզի յատկութիւն մը չի կրնար դրականապէս անջատուիլ որ և է ենթակայէ:



Ե. — Բացարձակ էակի մը գաղափարը արտառոց չէ, եթէ այդ էակը միտքին մէջ կը յղացուի իբրեւ համադրութիւն մը ինքնաբաւ յատկութիւններու:

Զ. — Այսպէս մտալոյցուած բացարձակ էակը կը կազմուի անհուն իմացականութեան, զօրութեան և բարութեան համադրութեամբը. անիկա կատարեալն է, Աստուած է:



## Գ Ա Ս Ի Ե.

### Բ Ա Ն Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻԻՆ. — Ա. Բանականութիւն բառին զանազան առումները. — Բ. Երկրաչափական միտք եւ շրջանկաւ միտք. — Գ. Ողջմտութիւն. — Դ. Հասարակաց զգացում. — Ե. Ինքնաստիճան. — Զ. Բանականութեան ներակ վիճակներ. — Է. Բանականութեան էութիւնը:

Բանականութիւն բառին զանազան առումները. — Բանականութիւն բառը զանազան առումներ ունի: Նախ կը նշանակէ մտքին՝ գաղափարներ յղանալու և զանոնք օրէնքներու համեմատ միացնելու զօրութիւնը. յետոյ կը նշանակէ այդ զօրութեան կատարումը: Կրնայ նաև նշանակել նոյն իսկ այն օրէնքները, որոնց համեմատ կը կատարուի մտքին գործունէութիւնը: Բոլոր այս զանազան առումները կը միանան, եթէ այսպէս սահմանենք բանականութիւնը, իմացականութեան կանոնաւոր գործունէութիւնը:

Բ. Երկրաչափական միտք եւ շրջանկաւ միտք. — Բանականութիւնը երկու կերպ գործածութիւն ունի, տեսական և գործնական: Բանականութեան տեսական գործածութիւնը կը կայանայ գաղափարներու պայծառութեան և որոշութեան, ասացուածքներու ճշգրտութեան, մտածութեանց տրամաբանական կանոններու համեմատ պինդ շղթայման մէջ: Այս է ահա երկրաչափական միտքին կազմութիւնը:

Բանականութեան գործնական գործածութիւնը կը կայանայ մտքին տրամախոհական գործողութեանց արդիւնքները մեր գործերուն պատշաճեցնելուն մէջ:



Այդ պատշաճեցումը կը պահանջէ նրբախոհ կամ շըրջանկատ միտք. այսինքն ճարտարութեան տեսականը գործնականին պահանջումներուն յարմարցնելու, եւ, ասոր համար, գտնելու իրողութեան պարագաները, որոնք կրնան թէև երբեմն շատ մանր ըլլալ, բայց դարձեալ կարող են խափանել տեսականին ամբողջական իրականացումը: Այսպէս է որ ճարտարագէտը երկաթուղին անփոփոխապէս ուղիղ գծի վրայ չի դնել, այլ ուշագործեան կ'առնու գետնին խորտուբորտութիւնները և բնութիւնը, գործին ձեւն ու վայելչութիւնը, և այլն, ու ըստ այնմ կը քաշէ իր գիծը: Մտքի այս նրբախոհութիւնը կամ շրջանկատութիւնն է ողջմտութիւն ըսուածը:

Գ. Ողջմտութիւն. — Ողջմտութեան հակառակ է ընթացքը թէ՛ անոնց՝ որ կ'ուզեն տեսականը գործնականին մէջ անցընել ուղղակի և անփոփոխ, առանց պարագաները նկատողութեան առնելու, և թէ՛ անոնց՝ որ պարագաներուն համեմատ շարունակ գործելու կերպ կը փոխեն, առանց ոչ մէկ սկզբունքէ առաջնորդուելու, անմիջական յաջողութիւնը միայն փրնտուելով: Երկուքին ալ ընթացքը հակառակ է բանականութեան, որուն բարացուցականն է անդրգուռութիւն, ինքնիրեն հետ համաձայնութիւն: Ինքզինքին կը հակասէ ուրեմն ան որ անաչառութեան և սկզբունքի խստապահանջութեան պատրուակով կը վրիպի իր հետապնդած նպատակէն, պարագաներուն ուշագործութիւն ըրած չըլլալուն համար: Այնպիսին կ'ուզէ և միանգամայն չ'ուզեր հասնիլ իր կէտադրած նպատակին: Միւս կողմէ՝ նա որ իր շահն ու յաջողութիւնը միայն ունի նպատակ, ամէն վայրկեան կը փո-

խէ իր գործելու եղանակը և սկզբունքները, որոնցմով կը փորձէ արդարացնել զանոնք: Իր խօսքն ու կեանքը ամէն վայրկեան կ'ատեն զիրար: Այս մշտական հակասութիւնները ուշ կամ կանուխ վերջապէս ի յայտ կ'ածեն իր վարմունքին եսանկատ շարժառիթը, իրեն ծառայողները պատրանաթափ կ'ըլլան, ու յաջողութիւնը միշտ կը խուսէ իրմէն, վասնզի ան զայն կը փնտռէ անդու անդադար: Ահա այս ամէնը հեռու է ողջմտութենէ:

Դ. Հասարակաց զգացումը. — Ողջմտութիւնը պէտք է շփոթել հասարակաց զգացումին հետ: Առաջինը բանականութենէն կ'ածանցի և յարակից է անոր. երկրորդը սովորութենէն միայն կուգայ, և յաճախ անարակցութիւններ կը պարունակէ: Արդարև հասարակաց զգացումը ո՛չ այլ ինչ է, եթէ ոչ մարդկութիւնը ամենէն աւելի շահագրգռող տեսական և գործնական խնդիրներու վրայ յայտնուած կարծիքներուն միջինը: Կարծիքներու այդ միջինը անշուշտ չունի ու է գիտական հանգամանք. բանականութեան և ողջմտութեան համաձայն ու յարակից ըլլալու համար, պէտք է քննադատուի, գտուի և ուղղուի անիկա: Այսպէս է որ հասարակաց զգացումը կ'ընդունի պարկեշտութեան հարկը և միևնոյն ատեն օգուտը թատրոններու, որոնց մէջ՝ սակայն՝ պարկեշտութիւնը յաճախ կը նշաւակուի: Հասարակաց զգացումը ինքնատիպ եւ յիմար կը համարի իրեն պէս չխորհող կամ չգործողը: Ո՛վ որ հանրային մակարդակէն դուրս կ'եղնէ, յիմար է հասարակաց զգացումին համար: Տարբախտն Մարքիզ տը Ժոֆրուա գարշելի կերպով հալածուեցաւ հուրն ու ջուրը միացնելով շոգեշարժ մեքենայ հնարել ու-



գելուն համար: Այս պատճառաւ է որ գիւտարարները անհասկնալի կը մնան իրենց ժամանակակիցներուն: Մարդոց համար ինքնատուութենէն աւելի անհաճոյ և ինքնատիպ մարդերէն աւելի խոտելի բան չկայ:

Ե. Ինքնատուութիւն. — Ընդհակառակն, ինքնատուութիւնը թանկագին և սակաւագիւտ յատկութիւն մըն է, վասնզի սեպհական յատկութիւնն է գիւտարարներուն, առանձնաւորութիւնն է հանճարին: Ինքնատուութիւնը՝ թէև կը թուի հակասել սովորութեան, բայց, իրապէս, կը զարգացնէ, կ'ընդարձակէ միայն զայն: Արդէն ծանօթ ճշմարտութիւններուն վրայ բան մը կ'աւելցնէ. բայց չի ստեր զանոնք, կը համաձայնի անոնց հետ, և ի վերջոյ մաս կը կազմէ սովորութեան:

Եւ սակայն, կա՛յ յոռի ինքնատուութիւն մըն ալ՝ որ արտաքին միջոցներով կը ստացուի, առանց հարկաւորաբար ճշմարիտ գիւտի մը հետ կապուած ըլլալու, այսպէս է հագուստի, հերակտրութեան, նիստ ու կացի և այլն մէջ ցուցուած ինքնատուութիւնը: Այսպիսի բաներու մէջ լաւագոյն է մարդոց ընդհանրութեան ըրածին համաձայնելով հանդերձ, պահել իր ինքնութիւնը:

Զ. Բանականութեան հակառակ վիճակներ. — Բանականութեան հակընդդէմ վիճակներ են տխմարութիւնը, խելագարութիւնը և յիմարութիւնը: Տխմարութիւնը գաղափարներ կազմելու և խմբելու անկարողութիւնն է: Մտապատկերներն այնքան յամր կուգան որ անկարելի կ'ըլլայ շղթայաւորել զանոնք: Խելագարութեան մէջ, մտապատկերներն այնքան արագ և այնքան անյարակից կերպով կը յաջորդեն իրարու, որ

անկարգութիւն յառաջ կուգայ: Յիմարութեան մէջ, վերջապէս, խանգարուած է իմացական հաւասարակը՝ ռութիւնը: Ճիշդ կամ սխալ մտապատկեր մը անհարկի կերպով կեդրոն կ'ըլլայ ուրիշ մտապատկերներու. խենթը կը խօսի, կը տրամախոհէ, կը գործէ, բայց առանց կարենալու համաձայնիլ միւս մարդոց հետ, առանց նոյն իսկ համաձայնութիւն հաստատելու իր սեփական մտապատկերներուն միջև. նոր անձնաւորութիւն մը կը բնակի իր մէջ. այնպէս որ ա՛լ չի ճանչնար իր հին յիշատակները. «Դուն ո՞վ ես» հարցուցեր են խենթի մը. «Ես Մարք Լուիզն եմ» պատասխաներ է նա. — «Առաջ ո՞վ էիր» — «Ձկնավաճառ կին մը»:

Է. Բանականութեան խկուրթիւնը. — Բանականութեան բարացուցականն է մեր մտապատկերներուն յարակցութիւնը և կապակցութիւնը իրարու հետ, և մեր գործերուն՝ մեր մտապատկերներուն հետ, և վերջապէս մեր մտապատկերներուն՝ այն բոլոր տպաւորութիւններուն հետ, որոնք կրնան զալ մեզի անցեալ, ներթիւններուն հետ, որոնք կրնան զալ մեզի անցեալ, ներկայ և ապառնի էակներէ: Արդ, յայտնի է թէ այդպիսի յարակցութիւն մը կարելի ըլլալու համար պէտք է որ բանականութիւնն ինքն իր մէջ ունենայ միութեան եւ յարակցութեան սկիզբ մը: Ուրեմն բանականութիւնը ամէն բանէ առաջ միարար գործունէութիւն մըն է: Բայց այդ միացումն ալ պիտի չկրնար կատարուիլ եթէ այդ զանազան մտապատկերները իրենց վրայ չունենային հասարակօրդ և հանրականապէս սփռուած ինչ մը, որով կարենային իրարականապէս սփռուած ինչ մը, որով կարենային իրարու վրայ յարադրուիլ և միմեան իրարու: Ուրեմն բանականութիւնը, իր զանազան մտապատկերները կրնայ



միացնել իրարու՝ անոնցմէ իւրաքանչիւրին մէջ գըտնուած հասարակորդ և հանրական տարրերը աւելի կամ նուազ գիտակից եղանակով դուրս բերելով միայն: Իր բարացուցական իսկութիւնն է հանրականը մտապատկերելու յատկութիւնը: Ինքն է որ կը յղանայ ընդհանուր գաղափարները. ինքն է որ կը մտապատկերէ խորհուրդին հանրական օրէնքները և բնութեան օրէնքները, և այսպէս կարելի կ'ընէ յարակցութիւն մը հաստատել գաղափարներուն, դատումներուն, տըրամախոհումներուն և նոյն իսկ գործերուն միջև: Իր մտապատկերներուն վրայ կ'ազդէ մասնաւոր զգայարանի մը պէս, որ իբր թէ հանրականին յայտնատեսութիւնն ունի այնպէս՝ ինչպէս աչքն ունի գոյնին յայտնատեսութիւնը: Եթէ ուզէինք բանականութիւնը գատորոշել իր գործողութիւններէն, որոնք փոխանունաբար, անոր անունովը կը կոչուին, ինչպէս տեսանք վերև, կրնայինք պահել փիլիսոփաներուն անոր տուած անունը և կոչել զայն *իմացութիւն* (intellect):

### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Բանականութիւն բառը զանազան առումներ ունի և կը նշանակէ, մասնաւորապէս, իմացականութեան կանոնաւոր գործունէութիւնը:

Բ. — Բանականութեան կիրարկութիւնը տեսական է կամ գործնական. տեսականը կը յօրինէ երկրաչափական միտքը, գործնականը՝ շրջանկատ միտքը:

Գ. — Ողջմտութիւնը ուրիշ բան չէ, եթէ ոչ բանականութեան գործնական կիրարկութիւնը:

Դ. — Հասարակաց զգացումը զանազան կարծիքներու միջինն է. հետևաբար, միշտ համաձայն չի կրնար ըլլալ անիկա ողջմտութեան հետ:

Ե. — Ինքնատուութիւնը թանկագին յատկութիւն մըն է, երբ բանականութենէն արդարացուած գիւտի մը կապուած է:

Զ. — Բանականութեան ներհակ վիճակներ են տխմարութիւնը, խելագարութիւնը, լիմարութիւնը:

Է. — Բանականութեան բարացուցականն ըլլալով մեր մտապատկերներուն իրարու և աշխարհի միւս բաներուն հետ կապակցութիւնը, իր բուն գործն է տիեզերականին խելամուտը:





Պ Ա Ս Ի Ձ.

ԵՐԵՒԱԿԱՅՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Ձեւանական երեւակայութիւն. — Բ. Կրաւորական երեւակայութիւն. — Գ. Ներգործական երեւակայութիւն. — Դ. Բազմազանութիւն երեւակայութեան. — Ե. Երեւակայութեան կարեւորութիւնը. — Ձ. Կարգաւորութիւն երեւակայութեան:

Ա. Ձեւանական երեւակայութիւն. — Բանականութեան, որուն իսկական յատկութիւնն է հանրականը մտապատկերել, բնականապէս կը զիմաբաժանի երեւակայութիւնը, որ, ընդհակառակն, եզակի վիճակներ միայն կը մտապատկերէ: Եւ սակայն մենք տեսանք որ, թէև պատկերը շատ տարբեր է ընդհանուր գաղափարէն, բայց չենք կրնար խորհիլ առանց պատկերի: Բանականութեան հանրական մտապատկերները մեր գիտակցութեան կը հասնին եզակի պատկերներու միջոցաւ միայն, զորս կը կոչենք ձևան (schème): Այս ձևանաւորութիւնը այն մշտական դերն է, զոր երեւակայութիւնը կը կատարէ իմացական գործողութեանց մէջ: Բայց երեւակայութիւնը ասկից զատ կը մատուցանէ ուրիշ ծառայութիւններ ալ, զորս պիտի ուսուցնասիրենք ստորև:

Բ. Կրաւորական երեւակայութիւն. — Երեւակայելն է. 1. Պատկերներ վերարտադրել. 2. Ձանոնք բաղակցել: Ե. Ձ. և Է. դասերուն մէջ արդէն քննեցինք պատկերներուն բանականութենէն անկախօրէն վերարտադրութեան և բաղակցութեան օրէնքները՝ այս է ահա կրաւորական երեւակայութիւն կոչուածը:

Գ. Ներգործական երեւակայութիւն. — Ներգործական երեւակայութիւնը, զոր հիմա պիտի ուսուցնասիրենք, կը կայանայ պատկերներուն՝ բանականութեան համեմատ բաղակցութեանը մէջ: Այս բաղակցութեան բարացուցական յատկանիշն է հակասական բան մը չպարունակել, այլ ընդհակառակն՝ կազմել յարակից ամբողջներ, և եթէ ոչ յօրինուածեալ գոնէ ներդաշնակ ամբողջութիւններ: Արդ, ասիկա երկու կերպով կրնայ կատարուիլ. երբեմն մենք ինքնին ունինք վերացեալ գաղափար մը, որ զուգորդութեամբ կ'արթնցնէ հոյլ մը պատկերներ, որոնք ևս՝ իրենց կարգին՝ կ'արթնցնեն նորեր: Ասոնց մէջէն անոնք որ կրնան ծառայել գաղափարը իրականացնելու և զայն աւելի ուժգին և աւելի զօրաւոր կերպով ներկայացնելու համար, կ'ընտրուին և կը սեւեռուին մտապատկերին մէջ. միւսները կը յապաւուրին: Այսպէս, գաղափարին ազդեցութեան տակ կը կազմուի երեւակայական շէնք մը: Այս շէնքը չի կրնար յարակից և բանաւոր չըլլալ: Ու այսպէս գաղափարը կը մարմնանայ: Զոր օրինակ, արձանագործ մը, որ կ'ուզէ առատութիւնը ներկայացնել, նախ պիտի մտապատկերէ մանկամարդ կին մը, հունձքեր, պտուղներ, հակադրութեամբ բեկորներու, աւերակներու. ի վերջոյ պիտի մտապատկերէ ցորենի հասկերով պսակուած մանկամարդ կին մը, որ ձեռքին մէջ ունի մանգաղ մը և պտուղներ:

Երբեմն ալ պատկերները իրարու կը զուգորդուին, շերտեր կը զուգակշռեն, զիրար կը հաւասարակշռեն, ինքնաբերաբար կը համաձայնին իրարու, առանց ունէ գիտակից եւ առաջուց յղացուած գաղափարի: Այդ ամբողջութիւնը լրանալէն վերջն է միայն որ բանաւոր գաղափար մը երեւան կուգայ մտքին մէջ և կը հայթայթ-



թէ կամ կը թուի հայթայթել պատկերներու ներդաշնակութեան գաղտնի պատճառը: Կարելի է ըսել թէ այս պարագային մէջ գաղափարը ոչ այլ ինչ է եթէ ոչ երեւակայական ամբողջութեան վերացեալ զխտակցութիւնը: Զոր օր. Ալֆրէտ տը Վիններ սա հատուածին մէջ «Մենէ ո՞վ զմայլանքով չէ դիտած երկնքի ամպերը: Հովերէն հոլովուն, արեւէն գունագեղ, խաղաղիկ կը յառաջանան անոնք միահամուռ՝ ոսկեզօծ ցըռուկներ ունեցող մթագոյն նաւերու տորմիդի մը պէս, կամ, անօր տարմերով համասփիւռ, կը սահին արագ արագ, դիւրաշարժ և երկարածիզ, գաղթող թռչուններու պէս: Մարդը յամրաքայլ ճամբորդ մըն է, որ կը նախանձի այդ արագընթաց անցորդներուն վրայ: արագընթաց են անոնք, թէեւ ո՛չ իր երեւակայութեան չափ, բայց մէկ օրուան մէջ կը տեսնեն բոլոր այն վայրերը, զորս նա կ'ոգևորէ յիշատակով կամ յոյսով»: — Ամպերուն տեսիլն ու անոնց նկարագրութիւնը ծնունդ տուած է վերջին մտածութեան, որ իմաստալից ըրած է պատկերը:

Առաջին կերպը, ընդհանրապէս, գասական կոչուած արուեստագէտներունը եւ մատենագիրներունն է: Այդպէս է նաև որ զիտունը կը գտնէ այն փորձառական եղանակը, որուն շնորհիւ պիտի կարենայ ի յայտ բերել իր փնտռած ճշմարտութիւնը, կամ լուսաւորել արդէն գտնուած ճշմարտութիւնը: Գլօտ Պէրնարի և Բասթէօրի այնքան հանձարեղ փորձերը կ'ենթադրեն յոյժ հնարագէտ երեւակայութիւն մը: Այն արուեստագէտները կամ մատենագիրները զորս կրնանք տըպաւորական կոչել, աւելի երկրորդ եղանակը կը գործադրեն: Երկրորդ եղանակը կը գործադրէ նոյնպէս զիտունը, երբ կը դիտէ, կը փորձէ և կը խարխափէ, մինչև

որ վերջապէս ցայտեցնէ այն գաղափարը, որով կրնան միանալ կանխագոյն փորձերը: Բայց հոս, այդ միտութիւնը յառաջ գալէն վերջը, ա՛լ բանականութիւնն է գործողը, ա՛ն է որ երեւակայական գործողութիւնը իր նուազագոյն աստիճանին կը վերածէ: Եթէ ուզէինք անուններ յիշել, Պուալօ և Ռասին կը ներկայացնեն առաջին կերպը, Վիկտոր Հիլեօ՝ երկրորդը: Դիւրին է այն ատեն հասկնալ թէ ի՛նչու համար առաջիններուն կատարած բաղադրութիւնը, անոնց գործերուն բանաւոր նշանակութիւնը սովորաբար անստղիւտ է. անոր համար է որ գասական են անոնք, մինչդեռ բաղադրութիւնները երբեմն տափակ և մտածութիւնն ալ յաճախ անգոյ կ'ըլլայ երկրորդներուն մէջ:

Երբեմն ալ, վերջապէս, գաղափարն ու պատկերը միանգամայն կը ներկայանան բանաստեղծին կամ արուեստագէտին, կենդանի համադրութեան մը մէջ: Այնուհետև աւելի կամ նուազ յամր կամ տաժանելի տրամախոհումի մը միջոցաւ չէ որ հեղինակը գաղափարէն պատկերներու կամ պատկերներէն գաղափարին կ'երթայ. այլ, հանձարային յայտնատեսութեամբ մը, գաղափարը կ'երևի՝ իր երեւակայական մարմինը հագած, ու պատկերները ոգևորուած կը թուին իրենց գաղափարովը: Յայտնի է թէ այս բանաստեղծները կամ արուեստագէտները վարպետները և միայն մեծ վարպետները կ'ըլլան:

Դ. — Երեւակայութեան բազմազանութիւնը. — Զգայարաններուն սրութեան կամ նրբութեան համեմատ, երեւակայութիւններն ալ բազմազան կ'ըլլան: Շատ նուրբ ու փափուկ տեսողութիւն ունեցողներն իրերուն աւելի տեսանելի յատկութիւնները կը մտա-



պատկերեն, սուր լսողութիւն ունեցողները աւելի հըն-  
չական պատկերներ կը մտապատկերեն, և այլն: Երե-  
ւակայութեան այս բնական զանազանութիւնները մեծ  
կարեորութիւն ունին տղուն նկարագրին եւ ընդու-  
նակութեան ճանաչմանը համար:

Երևակայական կառուցուածքները մտքի ունակու-  
թեանց համեմատ կը փոփոխուին: Այսպէս ճարտարա-  
պետ մը, ճարտարագէտ մը, վաճառական մը, պետա-  
կան անձ մը քաղաք մը այցելած ատեննին իւրաքան-  
չիւրը երևակայական տարբեր շէնքեր պիտի կազմեն:  
Ճարտարապետը հրապարակի մը զարդարումը պիտի  
մտապատկերէ, ճարտարագէտը կամուրջի մը՝ նաւա-  
մատոյցի մը կամ երկաթուղիի մը, վաճառականը ա-  
ռւետրական գործողութիւններ, պետական անձը՝ այս-  
ինչ կամ այնինչ բարւոքումէն հանրութեան քաղելիք  
օգուտը: Նոյնպէս, նկարիչ մը պիտի խորհի գիծերու  
կամ գոյներու այս կամ այն կերպ բաղակցութիւնը:  
Երաժիշտ մը՝ ձայներու այս կամ այն կերպ բաղակ-  
ցութիւնը. բանաստեղծ մը՝ յաջորդութիւններ գաղա-  
փարներու կամ զգացումներու, զորս այդ քաղաքին  
տեսքը կ'արթնցնէ իր մէջ:

Ե. Երևակայութեան կարեւորութիւնը. — Երե-  
ւակայութիւնը այսպէս մեր իմացականութեան կը  
հայթայթէ այն հաստատութիւնը, որուն անիկա պէտք  
ունի գիտակից ըլլալու համար իր գաղափարներուն,  
եւ այն ատաղձները, որոնք կարեւոր են անոր՝ այդ  
գաղափարները արտայայտօրէն թարգմանելու և իրա-  
կանացնելու համար: Արդարեւ, չկայ թանձրացեալ  
բան մը, որ եզակի չըլլայ: Ուրեմն երևակայութեան  
պէտք ունինք մենք, մեր մտածութիւնները թան-

ծրացնելու եւ անոնց տալու համար այնպիսի ձեւ մը  
զոր ուրիշներն ալ կարենան ըմբռնել: Մենք պիտի  
չկրնայինք գործել, եթէ առաջուց չկարենայինք երե-  
ւակայել մեր շարժումներն ու գործերը: Ուրեմն երե-  
ւակայութիւնը անհրաժեշտ է ապագային պատրաս-  
տութեանը համար: Երբ կը հաւատանք այդ կերպով  
պատրաստուած երեւակայական ապագային իրակա-  
նացմանը, այն ատեն երեւակայութիւնը յոյս մըն է  
միայն: Երբ, ընդհակառակն, կը հաւատանք թէ այդ  
ապագան պիտի չիրագործուի, երևակայութիւնը վհա-  
տութիւն կամ յուսահատութիւն կը պատճառէ: Այս-  
պէս երևակայութիւնը կրնայ պատճառ ըլլալ երջան-  
կութեան եւ թշուառութեան, գործունէութեան եւ  
անգործութեան: Մարդուս համար, էականը միշտ իր  
մտապատկերներուն տէր ըլլալն է, և գիտնալ զանա-  
զանել բուն իրականը զուտ երեւակայականէն:

Զ. Երևակայութեան կարգաւորումը. — Երևա-  
կայութեան կարգաւորումը կը կատարուի 1. խորհըր-  
դածութեամբ, որ կը քահտէ երևակայական ամբողջու-  
թեան տարրերը, զանոնք կը վերլուծէ եւ այսպէս կը  
տկարացնէ անոնց զօրութիւնը. ուրեմն հոգեխօսական  
վերլուծումը կը յօրինէ պատուական մարզանք մը,  
երևակայութիւնը կարգաւորելու համար. 2. շատ  
երկար պատկերներու տկարացումով: Այսպիսի պատ-  
զօրաւոր պատկերներու տկարացումով: Այսպիսի պատ-  
կերները տկարացնելու համար անոնց դէմ կը հանենք  
ուրիշ ներհակ պատկերներ: Զոր օրինակ, կիրքի մը  
զոյացման պատկերը տկարացնելու համար անոր կը  
հանդիպագրենք այդ կիրքին ուրիշ հետեւանքներուն  
պատկերը. 3. վերջապէս, պատկերներուն՝ բանակա-  
նութեան գաղափարի մը տակ համակարգումով, զոր



օրինակ, արգիլելու համար միտքը՝ ըստ բախտի թափառկոտելէ, զայն կը պարտաւորենք լուրջ աշխատանքի մը, թուազիտական տրամախոհումներու, կամ կը ջանանք համակարգել պատկերները օգտակար եւ բարոյական նպատակի մը համար:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա. — Երեւակայութիւնը բանականութեան կը հայթայթէ եզակի ձևաններ, որոնք, մեր գիտակցութեան մէջ, հնարաւոր կ'ընեն հանրականին մտապատկերումը:


Բ. — Այս ձևանները կրաւորական երեւակայութեան միջոցաւ կազմուած պատկերներէն կ'առնուին:

Գ. — Ներգործական երեւակայութիւնը պատկերները այնպէս մը կը բազմացնէ որ անոնք կարենան գաղափարներ արտայայտել: Երբեմն գաղափարն է որ պատկերները կը քաշէ իրեն, երբեմն պատկերներուն ներդաշնակութենէն գաղափար կ'արտադրուի, երբեմն ալ պատկերները և գաղափարը միեւնոյն ատեն կուգան:

Դ. — Տեսակ տեսակ երեւակայութիւններ կան: Ումանք զգացողութեան բազմազանութենէն կախում ունին մէն մի ենթակայի մէջ. ուրիշներ՝ ենթակային հետապնդած վախճաններու բազմազանութենէն:

Ե. — Երեւակայութիւնը անհրաժեշտ նիւթ մը կը հայթայթէ մեր ամէն տեսակ գործերուն:

Զ. — Կարելի է կարգաւորել երեւակայութիւնը՝ 1. խորհրդածութեամբ. 2. Կարգ մը պատկերներ իրենց ներհակներուն վերածելով. 3. Բանականութեան ենթարկելով զայն:



**Գ Ա Ս Ի Է**

**ԳԵՂԱԳԻՏՈՒԹԵԱՆ ԾԱՆՕԹՈՅԲԸ. ԳԵՂԵՑԻԿԸ**

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Գեղեցիկին զգացումին վերուծումը. — Բ. Գեղեցիկին դասումին մէջ գործ ունեցող կարողութիւնները. — Գ. Գեղեցիկին աւարկային յակամիւսները. — Դ. Գեղեցիկին գործունէութիւնը. — Ե. Գեղեցիկին տեսակները. — Զ. Տգեղը եւ ծաղրելին. — Է. Վսեմը. — Ը. Վսեմին տեսակները. — Թ. Գեղագիտութիւնը կամ ճաշակի գիտութիւնը:

Ա. Գեղեցիկին զգացումին վերլուծումը. — Գեղեցիկը երկու տեսակէտէ կրնայ նկատուիլ. մեր մէջ՝ իբր զգացում. մենէ դուրս՝ իբր առարկայ, իրականութիւն: Նախ ըսենք թէ ինչ է գեղեցիկին զգացումը. ասոր միջոցաւ յետոյ պիտի կարենանք ի յայտ բերել գեղեցիկ առարկային յատկանիշները:

Գեղեցիկին զգացումը հաճոյական է, և սակայն պէտք է հաճոյքը շփոթուի զգացումի հետ. ամէն ինչ որ գեղեցիկ է, հաճոյական է, բայց ամէն ինչ որ հաճոյական է՝ գեղեցիկ չէ: Աւելի եւս. պէտք է շփոթուի օգուտի զգացումի մը հետ: Ծատ բաներ, զորս հաճոյական կամ օգտակար կը զգանք (չաքարի կտոր մը, սան մը) գեղեցիկ չեն երևիր մեզի:

Գեղեցիկին զգացումը հանրական արժողութեան կը նկրտի. այսինքն չենք շատանար ըսելով թէ ասիկա մեզի համար գեղեցիկ է. կ'ուզենք որ ուրիշներն ալ մեզի պէս զգան: Եթէ մէկը ուզէ մենէ տարբեր զգալ կը տարամերժենք զայն՝ եթէ ոչ ամբողջ մարդկութենէն, գոնէ մարդկութեան բարձրագոյն դասէն, ու զայն կը կոչենք անմիտ:



Բ. Գեղեցիկին զգացումովը շահագրգռուող կարողութիւնները. — Այդ երկու յատկանիշներուն միջոցաւ պիտի կարենանք հիմա ճանչնալ գեղեցիկին զգացումին մէջ գործ կատարող կարողութիւնները: Ըստ որում հաճոյական է, ուրեմն կը վերաբերի զգացողութեան, և անով երեւակայութեան. ըստ որում հանրական արժողութեան մը կը նկրտի, ուրեմն բանականութեան ալ կը վերաբերի: Ուրեմն գեղեցիկին զգացումը յառաջ կուգայ բանականութեան եւ միանգամայն երեւակայութեան ներդաշնակաբար տրուած գոհացումէն: Ու ասիկա շատ լաւ կը բացատրէ թէ ինչո՞ւ համար գեղեցիկին զգացումը ա՛յնքան ընտիր և ա՛յնքան սակաւագիւտ յատկութիւն մ'ունի: Արդարեւ բանականութիւնը շատ անգամ կը գոհանայ ի վնաս երեւակայութեան միայն. նոյնպէս երեւակայութիւնը՝ ի վնաս բանականութեան: Թուազիտութեան պէս վերացական գիտութեանց մէջ, բանականութիւնը ամէն գոհացում կ'ընդունի, իսկ երեւակայութիւնը շատ կը չափաւորուի. երազներուն մէջ երեւակայութիւնը ազատ համարձակ կ'ըլլայ, իսկ բանականութիւնը չի գոհանար:

Գ. Գեղեցիկ առարկային յասկանիւցները. — Հիմակ ա՛լ կրնանք ի յայտ բերել առարկայական գեղեցիկին կամ գեղեցիկ առարկային յատկանիշները: Գեղեցիկը պէտք է շփոթուի ոչ հաճոյականին եւ ոչ օգտակարին հետ, ան պէտք է գոհացում տայ երեւակայութեան, և հետեւաբար զգայարաններուն, ու նաև բանականութեան: Ուրեմն պիտի ըլլայ զգալի և միանգամայն իմանալի, պիտի ըլլայ զգալի առարկայ մը՝ գաղափարացած, կամ խնամալի առարկայ մը՝ հասոյակուն ձեւերու սակ իրակաւացած:

Այս սահմանը հասկնալի կ'ընէ Գանդի տուած սահմանը. գեղեցիկը ակախաձան վախճանաւորում մըն է, որ է ըսել թէ ամէն գեղեցիկ առարկայի մէջ կայ վախճան մը, կամ ուրիշ բառերով, ամբողջութեան գաղափար մը, որ իրեն կը ստորադասէ իր մասերը, և թէ այդ առարկան իրմէն գուրս վախճան մը չունի: Ո՛չ թէ նեցուկի օգտակար դերն է որ կը կազմէ կարեւորութիւնը (cariatide) կոչուած ծնօտարձանին գեղեցկութիւնը, այլ այն տեսողական աւելորդ ձևերը, որոնք անոր վրայ կը գտնուին, որոնք՝ սակայն՝ ներդաշնակ կը մնան անոր դերին հետ: Գեղեցիկին վրայ դրուած միւս սահմանները — գեղեցիկը միութիւնն է բազմազանութեան մէջ, գեղեցիկը միջին վատութիւններ ունեցող համեմատական առարկայ մըն է — ամէնքն ալ նախընթաց սահմաններուն կը վերածուին:

Գ. Գեղեցիկ գործունեութիւնը. — Դիւրաւ կը հասկցուի ուրեմն թէ պէտք է կենայ գեղեցիկ գործունէութիւն մը, ինչպէս որ կան գեղեցիկ ձեւեր: Այդ գործունէութիւնն ալ պիտի ըլլայ անվախճան վախճանաւորում մը, այսինքն ներդաշնակութիւն մը, որ ինքնաբաւ է, և արտաքին վախճանի մը տրամադրութեան տակ չի գտնուիր: Հետեւաբար գեղեցիկ գործունէութիւն մը ոչ այլ ինչ պիտի կարենայ ըլլալ, եթէ ոչ խաղի գործունէութիւն մը: Արդարեւ մարդս խաղի (կամ զուարճութեան) համար շատ անգամ կ'առաջադրէ որ եւ է ակնբերե նպատակ մը, որուն շուրջը կը շարէ կարգ մը ուրիշ գործողութիւններ, և որ սակայն է իր ճշմարիտ նպատակը: «Ինչպէս մեծ է երանութիւնը որ կայ խաղով վաստկուած դրամին կամ հաւածուած նպատատակին մէջ: Պիտի չառնէինք՝ եթէ



պարզապէս մեզի տալին զանոնք», կ'ըսէ Բասգալ: Բոլոր զուարճութիւնները գեղեցիկ չեն, որովհետեւ ամէնքն ալ ներդաշնակ չեն. կան որ խիստ են, կան որ ծաղրելի են, բայց ամէն գեղեցիկ գործունէութիւն խաղի գործունէութիւն մըն է, հեշտ գործունէութիւն մը՝ որ կը վատնուի, չունենալով ուրիշ անմիջական նպատակ՝ ներքին գոհունակութենէն զատ, որ է պատուական զգացումը այն ստացութեան զոր բարեձեւութիւնը ինքն իրմէ ունի և կամ որ յառաջ կուգայ այն հաճոյքէն՝ զոր անիկա կրնայ ուրիշներուն հայթայթել իր լոկ ճառագայթումովը: Այսպէս է ճշմարիտ գթասրտութեան գեղեցկութիւնը: Ուրեմն գեղեցիկ գործունէութիւնը կ'ենթադրէ բանականութիւն և ազատութիւն:

Ե. Գեղեցիկին տեսակները. — Գեղեցիկը կրնայ ներկայացնել երեք գլխաւոր տիպեր. վաղնջականը, որուն մէջ զաղափարը կը տիրէ, և որուն մէջ զգալի՝ ձեւը՝ տակաւին ծանր, խոշոր ու անմաքուր է. շնորհալին, որ ցոյց կուտայ այն կէտը՝ ուր ներդաշնակութիւնը կատարեալ կ'ըլլայ զաղափարին և ձեւին, բանականութեան և երեւակայութեան միջև. փափուկը, ուր ձեւը աւելի վայելուչ՝ աւելի նուրբ կ'ըլլայ, բայց ի փնաս զաղափարին: Այս երեք տիպերը սովորաբար իրարու կը յաջորդեն արուեստներու և զբաղանութեանց պատմական եղափոխութեան մէջ:

Զ. Տգեղն ու ծաղրելին. — Երբ անհամեմատութիւն կայ առարկային մէջ, երբ բանականութիւնն ու երեւակայութիւնը կը հակասեն իրարու, առարկան տը գեղ կ'ըլլայ, այսինքն անհաճոյ: Հակասութիւնը եթէ

երկրորդական կէտերու վրայ է, որոնք չեն կրնար վտանգել առարկային գոյութիւնը, կը գրգռէ ծիծաղ միայն, եւ հետեւաբար կ'արժանանայ ծիծաղելի անուան: Եթէ, վերջապէս, հակասութիւնը յառաջ կուգայ յատկանիչէ մը, ձիրքէ մը, կամքէ մը, որ անգիտօրէն կ'արտագրէ զայն, կ'ըլլայ ծաղրելի և կը ծնուցանէ ծաղրանք: Զոր օրինակ. ձի մը՝ որուն սըլունքները չափազանց բարակ և թանձր են, տգեղ է, վասնզի մեր զգայութիւնները՝ մեր պատկերները կը հակասեն այն գաղափարին զոր ունինք տօկուն և արազընթաց լաւ ձիու մը վրայ: Ուղտին պղտիկ պոչը ծիծաղելի է անոր խոշոր մարմնոյն վրայ: Վերջապէս ծիծաղելի է Հարբակոն, որ մեծամեծ հացկերոյթներ կ'ուզէ կատարել քիչ դրամով:

Է. Վսեմը. — Երբ բանականութեան և երեւակայութեան միջև հակասութիւնը ա՛յնքան է որ երկու կարողութիւններէն մին կ'ոչնչանայ, մինչդեռ միւսը անհունապէս կը բարձրանայ, զգացուած զգացումը կը կոչուի վսեմի զգացում, և առարկան ալ կ'արժանանայ այդ անունին: Վսեմին զգացումը ուրեմն շատ տարբեր է գեղեցիկին զգացումէն, այնպէս որ ներելի չէ ըսել թէ վսեմը կատարելագործեալ գեղեցիկ մըն է: Վսեմին զգացումը կը մեծցնէ և կը բարձրացնէ հոգին, բայց ոչ առանց անոր զգալ տալու դատարկութիւն մը, անկարողութեան դառն ու տագնապալից զգացում մը, որուն երկար չի կրնար տոկալ ան:

Ը. Վսեմին տեսակները. — Քանզի երկու տեսակ վսեմ զատորոշած է. թուագիտական վսեմ կամ մեծութեան վսեմ, և ուժական վսեմ կամ զօրութեան



վսեմ: Անսահման հորիզոն մը, ծովու կամ անապատի անհուն մենութիւն մը կը յարուցանեն առաջին տեսակէն զգացումներ. խուճապական փախուստ մը, մրրիկ մը, յեղաշրջուած լեռներ և այլն կը շարժեն երկրորդ տեսակէ զգացումներ:

Թ. Գեղագիտութիւնը կամ նաեւ կի գիտութիւնը. — Ասկէ կը հասկցուի թէ այն քննադատը որ կ'ուզէ փաստեր հանել իր զգացումներէն, կրնայ, եւ իրաւամբ ալ, այդպէս ընել: Ճաշակը միմիայն ներքին ըզգացում մը չէ, այլ գեղեցիկ իրերուն ներկայութիւնը յայտնող, անոնց գեղեցկութեան աստիճանը գնահատող, տգեղ իրերու առջև նեղուող, ծիծաղելի եւ ծաղրելի իրերուն առջև ծիծաղ և ծաղր զրգուող, մեր բնութեան օրէնքներուն վրայ հիմնուած զգացում մըն է ան: Անոր միջոցաւ կը կազմենք մասնաւոր գիտութիւն մը, որ է գեղագիտութիւնը: Ուրեմն կարելի է ցոյց տալ թէ ինչպէս այս կամ այն առարկան կը գոհացնէ այդ օրէնքները կամ կը հակասէ անոնց, և թէ ինչպէս ճաշակը կրնայ արդարանալ, իր գնահատումները առաջարկել, և մինչև աստիճան մը պարտաւորիչ ընել զանոնք: Ճաշակը, ինչպէս նաև հանճարը, մասնաւոր մենաշնորհը չէ իմացական մշակոյթի. սա զայն կը կատարելագործէ, կը նրբացնէ միայն եւ երբեմն այն աստիճան կը նրբացնէ զայն, որ ա'լ կ'աւրի անոր ճշգրտութիւնն ու ճշգրտութիւնը: Ուստի ո՛չ մէկ գործ չի կրնար ճշմարտապէս գեղեցիկ յայտարարուիլ՝ մինչև որ իրեն համար չունենայ եթէ ոչ միահաւան գոնէ ընդհանուր քուէն այն ժողովուրդին զոր կը ներկայացնեն բազմաթիւ երկիրներ և բազմաթիւ ժողովուրդներ ճանչցողները:

## Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Գեղեցիկին զգացումը հաճոյական է և կը նկրտի տիեզերական արժողութեան:

Բ. — Գեղեցիկին դատումին մէջ գործ ունին երկու կարողութիւններ. 1. զգացողութիւնը, և, անոր միջոցաւ, երեւակայութիւնը. 2. բանականութիւնը:

Գ. — Գեղեցիկին առարկան միանգամայն զգալի է և իմանալի. կարելի է Գանդի հետ զայն սահմանել «անվախճան վախճանաւորում»:

Դ. — Գեղեցիկ գործունէութիւնը խաղ մըն է, որուն մէջ կը դաշնաւորուին բանականութիւնը և ազատութիւնը:

Ե. — Գեղեցիկի երեք տիպ կայ. վաղնջականը, շնորհալին, փափուկը:

Զ. — Տգեղութիւնը կը ծնի երեւակայութեան տուած գոհացումին և բանականութեան տուածին միջև եղած անհամեմատութեան անէացումէն:

Է. — Վսեմը կը ծնի բանականութեան անէացումէն՝ յօգուտ անհունապէս մտասքանչացած երեւակայութեան, կամ հակադարձաբար:

Ը. — Քանի վսեմի երկու տեսակներ կը գատորոշէ. մեծութեան կամ թուագիտական վսեմը, և զօրութեան կամ ուժական վսեմը:

Թ. — Գեղագիտութիւնը գիտութիւնն է գեղեցիկին և վսեմին օրէնքներուն, և քննադատութիւնը՝ այդ օրէնքները արուեստի գործերուն պատշաճեցնելու արուեստը:



Գ Ա Ս Ի Ը .

Ա Ր Ո Ւ Ե Ս Տ Ը

ԲՈՎԱՆԳՈՒԹԻՒՆ. — Ա. ճարտարական եւ ազատական արուեստներ. — Բ. Արուեստի բնութիւնը. — Գ. Արուեստի անկախութիւնը. — Դ. Գաղափարապաշտութիւն եւ իրապաշտութիւն. — Ե. ձեւարիք եւ իրականը. — Զ. Արուեստներուն բաժանումը:

Ա. ճարտարական արուեստներ եւ ազատական արուեստներ. — Արուեստ բառը, իր ընդհանրագոյն առումով, կը նշանակէ ամբողջութիւնը որեւէ վախճան մը իրականացնելու սահմանուած միջոցներուն: Այդ վախճանը երբեմն արտաքոյ կ'ըլլայ միջոցներէն և զանոնք իրեն կը ստորադասէ սերտ, խիստ և հարկաւոր կերպով մը. արուեստը այն ատեն ճարտարական է, և աւելի կամ նուազ մեքենական: Երբեմն ալ, չի կրնա՞ր արտաքոյ ըլլալ միջոցներէն, մի կ'ըլլայ անոնց հետ ու կը շատանայ զանոնք միացնելով ամբողջութեան մը մէջ. այն ատեն կարելի է ցուցնել միջոցներուն հարկաւորութիւնը, ուստի և արուեստն ալ կ'արժանանայ գեղեցիկ կամ ազատական անունին: Շոգեշարժ մեքենային մէջ չկայ գործիք մը, պտուտակ մը, բեռն մը, որ իր լինելութեան բացայայտ պատճառը չունենայ շինողին մտադրած վախճանին մէջ: Նպատակը ի՞նչն է, իր ատաղձն անգամ պարտաւորիչ կ'ընէ զինքը գործածողին: Ընդհակառակն, արձանի մը կամ պատկերի մը մէջ, ո՛չ նիւթը և ո՛չ գիծերուն յօրինուածքը մանրամասնաբար պարտաւորիչ բնութիւն մը չունին: Այսպէս կը բացատրուի ահա գեղարուեստներուն կամ ազատական արուեստներուն արտադրութիւնը, առանց մակզիրի՝ լոկ արուեստ ըսուած ա-

տենը, միշտ կը հասկցուն գեղեցիկ արուեստները կամ ազատական արուեստները (\*): Այս գլուխին մէջ պիտի խօսինք այս վերջիններուն վրայ միայն:

Բ. Արուեստի բնութիւնը. — Արուեստին առաջադրած նպատակն է հոգիին մէջ արթնցնել գեղեցիկին կամ վսեմին զգացումները: Ի՞ր այդ նպատակին կրնայ հասնիլ անիկա այնպիսի մտապատկերացումներով ալ, որոնք ոչ գեղեցիկ են և ոչ վսեմ. ինչպէս այս կ'ըլլայ, զոր օր., կատակերգութեանց և ողբերգութեանց մէջ: Ասոր պատճառն ա՛յն է որ արուեստի գործը կրկնակ նշանակութիւն մը, կրկնակ արժէք մը ունի: Անիկա կ'արթնցնէ գաղափարը. 1. իր ներկանունի, 2. այդ ներկայացումը արյացուցած առարկային, և 3. այդ ներկայացումը արտադրող արուեստային գործունէութեան: Արդարեւ, նախընթաց դասին մէջ տեսանք թէ խաղի գործունէութիւնը կրնայ արթնցնել գեղեցիկին զգացումը: Արդ, արուեստը, էպպէս, խաղ մըն է. ո՛չ ճարտարապետական զարդարանքները, ո՛չ պատկերները, ո՛չ արձանները, ո՛չ բանաստեղծութիւնը՝ տարամերժաբար օգտուէտ վախճան մը չունին: Ուրեմն արուեստային գործունէութիւնը կրնայ, ինք միայնակ, արթնցնել գեղեցիկին զգացումը, ինչ որ ալ ըլլայ ի՞ր մտապատկերած առարկան:

(\*) Այս դիտողութիւնը կրնայ արժէլ հայերէնին համար ալ. — Աւխարհաբարի մէջ սովորութիւն է եղած սարբերութիւն մը ըսելու Արուեստ եւ արհեստ բառերու իմաստին մէջ: — Առաջինով կը նշանակուին գեղարուեստներն ու բարձրագոյն կարգի ճարտարարուեստները (metier), ներք, իսկ վերջինով՝ ստորին կարգի ճարտարարուեստները (artisan), որոնց վախճանն է օգուտի աւելի քան արհեստը. Թ.



Ձրկայ բնաւ օձ, չրկայ գագան սոսկալի,  
Ձորս արուեսն աչից չրնէ հանելի:

Արուեստային գործունէութիւնը կրնայ վսեմին  
զգացումն ալ արթնցնել, երբ գործը թուի պահանջած  
ըլլալ գերմարդկային ճիգ մը: Ուրեմն, արուեստի գոր-  
ծերով արթնցած գեղագիտական յուզումը բազմա-  
մասն է. մէկ մասը կուգայ առարկայէն նոյն իսկ, և  
միւսը այն մտապատկերէն, զոր մենք կը կազմենք  
արուեստային գործունէութեան վրայ:

Գ. Արուեստին անկախութիւնը. — Արուեստը,  
խաղի գործունէութիւն մը ըլլալով, իր բնութեան հե-  
տեանքովն իսկ, անկախ է որ և է արտաքին վախճա-  
նէ, որ է ըսել թէ արուեստագէտ մը, երբ իր միտքը  
դրածէն տարբեր վախճան մը պարտադրենք իրեն, ալ  
չի կրնար ճշմարիտ արուեստի գործ մը արտադրել:  
Ասով սակայն ըսել չենք ուզեր թէ արուեստը կրնայ  
ըստ հաճոյս, մեղանչել բանականութեան, գիտութեան  
կամ բարոյականին օրէնքներուն դէմ: Արուեստը իբ-  
րեւ գերազանցապէս մարդկային գործ, չի կրնար հա-  
կառակիլ այդ օրէնքներուն, առանց դուրս ելլելու  
մարդկութենէն, և, հետեւաբար, առանց հակասելու  
իր սեփական հանգամանքին: Այսպէս, արուեստը չի  
կրնար և պէտք է իրեն իբր նպատակ առաջադրել  
ինքնիրմէն դուրս բան մը, զոր օրինակ՝ բարոյականը,  
բայց հակադարձաբար, եթէ հակասէ բարոյականին,  
անարժէք և ստորին կ'ըլլայ: Բարոյականը, ինչպէս  
նաև գիտութիւնը, չէ նպատակ արուեստին. անոր կա-  
նոնն ու պայմանն է միայն:

Գ. Գաղափարապատկերն եւ Իրապատկերն.

— Տեսականագէտները խնդիր յարուցած են արուես-  
տին զիրքին մասին, հարցնելով թէ բնութեան ճշգրիտ  
նմանահանութեանը միջոց մը միայն պէտք է ըլլայ  
ան՝ թէ բանականութեան զաղափարները արտայայ-  
տելու: Առաջին դրութիւնը, կամ նմանութեան որո-  
շիւնը կը կոչուի իրապատկերն կամ քննապատկերն,  
երկրորդը գաղափարապատկերն:

Գաղափարապատկերն սխալ է, եթէ այդ  
բառով պիտի խմանանք այնպիսի վարդապետութիւն  
մը որուն հետեւող արուեստագէտը պարտաւորեալ ըլ-  
լայ բանական գաղափարներուն համեմատ կանոնելու  
լի գործին բոլոր մանրամասնութիւնները: Այն ատեն  
իր գործին բոլոր մանրամասնութիւնները: Այն ատեն  
զործը կ'ըլլայ այլաբանութիւն մը՝ խորհրդանշան մը,  
արուեստագէտին գործունէութիւնը կը շլթայուի և կը  
ծառայեցուցուի արտաքին վախճանի մը, ա'լ խաղի  
գործունէութիւն մը չ'ըլլար, եւ՝ հետեւաբար՝ ա'լ չի  
կրնար ըլլալ գեղեցիկ: Բաց աստի, ինքզինքնիս եթէ  
ստիպենք ձեւերով գաղափարներ միայն ներկայացնե-  
լու, պէտք պիտի ըլլայ, քանի որ գաղափարները ընդ-  
հանուր են, ձեւերուն տալ ընդհանուր հասարակաց զի-  
տեր միայն, որոնք գործին վրայէն պիտի վերցնեն ա-  
մէն անհատականութիւն, և այդու նաև ամէն կեանք:  
Յայտնի է այլաբանութեանց ցրտութիւնը, և անվար-  
կութիւնը արուեստի այն դործերուն, որոնք ամէն  
բանէ առաջ՝ զուտ գաղափարներ արտայայտելու յատ-  
կացուած են:

Ոչ նուազ սխալ է, նմանապէս, իրապատկերն  
ըն: Անոր կուտակիցները արդարեւ կը պաշտպանեն  
այն կարծիքը թէ արուեստագէտը պարտի բաւակա-  
նանալ բնութիւնը նմանահանելով միայն, իր տեսա-  
ծին պէս, առանց գիտողութիւններու. պէտք է որ,



կ'ըսեն, անիկա գործին մէջ ինքզինքը արտայայտէ, պէտք է առարկայապէս, և, այսպէս ըսենք, կրաւորապէս հաղորդէ տեսածը կամ դիտածը, առանց, ինչպէս դիտած ատենը, շնորհում ընելու մարդոց ճշակին կամ զգուանքին, ինքզինքը հեռի պահելով ամէն պայմանագրականութենէ:

Արդ, արուեստի այդպիսի իմացում մը մեզի անձիչդ կը թուի՝ պատճառներուն ամենէն գերազանցին համար, այսինքն անոր համար որ անկարելի է, եւ այս՝ երեք շարժառիթներով: Առաջին. վասնզի ոչ մէկ արուեստ չի կրնար գոյ ըլլալ առանց պայմանագրութեան: Քանզակագործութիւնը կը հանգչի այն պայմանագրութեան վրայ թէ անշարժը կրնայ ներկայացընել շարժունը. սուսերամարտիկը, թէև անշարժ է, բայց շարժումներ կը ներկայացնէ մեզի. նկարչութեան մէջ՝ ընդհանուր կերպով տեսնուած է թէ՛ անշարժը կրնայ ներկայացնել շարժունը. և թէ, դարձեալ, մահարդակ պատկեր մը կրնայ ներկայացնել երբորդ զատութիւնը. երաժշտութիւնը կը հանգչի այն պայմանագրութեան վրայ թէ մարդիկ երգած ատեննին կը խօսին. բանաստեղծութիւնը՝ այն պայմանագրութեան վրայ թէ անձերը չափաւ կը խօսին. բանագործական արուեստը՝ այն պայմանագրութեան վրայ թէ կրնանք ազատ համարձակ մտնել վայր մը, որ մերինը չէ, թէ այն անձերը մեզի կը պատմեն իրենց ամենէն ներքին գաղտնիքները, և այլն:

Երկրորդ. ինչ որ ալ ըլլայ արուեստագէտին անկեղծութիւնը և հոգը՝ հաղորդածին ճշմարտութեանը մասին, իր ընդունածը միայն կրնար հաղորդել անորդ, անոր զգայութիւններուն արտադրիչը միմիայն բնութիւնը չէ. զգայութիւնը՝ զգացողին և զգացու-

ղին հասարակորդ գործ մըն է, ինչպէս կ'ըսէր Արիստոտել. արուեստագէտն իր կերպովը կը տեսնէ, իր եղանակովը կ'իմանայ: Իր զգայութիւնները հաղորդած ատենը չի կրնար բնութեան վրայ չաւելցնել ենթակայական մեկնութիւն մը. որ է ըսել թէ իրապաշտութիւնը անկարելի է:

Վերջապէս, բոլոր արուեստները անպատճառ կ'այլալեն իրերուն ամբողջական տեսքը, այնու զի՝ անոր վրայէն ըստ կամս փրցուած կտոր մը միայն կրնան ներկայացնել անոնք, ինչ որ կը հաստատէ իրապաշտութեան երբորդ մէկ հնարաւորութիւնն ալ. ուրեմն չկայ արուեստ, առանց պայմանագրութեան. ամբողջական իրապաշտութիւնը անկարելի է:

Թէ իսկ կարելի ըլլար իրականացնել զայն, նուէն պէտք պիտի ըլլար հերքել իրապաշտ իմացումը, վասնզի պիտի հակասէր նոյն իսկ արուեստին նպատակին: Արդարև, իրապաշտ արուեստին կէտ նպատակին աչքի պատրանքէն զատ ուրիշ բան մը չի կրնար ըլլալ. արդ, արուեստի գործերը, հակառակ պարագային, շատ պարագաներու մէջ խորշելի պիտի ըլլային, և բազմաթիւ ուրիշ պարագաներու մէջ ալ պիտի կորուսնային իրենց շահեկանութիւնը: Եթէ ես չկարեւորնցնէի իրենց շահեկանութիւնը, նամ որոշել տեսակի մը պատկերը բուն իսկ տեսակէն, հեռու պիտի ըլլամ անոր մէջ հաճոյք գտնելէ, եթէ չը կարենամ որոշել մամուռի մը կամ խեցիի մը նկարը բուն իսկ մամուռէն կամ խեցիէն, այն շահեկանութիւնը պիտի գտնեմ միայն անոնց մէջ, զորս պիտի գտնէի նոյն ինքն մամուռին կամ խեցիին մէջ: Արուեստագէտին ստեղծած նոր տիեզերքը իրականին կը կնուծմը միայն ըլլալով, պիտի չկարենար անկէց աւելի գեղեցկագիտական ըլլալ:



Ե. Ճշմարիտը եւ իրականը. — Բնութեան առարկաներուն նմանագործութիւնը, ճիշդ ինչպէս որ են, չի կրնար աւելի ճշմարիտ ըլլալ քան ինչ ինչ գաղափարային տիպերու նմանեցումը: Արդարեւ, ճշմարիտը ո՛չ թէ այն իրականն է, որ պատահական է աւելի կամ նուազ, այլ ա՛յն իրականը՝ որ համաձայն է ընդհանուր օրէնքներուն: Տձեւ մարդ մը ճշմարիտ մարդ մը չէ, ինչպէս անհաւասար շառաւիղներով շրջանակ մը չէ ճշմարիտ շրջանակ մը: Տօնալաճառի թանգարաններու քով մեղրամոմէ արձան մը աւելի կեղծ է, թէև վայրկեան մը աչքերը կը խարէ, քան թէ ճերմակ մարմարէ բոլորաբիւր արձան մը: Ինչո՞ւ համար: Վասնզի կը ջանայ պատրել և չի յաջողիր, ունենալով կեանքի արտաքին երևոյթները, այլ չունենալով ջերմութիւն եւ շարժում: Ուստի եւ ստայօդ կը համարինք զայն: Մարմարէ արձանը այնպէս չէ, ինչ որ է այն միայն կը հաղորդէ, անկեղծ է: Այս է պատճառը որ ամենէն աւելի կատարեալ նմանութեամբ շինուած մեղրամոմէ ձեւերը անհաճոյ տպաւորութիւն յառաջ կը բերեն: Կալտոնի բաղադրական կենդանագիրներու փորձըն ալ արդէն այնպէս ցոյց տուաւ թէ բաղադրական պատկերը որքան քիչ անօտը ըլլայ, այնքան աւելի հաճոյատեսիլ կ'ըլլայ քան բաղադրիչ անհատական պատկերները: Ասոր պատճառն այն է անշուշտ որ տարականոն աննմանութիւններուն մասամբ անհետացումովը, բաղադրական կենդանագիրը կը մօտենայ բնականոն տիպին, որ թէև նուազ անհատական, այլ աւելի ճշմարիտ է:

Ճշմարտութիւնը կրնար գտնուիլ այնպիսի գրութեան մը մէջ միայն որ արուեստագէտին պիտի թոյլ տար ներկայացնել այն բոլոր զգալի ձեւերը, զորս բը-

նութիւնը կ'ընծայէ իրեն: Որովհետև այդ ձեւերը բընութենէն փոխ առնուած են, չեն կրնար չափազանց հեռանալ առարկայական իրականութենէն, առանց տհաճութիւն պատճառելու. առարկայական նմանութեան գործ է անա ստիկա: Որովհետև, միւս կողմանէ, արուեստագէտին գործունէութիւնն իսկ է որ կը հանդիսանայ հոն, զայն ներշնչող զգացումը՝ զայն ոգևորող խաղի յուզումը պէտք է ըլլայ գաղտնի պատճառը, և գոգցես ներդաշնակիչ կապը ձեւերուն: Կարելի է որ, եթէ արուեստագէտը խորհող մըն է, զաղափար մը ըլլայ խաղին մէջ մտնողը եւ ձեւեր հազնողը, բայց կարելի է որ աւելի կամ նուազ տարտամ կամ շփոթ զգացում մը միայն ըլլայ ան: Այս է անա, արուեստին մէջ, ենթակային բաժինը:

Զ. Արուեստներուն բաժանումը. — Այն զգայարաններուն համեմատ, որոնց կ'ուզողուն՝ երկու տեսակի կը բաժնուին արուեստները. տեսողութեան արուեստները, ճարտարապետութիւն, քանդակագործութիւն, նկարչութիւն, պար. լսողութեան արուեստներ, երաժշտութիւն, բանաստեղծութիւն: Այս արուեստներէն իւրաքանչիւրն արտայայտումի իրեն առանձնայատուկ միջոցներ ունի. այսպէս ճարտարապետութիւնը կը գործածէ գծային ուղղութիւններ, լիութեան եւ դատարկութեան համեմատութիւններ, զատութեանց յարաբերութիւն, ատաղձներու արտաքին յարմարութիւն, ճարտարապետական կարգեր, որոնք կը ծագին սիւներու ձեւէն կամ կամարներու կորութենէն: Քանդակագործութիւնն ու նկարչութիւնը զգացումները ուղղակի կը բացատրեն ներկայացուած էակներու կեցուածքովն ու շրմագծութիւններովը:



Բայց գիծերն անգամ, իրենց յարմարութիւններովն ու համեմատութիւններովը, ունին գեղեցկագիտական արժէք մը՝ իրենց յուզող նշանակութենէն զատ: Նոյնպէս են նաև գոյները: Երաժշտութիւնը գեղագիտական ազդեցութիւններ կ'արտադրէ յաջորդական ձայներու (մեղեդի) կամ միանուագ ձայներու (ներդաշնակութեամբ) բաղադրումով: Կը գործէ նաև չափով, որ յարաբերութիւն ունի բանաստեղծութեան հետ: Երաժշտական կամ քերթողական չափը, արտայայտիչ և յուզիչ է անոր համար որ կը հրամայուի երաժշտին կամ քերթողին կիրքէն, կը կանոնաւորէ ունկընդիրն շնչառական կշռոյթը, զօրութեամբ պատկերի՝ օրէնքին, որով սա կը ձգտի իր իրականացումին, եւ անոր մէջ կը ստեղծէ շնչառական կրայոյզ վիճակ մը, որ կ'ընկերանայ իր զգացումներուն սովորական ուղղութիւններուն: Բանաստեղծութիւնը, բացի տաղաչափութենէն, կ'օգտուի նաև բառերու պերճաբանութեամբ: Այսպէս արուեստներուն ամենէն ճշգրիտ՝ ամենէն ամբողջն ու ամենէն իմացականն է ան:

### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Երկու տեսակ արուեստներ կան. ճարտարական կամ մեքենական արուեստներ, և ազատական արուեստներ կամ գեղեցիկ արուեստներ: Արուեստ բառը, իր բացարձակ առումին մէջ, ասոնք կը նշանակէ:

Բ. — Արուեստը խաղի գործունէութիւն մըն է, որ գեղեցիկ կամ վսեմ յուզումներ կը հայթայթէ:

Գ. — Արուեստը անկախ է այն իմաստով որ պէտք է ստորադասուի ոչ մէկ արտաքին վախճանի:

Բայց պայմաններ ունի ան, ինչպէս բարոյական օրէնքները, որոնց եթէ չհնազանդի՝ կ'իյնայ:

Դ. — Գաղափարապաշտութիւնը այն գրութիւնն է, որ կ'ուզէ արուեստին հարկադրել պարտաւորութիւն իմացական առարկաներ միայն մտապատկերելու. այս գրութիւնը արուեստը շատ ցուրտ խորհրդապատկերութեան մը կը վերածէ: Իրապաշտութիւնը այն գրութիւնն է որ կ'ուզէ արուեստին հարկադրել պարտաւորութիւն՝ իրերը մտապատկերելու այնպէս ինչպէս որ են. այս գրութիւնը անկարելի և հակասական է:

Ե. — Ճշմարիտը պէտք է շփոթուի իրականին հետ: Ճշմարիտը միշտ բնականոն է. իրականը չի կըրնար այդպէս ըլլալ: Արուեստը ազատ է խաղալու գոյութիւն ունեցող և մարդկային զգացողութեան ենթակայ բոլոր ձևերուն հետ:

Զ. — Արուեստները կը բաժնուին տեսողութեան արուեստներու (ճարտարապետութիւն, քանդակագործութիւն, նկարչութիւն, պար) և լսողութեան արուեստներու (երաժշտութիւն և բանաստեղծութիւն): Այս արուեստներէն իւրաքանչիւրը այտայայտումի իր մասնաւոր միջոցները ունի:



Պ Ա Ս Ի Փ .

ԳԱՂԱՓԱՐՆԵՐՈՒ ԱՐՏԱՅԱՅՏՈՒՄ . ԼԵԶՈՒ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ . — Ա . Նսանք . — Բ . Բնական նսանքեր եւ արուեստական նսանքեր . — Գ . Լեզու . — Դ . Ծագումն լեզուի . — Ե . Կազմութիւն լեզուի մանուկին մէջ . — Ջ . Կազմութիւն լեզուի մարդկութեան մէջ . — Է . Նախագիծ փիլիսոփայական ֆեռականութեան . — Ը . Վերլուծական եւ համադրական լեզուներ . — Թ . Ընդհանուր գաղափարին դերը . — Ժ . Լեզուին յարաբերութիւնները խորհուրդին հետ . — ԺԱ . Գրչութիւն :

Ա . Նսանք . — Միայն գաղափարներ կազմելը բնական չէ, պէտք է նաեւ մարդ արտայայտէ զանոնք, նախ իրեն՝ յետոյ ուրիշներուն համար: Չկրնալով մեր խորհուրդը ուրիշի գիտակցութեան մէջ փոխադրել ուղղակի, կը կատարենք այնպիսի շարժումներ կամ կ'իրականացնենք այնպիսի գործեր, որոնք ուրիշներուն գիտակցութեան մէջ կ'արթնցնեն մերիններուն նման վիճակներ: Այս մարմնական շարժումները, այդ գործերը կը կոչուին նշաններ: Այսպէս նշանը այն բանն է, որ իրեն հետ կը բերէ ուրիշ բանի մը իմաստը: Ուրեմն նշանակումը կը հիմնուի կրկնակ զուգորդութեան մը վրայ. 1. նշանակում իրին եւ նշանին զուգորդութիւնը՝ նշանակող գիտակցութեան մէջ. 2. նշանակում իրին և նշանին զուգորդութիւնը այն գիտակցութեան մէջ որուն կը նշանակուի: Որպէսզի շոճիի ճիւղ մը, զոր օրինակ, կարենայ նըշանակել իջեվան մը պէտք է 1. որ իջեվանին տեղը իր իջեվանին գաղափարը զուգորդած ըլլայ շոճիի ճիւղին. 2. որ ճամբորդները շոճիի ճիւղը զուգորդեն իջեվանի գաղափարին:

Բ . Բնական նսանքեր եւ արուեստական նսանքեր . — Երբեմն նշանը բնական կերպով կապուած կ'ըլլայ նըշանակեալ իրին, ինչպէս են դիմադոութեան խաղերը՝ գիտակցութեան վիճակներուն համար, այն ատեն նըշանին հեղինակը զայն կ'արտադրէ ինքնաբերաբար, և, յաճախ, ակամայ կերպով մը. ընդունողն ալ ինքնաբերաբար կը մեկնէ զայն, առանց ո՛րեւէ կանխադոյն համաձայնութեան. այսպէս կազմուած նշանը կը կոչուի բնական: Չայնական շեշտումները, շարժումները՝ բնական նշաններն են զանազան զգալի վիճակներու, եւայլն:

Կրնայ ըլլալ նաեւ որ — և աս ամենէն աւելի սովորական պարագան է — նշանը կապուած ըլլայ նըշանակեալ իրին, աւելի կամ նուազ կամաւոր եղանակով մը: Նշանին հեղինակն այն ատեն զայն կ'արտադրէ անդրադարձութեամբ և կամաւորապէս: Իսկ ընդունողն ա՛յն ատեն միայն կրնայ հասկնալ զայն, երբ տեղեակ ըլլայ հաստատուած պայմանադրութեան, որուն համեմատ՝ այսինչ նշանը պիտի նշանակէ այսինչ իրը: Որպէսզի թեզանիքի մը վրայի տրեզները կարենան նշանակել այս կամ այն աստիճանը, պէտք է որ այդպէս խորհած և կամեցած ըլլան զինուորական համազգեստի պէսպիսութեանց տնօրինողները: Տրեզներէն աստիճանները ճանչնալու համար, պէտք է ուսած ըլլան բանակին կանոնները. այսինքն անդեակ ըլլալ կանխաւ հաստատուած պայմանադրութեան: Այս կերպով կազմուած նշանը կը կոչուի արուեստական նշան: Բոլոր զգայարաններն ալ կրնան ծառայել նըշանակումի գործին, բայց ամենէն աւելի տեսանելիքն ու լսելիքը: — Ըստ այսմ կան տեսողական նշաններ (շարժում, գիր, նկար, տեսողական հեռագիր, ևլն.)







իրականացումի ձգտումին հետեւանքով՝ մանուկը կը վերարտադրէ լսողական ձեւը, երբ տեսողական ձեւը կը վերերեւի տկար կամ զօրաւոր վիճակով: Այս ըստ-  
 զական ձեւերը հետզհետէ փոխանակիչները կը գառ-  
 նան ամբողջ առարկային: Երբ մանուկը փափազի ու-  
 նենալ առարկան, պիտի վերարտադրէ այդ լսողական  
 ձեւը, եւ այսպէս զօգօ պիտի ըսէ հաւին համար, եւ  
 միտա՝ կատուին համար:

Բայց զօգօ եւ միտա ձայները զուգորդ են տե-  
 սողական ձեւերու որոնց գլխաւոր գիծերը միայն պա-  
 հած է մանուկը. այսպէս անոր գիտակցութեան մէջ  
 զօգօ ձայնապատկերին զուգորդ են վէտվէտեալ ձեւեր,  
 լպլրիժ՝ մետաքսափայլ մակերես մը, կտուց մը, թեւեր,  
 երկու ոտքեր: Արդ, այս գիծերը հասարակաց են բո-  
 լոր թռչուններուն, ուստի եւ զօգօ բառը պիտի ըլլայ  
 փոխանակիչ թռչունի բաղադրական պատկերին, եւ  
 յետոյ, շատ դիւրաւ, պիտի կարենայ նշանակել ընդ-  
 հանուր գաղափարը: Այսպէս մանուկը կը կազմէ ընդ-  
 հանուր անուններ: Ճշմարիտ լեզու մը ունենալու հա-  
 մար պէտք է միայն միացնէ զանոնք իրարու:

2. Լեզուի կազմութիւնը մտքի կազմութեան մեջ. —  
 Ոչինչ կ'արդիւնէ զմեզ ենթադրելէ որ մարդկութիւնը  
 մանուկին պէս վարուած ըլլայ լեզուի յօրինումի գոր-  
 ծին մէջ, տակաւ առ տակաւ հնարելով զայն՝ ձայնե-  
 րու եւ իրերու բնական յարաբերութեանց ազդեցութեան  
 ներքեւ: Ամէն հնչական ձեւ, որ զուգորդ է տեսողա-  
 կան ձեւի մը, ի սկզբան անպատճառ պէտք է եղած  
 ըլլայ առարկային ձայնական նշանը, անունը: Հետեւա-  
 բար բնաձայնը պէտք է կարեւոր դեր մը խաղացած  
 ըլլայ լեզուին կազմութեանը մէջ, բայց չենք կրնար

բոլորովին անոր պարտիլ լեզուի կազմութեան գաղտ-  
 նիքը. վասնզի կան առարկաներ ալ, որոնք անձայն  
 են, եւ այդ պատճառաւ չեն կրնար տեղի տուած ըլ-  
 լալ ոչինչ բնաձայնի: Կրնայ ըլլալ որ մարդս այդ ա-  
 ռարկաներէն ոմանց անունը տուած ըլլայ, անոնց ե-  
 րևոյթին իրմէ կորզած ձայնարկական ճիշովը միայն,  
 բայց չափազանցութիւն պիտի ըլլար՝ նոյնպէս՝ ըսել,  
 քանի մը հեղինակներու հետ, թէ ձայնարկութիւնն է  
 միակ ծնուցիչը լեզուին: Կը կրկնենք, ապահովու-  
 թեամբ, թէ ամէն հնչական ձեւ, ուսկի՛ց ալ գայ,  
 բաւ է որ զուգորդ ըլլայ տեսողական ձեւի մը, բընա-  
 կանապէս նշանը կ'ըլլայ անոր:

է. Նախագիծ փիլիսոփայական ֆերականութեան. —  
 Առաջին անունը կազմող հնչական ձեւը, ո՛չ այլ ինչ է  
 ըստ ինքեան, եւ ոչ այլ ինչ կը ներկայացնէ ի սկզբան  
 եթէ ոչ վերացում մը, առարկային կարկառուն մէկ  
 յատկութիւնը կամ յատկութիւնները, ուրեմն ոչ ածա-  
 կան մըն է այն եւ ոչ գոյական մը: Որպէսզի այդ  
 հնչական ձեւերէն մին գոյական մ'ըլլայ, պէտք է որ  
 միտքը զայն նկատէ իբրեւ կրողը ուրիշ ձեւի մը,  
 կրուող ձեւը ամսական է իսկ կրողը՝ գոյականը,  
 բայց երկու ձեւերն ալ հաւասարապէս ընդունակ են  
 ածական կամ գոյական ըլլալու փոփոխակի: Շարժու-  
 ձեւն ու ձայնաշեշտը ժամանակ մը բաւական եղած են  
 նշանակելու համար գոյականին եւ ածականին կապակ-  
 ցութիւնը կամ անջատութիւնը, յետոյ ձայնական ձեւ  
 մը բացատրած է այդ կապակցութիւնը, ու այսպէս  
 կազմուած է բայը: Անձերու եւ երեք ժամանակներու  
 զանազանումը յետոյ եկած է: Մարդկային միտքը  
 հետզհետէ ինքնիրեն տիրանալով, զգացած է իր խոր-



հուրդներու զանազան դրութիւններուն փոխադարձ կախումները և ըստ այնմ բացատրած է այդ կախումները, որով հնարուած են շաղկապները և բայերու եղանակները: Այս զանազանութիւնքէն յառաջ եկած է տարբեր ժամանակներու զատորոշումը՝ իբր անցեալ և իբր ապանի: Յետոյ (սախարաւար) ինկերը ճշգրտած են խորհուրդներու երանգներուն յարաբերութիւնները՝ նախադասութեանց մէջ: Այդպէս տակաւ առ տակաւ կազմուած են լեզուները հոգեբանական և ձայնական օրէնքներու համեմատ:

Ը. Վերլուծական եւ համադրական լեզուներ. — Լեզուներու եղափոխութեանը մէջ շահապետող մեծ օրէնքն այն է որ անոնք հետզհետէ վերլուծական կը դառնան:

Արգարե, համադրական կը կոչուին այն լեզուները, որոնց մէջ, բառերուն կախումը հոլովութեանը նշանակուած ըլլալով, բառերու դասաւորութեան կարգը հաստատուն՝ անփոփոխ չէ, այլ ճկուն է ամէն շարժումի եւ խորհուրդի բոլոր երանգներուն: Այս շրջանակի մէջ կը մտնեն հին լեզուները, զոր օրինակ լատիներէնը և յունարէնը:

Ընդհակառակն վերլուծական կը կոչուին այն լեզուները, որոնց մէջ հոլովումը անյայտացած ըլլալով՝ բառերուն իրարմէ կախումը կը նշանակուի նախադասութիւններով և ևս քան զևս հաստատուն ու խըստապահանջ կարգով մը: Դիւրին է տեսնել թէ արդի լեզուները, ի մասնաւորի ֆրանսերէնը և անգլիերէնը՝ վերլուծական լեզուներ են:

Հոգեբանական այն օրէնքը, որուն զօրութեամբ կը կատարուի այս եղափոխութիւնը, այն օրէնքն է

որ կ'ուզէ որ միտքը ձեւանէ (schématiser) իր գաղափարներէն իւրաքանչիւրը, եւ այնպէս հետզհետէ աւելի եւս ձանձնայ ինքզինքը: Ամէն անգամ ուրեմն որ գիտակցութիւնը ստանայ խորհուրդի նոր երանգ մը, զայն արտայայտելու համար նոր բան մը՝ լեզուի նոր ձև մը պիտի հնարէ: Միւս կողմանէ, ձայնական օրէնքը չի ներեր որ թաւալումները անորոշապէս շատնան, ընդհակառակը կը ձգտի զանոնք ջնջելու: Այսպէս, լատիներէնին ձայնական շեշտը պահած է, ֆրանսերէն բառերու մէջ, իր զարկած վանկը, բայց ետեւէն եկող թաւալումները անյայտ եղած են: Ուստի պէտք է եղած լատիներէնին մէջ թաւալումներով արտայայտուած խորհուրդներու կախումները նախադասութիւններով և հաստատուն կարգով մը արտայայտել (ֆրանսերէնի մէջ):

Թ. Ընդհանուր գաղափարին դերը. — Հիմակ ալ կրնանք գնահատել Մաքս Միւլլէրի կարծիքը, որ է նաեւ ուրիշ քանի մը փիլիսոփաներու կարծիքը, և է սա, թէ անունները նախ ընդհանուր անուններու սակաւաւոր բոլոր լեզուները ընդհանուր արմատներու սակաւաւոր թիւի մը կը վերածուին: Այս վերջին կարծիքը, որ վերանորոգեց բանասիրութիւնը, թէ և անվիճելի է, բայց անհրաժեշտաբար կապուած չէ առաջինին հետ: Արգարե, ամենահին լեզուները, որոնցմով գրուած յիշատակարաններ հասած են ձեռքերնիս, ինչպէս սանսկրիտը, մեր թուականէն հազիւ թէ հազար տարի կանուխ են: Արդ, մարդկութիւնը շատ աւելի երկար ատենէ ի վեր զոյ էր. ուրեմն ժամանակ ունեցած է մշակելու իր առաջին լեզուն և զայն հետզհետէ վերածելու պարզ վերացեալ և այդ պատճառաւ՝ ընդհանուր տարրերու:



Առաջին անուանները պէտք է եղած ըլլան եղակի յատուկ անուաններ, որոնք՝ սակայն՝ յատկութեանց անուաններ ըլլալով, յայտնապէս ընդունակ էին ընդհանուր անուաններ ըլլալու: Եթէ, զոր օրինակ, բառ մը ի սկզբան կը նշանակէր կրեայ, այդ բառը՝ մարդոց մտքին մէջ յանուարեան գաղափարին հետ կապուելով, յետոյ կը ծառայէ այդ վերացեալ յատկութիւնը նըշանակելու: Յանրընթաց գեղը կ'ըլլայ կրեայ գետ: Հոգեբանական տեսակէտով, բոլոր անասուններն ի սկզբան յատուկ անուաններ եղած ըլլալ են թագրող կարծիքը անձիչդ չի թուիր, պէտք է միայն աւելցնել թէ այս յատուկ անուաններն ամէն հարկաւոր ընդունակութիւններն ունէին զիւրաւ հասարակ անուաններ ըլլալու համար, և թէ այդ եղափոխումը շատ արագ կատարուած է: Մանուկին համար, զօգօն նախ իր սեւ հաւիկը կը նշանակէ և յետոյ կը նշանակէ բոլոր հաւերն ու բոլոր թռչունները:

Ժ. Լեզուիկն եւ խորհուրդիկն յարաբերութիւններ. — Լեզուն կը ծառայէ խորհուրդին: Կ'օգնէ անոր որ ինքզինքը ըմբռնէ նախ, և յետոյ արտայայտէ ինքզինքը: «Մարդս, կ'ըսէր Պոնալտ, նախ կը խորհի իր խօսքը և ապա կը խօսի իր խորհուրդը», որ է ըսել թէ խորհուրդին յատուկ մտապատկերը ունենալու համար, մարդ ստիպուած է ներքնապէս խօսելու: Անշուշտ ձայնը զգայութիւնէն ետքը կուգայ, քանի որ անոր նշանն է, բայց ձայնն ալ իր կարգին՝ անհրաժեշտ է, ընդհանուր գաղափարին կազմութեանը համար: Անոր կը ծառայէ իբր տարազ, ու մենք տեսանք թէ չի կրնար ըլլալ ընդհանուր գաղափար, առանց ներքնապէս խօսելու, եթէ ոչ ձայնական արտաբերութեամբ,

այլ գոնէ անոնց տեղը բռնող զգալի ձեւերով: Համրը տեսողական կամ մկանային պատկերներով կը խորհի: Laura Bridgmanse, համր կոյրը, խորհած ատենը մատները կը շարժէր: Այսպէս, առանց խորհուրդի չկայ ները կը շարժէր: Այսպէս, առանց խօսքի չկայ խորհուրդ: Երկուքը ժամանակակից են, ինչպէս տեսողութեան եւ լսողութեան պատկերները, որոնք անոնց առաջին պայմաններն են: Խորհուրդին ձայնական արտայայտումը աւելի ճշգրիտ և աւելի յստակ կը գործէ խորհուրդը, որ, առարկայական ձև մը ստանալով, աւելի զիւրաւ գնահատական կ'ըլլայ: Խորհուրդին տխմարութիւնը՝ յաճախ խօսելէն վերջը միայն կը զգայ մարդ:

ԺԱ. Գրչուրիւնը. — Գիրը կրնայ ըլլալ որ ուղղակի նշանն ըլլայ խորհուրդին, այն ատեն պահկերային կամ գաղափարագրային գրչութիւն է ան: Կրնայ ըլլալ նաև որ ըլլայ նշանը խօսքին միայն, և, անոր միջոցաւ, խորհուրդին, այն ատեն ձայնակալ գրչութիւն է ան:

Մարդս նախ նկարով ներկայացուցած է տեսանելի առարկաները, այսպէս կազմուած է պատկերային գրչութիւնը. յետոյ այդ տեսանելի առարկաները խորհրդանշանները եղած են ինչինչ խորհուրդներու, զորս ներկայացուցած են՝ այդ առարկաները նկարելով աւելի կամ նուազ համառօտեալ և պիտակ նկարելով մը, և այսպէս կազմուած է գաղափարաւորական գրչութիւնը: Այս գրչութիւնը սա առաւելու թիւնն ունի որ կրնայ հասկնալի ըլլալ, առանց լեզուի հասարակօրոգութեան: Չինարէն խորհող Չինացի մը կրնայ հասկնալի ըլլալ գերմաներէն խորհող Գերմանացիի մը: Բայց սա անպատեհութիւնն ալ ունի որ



կարի բազմաթիւ նշաններու գործածութիւնը կը պահանջէ:

Չայնական գրչութիւնը ածանցուած է նախ պատկերային գրչութենէն, նկարախաղով (rébus) և բառախաղով (calembour), յետոյ բաղաձայնները պահած են ինչինչ նշաններու ձեւը, և այբուբենքը կազմուած է այսպէս: Գրչութիւնն ալ նմանապէս կ'օգնէ խորհուրդին, զիւրացնելով անոր փոխանցումն ու պահպանումը, եւ անոր տալով առարկայական տեւական ձեւ մը, որ զիւրաւ քննադատելի, եւ, եթէ պէտք կայ, սրբագրելի կ'ընէ զայն:

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա. — Նշանը իր մըն է որ իրմէ ուրիշ իր մը կը ներկայացնէ միտքին: Իր լինելութեան պայմանն է նախագոյ զուգորդութիւն մը:

Բ. — Երբ նշանին և նշանակուած իրին միջև եղած զուգորդութիւնը բնական է, նշանը բնական կը կոչուի. արուեստական կը կոչուի երբ այդ զուգորդութիւնը հետեանքն է պայմանագրականութեան մը:

Գ. — Լեզուն խորհուրդին խօսուն նշանն է:

Դ. — Լեզուին ծագումը չի կրնար կամայական պայմանագրականութեան մը մէջ գտնուիլ. հաւանական է նաև որ մասնաւոր կերպով կատարուած յայտնութեան մէջ ըլլայ ան:

Ե. — Մանուկներուն մէջ լեզուն կը կազմուի տեսողական ձևերուն ինքնաբերական զուգորդութեամբը այն հնչուն ձևերուն հետ որոնք անոնց հետ կը զուգորդուին որ եւ է կերպով մը:

Զ. — Հաւանական է որ մարդկութիւնը իր լեզուն կազմած ըլլայ այնպէս ինչպէս մանուկը կազմած է իր լեզուն:


Է. — Այսպէս, առաջին բառը յատկութիւն մը նշանակած է. նշանակուած այդ յատկութիւնը մերթ ստորոգելի մը ըլլալով և մերթ ենթակայ մը, ծնունդ է տուած գոյականի և ածականի: Յետոյ եկած է բայը, եւ, ի վերջոյ միւս մասունք բանիները:

Ը. — Համագրական լեզուները անոնք են, որոնց մէջ բառերուն կախումը թաւալումներով կը ցուցուի, եւ, այս պատճառաւ, խօսքին կազմութիւնը ազատ եւ փոփոխելի կ'ըլլայ: Վերլուծական լեզուներ անոնք են, որոնց մէջ հոլովային թաւալումները ջնջուած ըլլալով, անհրաժեշտ եղած է խօսքին կառուցուածքը գրեթէ հաստատուն եւ անփոփոխ ընել, տրամաբանական կարգին համեմատ:

Թ. — Ընդհանուր գաղափարը անհրաժեշտ է լեզուներուն կազմութեան համար: Եւ սակայն, առաջին բառերը իրենց հեղինակներուն միտքին մէջ ընդհանուր նշանակութիւն մը չունէին:

Ճ. — Բառը սովորաբար կը ծառայէ իբրև ձևան խորհուրդին: Ու լսող-խօսողները առանց բառի չեն մտածեր բնաւ: Լեզուն կը ճշգրտէ և կը սեւեռէ խորհուրդը:

ԺԱ. — Գրչութիւնը գաղափարագրական է կամ ձայնական: Առաջին պարագային մէջ ուղղակի կը ներկայացնէ մտածումը. երկրորդ պարագային մէջ, միայն լեզուն կը ներկայացնէ:





Պ Ա Ս Ա.

Կ Ա Մ Ք Ը

ԲՈՎԱՆԳՎԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Սահման կամաւոր գործի. — Բ. Անձնիւխանութիւն. — Գ. Վերլուծում ազատ գործի. — Դ. Վայրկեաններ, որոնք ազատ չեն. — Ե. Ո՛ւր կը գտնուի ազատութիւնը. — Զ. Ամբողջական ապացուցումը բնագոյնական է:

Ա. Կամաւոր գործին սահմանը. — Մարդկային այն գործերը, որոնք գիտակից են իրենց միջոցներուն և իրենց գոնէ անմիջական նպատակներուն և, այսպէս, կը զանազանուին բնազգական գործերէն, կը կոչուին կամաւոր գործեր: Ուրեմն կամաւոր գործին բարացուցիչ յատկանիշներն են գիտակցութիւնը եւ իմացականութիւնը: Մանուկը, որ մօրը ստինքը կ'որոնէ և կը ծծէ զայն, առանց գիտնալու թէ ինչո՞ւ կամ ի՞նչպէս կ'ընէ զայն, քնէածը՝ որ թելադրութիւն մը կ'իրականացնէ, առանց գիտնալու անոր ո՛չ վախճանը և ո՛չ զանազան մասերը, չեն գործեր կամաւորապէս: Ընդհակառակն կամքով կը գործէ այն մարդը, որ, խորհելով գնում մը կամ ո՛րէն գործ մը կատարել, տեղաշարժումի միջոց մը կը մտապատկերէ, և կը կատարէ զայն գիտակցութեամբը անոր պատճառին:

Կամաւոր գործերը կրնան ազատ ըլլալ կամ չըլլալ: Ազատ չեն բայց կամաւոր են անոնք, երբ կը գործենք այնպիսի միջոցներով, որոնց ի՛նչ նպատակի վերաբերիլը գիտենք, ու գիտենք նաև թէ նպատակի և այդ միջոցներուն մտապատկերէն զատ չունինք ուրիշ մտապատկեր: Երբ մեր ըրած բանին վրայ միայն կը խորհինք, ա՛լ չենք կրնար ընել ուրիշ բան. ուս-

տի հարկաւորաբար կ'ընենք ի՛նչ որ կ'ընենք, և այսպէս մեր գործը ազատ չ'ըլլար, առանց գաղբելու իմանալի և կամաւոր ըլլալէ:

Բ. Անձնիւխանութիւն. — Մեր գործերը ազատ են, երբ զանոնք կը կատարենք գիտակցութեամբը պատճառին, մէկ կամ աւելի ներհակ գործեր մտապատկերելէ և անոնց մէջ ընտրութիւն մը ընելէ վերջ: Ուրեմն գործելու ազատութիւնը կը շահապետէ ընտրութեան մէջ: Եթէ կամքը պիտի սահմանուի «իմացական զօրութիւն մը», անձնիշխանութիւնն ալ պէտք է սահմանուի «իմացական ընտրող զօրութիւն մը»: Անկարելի է ժխտել անձնիշխանութեան վրայ մարդու ունեցած բնական հաւատալիքը. ուրեմն անձնիշխանութիւնը գոնէ առերևոյթ ճշմարտութիւն մըն է, և՞ արդեօք նաև ճշմարիտ ճշմարտութիւն մը:

Գ. Ազատ գործին վերլուծումը. — Վիճաբանութեան մտնելէ առաջ, վերլուծումով մը նախ որոշենք կամաւոր գործին զանազան վայրկեանները և ցոյց տանք թէ որո՞ւն մէջ գոնէ կը գտնուի ազատութեան երևոյթը: Այս կերպով, ապահոված պիտի ըլլանք վիճաբանութեան ընթացքին ուղղութիւնը:

Գործովս կ'աշխատիմ. յանկարծ փափաք մը կ'արթննայ մէջս, կամ ինձի կ'առաջարկեն գուրս ելլել: Դուրս ելլելու գաղափարը իրեն հետ կը բերէ շատ մը ուրիշ գաղափարներ ալ, հաճոյքի, յոգնութեան, առողջութեան, ևայլն. աշխատութիւնս շարունակելու գաղափարն ալ, նմանապէս, կ'արթննայ և կը զօրացնէ իմացական հաճոյքի, յոգնութեան, պարտաւորութեան ևայլն մտապատկերներ: Երկու գործերուն հետեանք-







ւելի կ'արժէ քան հաճոյքը. ու իմացականապէս չենք կրնար ասկէց տարբեր կերպով դատել:

4. Գործողութեան իրականացումն ալ չի կրնար ըլլալ ազատ. վասնզի ուրիշ բան չէ ան՝ բայց եթէ մկանային շարժումներու շարք մը, որ ամբողջովին կախեալ է հոգեկան մղիչ ուժերու ազատաբար գործելէն և հակառակ ուժերու ջնջումէն:

Ե. Ո՛ր կը զսնուի ազատութիւնը. — Ուրեմն, եթէ գործին մէջ կա՛յ ազատ բան մը, որոշիչ դատումին մէջ միայն կրնայ ըլլալ ան: Ուստի այդ կէտին վրայ փոխադրենք վիճաբանութիւնը

Այս վայրկեանը աւելի մանրակրկիտ ուշադրութեամբ զննելով, պիտի տեսնենք թէ իմացական քըննազննութեան մէջ կազմուած հարցումը կը տարբերի այն հարցումէն՝ որուն կը պատասխանէ որոշիչ դատումը: Առաջին հարցումը սապէս կը կատարուի՝ ո՞րն է շոս ինքեան լաւագոյնը, որուն հարկաւորաբար կը պատասխանէ իմացականութիւնը, իր օրէնքներուն համեմատ: Երկրորդ հարցումն այսպէս կը բանաձեւուի՝ Ո՞րն է ինծի համար լաւագոյնը. ո՞րը նախընտրեմ: Ա՛լ վերացեալ, և, այսպէս ըսենք, անդէմ և անժամանակ հարցում մը չէ աս, այլ հարցում մը, որ կը պահանջէ թանձրացեալ պատասխան մը, որ կը վերաբերի ներկայ անծի մը, տեսողութեան մասնաւոր կէտի մը:

Եթէ մեր իմացականութիւնը յստակ տեսնէր առաջարկուած գործողութեան բոլոր հետեանքները, որոշիչ դատումը միշտ համաձայն պիտի ըլլար իմացական քննախուզութեան վճիռին, յստակաբար պիտի տեսնէինք թէ շոս ինքեան լաւը՝ լա՛ւ է մեզի հաւնա՞ր

ևս: Այս մտք է որ Սոկրատ կ'ըսէր թէ «ո՛չ ոք չար է կամաւորապէս», այսինքն թէ կեանքի ամէն սխալ արդիւնքն է իմացականութեան վրիպանքի մը: Բայց մենք երբեք կատարեալ յստակութեամբ չենք տեսներ այն հետեանքները զորս գործելութիւնը պիտի ունենայ մեզի վերաբերութեամբ. ուստի և իմացականապէս բռնադատուած չենք միշտ լաւագոյնին կողմը միտելու: Աւելի ճշգրիտ խորհելու համար, տըրամաբանական հնարքներ գործածենք: Հարցումն այսպէս կ'առաջարկուի. այսինչ Ա. Գործելութիւնը շաւաղոյն է ինծի հաւնա՞ր: Որպէսզի այս հարցումը կարենայ իբր պատասխան ընդունիլ հաւաքաբանական հաստատիչ կամ ժխտիչ եզրակացութիւն մը, պէտք է որ երկու ծայրերուն «Ա.»-ին և «Ինծի հաւնա՞ր շաւաղոյնը»-ին միջև ներմուծէին միջին եզրեր, որ զանոնք կա՛մ միացնէին իրարու, կա՛մ բաժնէին իրարմէ: Այս միջին եզրերը հոս Ա. իրական հետեանքները միայն կրնան ըլլալ: Ուրեմն եթէ ճանչնայինք Ա. ի բոլոր հետեանքները, լա՛ւ կամ յոռի, պիտի կարենայինք կազմել հաւաքաբանութիւնը, եզրակացութիւնը մեզի պիտի հայթայթէր որոշիչ դատումը և այս վերջինը ա՛լ հարկաւոր պիտի դառնար: Բայց ահներև է որ մենք չենք կրնար նախատեսութեամբ ճանչնալ բոլոր հետեանքները, ու կը բանաձեւենք որոշիչ դատումը, առանց բնաւ բռնադատուած ըլլալու մեր իմացականութենէն կամ տրամաբանութենէն: Ուրեմն որոշիչ դատումը իմացականապէս ազատ է:

Հոգեբանապէս ալ ազա՞տ է արդեօք: Մենք բընաւ չենք զգար ներքին հարկ մը, որ զմեզ բըռնադատէ ընդունելու աւելի այս քան այն որոշումը, կը զատէ ընդունելու աւելի մղումներ, բայց անոնց զգանք, այո՛, երկու ներհակ մղումներ, բայց անոնց



մէ ո՛չ մին հարկադրիչ չի թուիր մեզի, ո՛չ որոշումին միջոցին, ո՛չ անկէ առաջ եւ ո՛չ յետոյ: Գիտակցութիւն ունինք թէ որոշում տուած ատեննիս, նոր վիճակ մը կ'արտադրենք, մեր խորհուրդը գործ՝ ճիգ կ'ըլլայ, ու կը տեսնենք որ երկու գործողութիւնէն ո՛րը որ ընտրուած է, միշտ անո՛ր կողմը կ'երթայ մեր ճիգը: Ուրեմն որոշիչ դատումը հոգեխօսապէս եթէ ոչ ազատ այլ գոնէ ինքնաբերական է: Գիտակցութիւնը չի կրնար իր ըմբռնել չկրցած բանին գոյութիւնը կամ զգայութիւնը ապացուցել: Ազատ որոշումի համար հարկաւոր եղող պատճառները չի կըրնար գուշակել ան, թէեւ ասկէց չի հետեւիր թէ այդ պատճառները գոյութիւն չունին, այլ գոնէ վստահ է թէ ամէն ինչ գիտակցութեան համար կը կատարուի չկատարուածի պէս, քանի որ չեն երեւիր իրեն:

Ձ. Ամբողջական ապացուցումը բնագանցական է. — Բնազանցականը միայն կրնայ հայթայթել անձնիշխանութեան գոյութեան ամբողջական ապացուցումը: Անիկա, արդարեւ, ցոյց կուտայ թէ ամէն էակի մէջ պէտք է գտնուի ան, անո՛ր համար միայն որ (ու մանաւանդ անհատական էակներուն մէջ) մէկ մասն է անոնց էութեան և անհատականութեան հիմքը կազմող բնածին պատահականութեան եւ ինքնաբերականութեան: Երբ գիտակցութիւնը, բանականութիւնը, անդրադարձութեամբ աւելնան անոր վրայ, ինչպէս կը պատահի այս բանը մարդուն մէջ, այդ պատահականութիւնը և ինքնաբերականութիւնը ստացութիւնները, սեպհականութիւնները կ'ըլլան մարդուն: Վարդը բոյժ մը ունի. բայց որովհետեւ չի հոտոտէր զայն, չենք կրնար ըսել թէ չունի զայն, բոյրը անորը ըլլալէ աւել՛

անոր մեջն է: Յատուութիւն մը ճշմարտապէս ունենալու համար պէտք է ճանչնալ զայն, գիտնալ թէ մեր մէջն է այն: Գիտակցութիւնը և անդրադարձութիւնն են ուրեմն որ կը բաղկացնեն մեր ազատութիւնը եւ յարակից գործերը մեր ազատութեան, որ կը բարացուցուի անոնց (այդ յարակից գործերուն) հրամայող դատումին տրամաբանական անկախութեամբը, իրենք են որ՝ անոր հոգեբանական ինքնաբերութեանը հետ միանալով՝ կը բաղկացնեն անձնիշխանական գործերը:

Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Կամաւոր գործը՝ բանաւոր էակէն գիտակցաբար կատարուած գործն է: Կրնայ ազատ չըլլալ ան, երբ զայն կատարող էակը չունի ներհակ գործի մը գաղափարը:

Բ. — Կամաւոր գործը ազատ է, երբ երկու ներհակներու կամ հակասականներու միջև ընտրութեան պէտք կայ:

Գ. — Վերլուծումը ազատ գործին մէջ հինգ վայրկեաններ կը գտնէ. 1. Գործելութեան մը մտապատկերը, 2. Մտապատկերը անոր հետեանքներուն, որոնք շարժառիթներ կ'ըլլան. 3. Խորհրդածութիւն. 4. Որոշում. 5. Գործադրութիւն:

Դ. — Առաջին, երկրորդ, երրորդ և հինգերորդ վայրկեանները ազատ չեն:

Ե. — Ազատութիւնը կրնայ գտնուիլ մի միայն չորրորդ վայրկեանին մէջ, կամ մեր օգտին համար ի



զօրու նկատուած շարժառիթներէն մէկին վճռական նախընտրանքին մէջ: Հողերանութիւնը կ'ապահովցնէ զմեզ մեր անկախութեան մասին:

Ձ. — Ի այց միայն բնագանցականն է որ ձեռնհաս է իր լրումին յանգեցնելու վերջնական ապացուցումը:

Պ Ա Ս Ա Ա.

Ս Ա Հ Մ Ա Ն Ա Կ Ա Ն Ո Ի Թ Ի Ի Ն

ԲՈՎԱՆԳՎԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Ճակասագրականութիւն եւ Սահմանակաճութիւն. — Բ. Հողերանական փաստեր. փախափ եւ կամք. — Գ. Շարժառիթներու ազդուութիւնը. — Դ. Գիտակցութեան անբաւականութիւնը. — Ե. Գիտական փաստեր. Վիճակագրութիւններ. — Չ. Ոյժին պահպանումը. — Է. Բնագանցական փաստեր. Աստուածային նախագիտութիւն. — Ը. Բաւարար պահանջ:

Ա. Ճակասագրականութիւն եւ Սահմանակաճութիւն. — Երկու գրութիւններ կան որ կ'ուրանան անձնիշխանութեան գոյութիւնը մարդուն մէջ: Ատոնք են. Ճակատագրականութիւնը եւ Սահմանակաճութիւնը:

Ճակատագրականութիւնը, որ այժմ ընդհանրապէս լքուած է, և իսլամականութեան մէջ միայն կը գրտնուի, կ'ըսէ թէ մեր բոլոր գործերն առաջուց կարգադրուած են գերագոյն կամքի մը կողմէ, որուն անկարելի է դիմադրել: Այդ կամքը կրնայ ըլլալ անյեղ վճիռ մը, ինչպէս հիներուն ճակատագիրը, կամ բացարձակ ազատութիւն մը, ինչպէս միւսիւրմաններուն Ալլահինը: Երկու պարագաներուն մէջ եւս կը ջնջուի մարդկային ազատութիւնը, բայց առաջին ճակատագրականութիւնը միայն տիեզերական հարկաւորութեան գրութիւն մըն է. երկրորդը, ընդհակառակն, ազատութեան գրութիւնը:

Սահմանակաճութիւնը կը վարդապետէ թէ բոլոր մարդկային գործերը, բոլոր միւս երեւոյթներուն պէս և չափ, սահմանուած են հաստատուն նախընթացներէ, բնութեան անշարժ օրէնքներուն համեմատ: Սահմանակաճութեան իրենց գրութեան ի նպաստ և անձնիշ-



խանութեան ընդդէմ բերած փաստերը երեք տեսակ են. 1. հոգեբանական. 2. գիտական. 3. բնագան-  
ցական:

Բ. Հոգեբանական փաստեր. փափաք ու կամք. — Մարդ իր փափաքած բանը միայն կը կամի. կամքը ծայրայեղ փափաքն է միայն. ուրեմն նոյնաբուն է փափաքին հետ. արդ, փափաքը հարկաւոր է, ուրեմն կամքն ալ հարկաւոր է: — Պատասխան. Մարդ իր փափաքածը միայն կը կամի, ճիշդ է ստիկա, բայց ի՞ր ամէն փափաքածը չի կամիր մարդ. ամէն փափաք կամքի մը չի յանդիր: Երկրորդ. փափաքը որքան աւելի զօրաւոր ըլլայ, այնքան քիչ յստակ կ'ըլլայ իմացականութիւնը. ընդհակառակն, որքան աւելի յստակ ըլլայ իմացականութիւնը, այնքան աւելի զօրաւոր կ'ըլլայ փափաքը: Ուստի փափաքին հարկաւոր ըլլալէն բնա՛ւ չի հետեւիր կամքին ալ հարկաւոր ըլլալը:

Գ. Շարժառիթներուն ազդուութիւնը. — Սահմանականութիւնը կ'ըսէ. թէ հոգին կշռորդի մը պէս միշտ զօրաւորագոյն կողմը կը միտի: Որ է ըսել թէ կամաւոր գործը անհրաժեշտ հետեանքն է հոգիին տրամադրութիւններուն եւ շարժառիթներուն ոյժին: Բայց 1. Շարժառիթներուն ոյժը կը փոխուի մարդէ մարդ, և միեւնոյն մարդուն մէջ՝ վայրկեանէ վայրկեան. ուրեմն շարժառիթները չեն կրնար իբր ծանրութիւն ազդել անշարժ կշռորդի մը վրայ: 2. Ոչինչ չ'ապացուցեր շարժառիթներուն զօրութեան պէսպիսութիւններուն նոյն իսկ հոգիէն չգալը. 3. Ընդհակառակն ամէն բան կը թուի ապացուցանել թէ հոգիէն կուգան անոնք, վասնզի, ինչպէս տեսանք նախընթաց

դասին մէջ, մեր որոշումին բուն իսկ առարկան է որոշել թէ ո՞րն է մեր նախընտրած շարժառիթը, և այդ ընտրուած շարժառիթը, որ այդ ընտրութեամբ իսկ զօրաւորը կը դառնայ, միշտ այն է, առ որ կը զգանք թէ կ'ուզուի մեր ճիշդ: Արդ, ճիշդ ո՛չ այլ ինչ է ինքնին, եթէ ոչ ներքին զգացումը՝ մեր մէջ գտնուող և մեր տրամադրութեանը տակ եղող ոյժին գործադրութեանը:

Դ. Գիտակցութեան անբաւականութիւնը. — Անո՛ր համար միայն ինքզինքնիս ազատ կը կարծենք, կ'ըսէ սահմանականութիւնը, որովհետեւ չենք զգար մեզի գործել տուող պատճառները: Այսպէս ինքզինքնին ազատ պիտի կարծէին. իր ծանրութեանը գիտակցութիւնը չունեցող և անկումին միայն գիտակցութիւնը ունեցող քարը (օր. Սպինոզայի), հողին գիտակցութիւնը չունեցող և միայն իր շարժումին գիտակցութիւնը ունեցող հողմաշարժը (օր. Պայլի), մագնիսական ձգողութեան գիտակցութիւնը չունեցող և միայն իր բեռնածիւղ ուղղութեանը գիտակցութիւնը ունեցող մագնիսական ասեղը (օր. Լայպնիցի): — Ասոր պատասխանը շատ զիւրին է. — Գիտակցութիւնը մեզի չի տասխանը շատ զիւրին է. — Գիտակցութիւնը պատճառները. ասիկա գուցէ բացարձակապէս բաւական պատճառ մը չըլլայ ըսելու համար թէ Քանի որ չեն ըզգացուիր, ապա ուրեմն չկան անոնք. բայց աւելի ևս անբաւական պատճառ մըն է ան՝ ըսելու համար սահմանականներուն հետ թէ Քանի որ չեն զգացուիր, ապա ուրեմն կան:

Ե. Գիտական փաստեր. վիճակագրութիւնը. — Վիճ-



ճակագրութիւնը կը ցուցնէ թէ ամենէն կարևոր գործերը, ինչպէս ամուսնութիւնը, մարդասպանութիւնները, անձնասպանութիւնները, գողութիւնները, ինչպէս նաև ամենէն հասարակ գործերը, գործ օրինակ նամակատուն ձգուած անհասցէ նամակները, միշտ հաստատուն քանակութիւն մը ունին: Արդ, մեծ թիւերու օրէնքը կը պահանջէ որ պատահարներու մէջ պարունակուած հնարաւորութիւնները աճին, այսինքն պատահարներու ու է դրութեան մը մէջ ներմուծուած ամէն խանգարիչ պատճառ, հետզհետէ պէտք է փոփոխէ այդ պատահարները: Հետևաբար, անձնիշխանութիւնը, որ փոփոխումի հնարաւորութիւն մըն է, պէտք է փոփոխէր վիճակագրութեան ցոյց տուած թիւերը: Բայց չի փոփոխեր, վասնզի վիճակագրութիւնները հաստատուած կը մնան, ուրեմն անձնիշխանութիւն չկայ: — Quetelet պատասխանած է թէ անձնիշխանութիւնը, քանի որ իր էութիւնն է ազատ ըլլալ, ինչպէս չի կրնար բռնադատուած ըլլալ թիւերը անփոփոխ պահելու նոյնպէս նաև չի կրնար բռնադատուած ըլլալ զանոնք փոփոխելու: Այս պատասխանով չգոհացողներու համար կ'աւելցուի թէ վիճակագրութիւնը բացարձակապէս չ'որոշեր ո՛չ գործը, ո՛չ անոր կատարման վայրկեանը, և ոչ ալ զայն կատարող գործիչը, եւ թէ այդ պատճառով՝ ասպարէզը բաց կը մնայ անձնիշխանութեան գործունէութեան առջեւ:

Զ. Ոյժին պահպանումը. — Բայց կը յարեն սահմանականները, եթէ ժամանակակից գիտութեանէն հաստատուած օրէնք մը կայ՝ այն ալ սա՛ է թէ ոյժին քանակութիւնը հաստատուն կը մնայ տիեզերքի

մէջ. արդ, անձնիշխանութիւնը ինչպէս կրնայ գործել, առանց աշխարհի մէջ արտադրուած ոյժին քանակութիւնը աւելնալու: — Ոչ-սահմանականները կը պատասխանեն — Գիտութիւնը կը ցուցնէ թէ ոյժին քանակութիւնը զգալապէս հաստատուն է տիեզերքին մէջ, բայց գիտութիւնը չի կրնար փորձառօրէն ապացուցել թէ ոյժին քանակութիւնը քաջարձակապէս հաստատուն է. արդ, անձնիշխանութեան արտադրած ոյժին քանակութիւնը այնչափ քիչ պիտի ըլլար վերաբերութեամբ տիեզերքի ոյժերուն, որ զգալապէս ոչ չինչ պիտի երևէր. վակոնի մը վրայ դրուած ճանճ մը որքան պիտի աւելցնէր կշռոցին նշանակած ծանրութիւնը: Բաց աստի, գիտութիւններ ալ կան, որոնք զանազան կերպերով կը ջանան ապացուցել թէ անձնիշխանութիւնը կրնայ հաշտուիլ կորովի պահպանումին հետ:

Է. Բնագանցական փաստեր. Աստուծայ նախագիտութիւնը. — Սահմանականութիւնը վերջապէս պիտի առարկէ թէ անձնիշխանութիւնը չի կրնար հաշտուիլ Աստուծոյ նախագիտութեան հետ: Աստուած, եթէ գոյ է, կը նախատեսէ ամէն ինչ որ պիտի պատահի, անիկա գիտէ ինչ որ տեղի պիտի ունենայ վաղը, ինչ որ պիտի ընեմ կամ պիտի ընեն բոլոր միւս մարդերը. եթէ այդ գործերը նախատեսուած են ուրեմն արդէն իսկ վճռուած և հաստատուած են, ա՛լ չեն կրնար ազատ ըլլալ: — Բայց կը պատասխանէ ոչ-սահմանականութիւնը, տիրապէս խօսելով, Աստուած չի նախատեսեր, ժամանակին մէջ հետզհետէ կատարուող իրերը կը տեսնէ անիկա առանց ժամանակի յարաբերութեան: Այս պարզան այսպէս իմացած են և տակաւին այսպէս կ'ը-



մանան բոլոր աստուածաբանները: Արդ, ժամանակաւոր իրերու այս երկու անժամանակ տեսլիլ անհասկնալի խորհուրդ մըն է ուսկից կարելի չէ քաղել որ և է փաստ, վասնզի ըսուածը չի հասկցուիր: Այս պիտի նմանէր միայն Ֆրանսերէն հասկցող ատեանի մը առջև միայն չինարէն խօսող վկաներ հանելուն: Անոնց վկայութիւնը բնաւ արժէք պիտի չունենար: Անձնիշխանութեան կուսակիցը իրաւունք ունի չընդունելու Աստուծոյ անհասկնալի նախագիտութենէն քաղուած փաստը:

Ը. Բաւարար պահանջ. — Սահմանականութեան այս սկզբունքէն քաղած փաստը այսպէս կը բանաձևուի. ամէն բան բաւարար պատճառ մ'ունի. արդ, անձնիշխանութիւնը, քանի որ ոչինչէն կը ծնի, չի կրնար ունենալ բաւարար պատճառ մը, ուրեմն այդ անձնիշխանութիւնը գոյ չէ: Ահաւասիկ պատասխանը. ազատ գործը ունի բաւարար պատճառ մը, որ է անձնիշխանութիւնը, ան ալ ունի բաւարար պատճառ մը, որ է բարոյականութիւնը: Արդարեւ, առանց անձնիշխանութեան չկայ ո՛չ բարոյականութիւն և ո՛չ անբարոյականութիւն, ամէն ինչ պիտի ըլլար անտարբեր, առանց քարոյակակի: — Բայց, կ'ըսէ սահմանականութիւնը, անձնիշխանութեամբ կամ առանց անձնիշխանութեան ալ, միշտ բարի և չար կայ աշխարհի մէջ. պարկեշտ մարդ մը լաւ է, ոճրագործ մը միշտ յոռի է: Անտարակոյս, կը պատասխանէ ոչ-սահմանականութիւնը, միշտ կայ բարի և չար, բայց այս բարին և չարը կը շփոթուին հաճոյքին և վիշտին հետ. այն ատեն ա՛լ ոչ բարի կը մնայ և ոչ չար, այս բաւերուն բարոյական իմաստովը: Ուրեմն սահմանակա-

նութիւնը կը շփոթէ զգալի բարին պարկեշտ բարիի և զգալի չարը բարոյական չարին հետ և զգացողութիւնը բարոյականութեան հետ:

Այս վիճաբանութենէն կը տեսնուի թէ սահմանական փաստերը չունին ապացուցական ոյժ, որով և կը վերահաստատեն այն ապացոյցները, զորս նախընթացաբար յառաջ բերինք ի նպատակ անձնիշխանութեան: Ամէն անոնք որ չեն հաւանիր ըսելու թէ «մոլութիւնը և առաքինութիւնը արտագրութիւններ են արջասպին և շաքարին պէս», ամէն անոնք որ կը հաւատան բարոյականութեան թագաւորութեան մը, անշատ հաճոյքի և շահի թագաւորութենէն, պարտին հաւատալ ազատութեան:

#### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Ծակատագրականութիւնը կը հաւատայ թէ մեր բոլոր գործերը արտաքին կամքէ մը կախում ունին: Սահմանականութիւնը կը հաստատէ թէ մեր բոլոր գործերը սահմանուած են իրենց հաստատուն նախընթացներէն, Ֆիզիկական պատճառականութեան օրէնքին համեմատ:

Բ. — Սահմանականները կը փորձեն հաստատել իրենց վարդապետութիւնը, 1. հոգեբանապէս, Ա. փափաքին և կամքին շփոթումովը: Իրենց այս դրութիւնը կը հերքուի սակայն ցոյց տալով այս երկու բաներուն էական տարբերութիւնը:

Գ. — Բ. գործը շարժառիթներու վերագրելով: Բայց ցոյց կը տրուի թէ շարժառիթներու ոյժը մենէ կախում ունի:



Գ. — Գ. Գիտակցութեան անբաւականութիւն: Ասոր ալ կը պատասխանուի ցոյց տալով որ գիտակցութիւնը ոչինչ կ'ապացուցանէ ի նպաստ սահմանականութեան:

Ե. — Զ. Գիտականապէս. Ա. Վիճակագրութիւններով: Վիճակագրութիւններ ոչինչ կը յատկաւորեն:

Զ. — Բ. Ոյժի պահպանումը: Այս օրէնքը ոչ թէ բացարձակապէս այլ զգալիօրէն ճշմարիտ է: Զի կըրնար ծառայել ուրանալու անզգալի նոր ոյժերու երեւումը:

Է. — Ը. Բնագանցապէս. Ա. Աստուծոյ նախագիտութեամբը: Փաստը անհասկնալի է, այս պատճառաւ անընդունելի կը յայտարարուի:

Ը. — Բ. Բաւարար պատճառով: Ազատ գործը իր բաւարար պատճառը ունի անձնիշխանութեան մէջ: Այս վերջինն ալ Բարոյականութիւնը ունի իրեն պատճառ: Սահմանականութիւնը ոչբարոյական է:

## Գ Ա Ս Ա Ք.

### ԽՈՐՀՐԳԱԾԵԱԼ ԶԳԱՅՈՂՈՒԹԻՒՆ

ԲՈՎԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Սահման խորհրդածեալ զգացողութեան. — Բ. Այս զգացողութեան արդիւնք. — Գ. Ախորժակներուն կրած ձեւափոխութիւններ. — Դ. Հակումներուն կրած ձեւափոխութիւններ. — Ե. Խորհրդածութեան ձեւած նոր հակումներ. — Զ. Յուզումի հակումներ. — Է. Հետաքրքրութեան հակումներ. — Ը. Գործելութեան հակումներ. — Թ. Մարդասիրական հակումներ. — Ժ. Կրօնական հակումներ:

Ա. Սահման խորհրդածեալ զգացողութեան. — Ըստ որում ամէն բնականոն գործ հաճոյք կը պատճառէ և ամէն տարականոն գործ՝ վիշտ, ինչպէս կայ Ֆիզիկական զգացողութիւն մը և զգացական զգացողութիւն մը, նոյնպէս պէտք է կենայ բանական ըզգացողութիւն մը: Ասոր համար է որ կը տեսնենք թէ կան իմացականութեան հաճոյքներ և վիշտեր, կամքի հաճոյքներ և վիշտեր: Հաճոյք կը զգանք հասկնալէն և վիշտ՝ չհասկնալէն: Հաճոյք կը զգանք գործելէն՝ կամենալէն, ու մեր վարանքները, գործի և գործունէութեան վրիպանքները վիշտ կը պատճառեն մեզի: Զգացումի հաճոյքներ և վիշտեր են անոնք, որ կրնան դոյնանալ այն էականերուն մէջ միայն, որոնք, անդրադարձութեան շնորհիւ, ունին բանականութիւն և կամք: Այսպէս զգացողութիւնը կը գտնուի հոգեկան կեանքին սկիզբն ալ, վերջն ալ: Հաճոյքն ու վիշտը երեւան կու գան գիտակցութեան ծագումին մէջ, և գիտակցութեան հարստացման չափով, հետզհետէ, կ'ընդարձակուին: Այնքան աւելի ներքին կ'ըլլան անոնք, որքան գիտակցութիւնը անդրադարձութեամբ տիրանայ անոնց:



Բ. — Այս զգացողութեան արդիւնքները. — Անդրադարձութեան միջոցաւ, զգացողութեան կրած ձեւափոխութենէն և ընդարձակումէն յառաջ կուգան. 1. ձեւափոխութիւն զգացական հակումներու, այսինքն ակտորժակներու եւ յօժարութիւններու. 2. երեւում նոր հակումներու, որոնք զգացումէ միայն ելնելնուն համար, յօժարութիւններ միայն կրնան ըլլալ:

Գ. Ախորժակներու կրած ձեւափոխութիւնները. — Նախ ըսենք թէ ակտորժակները ինչ ձեւափոխութիւններ կը կրեն: Ընդհանրապէս, անոնք կրնան չափաւորուիլ, ջնջուիլ կամ չափազանցուիլ անդրադարձութենէն և կամքէն: Այսպէս, լոկ հոգեբանական պատճառներով, որոնց մէջ անդրադարձութիւնն ու կամքը ունին բաժին մը, զոր վերլուծումը դիւրաւ կը ցուցնէ, մարդ կը չափաւորէ կամ կը չափազանցէ թիւը այն գործերուն, որոնք եթէ իրենք իրենց թողուէին, պիտի ձգտէին անոր արտադրել տալ եսամոլ ակտորժակներ: Նօթութեան և ծարաւին հանդէպ մարդ կրնայ ըլլալ ժուժկալ, պահեցող. և կամ ուտելիքի և ըմպելիքի ծայրայեղութեանց մէջ իյնալ: Շարժումի պէտքին առջև կրնայ յարմարցնել և կշռել իր բնական շարժումները, անշարժութեան դատապարտել ինքզինքը կամ պատրանքէ ուժասպառ իյնալ: Նոյնպէս կրնայ հանդիստի պէտքը չափազանցել մինչև ի ծուլութիւն, մինչև ի մահ:

Այս բոլոր ձեւափոխութիւնները կը ծագին անդրադարձութեան՝ բոլոր գործողութիւնները վախճաններու նկատմամբ գիտելէն, եւ կամքին ալ զանոնք ըստ այնմ տնօրինելէն: Ուստի ակտորժակը, եթէ ըմբռնուի իբրեւ միջոց մը՝ նկատմամբ վախճանի մը,

կրնայ չափաւորուիլ կամ նոյն իսկ ջնջուիլ, այդ վախճանին հետ համաձայն ըլլալու համար, եթէ ընդհանրապէս ակտորժակը ըմբռնուի իբր վախճան մը, էակին բոլոր միւս գործութիւնները անոր կը հակամիտին, և որովհետեւ էակին վերջին վախճանը չէ ան, այսպէս կը չափազանցուի և կը վատթարանայ: Զոր օրինակ, նօթութեան ակտորժակը, եթէ նկատուի իբր միջոց մը առողջութեան, կը սահմանափակուի առողջապահիկ պայմաններու մէջ, եթէ անոր գոհացումը նկատուի արդեւք մը գերազանց վախճանի մը, կը ջնջուի աւելի կամ նուազ ամբողջութեամբ, ասկէ յառաջ կուգան ֆիզիկական ծոմը, և բարոյական կամ կրօնական ծոմը: Եթէ նկատուի իբր վախճան մը, այն ատեն ըսել է թէ ուտելու համար կ'ապրի մարդ, որով եւ որկրամոլութիւնը կը գոյանայ:

Դ. Յօժարութեանց կրած ձեւափոխութիւնները. — Այլապիւրոքիւն եւ ինքնապիւրոքիւն. — Ընտանեկան և ընկերական յօժարութիւններն ալ կը կրեն ուրիշ և աւելի խոր ձեւափոխութիւն մը: Կամքէն եւ բանականութենէն զուրկ, թէ՛ ներքին եւ թէ՛ արտաքին ըմբռնում չունեցող էակի մը մէջ, յօժարութիւնները, տիրապէս խօսելով, ո՛չ անձնասէր են եւ ո՛չ այլասէր, զուտ ներքին են անոնք էակին, արտաքին այլասէր երեւոյթներով: Արդարեւ, ճշմարտապէս այլասէր ըլլալու համար, պէտք է միւս էակները ճանչնալ իբրեւ անջատ՝ ուրիշ մենէ: Նոյնպէս, ճշմարտապէս ինքնասէր ըլլալու, ինքզինքը ուրիշներէն նախասիրելու համար, պէտք է ինքզինքը զանազանել ուրիշ էակներէն: Բանականութիւնն է միակ մեկնակէտը այլասիրութեան, ինչպէս նաև ճշմարտ ինքնասիրութեան:



Ուրեմն ընտանեկան և ընկերային յօժարութիւնները ա՛յնքան աւելի այլասիրական կ'ըլլան, որքան աւելի կախեալ ըլլան բանականութենէն ու կամքէն: Բաց աստի, այս յօժարութիւնները ախորժակներու կրած միւսնոյն ձեւափոխութիւնները կը կրեն, կրնան նաև կանոնաւորուիլ, ջնջուիլ կամ չափազանցուիլ: այսպէս մարդ կրնայ, ինչպէս և պարտի, սիրել իր հայրենիքը կամ իր ընտանիքին անդամները, կրնայ վերջապէս փակուիլ ինքնասիրութեան մէջ ու չսիրել ո՛չ ընտանիք՝ ո՛չ հայրենիք:

Ե. Խորհրդածութեամբ ծնած նոր հակումներ. — Երբ էակը խորհրդածութեամբ իր մէջ կը նշմարէ կարողութիւն մը, կը մտապատկերէ զայն և, որովհետև ամէն պատկեր իր իրականացումին կը ձգտի, այդ կարողութիւնն ալ կը ձգտի իրականանալու: Ուրեմն, էակին մէջ, խորհրդածութեան ճանչցած մէն մի նոր կարողութեան պիտի համապատասխանէ նոր հակում մը: Արդ, խորհրդածութիւնը ցոյց կուտայ մարդուն՝ թէ կրնայ յուզուիլ, կրնայ ճանչնալ, կրնայ գործել: Ուրեմն մարդ բնական ձգտում մը, հակում մը պիտի ունենայ որոնելու յուզումը, ծանօթութիւնը և գործողութիւնը: Ատկէց յառաջ կուզան երեք հակումներ, յուզումի հակում, հետաքրքրութեան հակում, գործողութեան հակում:

Զ. Յուզումի հակում. — Բոլոր մարդիկ կ'ախորժին յուզումէն, յուզումը յուզումին համար նոյն իսկ: Տղաքները կը սիրեն իրենց երկիւղ ազդող բաները. չափահասները կը սիրեն թիարան երթալ կամ գլխատումի ներկայ գտնուիլ, և այլն: Ամէնքն ալ կը

սիրեն արտասուել կամ զուարճանալ ներկայացումի մը առջև. թատերական սրտառուչ ներկայացումներու տիեզերական ճաշակը կը ցուցնէ թէ ո՛րքան բնական է այս հակումը:

Անիկա հետեւանքն է կրկնակ օրէնքներուն զգացողութեան և գործունէութեան, որոնց կը վերաբերի ունակութիւնը որչափ աւելի բթացնէ զգացողութիւնը, այնչափ աւելի կը գրգռէ անոր գործունէութիւնը. այնպէս որ ևս քան զևս նուազ գոհ, ու ևս քան զևս աւելի պահանջկոտ կը դառնայ ան: Անո՛ր համար է որ եղերական ներկայացումները հետզհետէ աւելի սըրտայոյզ և բուռն դարձած են: Դիւրին է չափել Գոռնէյէն Վիկտոր Հիւկօ և Ժամանակակից թատրոնը երկարող ճամբան: Պողիկտոս տեսարանին ետին կը սպաննուի, Լուկրետի Պորճիայլի զոհերուն դազաղները ցոյց կը տրուին մեզի, ու Մարիօ տեսարանին վրայ կ'երևի, քունքերը կոշկոճանքներէն արիւնաթաթախ: Այսպէս կ'անցնինք ցլամարտերուն և սուսերամարտերուն: Ուրեմն շա՛տ վտանգաւոր է գոհացում տալը. այդ հակումին, որ պէտք է կանոնաւորուի բանականութեամբ: Վասնզի ան ալ ընդունակ է չափաւորուելու, ջնջուելու կամ չափազանցուելու: Ան է գեղարուեստներուն ծնողը:

Է. Հետաքրքրութեան հակումը. — Ոչ նուազ է հետաքրքրութեան հակումը: Մանուկը բոլոր իրերու ինչո՛ւն կը հարցնէ, մարդը կը չարչարուի գիտնալու պէտքէն: Այս հակումը ունակութեամբ ալ կը զօրանայ, բայց իմացականութեան գործօն բերկրանքը չի բըթանար. ուստի այս հակումը շա՛տ յամբօրէն կը հասնի չափազանցութեան: Իրեն համար վտանգը աւելի ա-



նոր մէջ է որ կրնայ սխալել առարկային մասին, և ճշմարտութենէն աւելի նորութիւն սիրող ըլլալ: Նորը հաճելի է միտքին, բայց իր հայթայթած գոհացումը երեւակայութեան գոհացում մըն է և ոչ թէ բանականութեան: Բանականութիւնը ճշմարտով միայն կը գոհանայ, հին ըլլայ ան կամ նոր, փոյթ չէ ատ: Ուրեմն քննադատութիւնը պէտք է զգուշանայ նորութեան միջոցաւ երեւակայութեան հայթայթած գոհացումները շփոթելէ, ճշմարտութեան միջոցաւ բանականութեան ապահովուած գոհացումներուն հետ: Հետաքրքրութիւնը ծնունդ կուտայ գիտութիւններու եւ փիլիսոփայութեան:

Ը. Գործելութեան հակում.— Գործելութեան հակումը այն է որ զմեզ կը մղէ կարելի եղածին չափ հեռուն տարածելու մեր գործունէութիւնը, ճառագայթելու մեր անձը: Մանուկը կը զեղծանի իր խաղալիկներովն ու ձեռքը անցած իրերովը, կը կտորէ՝ կտորելու համար, կը բռնանայ շանը վրայ, կը քաշէ կատուին պոչէն, կ'ուզէ իր կամքը կատարել տալ ծընողքին, ծառաներուն, ընկերներուն: Չափահաս մարդը փառասիրութիւն կ'ունենայ, կը ջանայ իր գործելութիւնը կանոն եւ յարացոյց ընել կարելի եղածին չափ բազմաթիւ ուրիշ գործելութիւններու:

Այս հակումը արագ կ'աճի ունակութեամբ, իր գոհացումին հայթայթած հաճոյքը արդարեւ զգացողութեան հաճոյք մըն է՝ որ շուտ կը բթանայ, ուստի և փառասէրը շուտով անիրաւ և յափշտակիչ կ'ըլլայ: Այն ատեն միայն կրնայ ինքզինքը ճշմարտապէս գոհացնել, երբ արդար է և իր կամքին իբր կանոն կ'ընտրէ պարտականութիւնը ու նպատակ՝ առա-

քինութիւնը: Այն ատեն, իր կամքը, իրօք ու ճշմարտապէս համաձայն յաւիտենական կանոններու, պիտի իրականացնէ տիեզերական կամքի տիպարը նոյն իսկ: Այս հակումն է որ ծնունդ տուած է գործնական բարոյականին:

Թ. Մարդկօգուս հակում.— Ընտանիքին եւ հայրենիքին սահմաններէն դուրս, իրեն նման ուրիշ էակներու գոյութիւնն ալ կը մտաբերէ մարդ: Այս մտապատկերով ան ինքզինքը մղուած կը զգայ դէպի անոնք, կը տառապի անոնց ցաւերովը և կը հրճուի անոնց ուրախութիւններովը. ինքնաբերաբար անոնց օգնութեան կը հասնի, անոր համար միայն որ մարդ էն: Տերեւտիոսի անձնաւորութեան հետ կ'ըսէ.

Մարդ եմ եւ զմարդոյ կրեմ զկիրս կամաւոր:

Այսպէս, արտաքին և հանրական նմանութեան մը բանաւոր մտապատկերէն կը ծնի մարդասիրութեան զգացումը, և անոր հետեւորդ զգացումները, գուլթը, անձնուիրութիւնները, ի մի բան այն բոլոր հակումները որոնք կը թելադրեն զմեզ շատցնելու բարիքները եւ պակսեցնելու չարիքները մարդկային ազգին:

Ժ. Կրօնական հակում.— Վերջապէս կը մնայ վերջին հակում մը, զոր բանական էակը միայն կըրնայ ունենալ: Կրօնական հակումն է այն: Մարդը, իր բանականութեամբը, իրերու հեղինակին կը բարձրանայ, միակ էակի մը կը վերագրէ տիեզերական օրէնքները յղացող իմացականութիւնը, զանոնք կամեցող բարութիւնը, զանոնք իրականացնող կարո-



դուժիւնը: Ի՞ր բանականութիւնը իրեն ցոյց կուտայ իր կախումը այդ աստուածային էակէն, ու փորձառութիւնը զայն զգացնել կուտայ իրեն: Այս դրական ծանօթութիւններէն զատ, ի՞ր շուրջը կը զգայ խորհուրդին տարածուիլը գիտութեան սահմաններէն շատ անդին, և ինքզինքը այդ խորհուրդին ներգործութեանը տակ: Ասկէց յառաջ կուգայ աւելի կամ նուազ շփոթ զգացում մը, որ կը խառնուի բանականութեան յստակագոյն իմացումներուն:

Ուրեմն մարդուն մէջ կայ, միանգամայն, կրօնական գաղափար և կրօնական զգացում: Այս գաղափարը եւ այս զգացումը ձուլուելով իրարու հետ, ծնունդ կուտան այն հակումին, որ մարդը կը մղէ սիրելու, յարգելու այդ Աստուածը, որուն արարածն է եւ կը զգայ ինքզինքը, վախնալու անկէց եւ ազօթելու անոր: Ահա այս հակումն է զոր կը գոհացնէ կրօնքը:

Գաղբըֆատ կրցաւ կրօնայնութիւնը, իբրև տարամերժ և հանրական ստորոգելի մը, նկատել բարացուցականը մարդկային տեսակին: Ամենուրեք ուր մարդ կը գտնուի և որոնց կարելի եղած է հարցում ընել և հասկնալ զանոնք, գտնուած է կրօն մը, Աւստրալիացիներուն, Պաշտմաններուն եւ Մինկոպեաններուն մէջ անգամ:

Կրօնական հակումը կրնայ այլասերիլ եւ ըլլալ անապաշտութիւն. երբ կրօնական զգացումը միայն գոհացուի ի վնաս կրօնական գաղափարին: Մնապաշտութեան էութիւնը կը կայանայ մեքենական ծէսերու՝ բերանացի բանաձևերու և նիւթական առարկաներու կրօնական և գերբնական ոյժ մը վերագրելուն մէջ: Մնապաշտութիւնները կը հետեւին զգացողու-

թեան օրէնքին, ունակութեամբ բթանալով՝ հետզհետէ տղայական ու գուհիկ կը դառնան: Ընդհակառակն աւելի գաղափարի քան թէ զգացումի վրայ հիմնուած կրօնը ևս քան զևս կը զտուի, ծէսերէն և բանաձևերէն կը պահէ օգտակարն ու կարևորը միայն, և պէտք է որ այդ պահածներն անգամ, ճշմարտապէս ազդեցիկ եւ կրօնական ըլլալու համար, կատարուին հոգևով և ճշմարտութեամբ:

### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Հաճոյքներ և վիշտեր ունինք, որոնք իմացականութեան և կամքին գործերէն յառաջ կուգան, այս երեւոյթները կը կազմեն խորհրդածեալ զգացողութիւնը:

Բ. — Այս զգացողութիւնը երկու արդիւնքներ ունի. 1. կը ձևափոխէ նախապէս ուսումնասիրած ախորժակներու հակումները. 2. կը ստեղծէ նոր հակումներ:

Գ. — Ախորժակներու ձևափոխութիւնը կը կայանայ անոր մէջ, որ անոնք կրնան չափաւորուիլ, ջնջուիլ կամ չափազանցուիլ:

Դ. — Ընտանեկան և ընկերային հակումները այլասիրական կը դառնան, ու կրնան նաև չափաւորուիլ, ջնջուիլ և չափազանցուիլ:

Ե. — Խորհրդածութենէն ծնած նոր հակումները նախ երեք հակումներ են:

Զ. — Յուզումի հակում:



Է. — Հետաքրքրութեան հակում:

Ը. — Գործելութեան հակում:

Թ. — Յետոյ, մարդասիրական հակում:

Ճ. — Վերջապէս կրօնական հակում, որ զգացումներէ և գաղափարներէ կը բազկանայ:



Գ Ա Ս Ա Փ.

Կ Ի Բ Բ Ե Բ Ը

ՅՈՎԱՆԳՈՒԿՈՒԹԻՒՆ. — Ա. Կիրքերուն բնութիւնը. — Բ. Կիրքերուն դասաւորումը. — Գ. Սկոլասիկ դասաւորում. — Դ. Գասաւորում՝ աւարկաներու համեմատ. — Ե. Կիրքերուն արդիւնները. — Զ. Տիեզերական սէր:

Ա. Կիրքերուն բնութիւնը. — Տիրապէս խօսելով՝ ամէն գիտակցական վիճակ, որ մեր մէջ կը կազմուի, եւ որուն կ'ենթարկուինք կրաւորապէս, կիրք մըն է: Այս տեսակէտով բոլոր զգայութիւնները, բոլոր զգացումները, բոլոր ախորժակները, բոլոր հակումները կիրքեր են: Այս իմաստով է որ նախնի փիլիսոփաները կ'իմանային այս բառը, ու կարծես թէ հասարակաց լեզուն ալ իրաւունք կուտայ անոնց:

Եւ սակայն, փիլիսոփայական լեզուին մէջ կիրք բառին իմաստը շատ աւելի սեղմ է, եւ կը նշանակէ ինչ որ բուն եւ ծայրայեղ է զգացումներուն՝ ախորժակներուն եւ հակումներուն մէջ: Մենք ալ հոս այս իմաստով պիտի առնենք կիրք բառը:

Եթէ կիրքը այս տեսակէտէն նկատենք, պիտի տեսնենք որ անիկա կը ծնի գերակշռութենէն պատկերի մը կամ ձգտումի մը՝ որ կը կեդրոնանայ, իրեն կը քաշէ միւս ձգտումները, կ'աւրէ անոնց բնական ներդաշնակութիւնը, յօգուտ իրեն, և այսպէս էակին մէջ յառաջ կը բերէ հրէշային բան մը: Ուրեմն կիրքը անտեղիտալի՞, տարամերժ և եղծիչ է: Անտեղիտալի՞ վասնզի կ'երևի ամէն պարագայի մէջ և ամենուրեք, «ի յաւելուածոյ սրտի խօսի բերան», սիրած բանին



Վրայ մարդ միշտ կը գտնէ խօսելիք: Այլամերժ՝ վասն զի իր մէջ կը սուզէ բոլոր միւս ձգտումները, եւ կը ջնջէ իրեն հակառակող բոլոր ձգտումները: Ագահութիւնը կը մերժէ մարդասիրական զգացումները. խաղասիրութիւնը կը ջնջէ ընտանեկան զգացումները, եւ նոյն իսկ պատիւինը եւայլն: Եղծիչ՝ վասնզի իրեն կը քաշէ և իր վախճաններուն կը ծառայեցնէ այն մըտապատկերներն ու ձգտումները, որոնք իրենց բնութեամբը ընդունակ էին ուրիշ սահմանումի մը. խաղամուրը ինքզինքը կ'արդարացնէ, ըսելով թէ ընտանիքի ապրուստին պէտքն է զինքը խաղալու ըստիպողը: Այսպիսի եղծում մը կը ցուցնեն այն նշանաւոր տողերը զորս Մուլիէո թարգմանած է Լուկրետիոսէն, Մարդասեացին մէջ: (Մար Բ. Տես. Ե.)—

«Տրոյլոյն, իբրեւ ներմակութիւն, կը նմանի յաստիկին.  
«Իսկ անուելի սեւէն կը ծնի պատեցի գործը ինճիկն»:

Բ. Կիրքերուն դասաւորումը. — Երկու կերպով կարելի է դասաւորել կիրքերը. իրենց ձևին այսինքն իրենց ներկայացուցած ամենէն ընդհանուր նկարագիրներուն համեմատ, և իրենց նիւթին, այսինքն այն ձգտումին համեմատ, որուն չափազանցումն են իրենք:

Գ. Սկոլաստիկներու դասաւորումը. — Սկոլաստիկներն ընդհանրապէս առաջին դասաւորումը կ'ընդունէին: Զայն յառաջ կը բերէ Պոսիւէ իր «Ծանօթութիւն Սասուոյ եւ անձին» գրքին մէջ (Գլ. Բ. հմ. 17): Տէքարդ և իրմէն վերջը եկողները զայն քննադատած են: Անոնց քննադատութիւններէն, սակայն, այնպէս կ'իմացուի թէ չեն կրցած լաւ հասկնալ զայն:

Այս դասաւորման մէջ, կիրքերը երկու դասի կը

բաժնուին. անոնք որ կը վերաբերին ցանկակաւսն ախորժակին, և անոնք որ կը վերաբերին ցասունակաւսն կոչուած ախորժակին: Յանկական ախորժակը կը գրգռուի իր առարկային ներկայութեամբը միայն, կամ բացակայութեամբը միայն. իսկ ցասմնական ախորժակը կը գրգռուի լաւ առարկային սպասելու կամ յոռի առարկայէն խոյս տալու համար զգացուած դժուարութեանէն: Սկոլաստիկներու կարծիքով, ցանկականին առարկան վախճաններ են, իսկ, ընդհակառակն, ցասմնականին առարկան՝ այդ վախճաններու վերաբերեալ միջոցները:

Արդարեւ, ա'յն բաներուն դէմ միայն կը զայրանանք, որոնք բարին կ'արգիլեն կամ չար կը պատճառեն և ո'չ թէ բուն իսկ բարիին կամ չարին դէմ:

Ինչպէս ամէն առարկայ լաւ է կամ յոռի, նոյնպէս և մենք ունինք քարշողական կիրքեր և վանողական կիրքեր, որոնք մէն մի դասի մէջ երկերկու կը գիմբաբաժանեն զիրար: Միայն զայրոյթը, ցասմնական ախորժակին սեփականող այս կիրքը, չունի իր ներհակը: Որով կ'ունենանք վեց կիրքեր՝ ցանկական ախորժակի. երեք քարշողական, սէր, փափաք, ուրախութիւն. երեք վանողական, ատելութիւն, գարշանք, տխրութիւն:

Ցասմնական ախորժակին համար ալ նոյնպէս, նախ ունինք զայրոյթը, յետոյ երկու մղիչ կիրքեր, յոյս, արիւթիւն, և երկու ճնշիչ կիրքեր, անյուսութիւն, երկիւզ, որմէ կ'եղնեն Պոսիւէի թուած տասնմէկ կիրքերը:

Այս դասաւորումը թերեւս կատարեալ չէ. բայց դարձեալ ունի իր արժանիքները, և աւելի զիւրին է քննադատել միայն զայն, քան աւելի գոհացուցիչ մը



գտնել: Անո՛ր համար մանաւանդ փարած են անոր, որովհետեւ կը բովանդակէ կրքային գլխաւոր տարրերը, անոնք որ ամենուրեք կը գտնուին, և ատով իսկ կը բաղկացնեն ինչ որ իսկապէս կրքային է փառասիրութեան՝ նախանձի՝ ընչաքաղցութեան՝ ագահութեան նման մասնաւոր կիրքերու մէջ: Պէտք է գիտել նաև թէ այդ տասնութեկ կիրքերը, ամէնքը կրնան վերածուիլ սիրոյ՝ իբրև իրենց աղբերակին. այսինքն բարիին հասկցողութեան: Պոսիւէ շատ լաւ կը բացատրէ զայս. «Լեբցուցէք սէրը, ա՛լ չկայ կիրք, դրէ՛ք սէրը, ամէնքն ալ կը ծնին»: Դիւրաւ կը տեսնուի թէ այս դասաւորումը կրնայ պատշաճիլ ո՛չ միայն մեր ձգտումներուն ախտաւոր չափազանցումներուն, արդի առումով ըմբռնուած կիրքերուն, այլ նաև ռամիկ եւ հին առումով ըմբռնուած կիրքերուն, որոնք անբանաւոր ձգտումներ են միայն եւ կրնան ըլլալ լաւ, յոռի: Դիւրին է նաև տեսնել թէ սկոլաստիկներուն եւ Պոսիւէի ուղղուած քննադատութեանց մեծագոյն մասը վարկպարազի է, բաւական համարելով այս բառը:

Դ. Առարկաներուն համեմատ դասաւորում.— Եւ սակայն անկարելի չէ իրենց առարկաներուն համեմատ ալ դասաւորել կիրքերը. այսինքն այն ձգտումներուն, ախորժակ կամ հակում, որոնց չափազանցումն են: Այն ատեն այնքան կիրք պիտի ունենանք որքան ախորժակ կամ հակում: Այսպէս նախ պիտի ունենանք ինքնասիրութիւնը, անձին սէրը և այլասիրութիւնը՝ չափազանցեալ, յետոյ որկրամոլութիւնը, արբեցութիւնը, բարկութիւնը, ծուլութիւնը, բղջախոհութիւնը, որոնք կը վերաբերին ախորժակներու, չափազանց

գութը, կամ տկարութիւնը, անգթութիւնը, որոնք կը վերաբերին յուզումի հակումին, զիտուններու եւ հաւաքում ընողներու զանազան զակատումները, որոնք կը վերաբերին հետաքրքրութեան յօժարութեան. ընչաքաղցութիւնը, ագահութիւնը, փառասիրութիւնը, բռնաւորութիւնը, որոնք կը վերաբերին սիրոյ հակումին, ընտանեկան յօժարութիւնը ծնունդ պիտի տար հայրենամոլութեան, կրօնական հակումը, վերջապէս, մուսուլմանութեան:

Ե. Կիրքերու արդիւնքները.— Բոլոր կիրքերը յոռի են, վասնզի ոչ միայն անբանաւոր են, այլ նաև հակաբանական: Եթէ միմիայն անբանաւոր ըլլային, բանականութենէն դուրս միայն պիտի մնային, ինչպէս բնազդները կամ գործարանական պաշտօնները, ու ո՛չ մէկ կերպով եպերելի պիտի չըլլային: Բայց անոնք յաճախ կը հակասակեն բանականութեան, վասն զի կը խանդարեն և կը ջնջեն բարոյական էակին ներդաշնակութիւնը: Եւ սակայն, ինչ որ ըստ ինքեան կրքային է, դատապարտելի չէ. վասնզի բոլոր ձգտումները կրքային են, ոյժեր են անոնք, որոնք կը գործեն մեր մէջ, առանց մեզի: Արդ առանց այդ ձգտումներուն մենք երբեք պիտի չկարենայինք բա՛ն մ'ընել: Մեր կամքը պիտի գործէր ընդունայն, ու պիտի չկարենար ազդել ոչ մէկ բանի վերայ, որ կարենար ապահովել իր գործադրութիւնը: Անբանաւոր ձգտումները, որոնք դէպի բարին կը մղեն զմեզ, և կը հեռացնեն զմեզ չարէն, կամքին կը մատակարարեն իր շարժառիթները, ինչպէս տեսանք Լ. Դասին մէջ, եւ իրենց հակասութեամբն իսկ թոյլ կուտան անձնիշխանութեան որ գործէ: Ուրեմն, որ-



պէսզի էակին անբանաւոր ձգտումները կրքային խորքը լաւ ըլլան, բաւական է որ պահպանուի ձգտումներուն ներդաշնակութիւնը, և անոնցմէ մին չեղծէ միւսները, կամ նոյն իսկ ինքզինքը՝ չափազանցուելով: Ու այս բանը կրնայ ընել խորհրդածութիւնը, մեզի ցոյց տալով ձգտումներէն իւրաքանչիւրին դերը եւ կարեւորութիւնը՝ նկատմամբ մեր կեանքի ամբողջութեան: Բանականութիւնը այսպէս կը սովորի իւրաքանչիւրին տալ իր արժէքը, եւ ըստ այնմ վարուել անոր հետ: Հետեւաբար անիկա նախապատուութիւն պիտի տայ այն ձգտումներուն որոնք ամենէն բարձրները ու ընդհանուրները պիտի ըլլան, եւ պիտի կարենայ ինք գործածել կրքային ներմղումը, առանց անկէջ ինքը գործածուելու վտանգին: Անդրադարձեալ եւ բանականացեալ այս ձգտումները էապէս կը բաղկացնեն սէրեր: Այսպէս կը ծնին սուրբ սէրերը ընտանիքի, հայրենիքի, մարդկութեան: Բայց այս բոլոր սէրերը տակաւին մասնաւոր են, եւ, եթէ կարի բուռն են, վտանգ կայ որ այլամերժ դառնան եւ նորէն իյնան ստորին եւ ախտաւոր ձեւերու մէջ:

Զ. Տիեզերական սէր. — Միակ սէր մը կայ որ մեծ, բարձր, տիեզերական է, որ չի յաջողիր էակները իրենց ճշմարիտ արժէքին համեմատ դատելու գործին մէջ. այն է ճշմարիտին, գեղեցիկին, արդարին և լաւին սէրը, և որովհետեւ սէրը գաղափարներու չի կըրնար ուղղուել և էակներու միայն կ'ուղղուել, Աստուծոյ սէրն է այն: Պատուով տարբերած այդ սիրոյ վրայ է որ քրիստոնէութիւնը բարձրացուց զթասրտութեան շէնքը: Արդարեւ այդպիսի սէր մը որ կ'ուղղուել տիեզերական Օրէնքին՝ որուն միջոցաւ գոյ են

բոլոր էակները, չի կրնար ժխտել ոչ անոնց անհատական կարեւորութիւնը, ոչ ալ հասարակաց համեմալաշխութիւնը: Անոնցմէ մին արհամարհելը՝ ամէնքը արհամարհել պիտի ըլլար, ամէնքը չսիրելը՝ անոնցմէ և ո'չ մին սիրել պիտի ըլլար, աշխարհի յարաբերութիւնները խզելը՝ օրէնքը ատել պիտի ըլլար: Այդ տիեզերական սէրը կը կեդրոնանայ միակ էակի մը վրայ: Այսպէս անիկա խոյս կուտայ օրէնքէն՝ նուազ բարձր էութիւն ունեցող սէրերուն, որոնք այնչափ կը տկարանան՝ որչափ աւելի տարածուին առարկաներուն վրայ:

#### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Կիրքը կը ծնի՝ իրեն ընկերացող պատկերները եղծող պատկերի մը գերակշռութենէն: Կիրքը չարչրկող, այլամերժ և խանգարիչ է:

Բ. — Կիրքերը կարելի է դասաւորել իրենց ընդհանուր ձեւին կամ մասնաւոր առարկաներուն համեմատ:

Գ. — Սկոյաստիկները առաջին դասաւորութիւնը կ'ընդունէին, և կիրքերը կը բաժնէին ցանկական ախորժակի և ցասմնական ախորժակի կիրքերու:

Դ. — Կիրքերը կարելի է դասաւորել նաև իրենց առարկաներուն համեմատ, այն ատեն պէտք կ'ըլլայ ըսել թէ որքան ախորժակ կայ՝ այնքան ալ կիրք կայ:

Ե. — Կիրքերը օգտակար են, գործելութիւնը կատարելու համար. որպէսզի անկարգութեան չմատնուին, անոնք պէտք ունին զսպուելու եւ հսկողութեան տակ մնալու:

Զ. — Կիրքերէն գերիվերոյ կայ Աստուծոյ տիեզերական սէրը, որ անկարգութեան վտանգէն իսպառ շերժ եղող զգացումի վեհագոյն գործն է:



Պ Ա Ս Ա Պ.

Բ Ա Ր Ի Ն

ԲՈՎ ԱՆՊԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Փափաք. — Բ. Բարիին եւ փափաքին յարբերութիւնը. — Գ. Փափաքեղին եւ նախընտրելին. — Գ. Բացարձակ նախընտրելին. — Ե. Պարտաւորութիւնը:

Ա. Փափաք եւ փափաքեղին. — Բոլոր կիրքերը, բոլոր հակումները, բոլոր ախորժակները հասարակաց ձև մը ունին. ամէնքն ալ կը ձգտին բարիին, ու այդ ձգտումին գիտակցութիւնն է որ կը կազմէ փափաքը: Ամէն հակումի մէջ, ինչ ալ ըլլայ ան, կը գտնուի փափաք: Անիկա հոգեբանական զսպանակն է գոզցես ամէն շարժումի: Փափաքը կ'ենթադրէ 1. ներկայ զրկանքի մը սրտնեղիչ զգացումը. 2. ապառնի բարիքի մը մտաբերումը: Եթէ մարդ ունենար իր փափաքած բանը, պիտի չփափաքէր. եթէ լաւ բան մը չմտապատկերէր, թէև անհանգիստ պիտի ըլլար, պիտի յուզուէր, բայց շարժումներու կայուն ուղղութիւն մը պիտի չկենար, հետեւաբար, և պիտի չկենար փափաք: Նոյն իսկ անհանգստութեան մէջ, առանց յըստակօրէն յատկաւորուած նպատակի կատարուող յուզումը տեղի չ'ունենար՝ առանց բարիի մտապատկերի մը: Մարդ միշտ կ'ենթադրէ թէ փոփոխումը պիտի յառաջ բերէ աւելի տանելի վիճակ մը: Այսպէս, իրօք, փափաքին արդիւնաբար պատճառն է նեղութիւն մը, իսկ վախճանական պատճառը՝ բարիք մը: Այս երկու պատճառները միանգամայն կը գործեն և եթէ, բնագանցական տեսակէտով մը, վախճանական պատճառը կամ բարին է որ կը բացատրէ ամէն ինչ, հո-

գեբանութիւնը պէտք է ընդունի երկու պատճառներուն զուգարդիպութիւնը:

Բ. Բարիին եւ փափաքին աղերսները. — Ամէն փափաքուած բան բարի մըն է. բայց ինչո՞ւ այս այսպէս է: Բարին լաւ ըլլալուն համար արդեօք կը փափաքուի, թէ լա՛ւ է անոր համար որ կը փափաքուի: Բնագանցական տեսակէտով մը, ճշմարիտ է ըսել թէ բարին է փափաքին պատճառը, թէ բարին կը փափաքուի վասնզի լաւ է. ստուգիւ, անօթի եղած ատեննիս անո՛ր համար կը փափաքինք սնունդին՝ վասնզի լաւ է ան: Բայց, հոգեբանական տեսակէտով, փափաքն է որ իրերը լաւ կ'ընծայէ մեզի. անո՛ր համար իրերը լաւ կ'երևին մեզի, վասնզի կը փափաքինք անոնց: Եթէ չփափաքէինք ուտել, պիտի չուտէինք, ու պիտի չզիտնայինք թէ սնունդը լա՛ւ է մեզի. անիկա անտարբեր պիտի ըլլար մեզի, վասնզի անգէտ պիտի ըլլայինք իրեն: Ուրեմն պէտք է որ փափաքը հոգեբանապէս կանխէ բարին, վասնզի փորձառութեամբ և գործողութեամբ միայն կը ծանօթանայ բարին. արդ, գործողութիւնը փափաքով միայն կրնայ կատարուիլ: Ուրեմն եթէ մարդ իր փափաքած բարիին փափաքէր զայն ճանչնալէն վերջը միայն, երբեք պիտի չփափաքէր, վասնզի փափաքը հարկաւոր է գործողութեան, և, անով, բարիին ծանօթութեան համար:

Գ. Փափաքեղին եւ նախընտրելին. — Զուտ հոգեբանական տեսակէտով մը, ուրեմն, բարին և փափաքուածը միեւնոյն բանն են. եւ ամէն փափաքուած յայտնապէս փափաքելին է: Բայց ամէն փափաքելի բան միեւնոյն աստիճանով փափաքելի չէ: Նախ փոր-



ձառութիւնը և յետոյ բանականութիւնը կը միջամտեն, հաստատելու և սեւեռելու համար այդ աստիճանները: Նախ փորձառութեամբ կը զխտնանք թէ այսինչ առարկան, որուն կը փափաքինք, աւելի հաճոյք կը հայթայթէ քան այն ինչը, որուն նոյնպէս կը փափաքինք: Այսպէս, յիշողութեան եւ բազդատութեան շնորհիւ, կ'ունենանք նախընտրելիին գաղափարը: Նախընտրելի է փափաքելի մը, որ աւելի փափաքելի է, քան ուրիշ փափաքելի մը:

Յետոյ բանականութիւնը կը ցուցնէ մեզի թէ զգացողութեան գնահատումները հեռու են ճիշդ ըլլալէ, և թէ անոնց վստահիլը բանական անձի գործ է: Զգալի նախընտրելին չի համաձայնիր բանաւոր նախընտրելիին հետ: Այսպէս, տօթակէզ ամրան մէջ արշաւէ մը ետքը, զգացողութեան համար՝ գաւաթ մը ցուրտ ջուր խմելը նախընտրելի է տաք հեղուկ մը խմելէն: Բայց, ընդհակառակն, տաք ըմպելին նախընտրելի է բանականութեան համար: Զգալի յայտնատեսութիւն մը անմիջապէս կը վճռէ զգալի նախընտրելին, իսկ բանականութեան աւելի կամ նուազ երկար և տրամախոհական անդրադարձութիւն մը կ'արժեցնէ բանաւոր նախընտրելին:

Որո՞նք են այն խարխիսները որոնց վրայ կը յետուն բանականութեան նախընտրութիւնները: Որո՞նք են այն կանոնները, որոնց կը հետեւի բանականութիւնը, իր արժեցուցումին մէջ: Դիւրին է զանոնք ի յայտ բերել:

Բանականութիւնը, յիշողութեան օգնութեամբ, կ'ըմբռնէ թէ զգացողապէս ամենէն աւելի փափաքուած բարին յաճախ նուազ երկար տևած է և իր ետևէն աւելի չարիքներ բերած է քան ամենէն քիչ

փափաքուած բարին: Երբ մարդ անգամ մը զգալի փափաքին այս քննադատութեամբը մտազբազլի, կը համոզուի, անհրաժեշտաբար, թէ բարիին գնահատումին համար ապահով կուտան մը չէ ան: Ուստի և կը պարտաւորուի, զգացողութեան անմիջական տուիքներէն դուրս, արժեցուցումի ուրիշ սկզբունք մը որոնել: Այս սկզբունքը կը գտնէ գործերուն արժէքին և կարևորութեանը մէջ: Այսպէս վերոյիշեալ պարագային մէջ, տաք ըմպելին աւելի կ'արժէ քան ցուրտ ըմպելին, վասնզի տաք ըմպելին օգտակար է ամբողջ էակին գործարանական պաշտօններուն, մինչ ցուրտ ըմպելին զանոնք ամէնքը քայքայելու վտանգալից պատահականութիւնն ունի: Գործարանային պաշտօնի մը տրուած գոհացումն այնքան աւելի նախընտրելի է, որքան կարևոր է այդ պաշտօնը, ու պաշտօններն այնքան աւելի կարևոր են, որքան բազմամասն են: Այսպէս կը դատէ այն հիւանդը, որ իր մէկ անգամը կտրել կուտայ, կեանքը փրկելու համար:

Դ. Բացարձակ նախընտրելին. — Բայց մարդը միայն գործարանաւոր էակ մը չէ. խորհող էակ մըն ալ է անիկա: Խորհուրդ պաշտօնը աւելի կարեւոր է քան կեանք պաշտօնը, վասզի աւելի տիեզերական է: Ուրեմն մարդուն մէջ գործարանային պաշտօններէն զերիվերոյ պաշտօն մը կայ, ուստի եթէ այդ գերիվերոյ պաշտօնին հակառակի գործարանային պաշտօնին գոհացումը, առաջին գոհացումը նախընտրելի պիտի ըլլայ միւսէն: Այսպէս միտքին գոհացումները նախընտրելի են քան մարմինին գոհացումները, նոյն այն կերպով և նոյն պատճառով որ զլուսին պահպանումը նախընտրելի է քան սրունքին կամ բազուկին պահ-



պանուժը: Մտքի կարողութիւններուն մէջ, գերագոյն և տիրող կարողութիւնն է բանականութիւնը: Ուրեմն բանականութեան գոհացումները նախընտրելի են զուտ երևակայութեան և կամքի գոհացումներէն: Արդ, բանականութիւնը այն ատեն միայն կրնայ գոհանալ, երբ ամբողջը մասէն, գերազանցը ստորէն, արժանաւորը նուազ արժանաւորէն, կարեւորը նուազ կարեւորէն, էականը երկրորդականէն կը նախընտրուի: Այսպէս կը կազմուի դաղափարը տիեզերական նախընտրելի մը, ամենայն կերպով նախընտրելի մը, տիեզերականապէս փափաքելի մը, որուն ծանօթութիւնը նոյն է տիեզերական բարիի ծանօթութեան հետ:

Ի այց այս բարիին ծանօթութիւնը զուտ հոգեբանական իմացում մը չէ: Անոր պարունակութիւնը բանականութիւնը վերացուցած է իրերու բնութենէն, համեմատ իրենց կարեւորութեան և արժէքի աստիճաններուն, զորս ցուցուցած են զանոնք գտնող զիտութեան օրէնքները: Ուրեմն բարին ոչ այլինչ է եթէ ոչ միացումը միակ ծանօթոյքի մը մէջ՝ տիեզերական փափաքելիին և տիեզերական օրէնքին: Բարին տիեզերական օրէնքն է, իբրև փափաքելի նկատուած:

Ե. Պարտաւորութիւնը. — Հոգեբանական տեսակէտէ նկատելով, պարտաւորութիւնը ոչ այլ ինչ է եթէ ոչ զիտակցութիւնը՝ զոր ունինք այն անձուկ միութեան վրայ, որ զմեզ բացարձակ բարիին կը կապէ, և կը մղէ զմեզ զայն որոնելու և զայն իրականացնելու. այս զիտակցութիւնը կը կազմէ պարտաւորութեան զգացումը: Բարոյականին վերապահելով պարտականութեան արդիւնքները նկարագրելու եւ

ճշդելու հոգը, հոս կը բաւականանանք միայն նշանակելով այդ զգացումին ծագումը:

Ամէն փափաք իր մէջ կը կրէ կապակցում մը փափաքող էակին և փափաքուող առարկային. այդ կապակցումին զգացումը ոչ այլինչ է եթէ ոչ զիտակցութիւնը այն ներքին ոյժին որ փափաքը դէպի իր առարկան կը մղէ: Երբ միակ փափաք մը կը տիրէ զիտակցութեան մէջ, այդ կապակցումը հոգեբանապէս հարկաւոր է. աւելին չենք կրնար ըսել: Երբ բազմաթիւ փափաքներ կը ներկայանան, բանականութիւնը կը ցուցնէ նախընտրելին և իսկոյն կը հաստատուի մասնաւոր կապակցում մը մեր զիտակցութեան և նախընտրելիին միջև. այս կապակցումը ալ հարկաւոր չէ, բացարձակ է: Կրնանք խզել զայն, բայց զայն խզելով հանդերձ, չենք կրնար ոչնչացած նկատել զայն. ան կը շարունակէ հարկադրուիլ մեր զիտակցութեան վրայ, այն ատեն նոյն իսկ՝ երբ մեր գործերը կը ժխտեն զայն. անոր հեղինակութիւնը կուգայ բանականութեան հեղինակութենէն նոյն իսկ: Մեր իրական նախընտրութիւնները կը շատանան հակասելով մեր ներքին գնահատումին, բայց չենք կրնար ստուգապէս, ոչինչ գերադասել բանականութեան մեր բանականութիւնը նոյն իսկ, ամէն բանի վրայ իր ունեցած գերիվերոյութեան զգացումը՝ կը հակառակի ատոր: Ասկէց յառաջ կուգայ իր վճիռին հեղինակութիւնը: Երբ բանականութիւնը անգամ մը կը նշանակէ բարիին դոյութիւնը, զիտակցութիւնը ալ կապուած կը զգայ ինքզինքը, ու կը զգայ որ թէեւ կրնայ ապստամբել, բայց պարտի հնազանդիլ: Այսպէս կ'ունենայ պարտաւորութեան զգացումը: Զայն չընդունիլը հակասել է անձին:



## ԱՄՓՈՓՈՒՄ

Ա. — Փափաքը մեր ձգտումներուն զիտակցութիւնն է:

Բ. — Փափաքը բարի է. կը փափաքինք բանի մը, որովհետեւ բնազանցապէս լաւ բան մըն է ան. իսկ Ֆիզիզապէս լաւ է, վասնզի փափաքելի է:

Գ. — Երկու փափաքելիներու միջև բանականութիւնը կը ցուցնէ նախընտրելին, որ աւելի կարեւորը և աւելի հանրականն է:

Դ. — Բանաւոր գործը՝ կարեւորագոյնն ու հանրականագոյնը ըլլալով մարդուն մէջ, կը կազմէ բացարձակ նախընտրելին, բարին:

Ե. — Պարտաւորութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ զգացումը հարկաւոր և անքակտելի զգացումին, որ զմեզ բարիին կը կապէ:

## Գ Ա Ս Լ Ե.

## Ն Կ Ա Ր Ա Գ Ի Ր. Ա Ն Ձ Ը

ԲՈՂԱՆԳԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Սահման նկարագիրի. — Բ. Չորս խառնուածքներ: — Գ. Կազմութիւն նկարագիրի. — Դ. Անձը. — Ե. Բնութեան եւ կամքին բաժինը մարդուն կազմութեան մէջ:

Ա. Սահման նկարագիրի. — Հակումները, կիրքերը, կամեցութիւնները երբ կրկնուին, ծնունդ կուտան ունակութիւններու, այն օրէնքներուն համեմատ, զորս ցոյց տուինք ԺԱ. Դասին մէջ: Այս ունակութիւնները այնպէս մը կը կազմակերպուին և կ'ամբասանն որ մարդկային անձնուր անհատ կը ներկայացընէ իրեն սեպհական եղանակ մը զգալու և գործելու: Զգալու և գործելու ինքնայատուկ այս եղանակըն է անհա, որ կը կազմէ նկարագիրը: Այսպէս նկարագիրը մարդու մը ինքնայատուկ ձևանն է կարծես, զոր և շատ իրաւամբ կոչած են նշանը անոր բարոյական բեկբեկումին:

Նկարագիրին զիտութիւնը տակաւին շատ յառաջացած է, այնպէս որ չունինք որ եւ է դասաւորութիւն որ կարենայ ներկայացնել զայն ստոյգ եւ որոշ կերպով: Եթէ սակայն ուզենք ունենալ դասաւորութիւն մը, որուն համեմատ կարելի ըլլայ առժամեայ կարգով մը շարել իրողութիւնները, կրնանք ընդունիլ նկարագիրներու այնքան զլխաւոր տիպեր, որքան խառնուածքներ կ'ընդունէին հին հոգեբանները:

Բ. Չորս խառնուածքներ. — «Չորս խառնուածքներու հին տարրորոշումը, զոր հոգեբանութիւնը փոխ



առած էր Գաղիանոսի բժշկական տեսութիւններէն, հիմնուած էր մարդուն անհատական պէսպիսութիւններուն կամ տարբերութիւններու նուրբ նկատողութեանը վրայ»:

Չորս խառնուածքներն էին, արիւնային, մաղձային, ջրային, և աւշային: Սառնուածքներու այս չորս դասի տարրողումը կ'արդարանայ տակաւին, վասնզի ուղղութիւններու և փափաքներու անհատական վարջին մէջ կրնանք զանազանել երկու տեսակ գիմաբաժանումներ կամ ներհակներ. առաջին գիմաբաժանում մը, որ կորովին կը վերաբերի, երկրորդ մը, որ կը վերաբերի հոգիին շարժումներուն յարողորքեան արագորքեանը: Ցասկոտն ու մեղամաղձոտը հակամէտ են զօրաւոր յուղումներու, իսկ արիւնայինն ու աւշայինը՝ տկար յուղումներու: Արիւնայինն ու ցասկոտը տրամադիր են փոփոխութեան կամ արագ յաջորդութեան, մեղամաղձոտն ու աւշայինը՝ յամբ փոփոխութեան: Սառնուածքի միւս մասնաւորութիւնները գիւրաւ կը յարակցին այս երկու գլխաւոր հակադրութիւններուն հետ: Ամէն ոք գիտէ թէ զօրաւոր, կորովի խառնուածքները, այսինքն ցասկոտն ու մեղամաղձոտը, կը նախընտրեն անձնատուր ըլլալ հոգիին տաժանելի տրամադրութիւններուն, մինչդեռ տկար խառնուածքները անուանի են կեանքին բարիքները վայելելու համար իրենց ունեցած գեղեցիկ ձիրքերովը: Բաց աստի երկու արագ խառնուածքները, արիւնայինը և ցասկոտը, աւելի անձնատուր կ'ըլլան ներկային տպաւորութիւններուն, արդ, անոնց այս արագ շարժումներուն է պատճառը, որ ամէն նոր մըտապատկեր ընդունակ է զանոնք յատկաւորելու: Ընդհակառակն, երկու յամբաշարժ խառնուածքները աւելի

դէպի անցեալը ուղղուած են: Չզարտուղելով ամէն զայրացուցիչ պատահումքէ, անոնք իրենց ամբողջ ժամանակը կը գործածեն անձնատուր ըլլալու իրենց սեպհական խորհուրդներուն: Վերջապէս ցասկոտն ու աւշայինը գործունէութեան խառնուածքներ են, որոնց հակադիրներն են զգացումի խառնուածքները, արիւնայինը և մեղամաղձոտը:

Գ. Նկարագիրից կազմութիւնը.— Չափահաս մարդոց այնքան զանազանակ բոլոր նկարագիրները բերեղացուցումներ են կարծես, կատարուած՝ նախնական խառնուածքին շուրջը, որ անոնց կը ծառայէ իբրեւ կեդրոնական սռանցք: Նկարագիրը կը փոփոխուի ու նակութիւններու հետ, եւ այսպէս եղանակաւորելի էութիւն մ'ունի: Կ'եղանակաւորուի նոյն իսկ օրէ օր: Եւ սակայն, ամէն նկարագրի մէջ բան մը կայ որ չի փոխուի. նախնական խառնուածքն է ան, որ, ինչպէս տեսանք, կախեալ է մանուկ անհատին բնա-հոգեխօսական գործարանաւորութենէն: Իմանալի է ուրեմն որ գործարանաւորութեան վրայ յառաջ եկած ոք եւ է կարեւոր փոփոխութիւն՝ փոփոխութիւն պիտի յառաջ բերէ նկարագրին մէջ: Արագաշարժ մանուկը թոյլ պիտի ըլլայ եթէ աւրուի կամ եթէ ծիւրախտաւորուի: Քնատութիւնը, արեցութիւնը և ուրիշ կարգ մը ախտաժէտ վիճակներ ծանր փոփոխումներ յառաջ կը բերեն զգայութեան աստիճանին մէջ, ու կարեւոր այլալուսներ կը պատճառեն նկարագրի:

Սնասուններն ալ, իւրաքանչիւրը ունին նկարագիր մը, միայն թէ անիկա նուազ ամուր, նուազ բարացուցական է քան մարդոցը: Բայց անասունները անձերցեն: Մարդը միայն անձ մըն է: Ի՞նչ է ուրեմն անձը:



Գ. Անձը.— Բնազանցականին մէջ, անձը կը սահմանուի անհատական գոյութիւն մը, բանականութեամբ օժտուած: Այս սահմանը լաւ կը պատշաճի մարդուն: Ուրեմն մարդը անձ մըն է: Իր բանական անհատականութեան շնորհիւն է որ ան կրնայ իրեն վերագրել իր գիտակցութեան զանազան երևոյթները, և այսպէս իր եսը հանդիպողքել եղանակաւորումներուն: Իր գիտակցութեան վերլուծումովն ալ կրնայ ան ի յայտ բերել իր սեպհական նկարագիրը, իր անձին վերագրել զայն իբր այն, և ճշմարտապէս ճանչնալ ոչ միայն իր անձը, իր բնական եսը, այլ նաեւ իր ճառագայթումը և իր բարացուցական ստորոգելիները, ինչ որ միակ բառով մը կը կոչուի անձնաւորութիւն: Եւ որ աւելին է, ան կրնայ ըլլալ արուեստաւորը այդ անձնաւորութեան, յօրինիչը իր սեպհական կեանքին: Ասոր համար կը բաւէ որ ան մըտապատկերէ անձնաւորութեան գաղափարական մը, սիրէ զայն և իր հոգւոյն մէջ ամրապէս տպաւորէ զայն: Այս գաղափարը ամենուրեք սփռուելով, ինքնին պիտի ձգտի իր իրականացումին, ոչինչ պիտի չկրնայ հաւասարիլ անոր զօրութեանը, ու ո՛չ մէկ արտաքին զօրութիւն պիտի չկարենայ հակադդել անոր: Ասոր համար է որ մանուկը պէտք է ինքն ալ իր աշխատութիւնը ունենայ իր անձին կրթութեանը գործին մէջ: Ուստի պէտք է անոր լաւ յարացոյցներ եւ բարձր օրինակներ միայն տալ, մեծ իրերու համար գրգռել անոր հիացումն ու խանդը, անոր սիրցնել համբերութիւնը, քաջութիւնը, կորովը, անձին տիրապետումը:

Ե. Մարդուն կազմութեան մեջ բնութեան եւ կամֆին բաժինը.— Մարդս իր կազմաւորութեանը հետ

բնութենէն և կամքէ՛ն կ'ընդունի իր նկարագրին առաջին ծրագիրը, բայց կրնայ յետոյ այդ յատակին վրայ կատարել անհունապէս բազմազան պէսպիսութիւններ, որոնք բոլորովին կը փոխեն անոր տեսարանը, ինքն իսկ ունի իր վրայ գրեթէ անհուն ներգործութիւն մը եղանակաւորումի և փոփոխումի: Կրնայ, եթէ ուղէ, հիանալի գեղեցկութեամբ, զարչելի տգեղութեամբ կամ տափակ միօրինակութեամբ արուեստի գործ մը շինել իր կեանքը: Իր էութեան համն ու արժէքը իր ձեռքն է գրեթէ ամբողջովին. կրնայ հակադդել իր բնութեանը վրայ, և իւրովսանն նպաստել զայն աւելի ևս յոռի ընելու կամ անոր գեղեցկութիւնը աճեցնելու համար: Այսպէս է որ ան իրմէն բան մը կ'աւելցնէ անոր վրայ և կ'արժանանայ Պագոնի սա յորջորջումին՝ «Մարդ յաւելիչ բնութեան» (Homo additus naturae):

**Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ**

Ա.— Մարդու մը նկարագիրը իր զգալու և հակազդելու յատուկ կերպէն կազմուած է:

Բ.— Նկարագիրը նախ խառնուած քէն կախում ունի. վուճտդի հետ կրնանք չորս տեսակ նկարագիրը զատորոշել.

	արագ	յամբ
ուժեղ	ցասկոս	մեյամաղձոս
տկար	արիւնային	աւտային

Գ.— Նկարագիրը կը կազմուի ունակութիւններուն տեսակ մը բիւրեղացումովը՝ նախնական խառնուածքին շուրջը: Նկարագիրը էապէս եղանակաւորելի է, ու խառնուածքն ալ կրնայ փոխուիլ:



Գ. — Անձը՝ բանականութեամբ օժտուած անհատական գոյացութիւն մըն է: Անոր անձնաւորութիւնը կազմուած է այն վերագրումովը որով անիկա իրենը կ'ընէ իր սեփական նկարագիրը:

Ե. — Կամքը կրնայ միշտ այնպէս մը ընել որ կարենայ եղանակաւորել անձնաւորութիւնը և զայն նման դարձընել առաջարկուած տիպարի մը:



## Գ Ա Ս Լ Զ.

### Մ Ա Ր Գ Ն Ո Ի Ա Ն Ա Ս Ո Ւ Ն Ը

ԲՈՎԱՆԳՎԱԿՈՒԹԻՒՆ. — Ա. Սահման բաղդասական Հոգեբանութեան. — Բ. Մարդուն եւ անասունին սարորոշութիւնը. — Գ. Զանազան կարծիքներ. — Դ. Տէրադի փաստեր ի նպաստ անասուններու ինքնաշարժութեան. — Ե. Այս փաստերուն բնագատութիւնը. — Զ. Մոնղաների բնագատութիւնը. — Է. Վնական վորձաւորութիւն. — Ը. Անասնական իմացականութիւն. — Թ. Մարդկային իմացականութիւն:

Ա. Սահման բաղդասական Հոգեբանութեան. — Բազդատական հոգեբանութիւն կը կոչուի գիտութիւնը այն պէսպիսութիւններուն, զորս գիտակցական երևոյթները կը ներկայացնեն տարբեր գիտակից էակներու մէջ: Այսպէս բազդատել առողջ և կրթեալ չափահասին հոգեբանութիւնը՝ մանուկին, յիմարին, ապուշին, վայրենիին հոգեբանութեանը հետ, բազդատական հոգեբանութիւն կազմել է. նմանապէս՝ եթէ բազդատենք մարդուն հոգեբանութիւնը անասունին հոգեբանութեանը հետ:

Հոս պիտի կատարենք այս վերջին բազդատութիւնը միայն: Ուստի բազդատական հոգեբանութեան մէկ ճիւղին վրայ միայն պիտի խօսինք համառօտակի:

Բ. Մարդուն եւ անասունին սարորոշութիւնը. — Կրնայինք երկու բառով ցուցնել մարդը անասունէն զատորոշող տարբերութիւնը, ըսելով թէ միմիայն զգայական հոգեբանութիւնը բաւական է բացատրելու անասուններուն գործերը, մինչդեռ խորհրդածական հոգեբանութիւնը հարկաւոր է բացատրելու համար ամէն



ինչ որ մեր անձնական փորձառութիւնը կը հաստատէ մեր մէջ: Ուրեմն մարդուն և անասունին միջև եղած տարբերութիւնը պարզ աստիճանի տարբերութիւն մը չէ, այլ ճշմարիտ տարբերութիւն մը բնութեան: Ի՛նչ որ ալ ըլլան անասունին ֆիզիկական աղերսները մարդուն ֆիզիկական գործարանաւորութեան հետ, — թէ իսկ աւելի բազմաթիւ ըլլան այդ աղերսները, — միշտ անանցանելի անջրպետ մը պիտի կենայ մարդկային իմացականութեան եւ անասնային իմացականութեան միջեւ:

Գ. Զանազան կարծիքներ. — Այս կարծիքէն զատ, երեք զլխաւոր կարծիքներ ևս յայտնուած են անասնային իմացականութեան բնութեան և, հետեւաբար, անոր մարդկային իմացականութեան հետ ունեցած աղերսներուն վրայ: Տէքարդ անասուններուն կը զլանայ ո՛ր և է իմացականութիւն և զանոնք կը նըկատէ լոկ մեքենաներ. ինքնաշարժութեան վարդապետութիւնն է աս. զգայաւորանները, որոնք մարդուն մէջ ամէն ինչ զգայութեամբ եւ զուգորդութեամբ կը բացատրեն, անասնային իմացականութիւնը կը վերածեն զգայութեան եւ զուգորդութեան: Վերջապէս Մոնդաներ կը թուի ճշմարիտ բանականութիւն մը շնորհել անասունին: — Այս երկու վերջին կարծիքները, զանազան տեսակէտներով, մարդկային իմացականութեան հանդուսակ բնութիւն մը կուտան անասնային իմացականութեան: Ուրեմն մեր և Տէքարդի կարծիքն է միայն, որ տեսակարար տարբերութիւն մը կը հաստատէ մարդուն և անասունին միջեւ:

Դ. Տեքարդի փաստերը, ի նպաստ կենդանիներու ինքնաշարժութեան. — Լաֆոնդէն շատ ճշգրիտ կերպով մը արտայայտած է Տէքարդի կարծիքը, հետեւեալ սողերուն մէջ.

Տէքարդեանները կ'ըսեն.

Անասունն է լոկ մեքենայ,  
Ուր ամենայն գործէ յանգէս եւ ինքնօրէն.  
Ոչ ազդումն ինչ եւ ո՛չ ոգի, ամենայն է ինմա մարմին.  
Ուրպիսի ինչ է ժամացոյց մեր որ զընայ  
Միտս հաւասար ոտիւք, կոյր իմն եւ անխորհուրդ:  
Այլ բա՛ց ըզնա եւ ընթերցի՛ր ի ծոց նորա,  
Անիւք բազումք ունին անդէն զտեղի ողոյն սիեգեցեաց:  
Առայիցն անդ շարժէ զերկորդն,  
Միւս եւս երրորդ զայ զհետ նորա, մինչեւ յետն ուրեմն հրնչէ,  
Պէս զայս գունակ է անասուն, ասեմ նոքա:  
(Գիրք Ժ. Առակ. Ա. Թրգմ. Գարագաշեան)

Առաջին իրողութիւնը, որուն վրայ կը յենու Տէքարդ, անասուններուն լեզու չունենալն է: Սոսելու համար անասուններուն չունեցածը գործարանները չեն, վասնզի անձեղներն ու թութակները կը խօսին. այլ իմացականութիւնը, բանականութիւնը:

Երկրորդ, անասուններուն բոլոր գործերը կրնան բացատրուիլ ինքնաշարժութեամբ: Արդարեւ, որպէսզի ինքնաշարժ մը կարենայ արտաքին գրգռութիւններուն պատասխանել պատշաճ շարժումով մը, պէտք է և բաւական է որ զայն շինող մեքենագործը բաւական իմաստուն ըլլայ, նախատեսելու համար այն ամէն պարագաները, որոնց մէջ պիտի գտնուի ինքնաշարժը, ու բաւական ճարտար՝ մեքենային յօրինուածքը այդ պարագաներուն պատշաճեցնելու համար: Արդ, անասունները շինող մեքենագործը՝ Աս-



տուած է, որուն չի պակսիր ո՛չ իմաստութիւն և ո՛չ ճարտարութիւն: Ուրեմն եթէ անասունները կրնան կատարեալ կերպով ներկայացնել ինչ ինչ գործեր, ո՛չ թէ իրենք են ասոր պատճառը, այլ Աստուած:

Ե. Այս փաստերուն քննադատումը. — Առաջին փաստը կ'ապացուցանէ թէ անասունները չունին բանականութիւն, բայց չ'ապացուցաներ թէ անասունները չունին ո՛չ զգայութիւն և ո՛չ զգացում:

Երկրորդը յառաջբերութիւնն է ենթադրութեան մը, որ, կը յարմարի իրողութիւններուն, այլ կրնայ նաև յարմարիլ ուրիշ այնպիսի իրողութիւններու, որոնց մէջ, սակայն, կայ գիտակցութիւն, նոյն իսկ մեր փորձառութեան վկայութեամբը: Արդարև, միևնոյն ենթադրութիւնը կրնայ հաւասարապէս յարմարիլ ինչպէս մարդու մը՝ նոյնպէս անասունի մը գործերուն: Մեր բոլոր գործերը, արտաքուստ դիտուած ատեն, մասնաւոր թիւով մը շարժումներ են միայն, որոնք կըրնան բացատրուիլ արտաքին մեքենագործի մը իմաստութեամբն ու ճարտարութեամբը: Եւ սակայն մենք քաջ գիտենք թէ կայ այդ գործերուն գիտակցութիւնը, որովհետև կը զգանք զանոնք: Ուրեմն, մարդերուն և անասուններուն գործերը հաւասարապէս բացատրող այդ ենթադրութիւնը բոլորովին սխալ է մարդուն համար, հետևաբար կրնայ նաև սխալ ըլլալ անասունին համար:

Ոչ միայն կրնայ սխալ ըլլալ, այլ եւ է իսկ վասնզի գիտակցութիւնն ու զգայութիւնը մարդուն մէջ կապուած են ջղային գրութեան գոյութեան: Նըմանօրինակ ջղային գրութիւն մը կը գտնուի նաև անասունին մէջ: Ուրեմն անասունը քանի որ ունի գոր-

ծարանական պայմանը, պէտք է նաև ունենայ հոգեկան պայմանաւորեալը:

Վերջապէս, անասունը ունի ձայնի այնպիսի աստիճաններ և ոլորակներ, նիստ ու կացի այնպիսի ձեւեր, նայուածքի այնպիսի արտայայտութիւն մը, զոր երբեք չեն ունեցած ամենէն կատարեալ ինքնաշարժներն անգամ: Կը զգանք թէ այդ աչքերուն ետին, այդ ճիչերուն ետին գիտակցութիւն մը կայ հաճոյքի կամ վիշտի: Ուրեմն անասունը ունի գիտակցութիւն, կը զգայ, և իր գործողութիւնները պատասխաններ են զգայութիւններու:

Զ. Մոնղաների կարծիքին քննադատումը. — Ունի գիտակցութիւն, բայց, ասոր համար ունի՞ նաև բանականութիւն, մերկնին հաւասար: Այս կը թուի ըլլալ կարծիքը Մոնղաների, որ, թերևս ընդ խաղ, ամենէն մտացի տրամախոհումներն իսկ չի վաճար անասունին՝ Ջասագովյոսթիւն Raymond de Sebondeին մէջ:

Անշուշտ միշտ կարելի է տրամախոհական ձեւերու տակ իմանալ անասուններուն գործերը. որովհետև մենք բանական, տրամախոհուն ենք, ուստի և միշտ կ'ուզենք այդպէս մեկնել այդ գործերը. բայց պիտի կարենայի՞նք միևնոյն կերպով տրամախոհական համարել նոյնպէս ջուրի կաթիլ մը, որ, արգելքի մը բաղխելով, կանգ կ'առնու, կարծես կը խորհի, կը խորհրդածէ և կը հետևի նուազագոյն գիմադրութիւն ցոյց տուող գիծին: Անտարակոյս, բնութեան մէջ ամէն ինչ օրէնքներու կը հնազանդի, և, հետևաբար, կը բացատրէ պատճառ մը, զոր մեր բանականութիւնը չի կրնար գտնել. բայց խնդիր է գիտնալ թէ զայն ներկայացնող էակը միշտ կրնա՞յ խելամուտ ըլլալ անոր:



է. Որոշիչ փորձառութիւն. — Ու ա՛յս բանն է որ չի թուիր միշտ տեղի ունենալ, նոյն իսկ այն էակներուն մէջ, որոնք ունին գիտակցութիւն ու նաև իմացականութիւն: Մեր փորձառութիւնը կրնայ հաստատել զայս: Լրագիր մը կարդալով՝ կը քալեմ փողոցին մէջէն. կը տեսնեմ անցորդները, և կը զգուշանամ անոնց դպչելէ, պէտք եղած տեղը կը դարձնեմ ուղղութիւնս, և այլն: Այս բոլոր գործողութիւնները կը թուին պահանջել տրամախոհութիւն, և ոչինչ աւելի գիւրին է քան տրամախոհել անոնց մասին, ըլլալնէն ետքը: Եւ սակայն քաջ գիտեմ թէ ես չտրամախոհեցի անոնց մասին, թէ բանականութենէն յայտնապէս անկախ կերպով կատարուեցան այդ գործողութիւնները, տարտամ գիտակցութեան մը մէջ, ուր տանելու համար զիս՝ բաւական էին իմ զգալի փորձառութիւնս և յառաջագոյն փորձառութիւններս: Այսպէս է անասնային գիտակցութեան յարատեւ վիճակը:

Տեքարդի նախալիշեալ փաստը կ'ապացուցէ թէ անասնային իմացականութիւնը չի կրնար շփոթուիլ բանականութեան հետ: Լեզուն, արդարև, անքակտելի կերպով կապուած է բանականութեան հետ: Ո՛վ որ ունի բանականութիւն և խօսելու գործարան, պիտի խօսի օր մը, անպատճառ: Անասունը չի խօսիր, ուրեմն չունի բանականութիւն:

Աւելին եւս կայ, բանականութիւնը հանրական կարողութիւն մըն է, որ կը ծնի գիտութիւնները, և, անոնցմով, անհուն միջոցները՝ զանազան պատահականութիւններէ զգուշանալու և միջավայրին վրայ ներգործելու այնպիսի կերպով մը, որ փոխանակ ինք անոր պատշաճելու, զայն իրեն կը պատշաճեցնէ: Անասունը գիտութիւն չունի. դոյզն դժուարութիւն մը

կը կասեցնէ զայն. ու ամենէն խելացի գործերը կատարողները ստուգապէս ամենէն ապուշները կ'ըլլան. երբ փոխուին իրենց ճարտարած գործողութիւններուն պայմանները. կ'ազդուին իրենց միջավայրէն, և կը պատշաճին անոր աւելի կամ նուազ, առանց գիտնալու հակազդել անոր վրայ: Անասունը չի գիտեր վառել կրակ, զոր սակայն կը գնահատէ, չի գիտեր հազուել: Երբ կլիման իրեն չյարմարի, կա՛մ կը մեռնի, կա՛մ կը փախչի. չի կրնար ուրիշ բան մը ընել: Ընդհակառակն, մարդը, իր ճարտարութեան շնորհիւ, կը յարմարի բոլոր կլիմաներուն:

Ը. Անասնային իմացականութիւն. — Ուրեմն, անասնային իմացականութեան համար, մենք կ'ընդունինք զգայադաւաններուն կարծիքը: Հիւմի և Ստուարդ Միլի հոգեբանութիւնը պատուական ամփոփում մըն է այն բաներուն, որոնց ատակ է վերին կարգի անասուններուն իմացականութիւնը: Ամբողջ զգացական հոգեբանութիւնը հասարակաց է մարդուն և անասունին: Անասունը ունի ուրեմն գիտակցական վիճակներ, զգայութիւններ, յիշողութիւն, իր պատկերները կը զուգորդուին և կը բաղակցին իրարու: Կրնայ նաև բաղադրական պատկերներով, անցեալ փորձառութեան մը շնորհիւ, ունենալ տեսակ մը կանխագիտութիւն ապագայ փորձառութեան: Յաջորդականութեանց ունակութեամբ, կրնայ նոյն իսկ ունենալ տարտամ ձգտում մը՝ յիշողութեանը մէջ արթնցած անցեալ պատկերներուն նման ապագայի մը սպասելու. այսպէս կրնայ ունենալ երևակայական և գործնական համազօր մը հանրական պատճառականութեան, եւ զգացում մը հանրական սահմանականութեան: Բայց



ասոնք ամէնքը տարտամ ձգտումներ, շփոթ զգացումներ են միայն, զորս անձնական փորձառութեամբ կը ճանչնանք մենք ալ մեր գիտակցութեան ստորին աստիճանին մէջ. մինչդեռ վերին աստիճանը գրաւուած է — ինչպէս վերոյիշեալ պարագային մէջ — յստակ մտածումներովը փողոցին մէջէն զնացքի մը (ստոր աստիճան), ընթերցումի մը միջոցին (վերին աստիճան)։

Թ. Մարդկային իմացականութիւնը. — Գալով մեզի, մենք կը զգանք փորձառական այնպիսի պայծառութիւն մը, որ գերիվերոյ է բոլոր տրամախոհումներէն, գիտակցութեան երկու աստիճաններուն գոյութենէն և տարբերութենէն։ Խորհրդածական հոգեբանութեան զանազան դասերուն մէջ ցոյց տալով փորձառական վարդապետութեանց անկարողութիւնը՝ բացատրելու համար, ի մասնաւորի, ընդհ. գաղափարներն ու առաջին սկզբունքները, հաստատած եղանք պէտքը մարդուն շնորհելու այնպիսի բանականութիւն մը, որ հանրական հանգամանք մ'ունենայ, և, ատով իսկ, անհունապէս գերիվերոյ ըլլայ անասունին զուտ փորձառական իմացականութենէն։

Մարդուն մարմինին մէջ անգամ չկայ բան մը որ յայտնապէս չզանազանուի անասուններուն մարմինէն. վայրենիներէն ամենէն կոպիտին յոնքին կամարը, աւելի քիչ արտակարկառ է քան ամենէն զարգացեալ կապիկինը. ծնօտին երկայնութիւնն ալ նոյնպէս նուազ է։ Պ. Gandry վերջերս գտաւ նախնական մարդակապիկի մը բրածուն, որուն կղակին կազմութիւնը ուսումնասիրելով հաստատեց թէ այդ անասունը խօսելու անկարող էր, լեզուին թողուած տեղին նուազութեանը պատճառաւ։ Հետեւաբար նախամարդակա-

պիկն ալ այնքան ունեցած է ընդունակութիւն խօսելու, որքան արգի կապիկները։

Ուրեմն անվիճելի կերպով մարդուն կը մնայ գերիվերոյ և տիրական այն դիրքը, զոր արդէն ան միշտ ճանչցած է իբրև իր սեփականութիւնը։ Հանքերուն պէս՝ ան ունի էութիւնը, բոյսերուն պէս՝ ունի կեանք, անասուններուն հետ՝ բաժանակից է զգայութեան և իմացականութեան ստորին խորքին. բայց, երկրի վըրայ, ինք միայն ունի բանականութիւն, այսինքն կարողութիւն ճանչնալու ինքզինքը և աշխարհը, կարողութիւն հասկնալու աշխարհի և իր անձին օրէնքները, իրերու և օրէնքներու ծանօթութենէն՝ իրերու և օրէնքներու վեհագոյն հեղինակին ծանօթութեանը բարձրանալու, ճանչնալու իրաւունքին գերիշխանութիւնը այս աշխարհի մէջ, ու պարտաւորութեան վեհափայլ մեծվայելչութիւնը. իր նմաններուն վըրայ յարգելու նոյն իրաւունքը զոր կը զգայ թէ ուրիշներն ալ պէտք է յարգեն իր վըրայ։ Մարդն այսպէս կը կազմէ գիտութիւնը, բարոյականը, ընկերութիւնը, կրօնը. գիտական, բարոյական, ընկերական և կրօնական կենդանի մըն է ան։ Ամենէն զարգացեալ կապիկը չունի ո՛չ գիտութիւն և ո՛չ կրօն. չի գիտեր իրաւունք, և հետեւաբար բարոյականին և ընկերականութեան էական տարրը։ Յաւիտենական անբան պիտի մնայ ան։

#### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Բազդատական հոգեբանութիւնը զանազան աստիճանի գիտութեանց գիտութիւնն է։

Բ. — Մարդը կենդանիէն կը տարբերի ոչ միայն աստիճանով այլ նաև բնութեամբ։



Գ. — Այս կարծիքէն դուրս երեք ուրիշ կարծիքներ հնարաւոր են. Տեքարդի կարծիքը ի մասին կենդանամեքենաներուն կամ ինքնաշարժութեան. Մոնդաներինը՝ թէ անասունը մարդուն պէս կը տրամախոհէ. կարծիքը զգայադաւաններուն, որոնք կ'ըսեն թէ մարդը կը զգայ ա'յնպէս ինչպէս կը զգան կենդանիները:

Գ. — Տեքարդ կը պնդէ ապացուցանել իր կարծիքը երկու փաստերով. 1. կենդանիները չեն խօսիր, ուրեմն չեն խորհիր. կարելի է անոնց գործերը բացատրել ինքնաշարժութեամբ:

Ե. — Առաջին փաստը առ առաւելն պիտի ապացուցէր թէ անասունը բանական խորհուրդ չունի, բայց ոչ թէ անասունները չեն զգար. երկրորդն ալ նոյնպէս պիտի ապացուցէր միայն թէ մարդիկ ինքնաշարժներ են միայն:

Զ. — Մոնդաներ անասուններուն կը վերագրէ տրամախոհութիւն. խնդիր է սակայն գիտնալ թէ անոնք ունին այդ բանը:

Է. — Արդ, մենք փորձառութեամբ գիտենք թէ մենք իսկ շատ բաներ գիտակցօրէն կ'ընենք, առանց խորհելու կամ տրամախոհելու: Միւս կողմանէ, անասունները չեն տրամախոհեր, քանի որ չեն խօսիր:

Ը. — Ուրեմն, անասունները կրնան, մեզի պէս, կատարել զգացական հոգեբանութեան բոլոր գործողութիւնները:

Թ. — Բայց մարդը միայն կրնայ խորհիլ, խորհրդածել և տրամախոհել: Գիտական, բարոյական և ընկերական կենդանի մըն է ան:

## Գ Ա Ս Ա Է.

### ՀՈԳԻՆ ԵՒ ՄԱՐՄԻՆԸ. ՖԻԶԻԳԱԿԱՆԻՆ ԵՒ ԲԱՐՈՅԱԿԱՆԻՆ ԱՂԵՐՍՆԵՐԸ

ԲՈՎԱՆԳԱՎՈՒԹԻՒՆ. — Ա. Միսն ու մարմինը. — Բ. Ֆիզիկականին եւ բարոյականին յարաբերութիւնները. — Գ. Անկէց ծագող խնդիր մը. — Դ. Նիւթապատե տեսութիւն, եւ պատասխան. — Ե. Երեւութապատե տեսութիւն. — Զ. Բննադատութիւն:

Ա. Հոգին եւ մարմինը. — Հոգեբանական երևոյթներուն և բնախօսական երևոյթներուն տարրոշուութիւնը հաստատելով, իրապէս հաստատած եղանք արդէն մեր բնութեան երկուութիւնը: Երևոյթներու այս երկու տեսակները անվերածելի են: Ոչ մէկ տրամաբանական հնարքի միջոցաւ կարելի պիտի չըլլայ բնաւ միջոցին մէջ զետեղուած ջղային երերումէ մը ուղղակի անցնել զգայութեան մը, որ, ինչպէս ցոյց տուինք, էապէս արտաքոյ կը գտնուի միջոցէն: Բոլոր փիլիսոփաները համաձայն են այս մասին. զգայապաշտներն ալ, նիւթապաշտներն ալ, հոգեպաշտներն ալ, և այլն: Ուրեմն մարդուն մէջ երկու հոյլ երեւոյթներ կան. ոմանք անծաւալ և գիտակից, որոնք կը բաղկացնեն հոգին, ուրիշներ ծաւալուն և մասամբ անգիտակից, որոնք կը բաղկացնեն մարմինը:

Բ. Ֆիզիկականին եւ բարոյականին աղերսները. — Երևոյթներու այս երկու հոյլերուն միջև անհերքելի աղերսներ կան. ֆիզիկականը համաձայն է բարոյականին հետ. ու բարոյականը, ինքն ալ, ֆիզիկականին հետ:



Ֆիզիոգականին և բարոյականին միջև եղած զըլ-  
խաւոր աղերսը յառաջ կուգայ գործարաններու կազ-  
մուածքէն: Երբ մարմինը քաջաուղջ է, բարոյականն  
ալ լաւագոյնս հաւասարակչուած է: Ինչ ինչ հիւան-  
դութիւններու, ինչպէս դժուարամարտութիւն, ըստա-  
մոքսի խլրդնախտ, ազդերացաւ, կը համապատաս-  
խանեն կարեւոր եղանակաւորումներ նկարագիրի, որ  
տրտում, թաղծագին և զայրացկոտ կ'ըլլայ:

Աւելի մասնաւորաբար, անհերքելի աղերս մը  
կայ ուղեղին և խորհուրդին միջև: Եթէ չափահասի  
մը ուղեղը 900 կրամէն պակաս կընէ, անպատճառ  
ապուշ մըն է ան: Ուստի կը թուի թէ աղերս մը կայ  
ուղեղին ծանրութեան և խորհելու կարողութեան մի-  
ջև: Եւ սակայն ցանկի մը մէջ, զոր պատրաս-  
տած է Charton-Bastian, և որ կազմուած է նշանաւոր  
անձերու անուններով, կը գտնուին 18 ուղեղներ ու-  
րոնց ծանրութիւնը վեր է 1300 կրամի միջինէն, և 4  
ուղեղներ որոնք նուազ կը կընէին քան այդ միջինը:  
Յիշենք զոր օր. որ Haesmann գիտուն հանքաբանին  
ուղեղը կը կընէր 1226 կրամ, մինչդեռ Բարիզցի խա-  
նութպանի մը ուղեղին միջին ծանրութիւնն էր եղած  
1357 կրամ:

Flourens ապացուցած է թէ ներագանկին զանա-  
զան մասերը մասնաւոր դերեր կը կատարեն, և թէ  
իմացական և զգացական գործողութիւնները կը տե-  
ղականանան գորշ պատենախաւին մէջ: Աւելի յա-  
ռաջ երթալով, Broca խօսքին տեղականացման վայր  
կը ցուցնէ ճակատային երրորդ ձախ մանուածին ներ-  
քեր: Ոսքը հասկնալու կարողութեան գործարանն է  
սեպոսկրային ականջթուր, իսկ բառերու տեսիլքին  
գործարանը, աւելի վար: Եւ սակայն այդ տեղակա-

նացումները չեն այնքան բացարձակ, որ նշանակուած  
գործարաններուն դերը չկարենան ուրիշները երկրոր-  
դաբար կատարել: Այսպէս տեսնուած է որ անխօսնե-  
րը խօսիլ սկսած են նոյն իսկ ճակատային ձախ եր-  
րորդ այդ մանուածին կարկամած ատենը:

Միւս կողմանէ, բարոյականն ալ կը թուի ազդել  
Ֆիզիոգականին վրայ: Բժիշկները կը հաստատեն բժշ-  
կուելու յոյսին, անյուսութեան, արիութեան ու կո-  
րովին ազդեցութիւնը իրենց հիւանդներուն վրայ:  
Հաստատեցինք թէ ամէն պատկեր իրականանալու  
զօրութիւն մ'ունի: Կիրքերը կը ներգործեն գործա-  
րաններու վիճակին վրայ, շատցնել կամ նուազեցնել  
տալով անոնց կատարած գործողութիւնները:

Գ. Ասկից ծագող խնդիրները. — Հոս խնդիր մը  
կը ներկայանայ մեզի: Ֆիզիոգականին և բարոյականին  
այս աղերսները, որոնց գոյութիւն ունենալը հաստա-  
տուած է արդարեւ, կը բաւականանա՞ն լոկ համաձայ-  
նութիւն մը յառաջ բերելով հոգիին և մարմինին գոր-  
ծարանական վիճակներուն և գիտակցական վիճակնե-  
րուն միջև, թէ նաև յառաջ կը բերեն ճշմարիտ և  
փոխադարձ ազդեցութիւն մը գիտակցութեան գործա-  
րաններուն և գործարաններուն գիտակցութեան վրայ:

Ատեն մը ոչ ոք կը տարակուսէր այս մասին, ու  
այս կրկնակ և փոխադարձ ազդեցութեան ընդհանուր  
հաւատալիքին կը վկայէ հասարակ լեզուն: Բայց նիւ-  
թապաշտներն ու երեւութապաշտները չեն ընդունիր  
այս կարծիքը:

Գ. Նիւրապագներու վարդապետերիւնը եւ անոր  
հերժումը. — Նիւթապաշտները կ'ըսեն թէ գիտակցու-



թիւնը, ոչ այլ ինչ ըլլալով բայց եթէ գործարաններու եղանակաւորում մը, չի կրնար իր գործարաններուն վրայ ազդեցութիւն մ'ունենալ: Գիտակցութիւնը ջը-  
 դային կեդրոններու և մասնաւորաբար ուղեղին մէկ մասնաւոր գործողութիւնն է, գիտակցութեան երե-  
 ւոյթները ենթակայական երեւումներ են լոկ եւ չու-  
 նին իրական գոյութիւն: Արդ, ոչինչը ոչինչ չի կրնար արտադրել: Ուրեմն գիտակցական վիճակները գործա-  
 բանային վիճակներու նշաններ են և չեն կրնար ազ-  
 դել անոնց վրայ

Բայց ծայրայեղ սխալանքի մէջ իյնալ է՝ ըսել թէ վիշտն ու հաճոյքը, զորս կը զգանք, գաղափարները, զորս ունինք, բոլորովին ոչինչ են. վասնզի եթէ վիշ-  
 տըն ու հաճոյքը ոչինչ են, այսինքն անզոյ բաներ են, ո՞րն է ուրեմն անոնցմէ աւելի արժող իրականութիւնը: Նիւթապաշտութիւնը իրեն սովորական սովեստութեան  
 մէջ կ'իյնայ հոս ալ, կրկնումն սկզբան ընելով: Կը կարծէ թէ ամէն ինչ որ չի կշռուիր կշռորդով, չի չափ-  
 ուիր չափով, գոյութիւն չի կրնար ունենալ և հետե-  
 ւաբար կը մերժէ հոգեբանական երեւոյթներուն գոյու-  
 թիւնը: Բայց ընդհակառակն ոչ մէկ իրականութիւն աւելի իրական կը թուի մեզ քան մեր գիտակցական  
 վիճակներուն այս իրականութիւնը:

Ե. Երեւութապատեմներուն վարդապետութիւնը.— Երեւութապաշտները կ'ըսեն թէ գիտակցութեան վի-  
 ճակները, հոգեբանական երեւոյթները, իրականութեան տեսիլ մըն են միայն, ինչպէս բնախօսական երեւոյթ-  
 ներն ալ միեւնոյն իրականութեան ուրիշ մէկ տեսիլը: Այսպէս, բարոյականը կախեալ է ֆիզիզականէն. զայն  
 կը թարգմանէ միայն, ֆիզիզականն ալ, նոյնպէս,

կախեալ է բարոյականէն, անոր զուգահեռական ը-  
 լալէն զատ ուրիշ բան չ'ըներ: Երեւոյթներու երկու-  
 շարքերը իրարու չեն յարիր՝ զիրար փոխադարձաբար պայմանաւորելու կերպով, իրարու զուգահեռաբար կը  
 կազմուին անոնք, այնպէս որ միոյն մէկ երեւոյթը ճիշդ եւ միշտ կը համապատասխանէ միւսին մէկ ե-  
 րեւոյթին: Ասիկա ազդեցութիւն է, այլ պարզաբար  
 ներդաշնակութիւն:

Լայքնից արդէն պաշտպանած էր այս գրութիւնը,  
 բնագանցական տեսակէտով մը: Նա զայն կը կոչէր՝  
 նախակարգեալ ներդաշնակութեան գրութիւն: Իր կար-  
 ծիքով, հոգին ու մարմինը կը նմանէին երկու ժամա-  
 ցոյցներու որոնք առաջուց ա՛յնքան լաւ էին կանո-  
 նաւորուած, որ միշտ նոյն ժամը կը ցուցնէին տար-  
 բեր ցուցակներու վրայ:

Զ. Քննադատում.— Այս տեսութեամբ, գիտակ-  
 ցութիւնն ու խորհուրդը բոլորովին անօգուտ են: Ինչ  
 որ ըսել է թէ արտաքին տիեզերքը ճիշդ միեւնոյնը պիտի  
 մնայ, երբ նոյն իսկ գիտակցութիւնն ու խորհուրդը  
 ջնջուին: Խորհիմ ալ՝ չխորհիմ ալ, ձեռքս այս գի-  
 ծերը պիտի տողէ միեւնոյն կերպով: Մարմինիս երե-  
 ւոյթները իրարու պիտի յաջորդեն միեւնոյն կարգով,  
 ուղեղս պիտի զօրանայ, ջիզերս ներմղումներ պիտի  
 փոխանցեն մկաններուս, ձեռքս միեւնոյն շարժում-  
 ները պիտի կատարէ, ու այս նշանագիրերը, զորս  
 հիմա կը գծեմ, պիտի չփոխուին: Մարմնական ինքնա-  
 շարժութիւնս բաւական է ամէն ինչ բացատրելու:  
 Խորհուրդս աւելորդ բան մը՝ զուր վերակրկնութիւն  
 մըն է միայն: Եւ ինչպէս իրաւամբ կը դիտէ Rabier,  
 այս ենթագրութեամբ մարդկային ճարտարարուեստն



ու նախատեսութիւնը պատրանքներ միայն պիտի ըլլային:

Այս ամէնը անհաւանական է: Մեր ներքին ըզգացումը կը բողոքէ այդպիսի կարծիքի մը դէմ. մենք կը զգանք թէ մեր խորհուրդին գործունէութիւնը կ'որոշողը մեր անդամներուն շարժումներն ու դադարները՝ կամաւոր գործերուն մէջ:

Պիտի շարունակենք ուրեմն հաւատալ թէ Ֆիզիքականը կ'ազդէ բարոյականին վրայ, ու բարոյականն ալ կրնայ ազդել Ֆիզիքականին վրայ: Ինչպէս կ'ըսէ Պօսիւէ «Արի հոգին վարիչն է իր ողեւորած մարմինին»: Ամէն հոգի, եթէ ուզէ, կրնայ իր մարմնոյն զօրութիւնները գործածել գիտութեան ստացման եւ առաքինութեան կատարման օգտակէտ գործին:

### Ա Մ Փ Ո Փ Ո Ւ Մ

Ա. — Մարդուն մէջ երկու հոյլ երևոյթներ կան. Հոգեբանական երևոյթներ և Բնախօսական երևոյթներ: Առաջինները հոգին կը բազկացնեն, երկրորդները՝ մարմինը:

Բ. — Ֆիզիքականն ու բարոյականը յարաբերական են իրարու, ուղեղը մանաւանդ սերտիւ առնչակից է խորհուրդին հետ:

Գ. — Խնդիր է թէ այդ յարաբերութիւնը ազդեցութիւն մըն է, կամ թէ Ֆիզիքականը կ'ազդէ՞ բարոյականին վրայ, և թէ բարոյականն ալ կ'ազդէ՞ Ֆիզիքականին վրայ:

Դ. — Նիւթապաշտութիւնը կ'ըսէ թէ Ֆիզիքականը ամենայն ինչ է, և թէ բարոյականը ոչինչ է:

հետեւաբար բարոյականը չի կրնար ազդել Ֆիզիքականին վրայ: Կրկնութիւն սկզբան մըն է աս: Բարոյականին իրականութեանը կը վկայէ գիտակցութիւնը, որ մեզի համար ամենէն կարևոր բանն է:

Ե. — Երևութապաշտութիւնը կ'ըսէ թէ հոգեբանական և բնախօսական երևոյթները զուգահեռական են, և իրարու վրայ ոչինչ ազդեցութիւն չի գործ չեն դներ, թէև անդադար համաձայն են իրարու հետ: Լայնից այս կարծիքը կը պաշտպանէր, իր նախակարգեալ ներդաշնակութեան վարդապետութեան վրայ հիմնուելով:

Զ. — Եթէ այսպէս ըլլար, խորհիլը անօգուտ պիտի ըլլար, և մարմնական ինքնաշարժութիւնը միայն բաւական պիտի ըլլար արուեստին ամենէն կատարեալ ծրագիրները իրականացնելու համար, ինչ որ անհաւանական է շատ, և ընդդէմ՝ գիտակցութեան:









Յաջորդ էջերը կը պարունակեն մի միայն, կամ գլխաւորաբար, այս դասագիրքին մէջ հանդիպուած հոգեբանական բառերը, իրենց Ֆրանսերէնովը և հակիրճ սահմանումներով: — Անոնց այս դասաւորումին նպատակն է ոչ թէ հոգեբանական բառագրքոյկ մը ներկայացնել, ինչ որ գործ է աւելի երկար ժամանակի և խոր աշխատութեան, այլ գիւրութիւն տալ աշակերտին՝ տեսակ մը մտամարդական անդրադարձութեամբ վերլիչելու և աւելի յստակ ճշգրտումներով տըպաւորելու հոգեբանական գաղափարներու և տեսութեանց ըմբռնումը:

Այս ցանկին կցուած է նաև ցուցակը այն յատուկ անուններուն, որոնք կ'երևին այս գիրքին մէջ:

## ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԲԱՌԱՑԱՆԿ



ԱԶԱՏ (libre). ան որ իր կամքին համեմատ՝ կարող է գործելու կամ չգործելու:

ԱԶԱՏԱԿԱՆ ԱՐՈՒԵՍՏՏԵՐ (arts liberaux). այսպէս կը կոչուին այն արուեստները, որոնց նպատակը ազնիւ յուզումներու ծնունդ է, և որուն գործադրութեանը մէջ գեր ունի իմացականութիւնը:

ԱԶԱՏՈՒԹԻՒՆ (liberté). կարողութիւն՝ իր կամքին համեմատ գործելու կամ չգործելու:

ԱՌՈՐԺԱԿ (appétit). այն միտումը, որուն ըզձակէտն է զգայարաններու գոհացումը:

ԱՅԼԱՍԻՐՈՒԹԻՒՆ (altruisme). հականիշն է ինքնասիրութեան, եւ կը նշանակէ իրենինէն տարբեր անձերու նկատմամբ զգացուած բարենկատ սէրը:

ԱՆԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆ (inconscience). հոգեկան այն վիճակն է, որուն մէջ ենթակային կը պակսի իր կատարած կամ կատարելիք գործին կատարեալ ներքին զգացումը կամ ծանօթութիւնը:

ԱՆԳՐԱԴԱՐՁ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ (action reflexe). ջղային անդիտակից հակազդեցութեամբ կատարուած շարժումը կամ գործը:

ԱՆՉՈՒՆ (infim). են այն էութիւնները, որոնք զիրենք սահմանաւորող սեղմումներէ զերծուցուած ատենին կը յայտնուին իրենց լրացեալ իսկութեանը մէջ. ինչպէս զօրութիւնը, իմացականութիւնը, բարութիւնը, և այլն, երբ զտուին և սրբունին սկարութեանէ, անդիտութեանէ և չարութեանէ:



ԱնՁնիՇԻԱՆՈՒԹԻԻՆ (libre arbitre). այն կարողութիւնը, որով բանականութենէն լուսաւորուած կամքը տիրաբար կ'ընտրէ իր կատարելիք գործը:

ԱՆՈՒԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (nominalisme). վարդապետութիւն, որուն համեմատ սեռերն ու տեսակները անուանապէս՝ ու մարդկային միտքին մէջ միայն գոյութիւն ունին:

ԱՊԱՅՈՅՅ (preuve). ճշմարտութեան մը հաստատիչ նշանը:

ԱՊԱՅՈՒՅՈՒՄ (démonstration). ճշմարտութեան մը տրամախօհական հաստատումը:

ԱՌԱՋԻՆ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ (premières principes). հանրական եւ հարկաւոր այն սկզբունքները, որոնք լռելիայն կան մտածական ամէն գործողութեան մէջ, և որոնց գլխաւորներն են նոյնութեան և բանական սկզբունքները:

ԱՌԱՐԿԱՅ (objet). ամէն ինչ որ կ'ենթարկուի գործողութեան մը:

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ (objectif). հականիշն է ենթալայականին, և կը նշանակէ ինչ որ առարկային կը պատկանի և անոր ընտելութենէն և իրականութենէն միայն կ'ածանցի:

ԱՐԴԻՒՆԱՐԱՐ ՊԱՏՃԱՌ (cause efficiente). այն՝ որմէ իրապէս արդիւնք մը յառաջ կուգայ:

ԱՐՈՒԵՍ (art). բանական ծանօթութիւններու և մասնաւոր միջոցներու կիրարկումը՝ առաջադրուած նպատակի մը իրականացումին համար:

ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ (déduction). տե՛ս ընծայութիւն:

ԱՐՏԱՔԻՆ ԸՄՔՈՆՈՒՄ (perception extérieure). այն դատումը՝ որով մեր գիտակցական կարգ մը երևոյթներուն պատճառ կը նկատենք մենէ արտաքոյ էականը:

ԱՐՏԱՔՆՍՅԵՆԼ (extérioriser). իր անձէն դուրս երևակայել ինչ որ կը տեսնէ կամ կը զգայ միշտ ինքն իր մէջ:

ԱԻՇԱՅԻՆ (flegmatique). մաղսային կաղմուածք, որ ցուրտ և անյոյզ բնաւորութիւն կուտայ անձին:

ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹԻՒՆ (variété). շատութիւն անմահ առարկաներու կամ առարկայ մը բազկացնող մասերու:

ԲԱՂԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԿԵՐ (image composite). լուսանկարչական նոյն տախտակին վրայ յաջորդաբար տպուած բազմաթիւ դէմքերու միաւորումէն գոյացած սլատկեր, որ ամէնքը կը յիշեցնէ, առանց նմանելու և ոչ մէկին:

ԲԱՂԱԳՐՈՒԹԻՒՆ (composition). բազմաթիւ մասերով ամբողջութիւն մը գոյացնելու գործողութիւն:

ԲԱՂԳՈՏՈՒԹԻՒՆ (comparaison). այն գործողութիւնը, որով միտքը զանազան առարկաներու կամ վիճակներու միջև եղած յարաբերութիւնները կը փնտռէ:

ԲԱՆ, ԲԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (raison). ճանչնալու և դատելու բարձրագոյն կարողութիւնը, որով միտքը կը կանոնաւորէ իմացական գործողութիւնը:

ԲԱՆԳԱԳՈՒՇԱՆՔ (hallucination). հիւանդագին զգայութիւն, որ ենթակային տեսնել կուտայ անգոյ էականը:

ԲԱՌԱԽԱՂ (calembour). նոյնաձայն բայց ոչ նոյնիմաստ բառերու միջոցաւ կատարուած մտազրոսանք:

ԲԱՐՏՈՒՅԱԿԱՆ (caractéristique). բնորոշիչ յատկանշան:

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԾԱՆՕԹՈՒՅՔՆԵՐ (les notions supérieures) են այն ծանօթոյքները, զորս ունինք անձին և աշխարհի մասին ունեցած հունաւոր և անկատար ծանօթութիւններէ գերիվեր էակութեանց մասին, ինչպէս են կատարեալը, անհունը, բացարձակը:

ԲԱՐՈՅԱԿԱՆ (morale). այն ուսումը որ կը սորվեցնէ թէ ի՞նչպէս կրնանք խոյս տալ չարէն և գործել բարին. պարտաւորութեանց գիտութիւնը:

ԲԱՐՈՅԱԿԱՆ ԲԵԿԲԵԿՈՒՄ (réfraction morale). փոփոխութիւն՝ զոր բարոյական զգացումին ուղղութիւնը կը կրէ ժամանակի ընթացքին մէջ և միջավայրէ միջավայր անցած առտենը:

ԲԱՅԱՐՁԱԿ (absolu). այն որ գոյ է ամէն պայմանէ անկախաբար, զոր ոչինչ չի սահմանաւորեր, և որ չ'ածանցիր ոչ մէկ բանէ:



ԲԱՒԱՐՍՐ ՊԱՏՃԱՌ (raison suffisante). այն սկզբունքը, որուն համեմատ ոչինչ կրնայ գոյ լինել, առանց իր գոյութեան անհրաժեշտութիւնը կացուցանող պատճառի:

ԲՆԱԶԱՆՅԱԿԱՆ (métaphysique). գիտութիւն բացարձակին, որ կ'ուսուսի մասին առաջին պատճառները եւ առաջին սկզբունքները:

ԲՆԱԶԴ (instinct). բնածին ձգտում՝ իրականացնելու կարգ մը շարժումներ, որոնք օգտակար են անհատին կամ տեսակին պահպանումին:

ԲՆԱՍՏՈՒԹԻԻՆ (physiologie). գիտութիւն՝ որ կը խօսի այն գործարանական պաշտօններուն մասին, որոնցմով կեանքը կ'արտադրուի:

ԲՆԱԾԻՆ (inné). կը կոչուին կարգ մը իմացքներ (պատճառի, ժամանակի, եայլն) զորս հին եւ նոր իմաստասէրներէն ու մանք նախագոյ կը համարին մարդկային միտքին մէջ, այսինքն որեւէ փորձառութենէ առաջ:

ԲՆԱՅՆԱԿԱՆՈՒԹԻԻՆ (nativisme). հոգեբանական վարդապետութիւն՝ որուն համեմատ տարածութեան պատկերը մարդ կը ստանայ տեսողական եւ շօշափական զգայութենէն անմիջապէս ետքը, եւ ոչ թէ փորձառութեամբ:

ԲՆԱՊԱՇՏՈՒԹԻԻՆ (naturalisme). վարդապետութիւն՝ որ էականերուն աւելի պատճառովը կը մտադրաւորի, եւ չ'ընդունիր բնութենէն արտաքոյ պատճառի մը գոյութիւնը:

ԳԱՂԱՓԱՐ (idée). բանի մը պատկերացումը մտքին մէջ. «տեսիլ մտաց»:

ԳԱՂԱՓԱՐԱՅԻՆ ԳՐՁՈՒԹԻԻՆ (écriture idéographique). գրելու այն զրութիւնը՝ որ դաղափարները ուղղակի կը ներկայացնէ, անոնց առարկան պատկերացնող նշաններով:

ԳԱՂԱՓԱՐԱՊԱՇՏՈՒԹԻԻՆ (idéisme). վարդապետութիւն՝ որ կ'ուրանայ արտաքին աշխարհի գոյութիւնը, կամ փիլիսոփայական այն գրութիւնը, որ ինչ որ ծանօթութեան առարկայ է՝ կ'ընէ ենթակայ ծանօթութեան, վասն զի կ'ըսէ թէ իրերը մեր բուն իսկ մտածումներէն աւելի բան

մը չեն, մտածող ենթակաները միայն իրական են. ու առարկաներու իրականութիւնը՝ այդ ենթականերէն մըտածուելուն մէջ միայն կը կայանայ:

ԳԵՂԱԳԻՏՈՒԹԻԻՆ (esthétique). փիլիսոփայական գիտութեանց այն մասն է, որուն առարկան է գեղեցիկը. այսինքն թէ՛ գեղեցիկին վարդապետութիւնը եւ թէ՛ արուեստին փիլիսոփայութիւնը:

ԳԵՂԵՅԻԿ (beau). ձեւերու եւ համեմատութեանց ներդաշնակ գումարութիւնը՝ որ մեր մէջ կ'արթնցնէ զգայութիւն հաճոյքի եւ հրացումի:

ԳԻՏԱԿՅՈՒԹԻԻՆ (conscience). մեր էութեանը, անոր կարողութիւններուն եւ գործերուն բնական զգացումը:

ԳԻՏԵԼՈՒԹԻԻՆ (savoir). հակառակ է անգիտութեան, եւ կը նշանակէ մեր ստացիկ ծանօթութիւններուն գումարութիւնը, կամ ծանօթութիւններ ստանալու եւ զանոնք ի մի գումարելու մեր անձնական բաւականութիւնը:

ԳՈՅՈՒՅՈՒԹԻԻՆ (substance). իր փոփոխական արդիւնքներուն կայուն ենթակայ նկատուած պատճառը:

ԳՈՒՄԱՐՈՒԹԻԻՆ (ensemble, somme). ամբողջութիւնը մասերու, որոնք վախճանի մը ծառայելու համար պէտք է զլրար լրացնեն:

ԳՐԳՈՒԹԻԻՆ, ԳՐԳՈՒՄ (excitation). գործարանաւորութեան մը անբնականոն գործունէութիւնը:

ԴԱՍԱԿԱՐԳՈՒԹԻԻՆ (hiérarchie). աստիճանաւորեալ կարգաւորութիւն:

ԴԱՍԱՆՈՐՈՒԹԻԻՆ (classification). իրերը իրենց նկարագրին կամ բնութեան մէջ իրենց ունեցած կարգին համեմատ շարելու գործողութիւնը:

ԴԱՏՈՒՄ (jugement). երկու կամ աւելի եզրերու միջև եղած յարաբերութեան մը հաստատումը:

ԴԻՄԱՅԵՂՈՒԹԻԻՆ (phase). իրի մը կամ երևոյթի մը զարգացման մէջ նկատուած յաջորդական փոփոխումները:



ԴՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ (positivisme). Վարդապետութիւն՝ որ կ'ուսուցանէ թէ մի միայն իրերու ծանօթութենէն է որ կրնայ արդիւնք ստացուիլ. թէ բուն ստուգութիւնը փորձառական գիտութիւնները կը հայթայթեն, թէ մարդկային միտքը, փիլիսոփայութեան և գիտութեան մէջ հաւասարակ էս, պէտք է միշտ շփման մէջ ըլլայ փորձառութեան հետ, և զգուշանայ որ և է յառաջագունեան վարկածներէ:

ԴՐՈՒԹԻՒՆ (système). Գումարութիւն տարրերու, նիւթական կամ ոչ-նիւթական, որոնք փոխարարձաբար իրարմէ կախում ունին, գործարանաւորեալ ամբողջութիւն մը յորինելու համար:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹԻՒՆ (conclusion). Նախագաստութիւն, որուն ճշմարտութիւնը կը հետևի նախընթաց երկու ճշմարտութիւններէ, որոնք չեն կրնար ճշմարտ ըլլալ՝ առանց եզրակացութիւնն ալ ճշմարտ ըլլալու:

ԵՂԱՆԱԿԱՒՈՐՈՒՄ (modification). փոփոխութիւն՝ որ սակայն չ'այլայլեր փոխուած իրին իսկութիւնը:

ԵՂԱՆՈՒԹԻՒՆ, ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ (devenir). Էակի մը վրայ կատարուած փոփոխումներուն շարքը, կամ մէկ վիճակէն միւսը անցքը:

ԵՂԱՓՈՒՈՒԹԻՒՆ (évolution). վիճակի մը զէպի ուրիշ վիճակ, կամ կենդանի տեսակի մը զէպի ուրիշ տեսակ մը յամր ու աստիճանաւորեալ ձևափոխութիւնը:

ԵՆԹԱԳԻՏԱԿՅՈՒԹԻՒՆ (subconscience). Գիտակցութեան տկարացեալ վիճակ:

ԵՆԹԱԿԱՅ (sujet). անհատ էակը, որ կը մտածէ եւ կ'արտադրէ գործերը, կամ որուն մէջ կը գոյանան իր վրայ հաստատուած յատկութիւնները:

ԵՆԹԱԿԱՅԱԿԱՆ (subjectif). ինչ բան որ մտածող ենթակային կը պատկանի:

ԵՐԱՁ (rêve). բնականոն բանդագուշանք, որ քունի միջոցին յառաջ կուգայ:

ԵՐԵԻԱԿԱՅՈՒԹԻՒՆ (imagination). միտքին այն կարողութիւնը, որ կը կալմէ միակտուր կամ յաջորդական պատկերներ,

ներ, որոնք բնութեան իրողութիւնները կը նմանագործեն, բայց ոչ մէկ իրական կամ գոյութիւն ունեցող բան չեն ներկայացնել:

ՖԵՆՈՑԹ (phenomène). ըստ ֆանդի, երևոյթ է ամէն ինչ որ առարկայ է հնարաւոր փորձառութեան, այսինքն ամէն ինչ որ ժամանակին և միջոցին մէջ կ'երևի, և ստորոգութեանց ճշգործած յարաբերութիւնները կը ցուցնէ:

ՖԵՆՈՒԹԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (phenoméisme). վարդապետութիւն՝ որուն համեմատ, երևոյթներ միայն գոյութիւն ունին:

ԵՐԿՐԱՉԱՓԱԿԱՆ ՄԻՏՔ (esprit géométrique). գաղափարներու յստակութեան, բառերու ճշգրտութեան և մտածումներու պինդ շղթայաւորման համար բանականութեան տեսական կիրարկութիւնը՝ տրամաբանական կանոններու համեմատ:

ԶԱՏՈՐՈՇԵԼ (distinguer). գտնել այն յատկանիշերը որոնց վրայ հիմնուելով կարելի է դատել առարկայի մը ուրիշ առարկայէ մը տարբեր ըլլալը:

ԶԱՏՈՒԹԻՒՆ (dimension). իրական մեծութիւն որ, մինակը կամ ուրիշներու հետ, կ'որոշողքէ կէտ մը՝ գիծի վրայ, մակերևոյթի մը վրայ կամ միջոցին մէջ:

ԶԳԱՅԱՐԱՆ (sens). գործարան զգայութեան, կամ այն կարողութիւնը՝ որով մարդն ու անասունները արտաքին առարկաներու զգայութիւնները կ'ընդունին:

ԶԳԱՅՈՒԹԻՒՆ (sensation). զգայարաններու միջոցաւ կրուած տպաւորութեան մը հետեանքով հոգիին ունեցած եղանակաւորութիւնը:

ԶԳԱՅԱԿԱՆ, ԿԱՐԵԿԱՆ (affectif). Սեռական յատկանիշ վիշտի, հաճոյքի, յուզումներու և այն ամէն վիճակներու, որոնք զգայութեան կը պատկանին:

ԶԳԱՅՈՂՈՒԹԻՒՆ (sensibilité). հոգիին այն կարողութիւնը, որով կը գիտակցինք ամէն տեսակ զգացումներու և զգայութեանց. ընդհանուր առմամբ, վայելելու և տառապելու կարողութիւնն է ան:

ԶԳԱՅՈՒՄ (sentiment). Զգալու գործողութիւնը. զգացումը անով կը տարբերի զգայութենէն՝ որ անոր պէս չի տեղանկանանար, և զուտ հոգեբանական բնոյթ մ'ունի:



ՁՈՒԳՈՐԴՈՒԹԻՒՆ (գաղափարներ) (association des idées). Այն յատկութիւնը, զոր հոգեկան երևոյթները ունին, գիտակցութեան դաշտին մէջ իրար քաշելու համար, եւ ասիկա՝ առանց կամքին միջամտութեան, ու նոյն իսկ հակառակնոր դիմադրութեան:

ԷՍԿ, ԷՈՒԹԻՒՆ (être). Էութիւնը էանալու իրողութիւնն էր գոյութիւնը՝ վերացական առումով. էակը աւելի թանձրացեալ իմաստ մը ունի, և կը նշանակէ մտածումին մէջ գոյութիւն ունեցող էակը, որ սակայն անկէ դուրս զգալիօրէն գոյութիւն չունի, և իմացողութենէն, բանականութենէն կամ երեւակայութենէն միայն ստեղծուած է:

ԷՍԿՍՔՈՒԹԻՒՆ (ontologie). Փիլիսոփայութեան այն մասը որ էակը նկատի կ'առնու իբր էութիւն, այսինքն լոկ իբր գոյացութիւն, անկախարար իր յատկութիւններէն և ստորագելիներէն:

ԷՍԿՈՒԹԻՒՆ (entité). այն բանը, որ, ըստ իրապաշտներու, սեռի մը էութիւնը և միութիւնը կը կացուցանէ. մտածումի առարկայ մը, որ սակայն զերծ է որևէ մասնաւոր յատկաւորումէ, այսինքն չունի նիւթական միութիւն կամ նոյնութիւն:

ԷՈՅԹ (noumène). իմանալի իրականութիւն, առարկայ՝ բանին. հականիշն է երևոյթին, որ զգալի իրականութիւնն է:

ԸՄԲՈՒՆՈՒՄ (perception). այն գործողութիւնը, որով միտքը յարաբերութեան կը մտնէ իրականութեան հետ:

ԸՆԴՆՈՒԹ ԳՍՂԱՓՍՐ (idée générale). գիտակցական վիճակի բազմաթիւ հոյլերու իրենց էական հասարակորդ տարբերով միասին միակ մտադատկերի մը մէջ միաւորուած վիճակը:

ԸՆԴՆՈՒՐԱՅՈՒՄ (généralisation). այն գործողութիւնը, որով միտքը ընդհանուր գաղափարներ կը կազմէ:

ԸՆԾԱՅՈՒԹԻՒՆ, ԱՐՏԱԾՈՒԹԻՒՆ (déduction). տրամաբանական գործողութիւն, որով մէկէ աւելի ծանօթ նախադասութիւններէ միտքը կ'անցնի ուրիշ նախադասութեան մը, ընդհանուրէն մասնաւորը եզրակացնելով:

ԸՆՏՐՈՂԱԿԱՆ ԴՊՐՈՅ (école eclectique). իմաստասիրական դըրութիւն, որ առանց ինքնայատուկ վարդապետութիւն մը որդեգրելու, զանազան փիլիսոփայական վարդապետութիւններէն ընտրանօք կ'առնու ամէնէն բանաւոր համարուած տեսութիւնները: ԹԹ. դարու մէջ անոր ամէնէն փայլուն ներկայացուցիչը եղաւ Վիքտոր Գուզէն:

ԹԵՐՈՅԹ (lacune). մտաւոր անբնականոն վիճակի հետեանքով գիտակցութեան լոյսին մէջ գոյացած ծանօթութեան ընդհատումներ:

ԹՄՄԱՆԱԿԱՅԻՆ (temporal) կ'ըսուի մասնաւորապէս հակադրաբար ամէն բանի համար որ անընդունակ է անողութեան գաղափարին:

ԻՄՄՅԱԿԱՆՈՒԹԻՒՆ (intelligence). խորհուրդին գործունէութիւնը, իր յայնագոյն առումին մէջ. համադրումի և կարգի գերազանց կարողութիւն մը, որ եսին միութեան և նոյնութեան կը վերածէ հոգեբանական ցրուած և առարկայ վիճակները:

ԻՄՄՅՈՂՈՒԹԻՒՆ (entendement). հասկնալու կարողութիւնը, որով միտքը իրարու կը զօգէ զգոյնութիւնները, անոնցմէ կազմելով շարքեր և խումբեր, դիւրացնելու համար անոնց ըմբռնումը:

ԻՄՄՅՈՒԹԻՒՆ (intellect). հոմանիշ է իմացողութեան. միայն թէ մինչ այս վերջինը, արդի իմաստասէրներէն շատերուն համար աւելի հոգեբանական բառ մըն է և կը նշանակէ մտային գործողութեանց գումարութիւն մը, իմացողութեան աւելի գիտողական (= զնոսային) արժէք մը ունի, և կը նշանակէ «գիտնալու բարձրագոյն կարողութիւնը»:

ԻՄՄՅՈՒՄ, ՄՏԱՅՂԱՅՈՒՄ, (conception). մտածումի ամէն գործողութիւն՝ որ առարկայի մը վրայ կը կատարուի:

ԻՄԱՅՔ (concept). գաղափարը, իր վերացեալ և ընդհանուր վիճակին մէջ:



ԻՄԱՅՔԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (conceptualisme). վարդապետութիւն՝ վերաբերմամբ ընդհանուր գաղափարներու բնութեան, որ կը դաւանի թէ այդ գաղափարները միտքին յատուկ ձեւեր և գործողութիւններ են, և ոչ թէ անհատներու ալ պատշաճող պարզ նշաններ:

ԻՆՔԵՆԱՍԻՐՈՒԹԻՒՆ (égoïsme). սէր անձին, ընական ձգտում ինքզինքը պաշտպանելու, պահպանելու ինքզինքը և զարգանալու:

ԻՆՔԵՆԱՏՊՈՒԹԻՒՆ (originalité). ինքնուրոյն յատկութիւն:

ԻՍՎՈՒԹԻՒՆ (essence). ինչ որ էակին խորքը կը կացուցանէ, և որուն մակերեսորէն և ժամանակաւորապէս միայն կը ընան հասնիլ եղանակաւորումները:

ԻՐԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ (réalisme). միջնադարեան փիլիսոփայութեան մէջ կը նշանակէ այն վարդապետութիւնը, որ կ'ընդունի ընդհանուր գաղափարներու և համեմակներուն իրականութիւնը. այսպէս, ձևին ընդհանուր գաղափարը իրապաշտներուն համար իրական գոյութիւն մըն է, և ոչ թէ տեսակ մը զուտ ենթակայական տարազ կամ պատկեր:

ԻՐՈՂՈՒԹԻՒՆ (fait). ինչ որ է կամ կը լինի, զոր կ'ընդունին իբրև իրական արդիւնք փորձառութեան, և որուն վրայ կրնայ հիմնուիլ փորձառութիւնը:

ԼԱՅՆՈՒՄ (extension). մտածումին գործողութեան տարածումը այնպիսի առարկաներու վրայ, որոնց առաջ էջր պատշաճեր այդ մտածումը. իսկ մասնաւորապէս՝ բառի մը իմաստին ընդլայնումը:

ԼԵՁՈՒ (langage). մտածումը խօսքով արտայայտելու — ներքինապէս կամ արտաքինապէս — գործողութիւնը:

ԼԻՆԵԼՈՒԹԻՒՆ (devenir). տե՛ս եղանակիւն:

ԼՍՈՂՈՒԹԻՒՆ (ouïe). հինգ զգայարաններէն այն՝ որուն միջոցաւ կ'ըմբռնուի ձայնը:

ԽԱՌՆՈՒԱԾՔ (tempérament). գուժարութիւնը ընդհանուր գիծերուն, որոնք կը յատկանշին էակի մը անհատական բնախօսութեան կազմութիւնը:

ԽԵԼԱՄՏՈՒԹԻՒՆ (compréhension). իմացքի մը պատկանող յատկանիշներու ամբողջութիւնը:

ԽՈՐՀՈՒՐԳ, ՄՏԱԾՈՒՄ (pensée). բաղդատելու, բաղակցելու և հետազոտելու մտաւոր այն գործողութիւնը, որմէ կ'ընի գաղափարը:

ԽՈՐՀՐԳԱԾԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ (psychologie réflexive). այսպէս կը կոչուի միմիայն գաղափարներուն համար կիրարկելի հոգեբանական այն վերլուծումը. որ կ'առաջնորդէ ի յայտ բերելու մտածումին էական եղող յատկանիշները: Այս վերլուծումը, յետոյ, մտածումին պայմաններէն կ'ելնէ մտածումին գոյութեան, թէ՛ անձնաւորութեան մը մէջ և թէ՛, բնականցականորէն, կարգի և կազմակերպութեան տիեզերական տիպարներուն մէջ:

ԽՈՐՀՐԳԱԾՈՒԹԻՒՆ, ԱՆԴՐԱԴԱՐՁՈՒԹԻՒՆ (réflexion). իմացական այն գործողութիւնը, որով միտքը կ'ըմբռնէ զգայութեանց հոյլ մը կամ երևոյթներու բաղկացուցիւն մը կազմող տարրերուն հասարակաց յարաբերութիւնը:

ԾԱՆՕԹՈՒՅՔ (notion). ծանօթութեան՝ մասնաւոր վերացական ծանօթութեանց և մասնաւորաբար իմացքներու առարկան:

ԾԱՆՕԹՈՒԹԻՒՆ (connaissance). ինչ որ մտքին մէջ առարկայ է մտածումի, ոչ միայն իբր տուեալ՝ այլ նաև իբրև իբնութեամբն ու յատկութիւններով ըմբռնուած բան մը:

ԿԱՄԵԼՈՒԹԻՒՆ (volition). կամքի այն գործողութիւնը որ մտածուած առաջադրութիւն մը անմիջապէս իր գործադրումին կը յանգեցնէ:

ԿԱՄԵՂՈՒԹԻՒՆ (völléité). անկատար կամ վաղանցուկ կամեւլութիւն, որ կ'ուրուագծուի, բայց չի յանգիլ որոշումի, և որ կ'անհետանայ գործադրուելէ առաջ:



ԿԱՄՔ, ԿԱՄՔՅՈՂՈՒԹԻՒՆ (volonté). հոգեկան այն կորովը, որով ենթական, ձգտումով մը՝ որուն հետ գիտակցօրէն կը նոյնացնէ ինքզինքը, կ'որոշէ կատարել ինչ որ իմացողութիւնը կ'առաջարկէ իրեն:

ԿԱՍԱՐԵԱԼ (parfait). ինչ որ ճշգրիտ կը համապատասխանէ իմացքի մը, տիպարի մը կամ մտատիպարի մը, այն աստիճան՝ որ նկատեալ կարգին մէջ անկարելի կ'ըլլայ այլևս որ և է յառաջգիմութիւն ըմբռնել:

ԿԱՐԵԴՈՒՆԻ (cariatide). ծնօտարձան՝ մարդու կամ կնոջ ձևով: Այսպէս կը կոչուի ճարտարապետութեան այս ձևը, որովհետև ի սկզբան անիկա կը ներկայացնէր Կարիաթի Տիանա զիցուհիին տօնակատար Լակեդեմոնացի կիները:

ԿԱՐԵԿԱՆ (affectif). տե՛ս գգոցակամ:

ԿԵՐՊԱՒՈՐՈՒԹԻՒՆ (modalité). գոյութեան կերպեր, այսինքն վիճակի յարաբերական տարբերութիւններ ունենալու յատկութիւնը: Քանդեան փիլիսոփայութեան մէջ այսպէս կը կոչուի նաև մին այն երեք կացութիւններէն (= հնարական, հաստատական և հարկաւորական) որոնց տեսակէտէն նկատի կ'առնուին դատումները, և կ'ըսուի, զոր օրինակ, թէ ինչ մը այսպէս կրնայ ըլլալ, կամ է, կամ հարկ է որ լինի:

ԿԵՐՊԸՆԿԱԼ (plastique) կը կոչուին այն նիւթերը, որոնք ընդունակ են կերպաւորուելու՝ կաղապարումով, պրկումով կամ հիւսուածքով, ճարտարարուեստական կիրարկութեանց յարմար ձևեր ստանալու համար:

ԿԻՐՔ (passion). Հակում կամ նոյն իսկ զգացում՝ որ ուժգնութեան որոշ աստիճանի մը հասած է:

ԿՇՈՒՅԹ (rythme). Շարժումի մը պարբերականութեան յատկանիշը. կէս-փիլիսոփայական լեզուի մէջ այս բառը յատկապէս կը նշանակէ նաև հոգեբանական կամ ընկերական շարժումի մը ամբողջական յատկանիշը, նոյն իսկ արուեստի գործի մը ոճը, մտածումի մը նկարագրիծը, և, եթէ կարելի է ըսել, կորոյթը (courbe):

ԿՐԱՒՈՐԱԿԱՆ (passif). ինչ որ կիրք մը կը շինէ, կիրքի մը նկարագրերը ունի, կամ կիրք մը կը զգայ:

ՀԱԿՈՒՂԻՂ (hypoténuse). ուղղանկիւն եռանկիւնի մը ուղիղ անկիւնին հանդէպի կողմը:

ՀԱԿՈՒՄ. (penchant). ամէն ձգտում կամ միտում որ նոյն ատեն նկարագրի բնական և ինքնաբերական գիծ մըն է:

ՀԱՄԱԴԱՍՈՒԹԻՒՆ (coordination). դասաւորութեան մը մէջ նոյն կարգին վրայ գտնուող երկու կամ բազմաթիւ իմացքներու յարաբերութիւնը:

ՀԱՄԱԴՐՈՒԹԻՒՆ (syntèse). այն գործողութիւնը՝ որով միտքը կը միացնէ զանազան մտապատկերներ, զանազան զգացումներ, զանազան ձգտումներ, անոնցմէ յօրինելու համար գործարանաւորեալ միակ ամբողջ մը:

ՀԱՄԱԶՕՐ (équivalent). այսպէս կը կոչուին երկու իրեր, երբ գաղափարաց կարգի և գործնական վախճանի տեսակէտով չեն տարբերի իրարմէ:

ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ, ՅՕՐԻՆՈՒԱԾՈՒՄ (systématisation). իմացական այն գործողութիւնը, որով կը դասաւորենք տրամաբանօրէն իրարու հետ հաշտ եղած գիտական կամ փիլիսոփայական գաղափարները, ոչ այնքան ճշմարտութեան՝ որքան կապակցութեան տեսակէտով:

ՀԱՄԱԿՐՈՒԹԻՒՆ (sympathie). ներքին հաղորդակցութիւնը երկու էակներու, որոնք իրարու հետ յարաբերութեան մէջ մտած են ոչ թէ արտաքին ազդումներու կամ զգայութեանց միջոցաւ, այլ ուղղակի նոյն բնութեան մը արգիւնքը եղող կցորդութեան մը հետեանքով:

ՀԱՄԱՊԱՏՇԱՃՈՒԹԻՒՆ (consensus). քիչ մը տարտամ բառ մը, որ սովորաբար կը գործածուի՝ ցոյց տալու համար գործարանաւորութեան մը մասերուն համագործակցութիւնը և իրարմէ փոխադարձ կախումը: — Կը նշանակէ նաև բոլոր մարդոց ինչ ինչ հարցերու մասին համամտութիւնը, որմէ կրնայ հետևցուիլ անոնց կարծիքին ճշմարտութիւնը:

ՀԱՄԱՍԵՌՈՒԹԻՒՆ (homogénéité). Այն յատկութիւնը, որով ամբողջութեան մը բոլոր մասերը նոյն բնութիւնը ունին, և անհատական ոչ մէկ տարբերութիւն չեն ներկայացնիր:

ՀԱՅԵՑՈՂՈՒԹԻՒՆ (théorème). նախադասութեան մը նախապէս յայտարարումը, որուն՝ յետոյ ուրիշ ծանօթ նախադասութիւններէ հետեւիլը կ'առաջադրուի ապացուցել:



ՄՆԱՅՈՐԳ (résidu). արդէն ծանօթ օրէնքներէն արտադրուած քանակութեան մը վրայ կատարուած յապաւումէն յառաջ եկած երևոյթը, որ մասնաւոր քննութեան կ'ենթարկուի, անկէ հանելու համար այդ երևոյթին բացատրութիւնը կամ օրէնքը:

ՄՏԱԾՈՒՄ (pensée). տե՛ս խոհուրդ:

ՄՏԱՊԱՏԿԵՐ (représentation). ինչ որ կը պատկերացնէ մարդ իր միտքին մէջ, իբրև մտածումի գործողութեան մը թանձրացեալ պարունակութիւնը:

ՅԱՅՏՆԱՏԵՍՈՒԹԻՒՆ (intuition). ուղղակի և անմիջական տեսողութիւնը մտածումի առարկայի մը, որ ներկայ է միտքին մէջ, և իր անհատական իրականութեանը մէջ ըմբռնուած:

ՅԱՌԱՋԱԳՈՒՆԷՆ (à priori). ինչ որ իբր ստոյգ կ'ընդունուի առանց որ և է նախագոյն փորձառութեան, հիմնուելով զուտ բանականութեան վրայ:

ՅԱՏԿԱՆԻՇ (caractère). տե՛ս նկարագիր:

ՅԱՏԿԱՆՈՐՈՒԹԻՒՆ (détermination). մտածումի առարկայի մը բնութիւնը կամ սահմանը որոշ կերպով ճշտել:

ՅԱՏԿՈՒԹԻՒՆ, ՈՐԱԿՈՒԹԻՒՆ (qualité) կը կոչուին ըմբռնումին զգալի տեսքերը, որոնք երկրաչափական կամ մեքենական յատկաւորումներու մէջ չեն կայանար, և որոնք ընդհանրապէս արտադրոյթը կը նկատուին համադրութեան մը, զոր միտքը կը կազմէ անըմբռնելի ըլլալու աստիճան առաջ շարժումներէ յառաջ նկած տպաւորութեանց մէջէն:

ՅԱՐԵՆԵՒՅԹ (épiphénomène). երկրորդական երևոյթ, որուն ըլլալը կամ չըլլալը կարևորութիւն չունի էական երևոյթին յառաջ գալուն համար, զոր օրինակ շոգեմեքենային շարժումին ձայնը:

ՅԵՏՆԱԳՈՒՆԷՆ (à posteriori). ինչ որ իբր ստոյգ կ'ընդունուի փորձառութենէ վերջ. այսինքն տեսակ մը արդիւնքէն պատճառ տրամախոհելու կերպ:

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ (mémoire). հոգեկան այն գործունէութիւնը (fonction) որ կը կատարէ գիտակցութեան անցեալ վիճակի մը վերարտադրութիւնը՝ այն բոլոր յատկանիչներով միասին որոնցմով զայն ճանչցած էր ննթական:

ՅՈՅՁ, ՅՈՒՋՈՒՄ (émotion). շարժումներու յաւելումէն կամ կատուումէն յառաջ եկած որ և է բուռն, ներոյժ և յանկարծական բախում:

ՅՈՒՇԱԹՎՓՈՒԹԻՒՆ (amnésie). յիշողութեան կորուստը կամ տկարացումը, որ կը պատահի իմացական միւս գործունէութեանց բնականոն վիճակի մէջ եղած ատեն նոյն իսկ:

ՅՈՒՇԱՐՈՒԵՍ (mnémotechnie). գաղափարներու զուգորդութեան միջոցաւ յուշքը արթնցնելու եղանակ:

ՅՈՒՇՔ, ՅԻՇԱՏԱԿ (souvenir). ամէն ինչ որ միտք կուգայ, ինքնարեւարար և կամ կամաւոր ճիշտով մը:

ՅՕԺԱՐՈՒԹԻՒՆ (perchant). տես նակում:

ՅՕՐԻՆՈՒԱԾՈՒԹԻՒՆ (systematisation). տես համակարգում:

ՆԱԽԱԳԻՏՈՒԹԻՒՆ (prescience). ապագային կատարեալ ճանաչումը. Աստուծոյ ասորոգելիներէն մին:

ՆԱԽԱԳՐԵԱԼՔ (prémises) կը կոչուին հաւաքաբանութեան աւագ և կրտսեր երկու առաջին նախադասութիւնները, որոնցմէ կը հետևի երրորդը, եղբակացութիւնը:

ՆԵՐՉԱՅԵՅՈՂՈՒԹԻՒՆ (introspection). անհատական գիտակցութեան մը ինքնաքննութիւնը, իր անհատական միտքը ճանչնալու համար՝ թէ՛ իր անհատականութեանը մէջ, եւ թէ՛ իբրև նմանութիւն կամ արտայայտութիւն ընդհանուր տիպարի:

ՆԵՐՈՅԺՈՒԹԻՒՆ (intensité). երկու վիճակներուն միջև գոյացած առաւելակշիռ այն տարբերութիւնը, որ սակայն զէպի վեր՝ յաւելումի և զէպի վար՝ նուազումի աստիճան մը կազմելու չափ մեծ չէ:

ՆԵՐՔԻՆ ԸՄԲՈՆՈՒՄ (perception intérieure). Այն դատումը, որով եսին կը վերագրենք իրեն պատկանող վիճակները:



**Նիւթ-Ազատութիւն (matérialisme)**. վարդապետութիւն՝ որուն համեմատ գիտակցութեան բոլոր եղելութիւններն ու վիճակները յարեւոյթներ են, և համապատասխան բնախօսական երևոյթներու վերագրուելով միայն կրնան գիտականօրէն բացատրուիլ. վասնզի ասոնք միայն ընդունակ են բանաւոր համակարգութեան և կրնան հայթայթել հոգեբանական երևոյթներ արտադրելու կամ եղանակաւորելու ամենէն ազդու և կանոնաւոր միջոցը: Հոգեբանական այս բացատրութեան վերջ պէտք է ըսենք տակաւին թէ այդ բառը էականական տեսակէտով կը նշանակէ նաև սա տեսութիւնը թէ նիւթն է միակ գոյացութիւնը, որուն պէտք է ընծայել բոլոր յատկութիւնները:

**Նկարագիր, ՅԱՏԿԱՆԻՇ (caractère)**. որոշիչ նշան, որ կը ծառայէ ճանչցնելու առարկայ մը. մասնաւորաբար ամէն ինչ որ կը զատորոշէ էակ մը՝ իր թէ՛ կազմուածքին և թէ՛ գործօնութեանցը մէջ: — Անհատ մը ուրիշներէն զանազանող իր զգալու և հակազդելու ընդակից կերպերուն գումարութիւնը:

**Նշան (signe)**. հաստատում մը աւելի կամ նուազ ապահով կերպով արդարացնող արդիւնական փաստը. զոր օր. տենդըցնող զարկերակին յաճախումը: — կամեցողութիւն մը արտայայտող արդիւնքին և ըմբռնելի արարք մը. զոր օր. գալ հրամայող կամ արգիլող շարժում մը: — Նիւթական առարկայ, ձև կամ ձայն, որ բացակայ կամ անըմբռնելի իրի մը տեղը կը բռնէ:

**ՆՄԺԱՌԻԹ (motif)**. մտաւորական կարգի ամէն պատճառ որ յառաջ կը բերէ կամ կը ձգտի բերել կամեցողական գործողութիւն մը:

**ՆՐՁԱՆԿԱՏ ՄԻՏՔ (esprit de finesse)**. տեսականը գործնականին պահանջներուն պատշաճեցնելու հնարիմացութիւնը:

**ՈՂՁՄՏՈՒԹԻՒՆ (bon sens)**. կարողութիւն՝ պաղարիւնով, ճշդութեամբ և լաւ գատելու թանձրացեալ այն խնդիրներուն մէջ, որոնք արամաբանական պարզ ակներեութեան ընդունակ չեն:

**ՈՐԱԿՈՒԹԻՒՆ (qualité)** տե՛ս յատկութիւն:

**ՈՐՈՇԱԴՐՈՒԹԻՒՆ (détermination)** տե՛ս յատկաորոշիւն:

**ՈՐՊԻՍՈՒԹԻՒՆ (qualité)** տե՛ս յատկութիւն:

**ՈՐՔԱՆՈՒԹԻՒՆ (quantité)**. քանակութիւն:

**ՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ (habitude)**. գիտակցական վարժողութեամբ ձեռք բերուած կարողութիւն՝ ըլլալու կամ ընելու ինչ որ առաջ կարելի պիտի չլինէր ըլլալ կամ ընել, և կամ աւելի լաւ ընելու՝ ինչ որ առաջ գէշ կերպով կամ դժուարաւ կարելի կ'ըլլար ընել:

**ՈՒՇԱԴՐՈՒԹԻՒՆ (attention)**. իմացական գործունէութեան կամաւորագէտ կամ ինքնաբերական կերպով կեդրոնացումը առարկաներու գումարութեան մը վրայ, որ, առանց այս երևոյթին, գիտակցութեան զաշտին միայն մէկ մասը պիտի գրաւէր:

**ՊԱՀՊԱՆՈՒՄԻ ՕՐԻՆՔ (loi de conservation)**. Հոգեբանական այն սկզբունքը թէ անգամ մը գիտակցութեան մատուցուածը ա՛լ չի կորսուիր անոր համար:

**ՊԱՏԿԵՐ (image)**. տեսողութեան միջոցաւ անգամ մ'ըմբռնուածին թանձրացեալ կամ մտաւոր վերարտադրութիւնը: — Զգայութեան մը մտաւոր և ընդհանրապէս տկար կրկնումը:

**ՊԱՏՃԱՌ (cause)**. նախընթացը կամ գումարութիւնը նախընթացներուն՝ որոնց անփոփոխապէս և անպայմանօրէն հետեւանքն է արդիւնք կոչուած երևոյթը:

**ՊԱՏՃԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ (causalité)**. հոգեբանական այն սկզբունքը կամ օրէնքը, որով ամէն երևոյթ զինքը յառաջ բերող օրէնքը կ'ունենայ:

**ՊԱՇՇԱՃՅՈՒՄ (adaptation)**. պաշտօնի մը կամ գործարանի մը եղանակաւորումը՝ որուն հետեւանքը պիտի ըլլայ զանոնք ամբողջովին կամ մասամբ համաձայնեցնել իրենց ներքին կամ արտաքին միջավայրին հետ:

**ՊԱՏՐԱՆՔ (illusion)**. որ է վրիպում ըմբռնումի, զատումի կամ արամախօհութեան, զոր կատարողը կ'ընէ իբրև բո-



լրորվին բնական բան մը, այսինքն նկատուած առարկային թիւր մէկ երևոյթէն խաբուելով: — Սխալ ներկայացում՝ որ յառաջ կուգայ ոչ թէ զգայութեան ազդումնեւրէն, այլ անոր ըմբռնողական մեկնաբանութեան բնականոն պայմաններու մէջ կատարուած չըլլալէն:

ՊԱՐՏԱՒՈՐՈՒԹԻՒՆ (devoir) . բարոյական հարկադրանք, որ ստիպողական կը նկատուի ըստ ինքեան և ընդհանուր կերպով, անկախաբար՝ գործունէութեան որեւէ մասնաւոր կանոնէ:

ՍԱՀՄԱՆ, ՍԱՀՄԱՆՈՒՄ (définition) . իմացքի մը կամ իրի մը բնութեան բացատրութիւնը, զայն յատկանշող ստորոգելիներուն յայտարարութեամբը:

ՍԱՀՄԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (déterminisme) . փիլիսոփայական այն վարդապետութիւնն է որ կ'ընդունի թէ մարդկային գործերը, բոլոր միւս երևոյթներուն պէս, բնութեան անյեղօրէնքներուն համեմատ՝ որոշադրուած են հաստատուն նախընթացներով:

ՍԵՆՈՒ (genre) . այն ընդհանուր գաղափարն է, զոր կ'ունենանք՝ նկատի առնելով զանազան տեսակներուն ունեցած հասարակօրդ կողմերը:

ՍՈՎՈՐԱՄՈՒՈՒԹԻՒՆ (routine) . անխորհրդած ունակութիւն՝ գործ մը միշտ միևնոյն եղանակաւ ընելու:

ՍՏՈՐՈՒԿԵԼԻ (attribut) կը կոչուին ենթակայի մը հաստատական կամ ժխտական բոլոր յատկանիշները:

ՍՏՈՐՈՒԿՈՒԹԻՒՆ (catégorie) . ըստ ֆանդի, ստորոգութիւնները զուտ իմացողութեան հիմնական իմացքներն են: Ըստ Արիստոտելի՝ տասն են անոնք. գոյացութիւն, քանակութիւն, յարաբերութիւն, յատկութիւն, գործելութիւն, կիրք, տեղ, ժամանակ, դիրք, լինելութիւն:

ՎԱԽՃԱՆ (fin) . այն՝ որո՛ւն համար բան մը գոյ է կամ կը կատարուի. նպատակ, զիտաւորութիւն, որո՛ւն է ուղղուած ձգտում մը:

ՎԱԽՃԱՆԱԲԱՆՈՒԹԻՒՆ (eschatologie) . տիեզերքի վերջին վախճանին վերաբերեալ վարդապետութիւն, որ աւելի աստուածաբանութեան մէջ կը յիշուի, ակնարկութեամբ աշխարհի կատարածին և վերջին դատաստանին:

ՎԱԽՃԱՆԱԿԱՆ ՊԱՏՃԱՆՈՒ (cause finale) . ինչ որ կը բացատրէ իրողութիւն մը, զայն ճանչցնելով իրրեւ վախճանի մը միջոցը:

ՎԱԽՃԱՆԱՒՈՐՈՒԹԻՒՆ կամ ՎԱԽՃԱՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ (finalité) . նպատակի մը ձգտելու իրողութիւնը. յատկանիշը անոր՝ որ նպատակի մը կը ձգտի: Միջոցներուն՝ նպատակներու պատշաճեցումը:

ՎԱԽՃԱՆԱՒՈՐՈՒՄ ԱՆՎԱԽՃԱՆ (finalité sans fin) . ֆանդ այսպէս կը կոչէ գեղեցիկը. ինչ որ ըսել է թէ ամէն գեղեցիկ առարկայի մէջ կայ վախճան մը, կամ ուրիշ բառերով, գուրմարութեան մը գաղափարը, որ իրեն կը ստորադասէ իր մասերը, և թէ այդ առարկան ինքնիրմէ գուրս արտաքին վախճան մը չունի:

ՎԵՐԱՅԵԱԼ (abstrait) կ'ըսուի որ եւ է ծանօթօք կամ յարաբերութիւն որ իրեն ընկերացող մտապատկերներէն առանձնապէս նկատի կ'առնուի:

ՎԵՐԱՅՈՒՄ (abstraction) . միտքի այն գործողութիւնը, որով առանձնաբար նկատի կ'առնու մտապատկերի մը կամ ծանօթօքի մը մէկ տարրը ( յատկութիւն կամ յարաբերութիւն), ուշադրութիւնը մասնաւորաբար անոր վրայ ուղղելով, և զանց ընելով միւսները:

ՎԵՐԼՈՒԾՈՒՄ (analyse) . նիւթական կամ գաղափարական ամբողջի մը իր մասերուն բաժնուելը:

ՎԵՐՅՈՒՇՈՒԹԻՒՆ (réminiscence) . նախապէս ըմբռնուած խօսքի մը կամ պատկերի մը տարտամ կամ թերի մտաբերումը:

ՎՍԵՄ (sublime) . աղնուական և բարձրօրէն գեղեցիկ, գեղեցիկ ի մեծութեան. այն՝ որ խանդավառ հրացումի դատում մը կ'արտայայտէ, թէ՛ գեղեցկագիտական, թէ՛ բարոյական և թէ՛ իմացական տեսակէտով:



ՏԱՐՈՐՈՇՈՒՄ (distinction). տե՛ս գաճառեցի:

ՏԳԵՂ, ԱՆԳԵՂԵԱՅ (laid) է այն, առարկայ կամ գաղափար, որուն կազմութեան մէջ անհամեմատականութիւն կայ, և որուն առջև բանականութիւնը և երեւակայութիւնը զիրար կը հակասեն, իբրև անհաճոյ տպաւորութեան մը հանդէպ:

ՏԵՂԱԿԱՆԱՅՈՒՄ (localisation). այն գործողութիւնը՝ որով մեր ներքին վիճակները, մասնաւորաբար զգայութիւնները, արտաքին պատճառի մը կը վերագրենք: Ըմբռնումի գործառնութեանց վերջինն է անիկա:

ՏԵՍԱԿ (espèce). երբ հոյլ մը՝ Ա. մէկ մասն է ուրիշ հոյլի մը՝ Բ. լայնումին, Բ. կ'ըլլայ սեռը, իսկ Ա.՝ անոր տեսակը:

ՏՈՒՆԱԼ (donnée). գիտութեան մը կամ փորձառական հետազոտութեան մը տուեալները կը կոչուին այն անվէճ իրողութիւններն ու սկզբունքները, որոնք անոնց իբրև մեկնակէտ կը ծառայեն:

ՏՐԱՄԱՐԱՆՈՒԹԻՒՆ (logique). գիտութիւն՝ որ կ'ուսուցնասիրէ վաւերական մտածումին ընդհանուր սկզբունքները. իր առարկան է քննել զատումներուն յատկանիչները, զանոնք նկատելով ոչ իբրև հոգեբանական երևոյթներ, այլ իբրև ծանօթութեանց և հաւատալիքներու արտայայտիչներ:

ՏՐԱՄԱԽՈՂՈՒԹԻՒՆ (raisonnement). իմացական գործողութիւն, որով կը ցուցուի թէ մէկ կամ աւելի նախադասութիւններ (նախադրեալի) կ'ենթադրեն ուրիշ նախադասութիւն մը (եզրակացութիւն), կամ գտնէ հաւանական կը դարձնեն զայն:

ՅԱՆԿԱԿԱՆ (concupiscible). Սկզբնական դասաւորութեամբ, կիրքերը երկու խումբի կը բաժնուին. ցանկական և ցասքմեական: Յանկականները անոնք են, որոնց գրգռութիւնը առարկային լոկ ներկայութենէն կամ բացակայութենէն յառաջ կուգան:

ՅԱՍՄՆԱԿԱՆ (irascible) կիրքերը անոնք են որոնց գրգռութիւնը յառաջ կուգայ լաւ առարկան ձեռք բերելու կամ գէշ առարկայէն խոյս տալու համար զգացուած դժուարութենէն:

ՓԱՍՏ (argument). պատճառարանութիւն՝ որուն նպատակն է ապացուցանել կամ հերքել տրուած նախադասութիւն մը:

ՓԱՍՏԱՐԿՈՒԹԻՒՆ (argumentation). փաստերը դասաւորելու և ներկայացնելու եղանակը:

ՓԱՓԱՅ (desir). ինքնաբերական և գիտակից ձգտում գէպի ծանօթ կամ երեւակայուած վախճան մը:

ՓՈՐՁԱՌԱԿԱՆ ՀՈԳԵԲԱՆՈՒԹԻՒՆ (psychologie expérimentale). զննութեան, դասաւորումի, վարկածի և ճշգրտումի մեթոտով կատարուած հոգեբանական ուսումը:

ՓՈՐՁԱՌԱԿԱՆՈՒԹԻՒՆ (empirisme). այն դրութիւնը՝ որ առանց իրողութեան չի կրնար ըմբռնել ոչ միայն որ և է գործունէութիւն, այլ նաև ու է կերպ բացատրութիւն և վարդապետութիւն, և կը զգուշանայ յառաջագունեան հաստատումներէ: Դժուար չէ հասկնալ թէ փորձառութիւնը, իր իսկական էութեանը մէջ, ժխտում է ոչ միայն ամէն փիլիսոփայութեան, այլ նաև իմացական ամէն գործունէութեան:

ՓՈՐՁԱՌՈՒԹԻՒՆ (expérience). այն իրողութիւնը, որով կը զգանք որևէ բան մը, ու կը զգանք զայն ոչ միայն իբրև իր անցաւոր էութեանը մէջ պատահած բան մը, այլ նաև իբրև մեր մտածումը լայնցնող և ճոխացնող բան մը: — Այսպէս մեր կոչուի նաև գումարութիւնը այն օգտակար եղանակաւորումներուն՝ զորս վարժութիւնը կը բերէ մեր կարողութիւններուն, այն բոլոր ստացութիւններուն՝ զորս միտքը կ'ունենայ այդ վարժութեան միջոցաւ, ինչպէս նաև այն բոլոր մտաւոր յառաջգիմութիւններուն՝ որոնք կեանքէն յառաջ կուգան:

ՓՈՐՁԱՐԿՈՒԹԻՒՆ (expérimentation). փորձառութեան կիրարկութիւնը՝ որոշ գրութեան մը համեմատ:



**ՔԱՆԱԿՈՒԹԻՒՆ** (quantité). Հատուելու կամ թուարկուելու յատկութիւնը այն բոլոր բաներուն՝ որոնք ընդունակ են աւելնալու կամ նուաղելու:

**ՔՆՆԱԴՍՈՒԹԻՒՆ** (critique). սկզբունքի մը կամ իրողութեան մը քննութիւնը, կարենալու համար գնահատական դատում մ'ընել թէ՛ իր ներքին արժէքին և թէ՛ ծագումին մասին:

**ՔՆՆԱԿԱՆՈՒԹԻՒՆ** (criticisme). Քանդի փիլիսոփայական դրութիւնը, որ կը ջանայ ճշդորոշել այն սահմանները, որոնց մէջ կրնայ օրինաւորապէս կատարուիլ մարդկային իմացողութիւնը:

**ՕՐԻՆՔ** (loi). իրերու ներքին բնութիւնը կազմող կարգին արտայայտութիւնը, այդ կայուն կամ շարժուն բնութեանէն անկախօրէն յարաբերութիւններուն բանաձեւումը, այսինքն զանոնք գոյաւորող կեանքին պայմաններուն եւ պաշտօններուն յառաջխաղացական պատկերացումը:

## ՅԱՆԿ ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ



**ԱլֆրէՏ ՏԸ ՎԻՆԵՆԸ** (Alfred de Vigny). Ֆրանսացի գերդպայուն բանաստեղծ և վիպասան, խորապէս անձնագգած, բայց իր գլխաւոր երկերուն մէջ նաեւ բարձրօրէն խորհրդապաշտ. ումանդիկ գրականութեան ամենէն փայլուն դէմքերէն մին. իր գործերուն մէջ նշանաւորներն են. Հին եւ արդի Բերուսաճերը, Զինուորական ծառայութիւն և մեծութիւն, Սոլիս (1797 — 1863):

**ԱՂԵՔԱՆԴՐ** (Մեծն, Մակեդոնացի), հանրածանօթ աշխարհակալը (Ն. Ք. 356 — 323):

**ԱՄՔԷՌ** (Ampère). Ֆրանսացի գիտուն. թուագէտ և բնագէտ. գտող էլեքտրական հեռագրութեան սկզբունքին և էլեքտրա-ուժականութեան հիմնական օրէնքին, գրած է հսկայական ուսումնասիրութիւն մը գիտութեանց դասաւորութեան վրայ, որ կը կոչուի «Փորձ ի վերայ փիլիսոփայական գիտութեանց» (1775 — 1836):

**ԱՊԵՂԱՐ** (Abélard). Ֆրանսացի փիլիսոփայ և աստուածաբան սկոլաստիկ. իր յանդուգն տեսութիւններուն համար եկեղեցիէն երիցս դատապարտուած. մին՝ Իւնցֆապուրսոսքիւն կոչուած վարդապետութեան հիմնադիրներէն (1079—1142):

**ԱՐԻՍՏՈՏԷՒ** (Aristote). մեծանուն յոյն փիլիսոփայ, Ստագիրացի. Մեծն Աղեքսանդրի դաստիարակն ու բարեկամը հիմնադիր պերիպատիկեան դպրոցին. աշխարհի մեծագոյն իմացականութիւններէն մին, որուն անձը մարմնացումը նկատուած է իմաստասիրական և գիտական միտքի: Ամբողջ միջին դարու ընթացքին, իր անունը իբր պատգամ յարգուեցաւ սկոլաստիկ աստուածաբաններէն և փիլիսոփաներէն: Իրապէս հիմնադիրն է բաղդատական անդամաչնութեան և բնախօսութեան: Հեղինակ է տրամաբանութեան, քաղաքագիտութեան, բնագիտութեան, բնական



պատմութեան, հռետորութեան և այլ բաղմամբիւ գործե-  
րու, որոնց արժէքը բարձրօրէն գնահատուած է ներկա-  
յիս ևս:

**ՔՅՈՂ ԺԱՆԵՏԷ** (Paul Janet). Ֆրանսացի փիլիսոփայ, ուսուցիչ է  
Սորպոն: Իր իմաստասիրութիւնը կը հիմնուի բնագիտական  
հոգեպաշտ իմացութիւն և իմացապաշտ բարոյականի  
վրայ: Իր նշանաւոր գործերն են Վախմանակամ պատճառ-  
ները և Բարոյագիտութիւնը (1823 — 1899):

**ԳԱԴՐԸՖԱՅԺ** (Quatrefages). Ֆրանսացի բնապատում և մարդա-  
բան, որ ջերմ եռանդով պաշտպանեց մարդուն ծագումին  
միութեան վարդապետութիւնը (1810 — 1892):

**ԳԼՈՏ ՊԵՐՆԱՐ** (Claude Bernard). Ֆրանսացի նշանաւոր բնա-  
խօս. փորձառական գիտութեանց ամենէն ակնաւոր ներ-  
կայացուցիչը ժժ. դարու վերջերը: Ինքն է որ յայտնեց  
գոյութիւնը ողնուղեղին մեծ կեղրոնէն անկախաբար գոր-  
ծող ջլային կեղրոններու (1813 — 1878):

**ԵԿԴԻՆՈՍ** (Ictinus). Յոյն ճարտարապետ, որ կառուցած է Ա-  
թէնքի Պարթենոնը և Լպոզոնի մեհեանը փիգալիոյ մէջ  
(Քրիստոսէ իբր հինգ դար առաջ):

**ԻՊԷՆ** (Hippolyte Taine). Ֆրանսացի փիլիսոփայ, պատմաբան  
և քննադատ: Փորձեց բնական պատմութեան փորձառական  
մեթոտը պատշաճեցնել մարդկային մտքի բաղմազան ար-  
տադրութիւններուն: Իր գլխաւոր գործերն են. Լաֆոնդէ-  
նի և Տրոսս Լիվիոսի վրայ ուսումնասիրութիւններ, Պատ-  
մութիւն Անգլ. Իրականութեան, Ժամանակակից Ֆրան-  
սայի Ծագումները, Իմացականութիւն, Փիլիսոփայութիւն  
արուեստի, և այլն. (1828 — 1893):

**ԹՐՈՒՎԻՅԼ** (Trouville). Մանչի ծովուն վրայ Ֆրանսական փոք-  
րիկ նաւահանգիստ մը:

**ԺՈՒՖՐՕՍ** (Theodor Jouffroy). Ֆրանսացի հոգեպաշտ փիլիսո-  
փայ, որ իր ազգակիցներուն ծանօթացուց սկզբնական  
իմաստասիրութիւնը. իր կարեւորագոյն գործն է Խառնեղկ  
Փիլիսոփայութեան. (1796 — 1842):

**ԼԱՅՊՆԻՅ** (Leibniz). գերմանացի նշանաւոր փիլիսոփայ և գի-  
տուն. մեծահռչակ գործունէութեան տէր անձ մը. ինքն  
էր որ Պոսիւէի հետ ձեռնարկեց կաթոլիկ և բարեկարգեալ  
եկեղեցիներու ձուլումին: Փիլիսոփայութեան մէջ իր գիւտն  
է Մոմսնեբուլ խորիմաց զրութիւնը. իր կարծիքով, նա-  
խակարգեալ ներդաշնակութիւն մը կայ հոգիին և մարմի-  
նին, և աւելի՛ իրարու մէջ՝ փակուած մոնատներուն մի-  
ջեւ: Իր գլխաւոր գործերն են. Խոկմունք, Կոր փորձ մարմի-  
նին իմացողութեան վրայ, Ասուածխօսութիւն, Մոմսարանու-  
թիւն, և այլն:

**ԼԱՖՈՆԴԷՆ** (La Fontaine). Ֆրանսացի մեծ մատենագիր առա-  
կախօս. ժամանակակից և բարեկամ Պուալոյի, Ռասինի,  
Մոլիէռի: Իր նշանաւորագոյն գործն է Առակները, նուրբ  
ճաշակի, խաթիւն պարզութեան, այնքան կատարեալ  
արուեստի մը միացած բնականութեան, քնքոյշ հանճա-  
րի, բարձր ողջմտութեան, իր անձնաւորութիւններուն  
խօսել և գործել տուող հրապուրիչ յստակութեան այս  
գիրքը, որ բոլոր ժամանակներու և ամէն պայմանի մար-  
դոց առձեռն մատենը եղած է, և որուն մէջ, իմաստա-  
սիրական սուր խօսքերու և դատումներու մէջ պատկերա-  
ցուած են յաճախ իր ժամանակի պայտտական, ընկերա-  
յին և կրեարական բարքերէն դէմքեր և գործեր: Ունի նաև  
բաղմամբիւ պատմուածքներ, եղերերգներ, նամակներ  
(1621 — 1695):

**ԼՈՒԻՍԻՎԻԿՈՍ ԺԳ.** (Louis XIV). Ֆրանսայի ամենէն նշանաւոր  
թագաւորներէն մին, որ գահակալեց յիսուն և չորս տա-  
րիներ: Պատմութեան մէջ անմոռանալի մնաց՝ իր երկրին  
միատարր ամբողջութիւնը յաւէրթացնելու համար ըրած  
կորովի ջանքերով. անոր սահմանները ընդմիջա ճշգիւտ  
համար զրացի պետութիւններէն մասնաւորաբար Սպանիոյ  
և Հոլանտայի դէմ մղած յաղթական մարտերով: «Պետու-



թիւնը ես եմ» խօսքը, որ իր նշանաբանը եղաւ, ըլիւրեւ-  
ղացուցն է իր բացարձակապաշտութեան՝ զոր գործադրեց  
լըլու, կը խտացնէ իր քաղաքականութեան ուղղիչ սկզբուն-  
քը: Այդ վարչականութեամբ գրեթէ աստուածպետական  
կառավարութիւն մըն էր որ կը մարմնացնէր իր վրայ.  
Թէև ամբողջ ազգը միակ անձի մը մէջ ընկրուելու իր  
այս ոգին, ի վերջոյ անտանելի դարձուց իր բռնապետու-  
թիւնը ամէնուն: Նանգի հրովարտակին յիտս կոչումովը  
բողոքականութեան դէմ մեծագոյն հալածանքը սարքեց.  
բայց նաև իր ազգին համար, այն դարուն, եղաւ բազում  
տեսակէտներով օգտաւէտ, մանաւանդ երկրաշինական եւ  
յաճախ ղինուորական արդիւնքներով: Իր օրով էր նոյն-  
պէս որ դպրութիւնք եւ արուեստք հասան բարձրագոյն  
կատարելութեան, կազմելով ֆրանսական ոսկեղարը: Իր  
քաջալերիչ հովանիին ներքև ծաղկեցան Գորնէյլ, Ռասին,  
Պուալօ, Լաֆոնդէն, Պոսիւէ, Մասիյեօն, Ֆլէշիէ, Լապրիւ-  
յէր, Լա Ռոշֆուքօ, Սէն Սիմօն, Ռէյ, Բուսէն, Լը Լոսէն,  
Մանուար, Էայլն, Էայլն. (1638 — 1715):

ԼՈՒԿՐԵՏԻՈՍ (Lucrece). Լատին բանաստեղծ (Ն. Բ. 95 — 53).  
աշակերտած կը կարծուի յոյն Ջենոն փիլիսոփային: Հե-  
ղինակ Ջրնութեմէ իրաց քերթուածին: Իր բարեկամներէն  
էին Վառոն եւ Կիկերոն: Առաքեալը հանդիսացաւ Եպիկու-  
րի նրեթապաշտութեան, վսեմի մօտեցող եւ խորհուրդի  
լայն մեծութիւն մը պարզող հզօր քերթուածի մը մէջ:  
Անձնասպանութեամբ վերջ տուաւ իր կեանքին:

ԼՕՔ (Lock). Անգլիացի փիլիսոփայ, որ մերժելով բնածին  
գաղափարները, մեր ծանօթութեանց աղբիւր կը նկատէր  
փորձառութիւնը եւ խորհրդածութենէն լուսաւորուած  
զգայութիւնը. կուսակից էր շահու բարոյականութեան.  
Իր գլխաւոր գործն է Փորձ մարդկային իմացողութեան վրայ,  
որուն դէմ գրած է Լայպնից, իր Նոր վորձերուն մէջ (1632  
— 1704):

ԿԱՌՆԻԷ (Adolphe Garnier). Ֆրանսացի հոգեպաշտ փիլիսո-  
փայ, որուն նշանաւոր գործն է ձառ հոգոյ կարողութեանց  
վրայ, (1801 — 1864):

Կիլիվլիթ (Gulliver). անունն է հերոսին՝ Սուլֆու անգլիացի  
մատենագրին Կիլիվլիթի ցամբողովութեան անուն գիրքին,  
որ երգիծական գործ մըն է, ընդհանրապէս մարդկային  
բնութեան յոռի կողմերը բայց մասնաւորապէս անգլիա-  
ցուց մոլութիւնները ձաղկող:

ՀԱՄԻԼՏՈՆ (Hamilton). Սկոտացի փիլիսոփայ, տրամաբան եւ  
հոգեբան. գլխաւոր ներկայացուցիչը Սկոտական դպրո-  
ցին. իր փիլիսոփայութիւնը ազդուած է Ռէյտէ եւ Քանդէ  
(1788 — 1856):

ՀԱՐՔԱԿՈՆ (Harpagon). Մօլիէռի Ազահր կատակերգութեան  
գլխաւոր անձնաւորութիւնը, որ այնքան կատարելագոր-  
ծած է առտին տնտեսագիտութեան արուեստը, որ իր  
բարեւը անգամ չի տար, այլ փոխ կուտայ:

ՀԵՐՊԵՐՏ ՍՔԵՆՍՈՐ (Herbert Spencer). անգլիացի փիլիսոփայ,  
հիմնադիր եղաւ ջնական փիլիսոփայութեան՝ Անգլիոյ մէջ.  
Իր գլխաւոր գործերն են. Առաջին Սկզբունքներ, Սկզբունք  
Կենսաբանութեան, Հոգեբանութիւն, Ընկերաբանութիւն, Եղբոր-  
ջական Բարոյական, Անասը պէտքութեան հանդէպ, Էայլն: Իր  
բարոյականն ու ընկերաբանութիւնը էապէս անհատա-  
պաշտ են (1820 — 1903):

ՀԻՒՄ (David Hume). անգլիացի փիլիսոփայ եւ պատմաբան.  
հեղինակ Պատմութիւն Անգլիոյ, ձառ մարդկային բնութեան վը-  
րայ գործերուն. իր փիլիսոփայութիւնը երեսուքապատե-  
թիւն մըն է, որ ծնունդ առաւ Լօքի փորձառականութենէն  
եւ Պէրքլէյի գաղափարապաշտութենէն. իր կարծիքով՝  
բանաւոր սկզբունքները ուրիշ բան չեն եթէ ոչ ունակու-  
թեամբ ամրապնդուած գաղափարի կապակցութիւններ.  
Իսկ գոյացութիւնը՝ գիտակցական վիճակներու հաւաքում  
մըն է միայն:

ՄԱՋԱՐԷՆ (Mazarin). Ֆրանսացի կարտինալ եւ պետական  
մարդ, ծագումով իտալացի. յաջորդ Ռիչիէօյի, որ մե-  
ռած ատեն զայն էր յանձնարարած Լուչոյիկոս Թ.Ֆ.ի. յե-  
տոյ նոյն քաղաքական դիրքը ունեցաւ նաև Լուչոյիկոս



ժԴ.ի քով, որուն ծառայեց մեծ տաղանդով: Իր խիստ բարձրին համար ժողովրդական չեղաւ բնաւ. բայց ինք առանց ազդուելու ոչ մէկ բանէ, շարունակեց միշտ իր գործը: Իր քաղաքական հանճարին շնորհիւ էր որ Ֆրանսսա իր սահմանները տարածեց մինչև Հռենոս և մինչև Պիւբէնանները (1602 — 1667):

Մէն Տը ՊիրԱն (Maine de Biran). Ֆրանսացի հոգեպաշտ փիլիսոփայ բնազանցագէտ. գրած է նշանաւոր գործեր Ունակուրեան և Քիզիգականին բարոյականի վրայ քսած ազդեցութեան մասին: Իր հոգեբանութիւնը կը հիմնուի կամաւոր ճիգով ըմբռնուած եսի զգացումին վրայ:

Մինոպեան (Mincopie). Անտաման կղզիի բնակիչ:

Մոլիէր (Molière). Ֆրանսացի կատակերգակ մատենագիր: Անբազդատելի մնացած է իր բարձր ինքնատուրութիւնը, իր ոճին կոյուական աւելնովը, եւ տեսարանական անթերի հասկցողութեամբը: Ինչպէս կ'ըսէին իր ժամանակակիցները, մարգկային բնութեան հայեցողն ու նկարիչը եղաւ, այս բառին լայնագոյն առուձովը: Աննման է նկարագիրներու եւ բարձր մասին ըրած իր վերլուծումներովը: Իր անձնաւորութիւններուն մեծ մասը անկորընչելի տիպարներ գարձած են այլևս. այնքան անթերի կերպով նկարուած, որ կարծես իրօք կ'ապրին: Իր փիլիսոփայութիւնը բնութեան, ողջմտութեան և բարձր բանականութեան փիլիսոփայութիւնն է, իսկ իր բարոյականը՝ գերազանցօրէն ընկերական. (1622 — 1673):

Պարթենոն ( Parthénon ). Նշանաւոր մեհեան Աթէնքի մէջ՝ նուիրուած Աթենաս աստուածուհիին. կառուցուած է Պերիկլէսի օրով, 454-438 Ն. Ք. իսկ զարդարուած Փիդիասի ձեռքով Քրիստոսէ վերջ Զ. դարուն եկեղեցիի վերածուեցաւ, յետոյ 1460 ին, մղկիթի. 1687 ին, Աթէնքի պաշարման առան իրր վառօդարան գործածուելով, շատ վնասուեցաւ: Բարեբախտաբար իր լաւագոյն մասերն են որ անեղծ կը մնան տակաւին:

Պէն (Bain). անգղիացի փիլիսոփայ. փորձառականաց զըսորոցէն. հեղինակ՝ Տրամարամուրեան մը, Գաւսիարակուրեան գիտութեան մը և Քերակամութեան մը (1818 — 1903):

Պէն Լոմոնդ (Ben Loumond). լեռ ի Սկոլտիա:

Պլատոն (Platon). Նշանաւոր յոյն փիլիսոփայ. աշակերտ Պիւթագորեանց և Սոփեստներու, ապա Սոկրատի. վարժապետ Արիստոտէլի: Կատարեց ճամբորդութիւններ եգիպտոս եւ Իտալիա. դարձին Աթէնք՝ սկսաւ ուսուցանել Ակադեմոսի պարտէզին մէջ. յետոյ գնաց բնակիլ Սիկիլիա, ուր կը յուսար թէ Գիոնեսիոս բռնաւորը պիտի կարենար կիրարկութեան զնել իր քաղաքական տեսութիւնները: Իր գործերն են Փեդոն, Տիմէոս, Փեթրա, Գորգիաս, Խրալանմի, Հասարակապետիսն, Օրէնի, որոնց մէջ պարզած է Սոկրատի վարդապետութիւնները, հաւանականաբար իր կողմէ ամբողջացուած:

Պոիւլո (Boileau). Նշանաւոր բանաստեղծ և քննադատ Ֆրանսացի ճգրիտ, ոգելից և սուր քննադատ զասական բարձր գրականութեան, որ Ֆրանսական բանաստեղծութեան մէջ Մալէրպի նախորդներուն արժանիքը թէև յանիրաւի ուրացաւ, բայց իր նրբամիտ, խայթիչ և զգաստ ոգիին ամբողջ ուժովը մատենագիրներուն տեական զասեր տուաւ աշխատասիրութեան, պայքարելով տափափութեանց, ուսուցիչ ոճի, շոջողանքի, իմաստակ հմտութեանց և բուրբ այն թերութեանց զէմ՝ որ միտքը կը զարտուզեն և՛ բնութենէն և բանէն: (1631 — 1711):

Պրոքա (Broca). Ֆրանսացի երևելի վիրաբոյժ և մարդաբան. անդամ բժշկական Ակադեմիայի և ցկեանս անդամ Ծերակոյտի. հիմնադիր Մարդաբանութեան (1824 — 1880):

Պոսիէ (Bossuet). Ֆրանսացի, Լալիսկոպոս Գոնտով՝ յետոյ Մոյի. մեծ ճարտարախօս, պերճ մատենագիր և բարձր աստուածաբան. հոյակապ են իր դամբանականները, որոնց մէջ սուրբ գրոց խոր հմտութենէ մը հանուած «մեծ և ահաւոր զասեր» կը հանէ թագաւորներուն և մարդկութեան համար: Արքայորդիին դաստիարակ կարգուած ըլլալով, այդ առթիւ գրեց Տիեզերական պատմութեան վրայ նաղը, Ասուածաուեցէն Բաղուած Բաղաբաղիսուրիսը, որուն



մէջ կը պաշտպանէ թագաւորներուն աստուածային իրաւունքը: Իր միւս գործերն են Խոկումներ Աւեստարանի վրայ, Սաւառնումներ Խորհուրդներուն վրայ, որոնք իր լաւագոյնս ներշնչուած երկերէն են: Ունի նաև Պէպպիսուքիւնց Բողոքական Եկեղեցեաց անուն աշխատասիրութիւն մը, որուն մէջ երևան կուգայ իբրև խորհմուտ պատմագէտ: Ինքն էր որ 1682 ին բացաւ Ֆրանսայի կղերականութեան նշանաւոր ընդհ. Ժողովը և ընդունել տուաւ կալիքան ազատութեան սկզբունքը. հաւանաբար զեր ունեցաւ Նանթի հրովարտակին յետս կոչումին մէջ: Ինքն էր նաև որ, իր վերջին օրերուն, բուռն կերպով պայքարեցաւ հանգստականութեան դէմ, յանձին Ֆէնըլոնի (1627 — 1704):

Ռևոբիէ (Rabier). Փրանսացի փիլիսոփայ. հեղինակ Խմաստաւիրութեան Դասագիրի (1889 — 1907):

ՌԱՍԻՆ (Racine). Փրանսացի թատերագիր բանաստեղծ, որ դասական կատարելութեան հասցուց թատերական քերթողութիւններ: Մինչ Գոռնէյլ կը յօրինէ բարդ կացութիւններ, անոնց մէջ գերմարդկային առաւելութիւններով պանծացնելու համար իր գիւցազները, Ռասին աւելի կը սիրէ պարզ և յստակ գործողութիւնները, որոնց մէջ յոյզերուն խաղացքը կը նկարէ դժայլելի անկեղծութեամբ: Իր գլխաւոր ողբերգներն են. Թեբայիս, Աղեմաւնդը, Անդրումաէ, Բերենիկէ, Մինդաս, Պայպիս, Իվիզենի, Փեդրա, Եսթեր, Գորդիա (1639 — 1698):

ՌէյՅ (Thomas Reid). սկոտացի փիլիսոփայ: Իր վարդապետութիւնը, որ ներհակ է Պէրքլէյի գաղափարապաշտութեան և Հիւմի սկեպտականութեան, կը հիմնուի ներքին փորձառութեան և հասարակաց զգացումին վրայ: Իր նշանաւոր գործն է Հեսագոսուքիւնց մարդկային իմացողութեան վրայ (1710 — 1796):

Ռիբո (Ribot). Փրանսացի փիլիսոփայ. հեղինակ հոգեբանական ընտիր ուսումնասիրութեանց, որոնցմէ են. Յիւղութեան նիւանդութիւնը, Կամբիոն նիւանդութիւնը, Անձնաւորութեան նիւանդութիւնը, Ուսուցողութեան հոգեբանութիւնը (1839 — 1916):

ՍԴՈՒՍՏՄ Միլլ (Stuart Mill). անգղիացի փիլիսոփայ և արեւտագէտ. փորձառական դպրոցէն: Հակառակորդ յայտնատեսութեան՝ անհատական փորձառութեան և գաղափարներու զուգորդութեան վրայ կը հիմնէ արտաքին աշխարհի և հոգիներու իրականութիւնը: Տրամաբանութեան մէջ, ընծայութիւն ըսելով կը հասկնայ մակածական գործողութեանց ընդհանրացումը, ու մակածութիւնը կը հիմնէ կանոնաւոր յաջորդութիւններ տեսնելու ունակութեան վրայ: Բարոյականին մէջ՝ իբրև պարտականութեան հիմնական սկզբունք կ'ընդունի հանրական երջանկութիւնը: Ուղղակի Հիւմի կողմնակից է և ժժ. գարու փորձառականութեան:

Սէն-Մալո (Saint Malot). Փրանսական վաճառաշահ քաղաք. կեդրոն Իլլ է Վիլէն նահանգին, Ռանսի գետաբերանին վրայ:

Սէվիցնէ Տիգիե (Madame de Sévigné). Փրանսացի ակնաւոր գրագիրուհի: Քսան վեց տարեկանին այրիանալով՝ ինքզինքը նուիրեց իր վաւակներուն դաստիարակութեան. երբ իր զուտը կրինեանի կոմսին հետ ամուսնանալով հեռացաւ Բարիդէն, անոր գրեց սքանչելի նամակներ, որոնք գրականութեան մէջ պատուարեր տեղ մը սուրին իրեն (1626 — 1696):

Սկոլաստիկ (Scolastique). միջնադարեան ուսուցում, որ կը կատարուէր վանքերու և եպիսկոպոսական դպրոցներու մէջ. ասկից է իր անունը (= դպրոցականաց), որ վարդապետութենէ մը աւելի՝ կազմակերպութեան և կարգապահութեան մեթոտ մըն է: Սկոլաստիկ փիլիսոփայութեան ամենէն կարևոր նիւթերէն մէկն էր — Արիստոտէլեան վարդապետութեան զօրաւոր ազդեցութեան տակ անշուշտ — ընդհանուր գաղափարներու և հանրականներու իշուշտ — ընդհանուր գաղափարներու և հարցը՝ երեք դպրոցներ զբաղեցան միւրականութեան հարցը՝ երեք դպրոցներ զբաղեցան միւրական այս խնդրով, որ գրաւեց ամբողջ միջնադարեան միայն այս խնդրով, որ գրաւեց ամբողջ միջնադարեան մէջ փիլիսոփայութիւնը: Իրոպաց գարոցը, որ կ'ընդունէր թէ փիլիսոփայութիւնը: Իրոպաց գարոցը, որ կ'ընդունէր թէ ընդհանուր գաղափարները գոյութիւն ունին, և իրերէն անառջ: Անուանապաց (nominaliste) դպրոցը, որուն համաձայն ընդհանուր գաղափարները անուններ են միայն, ու



րոնք գոյութիւն կ'ունենան իրերէն վերջ միայն: Իմացապատէս դպրոցը, որ կ'ընդունէր ընդհանուր գաղափարը՝ բայց անհատական իրին մէջ միայն: Սկոլաստիկութիւնը սակեզարը եղաւ արամասացութեան, բայց քննադատութենէ զուրկ արամասացութեան: — Սկոլաստիկութեան ամենէն մեծ դէմքերը եղան Թովմա Ագուլինացի՝ իր աստուածաբանութեան և փիլիսոփայութեան հանրագիտարանովը, Ապէլար, Տունս Սգոթ, և այլն:

ՎիբՏՈՐ ԳՈՒԶԷՆ (V. Cousin). Ֆրանսացի փիլիսոփայ և քաղաքագէտ. ընտրողական դպրոցին պետք. հեղինակ ձգտարիսը, Գեղեցիկը եւ Բաւիմ անուն գործին, եւ ժէ. դարու վրայ գրական ուսումնասիրութեանց և պատմական եւ փիլիսոփայական երկերու: Իր ճիշդ եղած է Տէքարդի եւ սկոլաստիկական դպրոցին և Քանդի գաղափարները բաղադրել գեղեցիկ ընդլայնումով մը, որուն սակայն քիչ մը կը պակսի կապակցութիւնը:

ՎիբՏՈՐ ՀիլիՅՈ (V. Hugo). ասանդիկ դպրոցին գլուխը և ֆրանսայի նշանաւորագոյն բանաստեղծը ժԹ. դարուն: Իր հզօր երևակայութեամբ, իր հնարքներուն զարմանալի բեղունութեամբը, իր թափանցող զգայութեամբը՝ որով դէպի ամէն ինչ կը ծաւալի, ոչ միայն տաղաչափութեան մեծ գործաւորն է ինքը, այլ նաև ամէնէն ուժեղ, բազմազան և կատարեալ բանաստեղծը, զոր երբեք ճանչցած ըլլայ ֆրանսական գրականութիւնը: Իր գործերէն յիշենք միայն Աւսան սերերը, ձառագայքներ եւ Սուերները, Վերջալոյսի ձայները, Նեբիմ ձայները, Պոսուստոքը, Հայեցողութիւնը, Գարեու գոյցը, Նոքր Տամ սր Բաւիմ, Թուաւները, Հերմանին, ևն. ևն. (1802 — 1885):

ՎՈՒՎԷՅՆ (Voltaire). Ֆրանսացի մեծահռչակ մատենագիր. մին ժԹ. դարու ամէնէն բեղուն, յանդուգն և նուրբ միտքերէն, որ մշակեց գրականութեան գրեթէ բոլոր սեռերը, ոչ մէկին մէջ չըլլալով բնաւ միջակ: Իր երկերէն կը յիշենք միայն Զայիբան, Մերոպէն, Գանիսը, ձառակի Տանարը, Փիլիսոփայական Բառարանը, ևն. (1694 — 1778):

ՎՈՒՆԾԹ (Wundt). գերման բնախօս և փիլիսոփայ. հեղինակ՝ Տարեբ բնախօսական հոգեբանութեան, Հոգեբանութիւն ժողովուրդներու, ևն. երկերու: Փիլիսոփայութիւնը կը նկատէ մասնաւոր գիտակցութիւններու համադրութիւնը, որուն նպատակն է գոհացում տալ զգացումի պահանջներուն (1832 — 1920):

ՎՈՒՆԷՅ (Volney). Ֆրանսացի բաղմահմուտ մտք, հեղինակ՝ Աւերակի կամ Խարդածութիւն կարդուքեանց եղափոխութեան վրայ գործին և ուրիշ լեզուաբանական ուսումնասիրութեանց:

ՏԷԲԱՐԳ (Descartes). Ֆրանսացի թուագէտ և փիլիսոփայ: Հեղինակ՝ ձառ մեքոսի վրայ, Բնագանցական խոլումներ, ձառ մարդուն վրայ, ձառ կիւեու վրայ գործերու: Հիմնադիրը արդի փիլիսոփայութեան: Ձեջելով սրբելով իր միտքէն ինչ որ մարդ կրնայ գիտնալ թէ՛ ժամանակակիցներուն փորձառութեանը եւ թէ՛ նախնեաց գործերուն միջոցաւ, Տէքարդ՝ իր փիլիսոփայութեան սկիզբը՝ իրրու բացարձակապէս ստոյգ և միտքին համար անհրաժարելի ոչինչ կ'ընդունի բայց միայն մտածումին և տարածութեան գաղափարները: Տարածութիւնը շարժուն է: «Տարածութիւն և շարժում տուէք ինծի, ու աշխարհը պիտի կառուցանեմ»: Մեքենագիտութիւնը և երկրաչափութիւնը, որոնց ուսուցումը կը վերանորոգէ Տէքարդ և կ'ընդլայնէ տարողութիւնը՝ ալճէպրայական հաշուողութիւնն ալ խառնելով անոնց, տարածութեան աշխարհին գլխաւոր գիտութիւններն են: Արդի գիտութիւնը կը հաստատէ, իր մէն մի գիւետին, Տէքարդի կազմած մեքենագիտական սա երկու սկզբունքները. 1. Շարժումի նոյն քանակութիւնն է որ կը գործէ աշխարհի մէջ. 2. Բնութիւնը միշտ ամէնէն պարզ ձամբաներէն կ'անցնի (սկզբունք շարժումի տեւականութեան և սկզբունք նուազագոյն ճիգի): — «Կը խորհիմ, ուրիմն եմ»: Այս առաջին առածէն ետքը, Տէքարդ Աստուծոյ գոյութիւնը կ'ապացուցանէ կատարելութեան կամ անհունին մասին մեր ունեցած գաղափարին միջոցաւ: Ըստ իրեն, այս գաղափարը անհուն էակէ մը միայն




կրնայ յառաջ գալ: Աստուծոյ գոյութիւնէն կը բղխին բո-  
լոր միւս բարոյական եւ բնազանցական սկզբունքները: Տէքարդ ռահիլլրան է նաև մեր ժամանակներու բնախօ-  
սական հոգեբանութեան, եւ, իբրև հմուտ բարոյախօս,  
ինքն է որ մատնանիշ ըրած է որքան փիլիսոփայան՝ նոյն-  
քան բարոյական առողջութեան մը կարեւորութիւնը, խա-  
փանելու կամ բուժելու համար յոռի կիրքերը: Յօրինուեա-  
ծական տարակոյսը՝ իբրև մեթոտ, մեքենագիտութիւնը՝  
իբրև գիտական սկզբունք, հոգեպաշտութիւնը եւ աս-  
տուածաճանտութիւնը՝ իբրև բնազանցական սկզբունքներ,  
ասոնք են Տէքարդի գրութեան կամ Տէքարդականութեան  
հիմնական սկզբունքները (1596 — 1690):

ՓԱՍՏԻՅՈՒ (Pasteur)․ Ֆրանսացի մեծ գիտուն, կենսաբան: Հրաշալի աշխատութիւններ արդիւնաւորեց տեսակաւոր ծիւրերու ընծիւղումով յառաջ եկած բիւրեղացումի եւ խը-  
մորումի, շերամի հիւանդութեանց, կատաղութեան դար-  
մանումի եւ ընդհանրապէս վարակիչ հիւանդութեանց մա-  
սին: Իր գիւտերը ճշմարիտ յեղափոխութիւն մը յառաջ  
բերին բուժելու արուեստին մէջ՝ ճշգիւտ վարակումին  
պայմանները եւ անոնց համապատասխան նախազգուշու-  
թիւնները, որոնցմէ դուրս եկան հականեխումը եւ աննե-  
խումը: Մարդկութեան մեծագոյն բարեբարններէն մին է  
Փասթէօս (1822 — 1895):

ՔԱՆՏ (Kant)․ գերմանացի մեծանուն փիլիսոփայ, հեղինակ՝  
Քննադատութիւն զու բանին, Քննադատութիւն զորճնական բա-  
նին, Քննադատութիւն դատողութեան կողուած փիլիսոփայա-  
կան կարեւոր գործերուն եւ Տիեզերական պատմութիւն բնու-  
թեան եւ վարդապետութիւն երկնից եւ մանաւանդ Բնագանցու-  
թիւն բարուց երկերուն: Իր տեսութեամբ, որպէսզի գիտու-  
թիւնը հանրական եւ անհրաժեշտ ըլլայ, պէտք է որ փոր-  
ձառութեան առարկաներուն յառաջագունեան ծանօթու-  
թիւնը հնարաւոր ըլլայ: Պէտք է ընդունիլ թէ իրե՛րն  
է որ կ'ընդունին միաքի օրէնքները: Իրերը իբրև երևոյթ․

ներ կը ճանչցուին, ցորչալի կը մտնեն զգացողութեան  
յայտնատեսութիւններու (միջոց եւ ժամանակ) եւ իմացո-  
ղութեան ստորոգութիւններուն մէջ, եւ կ'ենթարկուին բա-  
նականութեան կանոնաւորիչ օրէնքներուն: Իբրև էոյրներ  
կամ ըստ ինքեան իբր, անոնք անճանաչելի են զգացո-  
ղութեան եւ իմացողութեան. բայց, գործնական տեսակէ-  
տով, կը ճանչցուին բանականութիւնէն: Այսպէս Քանդ կը  
վերակազմէ ստուգութիւնը՝ պարտականութեան օրէնքին  
գործնական բանին միջոցաւ, ու, այսպէս, ըստ ինքեան  
իրականութեան աշխարհին հասնելով, անկէ կ'եզրակացնէ  
Աստուծոյ գոյութիւնը եւ հոգւոյ անմահութիւնը:

ՔՐՏԻՍՏԻՍՏԻԿԱԿՈՒՄԻՆ (criticism)․ վարդապետութիւն՝ որուն հա-  
մեմատ միտքը պէտք է կազմէ ճանօթութիւնը՝ այն ձեւ-  
բուն եւ ստորոգութիւններուն միջոցաւ միանգամայն, ո-  
րոնք անսխալական են փորձառութեան սահմաններուն  
մէջ, եւ անոնցմէ դուրս որ եւ է արժէք չունին:





« Ազգային գրադարան  
  
 NL0150166



---

---

ԳԻՆ 3 ՇԻԼԻՆ ԿԱՄ 75 ՍԷՆՔ

---

---